

ԾԵՐԵՆՑ

ԹԷՊՊՐՈՍ ՌԶՄՈՒՆԻ

Contents

ԳԼՈՒԽ Ա.....	3
ԳԼՈՒԽ Բ.....	8
ԳԼՈՒԽ Գ.....	12
ԳԼՈՒԽ Դ.....	18
ԳԼՈՒԽ Ե.....	24
ԳԼՈՒԽ Զ.....	29
ԳԼՈՒԽ Է.....	34
ԳԼՈՒԽ Ը.....	39
ԳԼՈՒԽ Թ.....	43
ԳԼՈՒԽ Ժ.....	49
ԳԼՈՒԽ ԺԱ.....	54
ԳԼՈՒԽ ԺԲ.....	58
ԳԼՈՒԽ ԺԳ.....	65
ԳԼՈՒԽ ԺԴ.....	70
ԳԼՈՒԽ ԺԵ.....	74
ԳԼՈՒԽ ԺԶ.....	79
ԳԼՈՒԽ ԺԷ.....	84
ԳԼՈՒԽ ԺԸ.....	88
ԳԼՈՒԽ ԺԹ.....	93
ԳԼՈՒԽ Ի.....	99
ԳԼՈՒԽ ԻԱ.....	104
ԳԼՈՒԽ ԻԲ.....	109
ԳԼՈՒԽ ԻԳ.....	115
ԳԼՈՒԽ ԻԴ.....	119
ԳԼՈՒԽ ԻԵ.....	123
ԳԼՈՒԽ ԻԶ.....	129
ԳԼՈՒԽ ԻԷ.....	133
ԳԼՈՒԽ ԻԸ.....	138
ԳԼՈՒԽ ԻԹ.....	142
ԳԼՈՒԽ ՎԵՐՁԻՆ.....	145

ԳԼՈՒԽ Ա

Փոքրիկ խումբ մը տասը-տասներկու ձիաուորաց, շտապաւ Բագրեւանդայ արեւելեան կողմը՝ Կոզովիտի հիւսիսը կը դիմէր, ժամանակը երեկոյեանալու մօտ էր, եւ յայտնի կ'երեւար թէ այդ խումբը բաւական հեռուէն կու գար՝ երբ դիտող աչք մը նկատէր լռութիւնը, որ յոգնածութեան հետեւանք էր, արեւէն այրած կերպարանքները եւ փոշին, որ ամէնուն զգեստները կը ծածկէր եւ ձիերուն քրտինքը, որ կը թորէր:

Պատանի մը շքեղ հագուած, գեղեցիկ նժոյգի մը վրայ նստած կը ձիավարէր. իւր կերպարանաց փափկութեան ու գեղեցկութեան հետ տխրութիւն եւ հոգ նկարուած կին երեսին վրայ: Չէր խոսեր, չէր նայեր շուրջը, այլ միայն ճամփան կը շարունակէր: Ուր ետեւէն շրջապատող խումբը թէ իր սպառազինութենէն, թէ՛ խրոխտ եւ զինուորական կերպէն կը յայտնէր թէ թիկնապահք էին այդ պատանւոյն, որ իշխանագուն մէր:

Աշնան շամանդաղը եւ մուխը միատեղ իջան երկրիս վրայ, երբ մեր խումբին գլխաւորը, որ յիսնամեայ, մեծագլուխ, ցլապարանոց մարդ մէր եւ որ երիտասարդին աջ կողմէն կը ձիավարէր, դարձաւ պատանւոյն եւ հաստ, բայց կամաց ձայնով ըսաւ.

— Ահա Վարդանաբերդ, լոյսերը կ'երեւանք իշխան, քառորդ մը միայն ճանապարհ ունինք: Կ'երեւի թէ շատ յոգնեցար:

— Յոգնութիւնը հոգ չէ՛, Ջաւէն,— պատասխանեց երիտասարդը,— մայրս վախեմ մտատանջութեան մէջ է հիմա:

Դարձեալ լռութիւն յաջորդեց, միայն ձիերու սմբակներու ձայնը կը լսուէր. ձիաուոր մը փոթորկելով գնաց աներեւութացաւ, եւ խումբը փոքրիկ լիճի մը քովէն պտոյտ ընելով եւ ժայռն ի վեր բարձրանալով մեծ դռան մը առջեւ կանգնեցաւ. ձիերը սկսան խիսնջել եւ գետինը ծեծելի դռները ճոնչեցին բացուեցան, Վարդանաբերդի գաւիթը ջահերով լուսաւորուեցաւ վայրկենին, պատանին հագիւ թէ իջաւ ձիէն՝ երիտասարդ սեւազգեստ կին մը տեսնուեցաւ, որ դահլիճին սանդուխին գլուխը կեցած իրեն կը նայէր: Ի՞նչ կար նորա անբացատրելի նայուածքին մէջ: Այսչափ միայն կարելի է գրուցել, որ զգայուն մօր մը բոլոր սէրը, յոյսը այդ նայուածքին մէջ էր, թէպէտ ամսուան մը հեռաւորութիւն միայն բաժնէր էր այս մայրը զակէն: Մայր, որդի իրար դիմեցին, համբոյր, գրկախառնութիւն, «որդեակ», «մայր», «սիրելի», «սիրեցեալ», քանի մը կաթիլ արտասուք գուարթ երեսներու վրայ, եւ ահա այդ քնքուշ երիտասարդ մայրը իր զակին ձեռքէն առած՝ իբրեւ թէ յափշտակելով, մտաւ ներս, անցաւ դահլիճը, տարաւ իր սենեակը, նստաւ եւ նստեցուց քովը, հարցմունքներ իրարու կը յաջորդէին, հագիւ թէ կիսակատար պատասխաններու տեղիք կար. հոն ամէն բանի վրայ կը խօսուէր. ճանապարհին վրայ՝ թէ վտանգ կա՞ր, թէ Ռշտունեաց Տիկինն ինչպէ՞ս էր, թէ Ոստանին հաւնէ՞ր էր որդին, թէ Վանայ ծովը եւ Վարդանաբերդի լիճը ի՞նչ տարբերութիւն ունէին իրարմէ. վերջապէս յայտնի էր թէ մայր մը կար գորովասիրտ եւ որդի մը, որ իւր մայրը կը պաշտէր: Բայց յանկարծ այս մայրը իբր խորքունէ արթնացաւ, թողուց զակին ձեռքը.

— Սակայն դու, որդեակ Գրիգոր, որ այս ժամուս կը հասնիս, անշուշտ անօթի ես. ձայն չես հաներ, եւ ես՝ վա՛յ ինձ, որ քեզմով միայն համրացեալ՝ բոլորովին մոռցայ հարցնել... Աղջկո՛ւնք, — կ'ըսէր նաժիշտներուն, — շուտ կերակուր հրամայեցէք...

— Իրաւ, սիրելի մայրիկ, ութ թերեւս աւելի ժամ կայ, որ ոչ հաց եւ ոչ ջուր մտած է բերանս, բայց որ քեզ տեսայ մոռցայ անօթութիւն եւ յոգնածութիւն:

— Ո՛հ, — կ'ըսէր մայրը դարձեալ տեսնելով տղուն փռշին եւ քրտինքը, — շուտ ջուր բերէք, զգեստ բերէք...

Եւ երբ կոնքը աղախին մը գուճս բռնած՝ ուրիշ մը ջուր կը լցնէր, ինք Տիկին մայրը ձիւնի պէս թելերը սոթտած փոքրիկ բօթիկ ձեռքերով իր գաւակին գլուխը կը լուանար. ծայրերը ոսկեթել բանուած դենջակով մը սրբեց մագերը, որդույն սիրուն գլուխը իւր ձեռքերուն մէջ՝ համբոյր մը դրաւ ճակատին, եւ նա մայրենի ձեռքը համբուրեց զգունօք եւ շնորհակալ սրտիւ:

Երիտասարդը կ'ընթեր էր մօր հարցմունքներուն կը պատասխանէր միանգամայն:

— Ռշտունեաց Ոստանը չի բաղդատուի մեր պզտիկ դղեակին եւ լճին հետ, բայց եթէ հոն մեծութիւն, ընդարձակութիւն կը տիրէ, հոս վայելչութիւն մը կայ, որ կը գրաւի, հոն եթէ Սէթա տիկին ընդարձակ գաւառի մը իշխանուհի կը հրամայէ, կը սաստէ, կը պատժէ, կը փոխէ, միշտ զբաղուած հազիւ թէ կանոնաւոր ժամանակ ունենալով ճաշելու եւ ընթերելու, հոս, Բիւրեղ տիկին լրիկ-մնջիկ նոյն գործքերն աւելի սահմանափակ գաւառի մը մէջ կը կատարէ եւ մայրաքար:

— Դու, որդեակ, լաւ ըսիր թէ հոն ընդարձակ գաւառ մը կայ կառավարելու, եւ ես կը խոստովանիմ թէ Սէթայի ըրածը կարող չե՛մ ընել: Երբ մենք պզտի եւ տարեկից էինք՝ նա արդէն իր հասակաւ, իր համարձակութեամբ, գործունէութեամբ, եռանդուն բնաւորութեամբ մեծին եւ փոքրին վրայ տեսակ մը իշխանութիւն կը վարէր իւր հայրենի տան մէջ. առանց Սէթայի խորհուրդ հարցնելու բան մը չէ՛ր կատարուէր տան մէջ, իսկ ես, որ իր փոքր քոյրը կը կարծուէի՝ կը զարմանայի այդ Ամատունեաց Օրիորդին վրայ, որ շատ անգամ առնացի ծպտեալ եղբայրներուն հետ որսի կ'երթար, ժայռերու, արշաւանքներու վրայ կը ձիավարէր յանդուգն քան զամէն երիտասարդը, եւ որ զարմանալին է՝ այսպիսի որսի արշաւանքի մը մէջ Թէոդորոս իրեն հանդիպելով եւ առանց սեռը իմանալու՝ այդ պատանուոյն հետ սիրով կապուէր էր. ուստի օր մը յանկարծ Ամատունեաց դղեակն երթալով եւ իւր եղբարց հետ տեսութենէ վերջ Միսակը հարցնելու ելեր էր: Եղբարքը շփոթած էին պատասխանի համար, երբ Միսակ դարձեալ երեւցեր էր Ռշտունեաց իշխանագունին ծանր եւ լուրջ, եւ ամէն նիւթի վրայ ցոյց տուած էր իր սրամտութիւնը: Թէոդորոս, որ 15—16 տարու տղու մը հետ տեսութիւն ընել կը կարծէր՝ յափշտակուած էր դեռաբոյս հանճարէն, բայց վերջն իմանալով թէ Ամատունեաց Օրիորդն է այդ Միսակը եւ լաւ գիտնալով իւր հօր՝ Վահրամ Ռշտունուոյն, խստութիւնը հայրենական արանդութեանց պահպանութեան մասին, զաղտնի խնդրէր էր Սէթաէ, որ այդ համարձակութիւնքը չափաւորէ, եւ քիչ վերջը ծնողաց հաւանութեամբ ամուսնութիւնը կատարուեցաւ: Ուստի մի՛ զարմանար եւ մի բաղդատէր մեր հակառակ բնաւորութիւնները, ինչպէս քու հայրդ, Աստուած լուսաւորէ հոգին, խաղաղասէր, հանդարտ, անկարելի էր բաղդատել Թէոդորոսի բուռն եւ խիստ բնաւորութեան հետ:

— Բայց դարձեալ ուսկի՞ց է, որ Ռշտունեաց ընդարձակ գաւառը եթէ գոհ է իւր Տիկնոջ կառավարութենէն, մեր Կոզովտի գաւառը աւելի գոհ ու երջանիկ է իւր տիրուհւոյն կառավարութենէն:

— Այս նաեւ շատ դիւրին է բացատրելի Մէթա պարտաւոր է իր Թէոդորոսի պատերազմաւեր բնաւորութեան եւ պաշտօնին պիտոյքը հոգալ, զօրք եւ դրամ հասցնել, ո՛ր յ գիտէ, երբեմն արտաքոյ կարգի հարկեր ձգել երկրին վրայ, երբ մե՛նք՝ մանաւանդ հօրդ մահուանէն վերջ՝ կը տեսնես թէ ի՛նչ խնայութեամբ կ'ապրինք... ես կը ճանչեմ Մէթայի բնաւորութիւնը՝ շատ առատաձեռն է...

— Ո՛չ, մայր իմ, այդ մասին կը սխալիս, Ռշտունեաց Ոստանը՝ շատ աւելի խնայողութիւն կայ քան թէ հոս. Տիկինը ծեր հազարապետ մը ունի՝ վերակացու իւր տան՝ Յուսիկ անուն. մարդ, որ եթէ ազահութիւն բառը չլինէր աշխարհքիս վրայ, կարող էր ստեղծել. ամէն ոք կը գանգոտի նորա դէմ, Տիկինն ինք առաջին, Բայց ի՛նչ օգուտ, նա իր ընելիքը կը շարունակէ անխռով:

— Մէթա ինչպե՞ս կը համբերէ այդ մարդուն, իշխանը ուրեմն

— Ո՛չ, Մէթա ինքն այդ մարդը պաշտօնի կարգեր է, եւ թէպէտ ամէն օր հետը կը վիճէ, Բայց միշտ կը պահէ, եւ կը զրուցէ նաեւ թէ իր ամենահարկաւոր մարդը Յուսիկն է:

— Կ'երեւայ թէ Մէթա ինքզինքը կը դաստիարակէ,— ըսաւ Բիւրեղ ծիծաղելով:— Բայց դու ինչպե՞ս ժամանակդ կ'անցնէիր, Վարդ ինչպե՞ս տեսար, ես փոքր տղայ զինք ճանչցած եմ:

— Շատ լաւ կորովի պատանի մէ, իւր մեծ զուարճութիւնը որսն է, երբեմն իրեն կ'ընկերանայի:

— Ըսել կ'ուզես թէ ակամայ:

— Բնական է, մայրիկ, ես միտքս չե՛մ դրած թէ մարդս միայն լեռները չափելու համար է ստեղծեալ, մարդ ունի նաեւ աննիթական մաս մը՝ նիթականին հետ այն ալ պէտք է յագեցնել:

— Հիմա որ ընթրեցիր, ժամ է երթաս հանգչիս:

— Բայց, մայրիկ, քոյրերս երկուքն էլ քնացա՞ծ են, լաւ՞ են, առո՞ղջ են:

— Երկուքն էլ լաւ եւ հանգիստ են:

— Քեռիս, Կամսարականն ո՞ր է:

— Քու Վասպուրական երթալէդ երկու-երեք օր վերջը թողուց գնաց Շիրակ, նա գիտես, առանց քեզի չի կրնար ապրիլ: Կ'երեւի թէ Բաղրեւանդ իրեն համար անապատ է, երբ դու չի կաս: Հաւանական է թէ վաղը կամ միւս օր կու գայ:

— Ես էլ զինքը շատ կը սիրեմ, Բայց կը փափագէի, որ զիս քիչ մը հանգիստ թողուր իւր զինամարզութեամբք եւ քարոզութեամբք, որ միշտ կը սկսին՝ «Մամիկոնեանց եւ Կամսարականաց սերունդի մը այսպէս կը վայելէ լինիլ կամ այդպէս չի վայելէր»:

— Շատ բարի, որդեակ իմ,— ըսաւ մայրը ժպտելով,— կարծեմ թէ երեք օր մը ազատ կրնաս լինիլ մօրեղբօրդ ձեռքէն, դժբախտութիւն մը եթէ կայ, հոն է, որ մայրդ զքեզ ազատ պիտի չի թողու, երբ ամսուան մը հեռաւորութեամբ այնչափ կարօտցեր է:

— Այդ դժբախտութիւնը դու լաւ գիտես, սիրելի մայր, թէ իմ երջանկութիւնս է:

Այս ըսելով Գրիգոր մօրը ձեռքը համբոյրներով կը ծածկէր, եւ երկուքն էլ կը պատրաստուէին ելնելու, երբ ամրոցին մեծ դռան զարկը երեք անգամ բախեց: Գրեթէ կէս-գիշեր էր, մայր ու տղայ իրարու երես նայեցան եւ իրենց նայուածքը հարցական մէր թէ ո՞վ կրնար լինիլ այն ժամանակ եկողը:

Նոյն հարցմունքը կրկնուեցաւ նաեւ նոյն միջոցին վարը պահապանաց եւ զօրականաց սենեակներուն մէջ: Զաւէն անձնապահապետը, որ կօշիկները հանած՝ նստած տեղը մրափելով իր մարտողութիւնը կը կատարէր, ցատկեց շտկուեցաւ եւ իւր երկու խոր եւ փայլուն աչքերը դէպի դուռն սկսան նայիլ: Դուրսի մեծ դռան պահապաններուն ամենքը ուշ կը դնէին եկողին կամ եկողներուն հետ կը խօսէին: Զաւէն արագութեամբ սուրը գլխուն վրայէն յափշտակելով դուրս ելաւ եւ դուռը դիմեց:

— Բացէ՛ք, բացէ՛ք, իշխանն է, Հայոց զօրավարը, Թեոդորոս Ռշտունին,— կ'ըսէր դուրսէն ձայն մը:

— Այս ժամանակ ամրոցին դուռը չի բացուիր,— կը պատասխանէր դռնապանը,— ո՛վ կ'ուզէ թող լինի: Վաղն առաւօտ լոյս աչքով բարի եկաք, հազար բարով:

— Տէ՛, դուք հայ չէ՞ք, քրիստոնէայ չէ՞ք, Հայոց զօրավարը գիշերով դուրս կը ձգէք:

Այս վիճաբանութեան վրայ էին, երբ Զաւէն՝ դռնապանին քովն եկաւ եւ կամաց ձայնով քանի մը խօսք զրուցեց եւ մթութեան մէջ անհետ եղաւ: Նոյն միջոցին դուրսն էլ լռութիւն յաջորդեց:

Զաւէն շրջան մը ըրաւ բերդին քարածայրին մէկ կողմը, գաղտնի փոքրիկ դռան մը գնաց եւ ամենայն զգուշութեամբ բացաւ. հոն պահապան մը դնելով ինք անշշունջ ելաւ դուրս եւ իջաւ վար նայելու համար թէ ի՛նչ մարդիկ էին եկողները, տեսաւ քանի մը ձիաւորք, որ կեցեր կը գանգտէին թէ Հայոց զօրավարը անձամբ հասնելով դռները փակ պիտի գտներ, եւ թէ այդ անձանօթը պատճառ եղած էր զիրենք ի Վարդանաբերդ բերելու: Այս խօսքերը լսելով Զաւէն առանց դանդաղելու դարձաւ մտաւ իւր փոքրիկ դռնէն ներս եւ ամուր աղիւսէլէն վերջ գնաց դռնապանին եւ հրամայեց դռները բանալ անյապաղ:

— Բարո՛վ, բարով, եղբա՛րք, ձեր գալուստը,— ըսաւ Զաւէն,— մի՛ զարմանաք եթէ զգուշութեամբ կը շարժինք այսպիսի ժամանակ, դուք էլ մեր տեղն եթէ լինիք կարծեմ թէ այսպէս պիտի շարժէիք:

— Ճշմարիտ է, եղբայր, ըսածդ, բայց մենք Հայոց զօրավարին անունը ձեզ տուինք, որ ճամփան շեղեց գիշերս հոս օթագայելու համար, եւ այդ՝ հրաւիրանօք Կամսարական Սուրէն իշխանի մը, որ մեզի հետ ընկերացաւ,— պատասխանեց զօրականաց մէկը, որ աւելի նշանաւորն էր իր ընկերաց մէջ, արեւէն սեւցած երեսովը, փայլուն աչքերովը, վզին ահագին հաստութեամբը:

Զաւէն շուտ մը ներս մարդ դրկեց իմացնելու համար Թեոդորոսի գալուստը Սուրէնի հետ: Արդէն Տիկիներ եւ Գրիգոր պատուհաններէն մտիկ ընելով եւ լսելով այս խօսակցութիւնը, հրամայեցին սպասաւորաց լուսաւորել դահլիճը, երբ ձիոց խիսնջիւններու եւ սմբակներու ձայնը, զինուց շառաչիւնը եւ ջահերուն աղօտ լուսին փայլը անսովոր եւ յանկարծական կենդանութիւն տուին Վարդանաբերդի գալթին, կէս-գիշերուն լռութեան մէջ:

Պալատին ներքին դուռը բացուեցաւ, սպասաւորը ջահեր ձեռուրուրնին եւ Գրիգոր առջեւէն իջան հիւրերը դիմաւորելու, եւ ահա ինքն Հայոց զօրավարը եւ քովէն Սուրէն Կամսարական սանդուխներէն վեր կ'ելնէին:

— Որդեակ Գրիգոր, բարի է գալուստդ,— ըսաւ Սուրեն եւ պատանին համբուրեց,— քեզ այս երեկոյ տեսնելու յոյս չունէի: Ահա այս գիշեր ձեզ երեւելի հիւր մը բերի, տեսնենք ի՞նչ ընդունելութիւն պիտի ընես:

— Ռշտունեաց Տէրը մեր փոքրկութիւնը կը պատուի, ինքն է տանտէրը, ինքն, որ յոյս եւ ապաւեն է բոլոր հայ ազգին:

— Յոյս եւ ապաւեն Աստուած ինքն է միայն, որդեակ իշխանագուն,— ըսաւ Թէոդորոս իր խոր եւ մեծ հայեցումաձօքը պատանւոյն վրայ դարձնելով:

Այսպէս մտան մինչեւ մեծ դահլիճը այս երեք անձինք հետեւեալ քանի մը սպասաւորաց եւ թիկնապահաց, ուր վառարանը արդէն փայտերու բոցով կը ճարճատէր եւ կանթեղներու լոյսը կը զօրացնէր: Այդ աշնան ժամանակին գիշերները բաւականին զգալի եւ ցուրտ են Հայաստանի այս կողմերը, եւ Թէոդորոս ախորժ աչօք նայեցաւ այդ բոցոյն եւ մօտեցաւ վայրկեան մը վառարանին:

Իսկ երբ Հայոց զօրավարը թողուց վառարանը եւ դարձաւ՝ Սուրեն ու Գրիգոր անհետացած էին. իւր թիկնապահաց ակնարկ մը ձգեց, եւ ահա մէկը յառաջացաւ՝ սաղաւարտն առաւ գլխէն, եւ իւր նշանաւոր գլուխը երեւցաւ: Թէոդորոս Ռշտունեաց Տէրը միջահասակ եւ հազիւ թէ յիսուն տարու մարդ մը կ'երեւար այն ատեն. իւր լայն ճակատը, իւր յօնքերու զօրեղ կամարը, իւր ծանր եւ անխռով նայումաձօքը, իւր արծուի քիթը, իւր լայն կուրծքը, իւր բոլոր կերպարանաց հզօր համեմատութիւնը, աւելցնենք ասոնց վրայ իւր հակիրճ եւ վճռական խօսակցութիւնը՝ առաջին ակնարկին յայտնի կ'ընէին նշանաւոր մարդը, որ հրամայելու համար ստեղծուած էր:

Նոքա, որ կը ճանչէին զինքը, գիտէին իւր արդարութեան ոգին, գիտէին իւր քաջասրտութիւնը, գիտէին իւր անդդողելի հաստատամտութիւնը, իւր հայրենի կրօնից հաւատարմութիւնը, եւ որ հազուագիւտն էր՝ մեծ եւ պզտի նախարարաց մէջ՝ գիտէին ժողովրդեան վրայ, անագատ եւ շինական ժողովրդեան վրայ, իւր ունեցած գուրբը, որ միայն ճշմարիտ հայրենասիրութիւն կրնայ համարուիլ: Շատ անգամ, երբ բարձակից նախարարաց հետ կը խօսէր, կը յիշեցնէր թէ իրենց պարտաւորութիւնը ժողովրդաց հայր եւ պաշտպան լինիլն էր եւ ոչ հարստահարել, թէ Աստուած համար պիտի պահանջէր այն անիրաւութեանց, որ հաւասար օտարին՝ կը գործադրէին զանազան գաւառներու մէջ: Եւ իշխանք, որ զԱստուած շատ հեռու կը գտնէին իրենց անզգամութեանց սանձ դնելու համար՝ Թէոդորոսի երկիւղէն արդարութեամբ կը կառավարէին իրենց վիճակը: Ճշմարիտ հայրենասիրութիւն, որ ոչ զագզը շողոքորթելու եւ ոչ նախատելու մէջն է՝ կը զգար իւր արդար սիրտը եւ ուղիղ խորհրդածութիւնը. ինք կը տեսնէր եւ լաւ կը հասկնար թէ հայ ազգին թշուառութեան պատճառն զօրաւոր ազգային կառավարութիւն մը ելէնչլինելէն եւ նախարարաց անկոպար իշխանութենէն առաջ կու գար, որով երկրին մէջ կատարեալ անիշխանութիւն եւ փոքրիկ բռնաւորներ կը տիրէին, ստրուկք եւ խաղալիք օտարին: Եթէ ինք, որ հանճարի մարդ էր կը ջանար համոզել նախարարաց երեւելիքը միանալ դաշնակցութիւն մը կազմել օտարին բռնութենէն ազատելու հայրենիքը եւ արդարութիւնը թագաւորեցնելու համար, կային այնպիսի թուլամորթ կամ չարակամ կամ կարճատես մարդիկ, որ փախուստ կու տային այդ միաբանութեան կապէն, երկրին տարածութիւնը, լեռներու անջրպետքը ցցնելով, որոնց Թէոդորոս կը հարցնէր իրաւամբ թէ «ինչպէ՞ս ուրեմն այդ ընդարձակ տարածութեան մէջ՝ այդ լեռներու բարձրութենէն հայ կրօնք եւ հայ լեզու կրցեր էր ճամփայ գտնել եւ միացնել այդ ժողովուրդները հայ ազգութիւնը կազմելու համար»: Այդ մարդը, որ աչքերը տնկած Մասանեանց հզօր գահոյից անկումը գուշակած էր, վասնզի ապականութիւնը եւ փտութիւնը տեսած էր թէ ի՞նչ

աստիճանի հասած էին հոն Տիգրանի մայրաքաղաքին մէջ, այդ մարդը, որ նոյնպէս Կոստանդնուպոլիս նոյն տեսարանը նկատած էր Բիզանդական խարդախ եւ թունալից կառավարութեան մէջ, եւ հիմա կը տեսնէր Արաբիոյ անապատներէն վայրենի եւ բարբարոս կրօնամոլ ամբոյս մը, որ հազիւ թէ լսելի եղած աշխարհքիս՝ իբրեւ հրաբուխի բորբոքեալ գետ մը կը դիմէր, կը հասնէր, կը տոչորէր յաջորդաբար Դամասկոս, Եփես, Երուսաղէմ, Հալէպ, Անտիոք, Մեմփիս, Աղեքսանդրիա, Տիգրան, որ ոչինչ չէր խնայէր, ոչ հասակ, ոչ սեռ, ոչ այլք, ոչ սրբութիւն եւ ոչ կրօն, եւ որ սուկալին է, կը տեսնէր այդ հրեղէն գետը հասած դիզուած Հայաստանի սահմանագլուխը սպառնալից. դառնացեալ կը մտածէր եւ իր բոլոր միտքն ու ջանքը հոն էր, որ այս պատուհասը հեռացնէ իւր հայրենեաց վրայէն: Եւ այս վիճակին դարման տանելու համար Յունաց Սպարապետը գնացեր տեսեր էր Կարին, եւ համոզեր էր զինքը ամենայն քաղցրութեամբ՝ զօրաւոր փաստերով եւ ապագային ահագին վտանգներն առաջ դնելով թէ պետք էր շարժիլ եւ շարժիլ ամէն զօրութիւն: Եւ ինք անգործ չի մնալով կը շրջէր գաւառէ գաւառ՝ կը յորդորէր զամէնքը եւ կը զօրացնէր հայկական գունդը:

Այս պատճառաւ անցեր էր նաեւ Շիրակայ, որ այն ժամանակներ Կամսարականաց կը պատկանէր, եւ ուր Սուրէն իրեն ընկերացեալ զօրաց մեծ մասը Վարդանակերտ թողլով՝ փոքր խումբով Վարդանաբերդ եկած էր Կամսարական իշխանին թախանձանօք, որպէսզի աւելի հանգիստ ընէ:

ԳԼՈՒԽ Բ

Սուրէն Կամսարական քառասնամեայ անձ մէր, թիկնաւետ, յաջողակ զէնքերու մէջ, կորովի ձեռօք եւ մտօք ինք. Կամսարական զարմին ամէնէնամէնէն փոքր եղբայր լինելով եւ անգաւակ, եւ իւր կինը կորսնցնելով՝ որ շատ կը սիրէր, գրեթէ թողած էր հայրենի տունը Շիրակ, եւ իւր քրոջ Բիւրեղի վրայ մեծ սէր ունենալով նրա հետ կը բնակուէր Կոզովիտ: Բայց քանի որ Գրիգոր կը մեծնար, իւր՝ Գրիգորի վրայ սէրն էլ օրաւոր կը մեծնար: Գրիգոր հանդարտ եւ խելօք էր բնաւորութեամբ, իւր հօրը՝ Դաւիթ Մամիկոնէի պէս, որ սկար եւ հիւանդոտ լինելով չունէր հայ նախարարաց այդ ընդհանուր եղած զուարճութեանց, որսի, պատերազմի, մականախաղի, պերճութեան եւ անառակութեան սէրը, այլ ընհակառակն իւր մտաւոր կարողութիւնքը մշակելով՝ ուսմանց եւ գիտութեանց սէր ունէր: Նա նոյնը իւր գաւկին հաղորդէր էր: Վարդանաբերդ հայերէն եւ յունարէն գրոց հարուստ մատենադարան մը ունէր, եւ Մամիկոնեան իշխանին միմիայն ուրախութիւնն էր եւ մխիթարութիւն տեսնել իւր Գրիգոր վարժ եւ յաջողամիտ. ժամանակին գիտութեանց մէջ տարիքէն յառաջադէմ: Իւր պալատը միշտ լեցուն էր գիտնական վարդապետներով եւ աշխարհահաճ ճամփորդներով. եւ Գրիգոր ուշի-ուշով մտիկ կ'ընէր ամէն խօսակցութիւն, որ նոր էին իրեն համար եւ միտքը կը զօրացնէին: Թէպէտ ծնողքը գոհ էին իրենց գաւկին մտաւոր զարգացմանէն, բայց նոյնը կարելի չէր զրուցել Սուրէնի համար, որ երբ Դաւիթ հոն չէր, կը մտնէր Գրիգորի սենեակը եւ յափշտակելով գրքերն առջեւէն, «Մամիկոնեան պատանոյ մը համար շատ է եւ բաւական ինչ որ գիտես, քիչ մէլ ուրիշ մարզերու նայինք» ըսելով՝ սուսերամարտութեան, նիզակախաղութեան եւ ձիամարզութեան կրկնութիւններ ու կը զբաղեցնէր, առանց ուշ դնելու իւր քրոջ դիտողութեանց. շատ անգամ որսի տանելով հետը լեռներ, սարեր, ձորեր հետի կը քալցնէր, եւ երեկոյին, երբ Գրիգոր յոգնած, դադրած, տուն կը դառնար գրեթէ անկարող շարժուելու, ինք Սուրէն առաջինն էր նրա ծնողաց ըսելու թէ «Ահա այսպէս Վարդաններ եւ Վահաններ կը զարգանան եւ կը հասնին, եւ ոչ գրքերու

առաջ ժամեր անցնելով»: Իսկ Դավիթ, որ կը տեսներ թէ տղան օրաւոր կը զօրանար այդ մարմնամարզութենէն ժպտելով կ'ըսէր. Սուրէն եւ ես առանձին կատարեալ մարդ չենք, ես կարող միտք միայն եմ, նա կարող մարմին միայն է. Աստուած տայ, որ Գրիգոր երկուքն էլ ունենայ:

Սուրէն զօրաւոր կազմուածքի տէր եւ անխռով միտք, վասնզի ներկան՝ օրը եւ ժամը միայն կը մտածէր սովորաբար, որ ոչ Թէոդորոսի պէս ազգին չափազանց սիրահարն էր, եւ ոչ Գրիգորի պէս Ռշտունեաց Օրիորդին, անկողին եւ քուն մտաւ միանգամայն, եւ երբ արշալոյսին հետ արթնացաւ, դիմեց դահլիճը, տեսաւ, որ Թէոդորոս արդէն չի կար: Սպասաւոր մը թուղթ մը տուաւ իրեն, որ չի լուսացած՝ սուրհանդակ մը բերած էր Թէոդորոսի, եւ որովհետեւ հրաման էր ո՛ր ժամանակ լինէր ամէն լուր իրեն հաղորդել ըռպէին, թիկնապահքը մտէր էին սենեակը եւ աւէր էին թուղթը. Թէոդորոս շուտ մը սպառազինեալ հեծէր էր երթալու եւ Սուրէնի սպասաւորաց մէկուն տալով իր ընդունած թուղթը, մեկնէր էր: Սուրէն կարդաց այդ համառօտ նամակը.— Ատոմ Շահունի առ Թէոդորոս Ռշտունի. «Գիտութիւն լիցի, Հայոց զօրավար, որ յունաց բանակը կը մտնէ մէկ կողմէ, իսկ արաբը երկու գունդ բաժնուած, մէկը Երասխ անցեր է ի Նախջուան, միւս Արտազ մտեր է»:

Վայրկեան մը մտածեց Սուրէն եւ գնաց զգեստները հագաւ, երբ Գրիգորի ուղղուեցաւ՝ տեսաւ քոյրը, որ զինքը դիմաւորեց, եւ քաղցր ժպտով երկու ձեռները տարածելով՝ թող չի տալով, որ առաջ անցնի՝

— Ո՛չ,— ըսաւ,— Գրիգորը թող որ հանգչի:

— Բայց դու չես գիտէր, որ Թէոդորոս գնացեր է արդէն:

— Ինչպէ՛ս չեմ գիտէր, ես տեսայ նորա երթալը. Բայց իմ գաւակս Հայոց զօրավար չէ, պէտք է որ հանգչի՝ քուն լինի եւ այս տարիքին մէջ զօրանայ:

— Ահա՛ կանանց ամենէն լաւը՛,— գոչեց Սուրէն.— եթէ ձեզի թողուի տղան ճգնաւոր, վարդապետ, շատ-շատ թուլամորթ կայթողիկոս մը պիտի ընէիք... Գիտե՛ս ի՛նչ ժամանակի մէջ ենք, գիտե՛ս թէ վաղը ի՞նչ կրնայ հասնիլ գլուխնիս, ո՛չ դու միայն այն կը մտածես թէ Գրիգոր այքէդ չի հեռանայ, անհանգիստ չլինի, իւր ամէն կամքը կատարուի: Բայց ես կը մտածեմ, որ Գրիգոր իր խելքով, իր գիտութեամբ ոչ միայն Վարդանաբերդ նստի, Կոզովիտ եւ Բագրեւանդ կառավարէ մօրը պէս եւ մօրը պէս գոհ ընէ այդչափ ով զամենքը՝ նաեւ Թէոդորոս Ռշտունին, այլ ես կ'ուզեմ, որ լինի աւելի քան այս Ռշտունեաց Տէրը թէ հոգով եւ թէ մարմնով, ես կուզեմ...

— Գիտեմ քու ամէն գրուցելիքներդ, շատ իրաւունք ունիս, Բայց դու այնչափ բարձր կը խօսիս, որ Գրիգոր կրնայ զարթնուլ, ե՛կ իմ սիրելի եղբայրս, եւ ինչ որ պիտի խօսիս իմ սենեակս խօսէ:

Այս ըսելով այդ գեղեցիկ կինը առաւ քաղցր բռնութեամբ եղբօրը ձեռքը եւ տարաւ սենեակը նստեաց. դիմացը կանգնելով եւ ձեռքերը կուրծքին վրայ ծալլելով:

— Հիմա հոս գրուցե՛ ինչ որ կ'ուզես, բոլոր ուշս քեզի է,— ըսաւ ժպիտը միշտ շրթունքներուն վրայ:

— Ժպտելու ժամանակ չէ, քոյրիկ:— պատասխանեց Սուրէն ձեռքի թուղթը ցցելով եւ կարդալով նամակին վերջի խօսքերը:

— Եթե յունաց բանակը Բագրեւանդ կը մտնէ՝ կը նշանակէ թէ մեր պաշտպանութեան կը դիմէ. եթէ Թեոդորոս կը շտապէ եւ կանուխ կը վազէ կ'երթայ, կը նշանակէ թէ նախջուանայ կողմը մեր պաշտպանութեան կը դիմէ. եւ այս բանիս համար պէտք է որ ժպտի՞լն էլ արգիլուի:

— Ահա՛ կանանց ամենէն լաւը,— կրկնեց Սուրէն:— Այդ խօսքերով կարծեցիր թէ ինձ պատասխա՞ն տուիր: Այսպիսի վիճակի մէջ բաւակա՞ն է ըսել թէ Թեոդորոս գնաց արաբաց դէմ, եւ մենք պէտք է ոտքերնիս, ձեռքերնիս արածենք անհոգ, անպիտան, դանդաղ նստինք: Այդ մարդը՝ այդ Թեոդորոս երբ «այդ թուղթը Սուրէնի տուէք» կ'ըսէ, այն կ'իմանայ, որ Սուրէն պէտք է շարժի, առնու Մամիկոնեանց զաւակը եւ դիմէ հոն, ուր արաբը կ'արշաւի, թումբ լինելու համար այդ սոսկալի թշնամոյն դէմ, որուն առաջ ոչ բաւական ամբողջին կայ եւ ոչ նուիրական բան մը աշխարհքիս վրայ:

— Բայց այդ Մամիկոնեանց շառաւիղը դեռ տասնեօթ տարու պատանի մէ, յոգնած՝ նոր ճամփէ եկեր է, կէս-գիշերն անցած հազիւ անկողին մտեր է, իւր տարիքին մէջ օրէնք չէ, որ այդ կատաղի գազանաց դէմ հոգին եւ մարմինը վտանգի դնէ եւ իւր հօր տան ծուխը մարէ:

— Շատ կ'ուզէի, որ այս խօսքերը Թեոդորոսի անգամ մը գրուցէիր...

— Ի՞նչ գաղտնիք կամ ամօթ կայ այս խօսքերուս մէջ, որ չի կարենայի գրուցել. կարծեմ Վարդ երէկ իրիկուն հօրը հետ մեկտեղ չէր եւ չեմ կարծեր թէ վարը զօրականաց հետ ընթրեց, եւ հայրը բռնի մօրը գրկէն առաւ որդին արաբաց դէմ պատերազմելու կամ թումբ շինելու համար:

Այս խօսքերուն երբ Սուրէն սրտնեղութեամբ բերանը բացաւ պատասխանելու, Բիւրեղ առանց ժամանակ տալու «Ահա՛ կանանց ամենէն լաւը»,— գոչեց ծիծաղելով եւ նոյն բոպէին փոքրիկ ոտնաձայն մը լսելով սենեակին մէջ ետին դարձաւ եւ գեղեցիկ վեց տարեկան աղջիկ մը Սուրէնի գիրկը դրաւ. իսկ Սուրէն այդ սիրուն տղեկը գրկին մէջ սղմելով եւ համբոյրներով ծածկելով.

— Միրո՛ւն, աննման Արփենի,— կ'ըսէր,— ահա՛ կանանց ամենէն լաւը դու ես, երբ մեծնաս՝ սա մայրիկեղ աւելի խելօք պիտի լինիս, ջանաս, որ քու զաւակներդ թուլամորթ, հոյլ դանդաղ չլինին...

— Ո՛չ, ո՛չ այսպիսի զրպարտութիւն զակիս համար չեմ ընդունիր,— եւ դռան մէջ տեսնելով որդին,— լաւ ժամանակին կը հասնիս, Գրիգոր, քեռուդ պատասխան տուր եւ հասկցու իրեն թէ ոչ ուլամորթ, ոչ հոյլ եւ ոչ դանդաղ ես:

— Իմ փափագս ալ այն է, որ ինձ իմացնէ Գրիգոր թէ ինք ըսածներուս բոլորովին հակառակ ժիր, գործունէայ, եռանդուն է, եւ գիտէ ժամանակին առնուլ իւր զէնքերը, ազգի, կրօնքի եւ հայրենի իրաւանց վրայ պատերազմիլ:

— Եթէ դոքա վտանգի մէջ են ո՛ր մարդ կրնայ առանց վատութեան դրոշմը ճակտին կրելու փախուստ տալ այդ պարտաւորութենէն,— ըսաւ Գրիգոր ծանրութեամբ, եւ առաջ անցնելով առաւ իւր գիրկը Արփենին, որ իւր փափկաթոյր թելերը եղբօր վզին փաթաթելով, ուրախութեան համբոյրներով եւ տարիքին յարմար խօսքերով կը պատասխանէր այս գրկախառնութեան:

Իսկ Բիւրեղ անգամ մը այդ տեսարանին լռելեայն աչք ձգելէն վերջ՝ լռելեայն դուրս ելաւ, որպէսզի ոչ եղբայր եւ ոչ զաւկները տեսնեն իւր արտասուքը:

Կաթիլ մը արտասուք շատ անգամ այնչափ գաղտնիք կը պարունակէ, որ յանձնապատան էւ յիմար մարդ մը ոչ կը զգայ եւ ոչ կրնայ իմանալ, իսկ խոհուն մարդուն համար մտածութեան նիւթ մէ: Այդ կինը՝ երիտասարդ, գեղեցիկ, քաղցր, զգայուն, որ իր եղբօ՞ր հետ ոտն առ ոտն կը կռուէր եւ կ'ուզէր հեռացնել ամէն վտանգ որդւոյն գլխէն, ոչ միայն պաշտպան, յոյս, ժառանգ անձին, զակներուն եւ երկրին կը տեսնէր այդ տղուն վրայ, այլ նաեւ իւր հօր կենդանի յիշատակն էր իր աչքին, անցեալ երջանիկ օրերու, որ չեն դառնար, երբ անգամ մը սրանան հեռանան, եւ մարդս իր երեւակայութեան մէջ անոնք կ'ուզէ բերել, դարձնել, մեռածը կենդանացնել, այդ արտասուքը այդ փափագներուն վկաներն էին: Իսկ Սուրէն, որ սուր աչք ուներ բայց մէկ մասը միայն կը տեսնէր այդ արտասուաց, կրկնեց ինքնիրեն ինչ որ սովոր էր գրուցել իւր քրոջ համար. Ահա՛ կանանց ամէնէն լաւը:

Նոյն միջոցին Գրիգորի միւս քոյրն էլ Նազենիկ եկաւ, եղբօրը հետ գրկուեցաւ. գրեթէ հասած աղջիկ մը գեղեցիկ, գողտր, դեղձան մազերով, նուաղեալ աչքերով քաղցր տխրութիւն մը երեսին վրայ տարածեալ: Հաճելի էր տեսնել պատանին, որ դեռ երիտասարդութեան չէր հասած եւ հօր մը ժպիտով կը նայէր իւր քերց վրայ եւ կը գուրգուրար:

Ընտանիքն ամէնքը միաբան իջան նախաճաշն ընելու, Սուրէն լուռ էր, վասնզի չէր ուզէր իւր քոյրը տխրեցնելի Գրիգոր երբեմն կը խօսէր, բայց Արփենին միշտ նիւթ կը գտնէր խօսելու եւ հարցնելու: Սեղանատունէն վար կ'երեւար գեղեցիկ փոքրիկ լիճը արծաթի սկաւառակի մը պէս, մակոյլ մը լճակը կապուած իբր թէ կը հրաւիրէր պտոյտ ընելու ծառազարդ եւ ծաղկազարդ ափանց վրայ. բայց ոչ ոք այդ մտածութիւնը չունէր. Սուրէն առաջինն էլաւ սեղանէն՝ նոյնպէս ամէնքը, եւ Արփենի ամէնէն վերջ, միայն նա էր, որ չէր զգար թէ սպառնալից փոթորիկ կար օդին մէջ:

Իտեղճ մայր, գիտէր, որ զաւակն իրմէ պիտի բաժանուէր, եւ այս անգամ ինք չէր, որ կ'ուղարկէր, այլ ստիպող յարկը՝ մահահոտ պատերազմի շրինդն էր, որ իր գրկէն կը կորզէր իր միմիայն յոյսը: Ուստի կորագլուխ անձայն գոհի պէս տեսաւ նորա սպառազինիլը, այլեւս արտասուք չի կար աչքերը, վասնզի սիրտն էր, որ կու լար, եւ երբ սանդուխին դուռն որդւոյն ձեռքերն եւ երեսները համբուրեց եւ ինք աչքերը գոց երկայն գրկախառնութիւն մըրաւ, մէկը չէր կրնար որոշել աղօ՞թք էր թէ գրկախառնութիւն:

Քսանի չափ հեծեալ սպառազէնք Գրիգորի կը սպասէին, երբ նա էլ հեծաւ եւ առանց գլուխը դարձնելու էլաւ բերդին դռնէն դուրս Սուրէնի ետեւով.

— Զաւէ՛ն, Զաւէ՛ն,— կանչեց ներդաշնակ ձայն մը վերով:

Մեզ ծանօթ անձնապահապետը դարձեալ մտաւ, եւ տեսնելով թէ Տիկինը չի խօսիր, իջաւ ձիէն, էլաւ սանդուխներէն վեր:

— Զաւէ՛ն, քեզի նեղութիւն տուի, բայց մօր մը տկար սրտին ներէ. աւելորդ է քեզի յանձնել, բայց ինդրեմ հսկէ զակիս վրայ,— ըսաւ Տիկինը:

— Ո՛հ իշխանուհի, առանց իշխանիկին հաւտա՛ թէ Զաւէն աչացոյ չերեւար:

— Աստուած հետերնիլ լինի...— կրցաւ միայն գրուցել իտեղճ կինը եւ գլուխը դարձուց դէպի դուռը. էլ չէր կարող: Շտկուեցաւ դէպի եկեղեցին եւ հոն իւր վիրալից մայրենի սիրտը տարածեց ստեղծողին՝ միմիայն մխիթարիչ ցաւերու:

Ծեր զինուորը մօր մը այս կերպարանքին չի կրցաւ դիմանալ, գլուխը շարժելով, աչքերը սրբելով հեծաւ եւ մտրակեց եւ փոշույ ամպի մէջ անհետացաւ եւ հասաւ խումբին, որ լռութեամբ իր ընթացքը կը շարունակէր, մինչեւ հասաւ Վարդանակերտ:

Սուրէն, որ մինչեւ այն ժամանակ բերանը չէր բացած, ցցուց հեռուանց Գրիգորի ծեր զօրավար մը, որ աւանին հողապատնէշներուն դուռը կեցած զիբենք կը դիտէր. «Տե՛ս,— ըսաւ,— սա ծերը Թէոդորոսի տեղապահ եւ մեծ բարեկամն է. սա է, Ատոմ Շահունի, երկիւղ երթէք չէ գիտցել թէ ի՞նչ է, մահն արհամարհել իրեն բնութիւն է դարձել, հիմա որ վաթսունն անց է, պատերազմի մէջ երիտասարդէ լաւ կը կռուի, կարող է խարդախութիւն մը, սուտի մը համար իր զաւակն սպաննել. կարծեմ թէ իւր ծիծաղը ոչ ոք տեսած չէ, երբ մօտենանք եւ զինքը դաժան տեսնես մի՛ գարմանար, բացի Թէոդորոսէ ոչ ոք համարմունքի արժանի չի սեպեր, եւ շնորհք է եթէ չարհամարհէր»:

Եւ իրօք, երբ մօտեցան, ծեր զօրավարը հազիւ թէ ընթուինների թեթեւ շարժումնքով բարեւ մը առաւ, իւր արձանի դիրքը ամենեւին չփոխեց: Իսկ Սուրէն, որպէսզի կարենայ զինք խօսեցնել, նոյն Ատոմի առ Թէոդորոս դրած թղթիկը ցոյց տալով, հարցուց թէ ո՞ր էր Հայոց զօրավարը:

— Այս նամակն ո՞վ քեզ տուաւ, Կամսարական,— ըսաւ դաժան ծերը:

— Այս առաւօտ ինձ տուին իշխանին կողմէն:

— Դուք քնած էիք, երբ նա հոս էր,— զրուցեց ծերը խստութեամբ, եւ իբրեւ թէ ինքնիրեն խօսելով,— այս է ահա մեր իշխանաց եւ իշխանագանց սովորութիւնը, ամենէն լաւերը քուն կը լինին, երբ գործելու ժամանակ է, իսկ վատերը մեծ շնորհք կ'ընեն եթէ մատնիչ չլինին եւ թշնամույն չառաջնորդեն:

— Կարելի՞ է, Ատոմ իշխան, մեզ իմացնես թէ որո՞նք են թշնամույն առաջնորդողք:

Այս խօսքին ծերը պատասխան նաեւ չի տալով՝

— Հայոց զօրավարը, որ այս թուղթը քեզի թողէր է, ըսել կ'ուզէ, որ երթաս զինքը յունաց բանակը գտնեմ, տէ՛, գնա՛, մի՛ դանդաղիր, տէ՛ս, ինձ էլ պատվիրեց զօրքը պատրաստի ունենալ,— ըսաւ եւ ձեռքով ցցուց զօրքը, որ պատրաստ զէնքի վրայ կանգնած կը սպասէին:

Եւ այս խօսքերը զրուցելով կռնակը դարձուց բոլորովին:

Իսկ Սուրէն առանց խօսելու հեծաւ ձին եւ սկսաւ շարունակել իւր ճամփան, երեւակայելով թէ տեղեկութիւն հարցնել յունաց բանակին համար այդ քաղցր ծերուն աւելորդ էւ չափազանց հետաքրքրութիւն պիտի թուեր եւ մեծ յանդիմանութեան առիթ, իր ծիծաղը սանձելով կը շտապէր առաջ անցնելու: Իսկ Գրիգոր, երբ հազիւ քիչ մը հեռացան՝ քրքիջ բարձրացնելով հետեւեցաւ քեռույն մինչեւ մատեցան Վաղարշակերտի, եւ յունաց բանակը երեւցաւ:

ԳԼՈՒԽ Գ

Մեր Կամսարականն եւ քեռորդին մտան յունաց բանակը, որ Վաղարշակերտի շուրջը տարածուեր էր: Հռոմէական անունը թէպէտ կը պահէին Բիւզանդիոյ կայսերք, եւ արտաքին փայլը դեռ կ'երեւար, բայց ամէն բան եւ զինուորութեան ամէն կարգ, կանոն թուլցած, արուած էր, հռոմէական արծիւն էր, որ լեզեններուն գլուխը թելերը կը տարածէր, բայց թշնամույն առաջին

դիմադրութեան եւ հարուածին կը սլանար ի փախուստ, եւ այդ լեզունները միշտ մեծ քաջութիւն ցոյց կու տային ներքին խռովութիւնք հանելու քան թէ թշնամոյն դէմ պատերազմելու:

Եթէ զինուորին քով վատութիւն եւ անկարգութիւն սովորական էին դարձած, զօրավարները նաեւ շատ անգամ շնորհուկով անուանեալ եւ ոչ արժանաւորութեամբ գոռոզ յանձնապաստան եւ անարգ պալատական՝ հրամայել միայն դիտէին խաղաղութեան ժամանակ քան թէ առաջնորդել պատերազմի մէջ: Այսպիսի անձ մի էր Պրոկոպիոս, որ այս հռոմէական անուանեալ բանակին Սպարապետն էր, եւ որ Թէոդորոսի թախանձանօք եւ յորդորանօք հազիւ կրցեր էր շարժիլ եւ հասնիլ Կարնոյ ի Բագրեւանդ ամենայն դանդաղութեամբ:

Ուստի Սուրէն եւ Գրիգոր երբ մտան բանակը, ուղղուեցան Սպարապետին վրանը, որու դռան առաջ շարուած կանգնած էին հայ զօրավարին թիկնապահները: Երբ Սուրէն ուզեց անցնիլ, յոյն արարողապետը իմացուց թէ արգելք կար ներս մտնելու, թէպէտ ձայները բարձր եւ զայրագին կը լսուէին:

Թէոդորոս փորձ պատերազմող՝ առաջին ակնարկին տեսաւ, որ այդ բանակը թէեւ բազմաթիւ, բայց օգուտ չունէր երկրին իւր անշարժութեան մէջ, երբ թշնամի մը կար իւր առջեւ յանդուգն եւ կատաղի, որ մինչեւ այն օր յաջողէր էր իւր ամէն արշաւանաց մէջ, եւ այդ յաջողութեան համար յանձնապաստան այնչափ, որ կը համարձակէր թշնամի մեծ բանակի մը առջեւ երկուքի բաժնել իւր զօրութիւնը: Ուստի յորդորեց զՊրոկոպ արագ յարձակմամբ հասնիլ Արտագ, խորտակել արաբաց մեծ զունդը եւ միւսին, որ անցել էր Երասխը նահանջի ճամփան արգիլել եւ բնաջինջ ընել: Այս պարզ առաջարկութեան յունաց զօրավարը գոռոզութեամբ պատասխանեց.

Ես կայսերական բանակին մեծ Սպարապետ՝ ռեւիցէ մարդու եւ մանաւանդ հայ իշխանի մը խրատուն կարօտութիւն չունիմ, քու պարտքդ ինձ հնազանդիլ է եւ ոչ խորհուրդ տալ: Իսկ քու երկրիդ կորուստը, աւերը, գերութիւնը իմ ամենեւին հոգս չէ:

— Կ'իմանամ թէ այդ խօսքերուն մէջ կան այնպիսի ծանր բառեր, որոնց հիմա պատասխանել յարկ չեմ համարիր: Բայց որովհետեւ ես պաշտօն ունիմ կայսրէն այս երկիրը կառավարելու եւ սորա փրկութեան հսկելու, եւ կը տեսնեմ վտանգը, որ թէ երկրին կը սպառնայ եւ թէ այս բանակին, կը խնդրեմ իմ խորհուրդներս եթէ արհամարհելի թուին, գոնէ այնպիսի թշնամի մը չարհամարհես, որ քիչ ժամանակի մէջ եւ մեր աչաց առջեւ ոչ միայն Ասորիք, Եգիպտոս յափշտակեց ի կայսրէ, այլ դեռ երէկ՝ մէկ ահագին հարուածով՝ պարսից ինքնակալութիւնը հիմն ի վեր տապալեց:

— Զիս կայսրը հոս չուղարկեց քեզմէ ուսնելու համար ոչ թշնամոյն արարքը եւ ոչ իմ պարտաւորութիւնքս, պէտք է գիտնաս թէ շատ համբերեցի մինչեւ հիմա այդ քու շաղակրատութեանցդ, ուստի լռե՛մ եւ դուրս ել առջեւէս:

— Կայսեր հրամանները եւ իր սպարապետները գիտեմ յարգել,— ըսաւ Թէոդորոս ոտք ելնելով եւ սանձելով սրտմտութիւնը,— բայց գիտեմ եւ տեսեր եմ նաեւ այնպիսիներ, որ տան մէջ գիտեն հրամայել իրենց չափէն վեր եւ որոտալ, եւ պատերազմի ասպարեզին մէջ՝ թշնամոյն առաջ վատանալ եւ փախչիլ: Կը փափագիմ, Յունաց զօրավար, որ այս վերջի բախտին չի փափագիս:

Եւ երբ այս խօսքերն ըսելով դուրս կ'ելնէր վրանէն, Պրոկոպիոս կատաղութեամբ ետեւէն կը նետէր սպարապետական գաւազանը, հայիոյանք եւ նախատինք ժայթքելով հայ իշխանին, որ՝ առանց գլուխը նաեւ դարձնելու, հայկական խումբին, որ իրեն կը սպասէր՝ «Երթանք, տղա՛ք,

Իսմայելի որդուց դեմ», — ըսաւ, եւ ամէնքը հեծնելով շտապաւ հասան Վարդանակերտ: Բոլոր ճամփան երկայնութեան մէջ ոչ ոք համարձակեցաւ եւ ոչ Սուրէն խօսք մը խօսիլ Թեոդորոսի հետ:

Թեպէտ գիշերը վրայ հասած՝ բայց անխոնջ զօրավարը քաշեց իւր փոքրիկ բանակը Մարեակ ըսուած բլուրներուն վրայ եւ հոն՝ այն կիրճերուն բերանը դարանամուտ կը սպասէր թշնամոյն, աշնան գիշերներ ցուրտ էին այդ սարերուն բարձրութեան վրայ, բայց ո՞վ կը համարձակէր գանգոսիլ, երբ ինք Թեոդորոս առանց կրակի գիշերը կ'անցնէր, որպէսզի իւր ներկայութիւնն իմաց չի տայ թշնամոյն: Հոն երեք օր, երեք գիշեր կեցած կը սպասէր ոչ միայն թշնամոյն գալուն, այլ նաեւ կը սպասէր Յունաց Սպարապետին փրկարար մէկ շարժման, որ եթէ յառաջանար եւ դիրքը փոխէր թերեւս թշնամին կարենար հարուածել: Բայց թշնամին երեւցաւ, եւ յոյնք իրենց անշարժութեան մէջ մնացին:

Թեպէտ այս նոր թշնամոյն անունը մեծ՝ իրեն կրօնամով կատաղութեան առջեւ մինչեւ այնօր ամէն դիմադրութիւն խորտակուէր էր, բայց Ռշտունեաց իշխանն անսասան կ'ուզէր չափը առնուլ նորա զօրութեան: Ուստի երբ թշնամին գրոհ տուաւ կիրճին մէջ անկասկած, արդէն բաժնուած հայ խումբը կիրճին երկու բարձանց վրայէն սոսկալի նետաձգութեամբ զինք շփոթեց, եւ վերջը այդ ժայռերուն կոնկէն դուրս թափելով սպառազէն խումբերը եւ արաբաց շփոթութեան սթափելու ժամանակ չի տալով աջ ու ձախ կը կոտորէին անխնայ, եւ առնելով ինկածներուն կողոպուտը՝ կ'անցնէին Վարդանակերտի մօտէն Երասխայ հունը օգնելու համար այն եղբարց, որ արաբաց ուրիշ մէկ գնդին կատաղութեան գոհ կ'երթային:

Կը շտապէր Թեոդորոս եւ թոյլ ու դադար չէր տար զօրաց, որպէսզի հասնի թշնամոյն, բայց նա սատանայական արագութեամբ իւր դառնութեան գործեր կատարէր էր եւ ամէն տեղ Նախիջեւանէ մինչեւ ի Գողթն գաւառ, գիւղ, աւան եւ անպատասպար քաղաք աւերակ էր եղեր, դէզադէզ մարդկանց դիակներ եւ արեանց ճապաղիք այդ բարբարոս աւազակաց հետքերն էին, հուր, սուր, մահ իրենց նշանակներն էին, որ թողէր էին տեսնէն: Լեռներու, բերդերու ապաստան եալ մարդիկ կ'իջնային գունդագունդ ողբ ի բերան փնտռելու համար իրենց սիրելիները, որ կամ սրոյ ճարակ եղած էին՝ կամ՝ որ աւելի սոսկալին էր՝ անողորմ ազգին գերութեան գնացած: Տուն, ամառանոց, եկեղեցի՝ ամէն բան կը մխար, ամէն բան արիւն կը հոտէր: Ծեր պատերազմողք, որ կարծէին թէ նոր չի կայ իրենց համար պատերազմի հետեւանք թշուառութեանց մէջ, երբ կը տեսնէին եղած անզգթութեանց ու պղծութեանց հետքերն, երբ կը դիտէին յօշոտեալ անդամներ, կրակի մէջ նետուած կանանց եւ կաթընկեր տղայոց դիակներ, անօգուտ կատաղութեանց վրայ սոսկմամբ կը նայէին եւ զլուխնին շարժելով երեսնին անդին կը դարձնէին: Ատոմ Շահունի, որ պարսից հետ եւ դեմ պատերազմած էր տարիներով, որ քուշանաց եւ կովկասային ամէն ժողովրդոց հետ կռուած էր, Սմբատ բազմայաղթի ամէն պատերազմներուն մէջ գտնուելով, եւ շատ բան կրնար պատմել եթէ ուզէր խօսիլ, նա եւս, երբ եղածները կը տեսնէր, որ գազանութեան չափն անցեալ էին, երեսը թթուեցնելով «էհ» մը արձակեց:

Իսկ Թեոդորոս, որ ամէն ջանք կ'ընէր օգնելու խեղճ ժողովրդոց, յանկարծ Սուրէն Կամսարական փնտռելով, մէկ կողմ առաւ.

— Սուրէն իշխան, դու շուտ մը ա՛ն Դաւթի որդին եւ գնա, — ըսաւ, — վասնզի ո՛ր գիտէ եթէ այդ անպիտան յոյները յաղթուին, որ շատ հաւանական է, այս ամէն չարիք եւ անզգամութիւնք Կոզովիտ եւ Բագրեւանդ կրնան գործուիլ այդ անողորմ ազգին ձեռքէն: Գնա՛ շուտով, քոյրդ

միայն մի թողուր: Ես էլ կու գայի, բայց պետք է այս գառանաց ջանամ հասնելի թերեւս գերիները կարենամ թափել իրենց մադիլներէն:

Ուստի Սուրէն ու Գրիգոր իրեն խումբով բաժնուեցան զօրավարէն երթալու Կոզովիտ, որ իրօք այն վիճակին մէջն էր յորում երեւակայեց Թէոդորոս:

Արաքք Թէոդորոսի հարուածեն վերջ զօրացեալ ուրիշ դնգաց օգնութեամբ, աւելի զգուշութեամբ եւ խոհեմութեամբ առաջ քայլեցին, եւ իրենց յառաջապահներէն իմանալով յունաց անհոգ դիրքը, չսպասեցին, որ թշնամին իրենց վրայ յարձակի, այլ ամենայն կրօնամով կատաղութեամբ յարձակեցան Պրոկոպիոսի բանակին վրայ, որ արդէն իմացած նոցա պարտութիւնը հայոց գնդէն եւ բանակին փոքրիկութիւնը, ինչպէս հեռուէն նոյնպէս մօտէն արհամարհէր էր զիրենք:

Պատերազմը երկար չի քշեց, եւ վաթսուն հազար հոգոյ բանակ մը տասն հազար արաբացի զօրաց առաջ քանի մը ժամ դիմադրութենէ վերջ չարաչար խորտակեալ կը փախչէր, իր բոլոր բանակը թողլով կապուտ կողոպուտ յաղթողին, որ ամէն բանի տիրանալէ ետք, ասպատակ սփռած ամէն տեղ կավարէր՝ կը քանդէր ըստ իւր սովորութեան, ո՛ր որ ոտքը հասներ:

Մեծ խումբ մը այս բարբարոսաց անտէր անտէրունչ գտնելով երկիրը, որ յունաց այս մեծ կոտորածէն զարհուրէր էր, սփռեցան Կոզովիտ, եւ ինչ որ դիւրամատոյց գտան՝ աւարելէ եւ գերելէ վերջ յարձակեցան Վարդանակերտի աւանին վրայ, որ կատաղի դիմադրութիւն ըրաւ այս անօրինաց, որ յուսահատելով թողին պաշարմունքը: Նոյն միջոցին փոքրիկ գունդ մը, որ Վարդանաբերդի գեղեցիկ շէնքը տեսած հեռուէն եւ չորս կողմը պտոյտներ ըրած էին, մեծ հարստութիւն եւ գանձ յուսալով, եկան խումբին զօրավարին, որ Ալի անունով Շէյխ մէր, իրեն առաջարկեցին՝ թէ երկրին տիրոջ ամրոցը հեռու չէր եւ լաւ աւար մը անշուշտ պատրաստ կար եթէ յաջողէին մտնել: Շէյխ Ալի առած իր գունդը եկաւ գննեց բերդը ն երբ տեսաւ պարիսպներուն բարձրութիւն եւ ամրութիւնը երկաթապատ դռները, ցաւագին գլուխ մը շարժեց նշան յուսահատութեան: Բայց սատանայական աչքերով երիտասարդ մը նոյն ատեն իրեն մօտենալով.

— Յուստիատելու բան չկայ, Տէր,— ըսաւ.— եթէ աս զիշեր աշխատինք ամէնս եւ անդադար, կրնանք այդ բերդն առնուլ

— Ինչպէ՞ս,— հարցուց Շէյխը:

— Եթէ բարձրէն առնուլ անկարելի է, կ'աշխատինք գետնի տակէն կը փորենք այս պարիսպներուն հիմքը, եւ աստուած կը յաջողէ:

— Լաւ է այս խորհուրդը,— ըսաւ Շէյխը, որ վաթսունամեայ մարդ մէր, եւ որու վրայ մեծ համարմունք ունէին իւր զօրականք, վասնզի Մարգարէին առաջին սպաներուն մէկն էր:

Ուստի բահի, բրջի պատրաստութիւնք տեսնուեցաւ, եւ երբ զիշերն եկաւ սկսան խրամը փորել եւ խորն իջնել այդ ճիւղները շարունակ կը փոխուէին եւ մրջիւններու պէս կ'աշխատէին. երբ մէկ մասը հող կը կրէր. միւսը փորուած հողէ կամարը ցիցերով կ'ապահովէր, այսպէս առաջ կ'երթային եւ պարսպին կը մօտենային: Իսկ բերդին պահապանները միամիտ կեցած եւ փորձ մարդ ներսը չի գտնուելով, վասնզի Տիկիւնը բոլոր պատերազմի հնուտ անձինքը դրկած էր որդոյն հետ, պարիսպներուն բարձրութեան վստահացած հանգիստ նստած կը սպասէին: Մահաբեր գործը կը յառաջանար, եւ դիւական յաջողութեամբ ոչ ժայռ, ոչ արգելք մը կը հանդիպէր այդ ճիւղներուն, որք առաւօտեան դէմ պարիսպը անցած էին եւ սկսէր էին բարձրանալ. եւ որպէսզի պաշարելուց ուշադրութիւնը գրաւէին՝ զօրաց խումբն սկսաւ

յարձակումներ ձեռացնել, սանդուխներ բերել պարիսպներուն մօտեցնել, նետաձգութիւնք ընել դէպի պարիսպները, անել ժայռերէ վեր ելնել եւ կախուիլ: Պահապանք թէպէտ թուով քիչուոր՝ բայց պաշտպանութեան համար զիրենք բաւական տեսնելով աւելի զուարճութիւն քան թէ երկիւղ կը զգային այս տեսարանէն. ուստի պարսպաց աշտարակներուն մէջ երբ միամիտ կանգնած էին, յանկարծ ձայն մը լսուեցաւ թէ թշնամին բերդին մէջն է:— Սարսափն ամենքը պաշարեց, երբ տեսան բերդին գաւթին մէջ արաբացի ճիւղներու սուսերամերկ խումբ մը, որ քանի կ'երթար կ'աւելնար, պահապանք վար թափուեցան պարիսպներէն եւ կատաղի կռիւ սկսաւ այդ հորին բերանը ուսկից սողալով դուրս կը ժայթքէին այդ գագանները. մէկ ինկնողին տեղ երկուք կը բուսնէին վայրկեանէ վայրկեան, պահապանաց յուսահատ կռիւը յայտնի բաւական չէր ազատելու, ներքին պալատը, որ մեծ ամրութիւն չունէր, ուստի կանանց եւ տղայոց վայնասունը, ճիչն ու աղաղակը, այդ զինուց շառաչմանց, մեռնողներու ողորմ հառաչանաց, կատաղի պատերազմողաց յիշոցներուն եւ հայհոյութեանց հետ, տեսնողի եւ լսողի անտրոյղ կը պատճառէր: Վերջապէս յարձակողք յաջողեցան մեծ բերդին դուռը բանաւ, եւ էլ ուրիշ յոյս չի մնաց դիմադրելու, բոլոր արաբացի խումբը կը դիմէր ներս կատաղաբար: Ո՛վ պիտի պաշտպանէր այդ գագաններուն դէմ խեղճ կանայք եւ մանկտիք, քանի մը զինեալ սպասաւորք դռները եւ պատուհանները ամրացուցեալ կահ-կարասեօք՝ վերջին եւ անյոյս ճիգ մը թափեցին դիմադրութեան, քանի մը յուսահատ կանայք աշուրնին դարձած՝ յիմարացեալ յուսահատութենէ եւ երկիւղէ վերի բարձր պատուհաններէն ինչ որ ձեռուրնին կը հանդիպէր կը նետէին այն պատերազմողաց վրայ, որ տապարներով եւ մուրճերով կը ջանային դուռն պատուհան կոտրելու, եւ անագին ձողերով երկաթի վանդակներ կը ճարճատեցնէին:

Կին մը միայն, որ այս վիճակը կը տեսնէր եւ որուն երեսին վրայ նկարուած էր այլայլութիւն եւ յուսահատութիւն, Բիւրեղ տիկին, առանց ինքզինք կորսնցնելու իր կենաց պահպանութենէն աւելի ուրիշ մտածութիւն մը մտքին մէջ յանկարծ գալով, մտաւ իր աղջկանց սենեակը, տեսաւ Նազենիկը, որ դողալով ծունկի վրայ կ'աղօթէր, իւր քրոջ անկողնին քով, որ հանգիստ եւ անխռով կը քնանար: Այդ կիներ, որուն աչքերը ոչ արտասուքով այլ արիւնով լցուած էին, առանց խօսելու գրկեց մէկը եւ միւսին ձեռքէն բռնելով՝ կայծակի արագութեամբ վազելով իջաւ սանդուխներէն վար, իջաւ պարտեզին գահերէն վար, մինչեւ լճին եզերքը. հոն դրաւ փոքրիկ մակոյկին մէջ տղան. մտուց իւր շփոթած աղջիկը, եւ ինքն որ մտաւ, «փա՛ռք քեզ Աստուած իմ» աղաղակեց եւ թիակ մը ձեռքին առած բացուեցաւ ցամաքէն, ուրախութեան ծիծաղ մը եկաւ երեսին, եւ երկու ձեռքով աղջկանը փաթաթուելով. «Ահա ազատեցանք, Նազենիկս, մեր պատիւը անարատ կրնանք հոս այս լճիս մէջ թաղել»,— ըսաւ: Իսկ այդ քնքուշ եւ միամիտ աղջիկը. «Հոս չեն կրնա՞ր հասնիլ ուրեմն այդ անզգամները, մայրիկ»,— կը հարցնէր: Իսկ փոքրը՝ զարմացած, շփոթած իւր սուր եւ սեւ աչքերէն քունը թօթափելով. «Ո՛ւր կ'երթանք մայրիկ, դու գիտե՞ս թիավարել»,— կ'ըսէր: «Այո, գաւակս, այսօր պիտի թիավարեմ»,— ըսաւ եւ թիակներն անցուց եւ սկսաւ ամենայն զօրութեամբ հեռանալ՝ ուղղուիլ դէպի այդ լճակին միմիայն փոքրիկ կղզին. միշտ աչքերը դէպի ամրոցն ունէլով: Խեղճ կիներ այդ լճակը փոքրիկ կը գտնէր եւ այդ յուսահատութեան մէջ դեռ նուազ յոյս մը կը պահէր եթէ մէկը այդ գագաններէն զինքը չի տեսնէր. բայց այն յոյսն էլ ոչնչացաւ, երբ հագիւ թէ կղզույն եւ բերդին մէջտեղի միջոցն հասաւ, տեսաւ, որ մէկ, երկու, երեք եւ դեռ քանի մը հատ ճիւղներ իրենց մէջ կը խօսէին. թէպէտ լեզունին չէր հասկնար, բայց կ'իմանար իրենց շարժումներէն թէ իւր վրայ կը խօսէին, եւ իրեն հասնելու հնարք կը փնտռէին: Յուսահատութիւնը արտաքոյ կարգի զօրութիւն մը տուած էր իրեն, զարմանալի յաջողութեամբ կը թիավարէր եւ նոյն միջոցին կը տեսնէր, որ քանի մը հատ այդ ճիւղներէն կը թողուին իրենց զգեստները կը

նետուէին ջուրը իւր ետեւէն. ոմանք շուտ մը ետ կը դառնային, բայց ահագին խափշիկ մը ձուկի պէս կը լողար եւ, երբ ինք կղզւոյն ափունքը գտաւ, այդ գագանը կէս ճամփան առած էր արդէն, ուստի անշփոթ փոքրիկ տղուն ձեռքէն բռնեց գիրկն առաւ: «Դու այստեղ այս լճափը նստէ, սիրուն Արփէնիս, իմ աննման գաւակս, իմ գեղեցիկ հրեշտակս, աստուած քեզի պահապան լինի, մեր թշուառութիւնը քեզի ողորկութիւն դարձնէ եւ երջանիկ ընէ», — ըսաւ, համբոյրներով ծածկելով նորա երեսները եւ աչս առաջին անգամ աչս պարագային մէջ արցունքով թրջեց. եւ դնելով կղզին ծածկող ձարխտտին վրան՝ եղէգներու վարագուրի մը ետին՝ «Դու այստեղ պահուէ, զքեզ մէկը չտեսնէ, մինչեւ որ մենք գանք», — ըսաւ. տղան շփոթած մօրը խօսքը մտիկ ըրաւ եւ ձարխտտին մէջ ծածկուեցաւ: Ան ատեն ինք ձեռքերը երկինք տարածեց, կարճ աղօթք մըրաւ մտքէն, վերջը գօտին քակեց Նազենիկին գօտւոյն անցած եւ իրեն կապեց եւ մակոյկին մէջի պզտի խարսխին չուանը նույնպէս իւր մէջքին կապեց եւ անթարթափ աչօք սկսաւ նայիլ այդ սեւ խափշիկին, որ քանի կ'երթար կը մօտենար, երբ իւր ընկերներն ամենքը յուսահատ ետ դարձեր էին: Երբ տեսաւ, որ քանի մը նաւակի միայն միջոց մնաց իւր եւ նորա մէջ, ողորմուկ ձայնով՝ «Տէ՛ր, մի՛ համարիր զայս ինձ ի մեղս», — ըսաւ եւ դրկելով գգուելով իւր Նազենիկը, նետուեցաւ լճին մէջք Թշուա՛ն ո՛ կին, չի տեսաւ նետ մը, որ նոյն միջոցին սլացաւ եւ զարկաւ խափշիկը, չի լսեց ձայն մը, որ գոչեց. «Ա՛յ Տիկին, մի...» ...լճին խաղաղ ջուրերը ճղքուեցան բոպէ մը կղզւոյն քով՝ եւ վայրկեան մը ետքը կատարեալ միապաղաղ ծածկեցին այդ համեստութեան գոհը եւ գեղեցկութեան հրեշտակը: Քիչ անդին տուկալի յիշոցք մը լսուեցաւ, ջուրը կարմիր ներկուեցաւ եւ ճղփիւն մը լսուեցաւ, որ իջեցուց լճին յատակը խափշիկին մարմինը:

Լճին եղերքը թափառող անօրինաց աչքերը տեսան այդ կնոջ եւ իր աղջկան ջուր նետուիլը, իրենց սեւերես ընկերոջ անունը գոչեցին քանի մը անգամներ. եւ երբ տեսան զայն, պատասխան չի կար, յուսահատ՝ ժամանակ չի կորսնցնելու եւ բերդին աւարէն չի պակսելու համար թողին ծովեզրը եւ ներս մտան:

Ան ատեն լճին եղէգնուտին կողմէն ջուրը շարժեցաւ, հիմա ուրիշ մէկն էր կը լողար, բայց այնպէս որ հագիւ քիթը դուրս էր ջրէն, թեւերը չէին շարժեր այլ ոտքերուն մահտները միայն, եւ այս գողի պէս լողացող մարդը եկաւ մօտեցաւ կղզւոյն անշշունջ, առանց երեւալու՝ միշտ եղէգներու սեզերն իրեն վարագոյր պահելով էլաւ ցամաք եւ գետնի վրայ սողալով գրեթէ եւ ոչ քայլելով իբրեւ թէ բան մը կը փնտռէր, եւ վերջապէս դտաւիր փնտռածը: Արփէնի նստած՝ երկու թեւերով ծունկերը գրկած՝ խոտերուն մէջ կէս մը կորսուած կը մտածէր. անշուշտ ինքնիրեն «Մայրիկը ուշացաւ» կ'ըսէր, երբ կամաց, հաստ եւ իրենց շատ ծանօթ ձայն մը «Արփէնի, Արփէնի, սիրուն Արփէնի, հոս ի՞նչ կ'ընես» ըսաւ:

— Զաւէն հայրիկ, դո՛ւ ես, մայրիկին կը սպասեմ, — գրուցեց աղջիկը տեղաց ցատկելով:

— Մայրիկը զիս դրկեց քեզ տանելու համար, եկ երթանք:

— Բայց դու լիճն ընկեր ես, Զաւէն հայրիկ, վրադ գլուխդ բոլոր թրջեր է:

— Հոգ չէ երբ ես ջուրն ընկնիմ, աղջիկս:

— Բայց մայրիկը կ'ըսէ, որ ջուրն ընկնիք՝ կը խեղդվիք:

— Այդ ինձ համար չէ, սիրուն Արփէնի, Աստուած քեզ պահէ, որդեակ:

— Ինչո՞ւ երեսդ անդին կը դարձնես, Զաւէն հայրիկ:

— Արեւն աչքիս կը զարնէ անոր համար: Բայց հիմա խօսելու ատեն չէ, եկ ինձ, որդեակ:

— Ինչ կ'ընես, Ջաւէն հայրիկ, զիս կը թրջես, բոլոր ջուր եղայ:

— Հոգ չէ, Արփենի, դու ձայն մի՛ հաներ, ամենեւին մի՛ խօսիր, մինչեւ որ ցամաք ելնենք:

Խեղճ տղան կուրծքին վրայ պառկեցուցած նոյնպէս լողալով կ'երթար Ջաւէն մինչեւ ցամաքը գտան. այն ատեն եղէգներու մէջ ելաւ կանգնեցաւ, հագաւ իր սպառազինութիւնը, եւ երբ աչքը դարձուց Վարդանաբերդի տեսաւ մուխ մը կը բարձրանար. աչուրները կրակ դարձած սոսկալի յիշոցք մը տուաւ ատամները կրճտելով, այնպէս որ Արփենի սոսկմամբ «Ի՛նչ եղար, Ջաւէն Հայրիկ» ըսելով սկսաւ փախչիլ. «Կա՛ց որդեակ, կա՛ց Արփենի, միտքս չեկաւ թէ հրեշտակներու քով ամէն պարագայի մէջ իրենց լեզուին չափ պէտք է դնեն», զրուցեց եւ ուժով մը սուլեց. Վայրկեան մը չանցած իր նժոյգը եկաւ վազելով եւ եղէգները կոտորտելով: Իսկ երբ Արփենին գիրկն առաւ Ջաւէն, խելօք ձին մէջքը խոնարհեցուց, որ դիւրութեամբ հեծնայ զինուորը, եւ Կաղզուանայ ճամփան բռնեցին:

ԳԼՈՒԽ Դ

Մի ոգի տխրութեան խորին եւ աներեր

Բնակեալ յայս տեղիս կը տանի քո քայլեր.

Արձագանք անցելոյն՝ ոչինչ այլ չի լսուիր,

Յիշատակ քեզ գրաւի: Ներկան չի նշմարուիր:

— Ջերթ զանգակ հեռաձիգ խառնակոչ կը հնչեն

Մայր ծառոց գագաթունք հողմավար կ'արտասուեն,

Չիք մի ձայն բընութեան իբր մեռեալ նա թուի

Եւ ի մէջ դամբանաց՝ ե՛ս լոկ կամ կենդանի:

ՇԼԵՊԵԼ

Ջաւէն Հայրիկի զիրկը ձիու վրայ ճանապարհորդել Արփենի շատ կը սիրէր, ուստի նախ հաճելի եղաւ իրեն այս երթը, Բայց երկու ծանր խնդիրներ կային իրեն համար, որ պէտք էր լուծուէին, ուստի ըսաւ.

— Մայրիկը, Նազենիկը ո՞ւր գնացին, գիտե՞ս:

— Գիտեմ որդեակ,— պատասխանեց ծեր զինուորը թեպէտ ձայնը այնչափ արտասուալից էր, որ՝

— Հայրիկ, դուն կու լա՞ս,— ըսաւ պզտիկը եւ գլուխը վեր առաւ Ջաւէնի երեսը տեսնելու համար՝ Բայց միայն մօրուքը տեսաւ:

— Չէ, որդեակ, ի՛նչ կայ լալու, հարբուխ եղած եմ քիչ մը, այն է:

— Թրջեցար անկից է, մայրիկը կ'ըսէ թէ երբ մէկը թրջի՝ հարբուխ կը լինի, ես էլ հարբուխ պիտի ունենամ: Այնպէ՞ս չէ, Հայրիկ, զգեստներս բոլոր թաց են:

Ծերը՝ այս հարցաքննութենէն, ուր մայրիկին բոլոր խօսքերը մէկ-մէկ վկայութիւն էին այնպէս յուզուած էր, որ կը շփոթէր պատասխան տալ եւ կը սպասէր, որ Արփենի խօսքը փոխէր. եւ իրօք ժամանակը եկած էր՝ Արփենի երկրորդ խնդիրն առաջարկեց.

— Հայրիկ, նախաճաշիկ ե՞րբ պիտի ընենք, ես անօթի եմ:

— Հիմա քանի մը վայրկեանէն,— ըսաւ ծեր զինուորը եւ շուրջը կը նայէր, մտածելով թէ ո՞ր էր, վասնզի միտքը բոլոր այդ սոսկալի եղեռնին էր, որ աչքին առաջ դարձած էր, եւ յիշելով թէ գոնէ քառորդ մը ժամանակ պէտք էր գիւղը հասնելու, ձիուն ձայն տուաւ, որ շտապէ, եւ սկսան թռչիլ. Եւ Արփենի ուրախութեան ձայներ կը ձգէր: Ահա գիւղ մը երեւցաւ. բայց ձայն ձուն չի կար, շուն մը նաեւ չի կար, որ հաջէր. «Տէր Աստուած,— կ'ըսէր ծեր զինուորն ինքնիրեն,— միթէ արաբին ոտքը հո՞ւ էլ հասեր է. բայց ոչ, խոտ էլ կայ, կանաչ էլ կայ»: Վերջապէս իջաւ ձիէն, պտոյտ ըրաւ, ձայնեց, գոչեց, պատասխան տուող չեղաւ. երբ մտքէն կ'անցնէր դուռը խորտակել եւ քանի մը ոտք էլ առաւ, ահա պառաւ կին մը նստած արեւուն մէջ դռան առաջ իլը ձեռքը կը մանէր, եւ այնպէս խոր զբաղած էր իւր մտածութեանց մէջ, որ ոչ ոտքի ձայն, ոչ զէնքի շառաչ զինք չէին արթնցնէր:

— Բարի՛ լոյս, մայրիկ,— ըսաւ իր բնական ձայնով. պատասխան չի կար, եւ որովհետեւ Ջաւէն իւր տեսակին մէջ դիտողական փիլիսոփայութենէ գուրկ չէր, եւ դիտէր թէ ընդհանրապէս մարդիկ մանաւանդ կանայք կը սիրեն իրենց տարիքը պատկերներ, ուստի ձայնեց.

— Բարի՛ լոյս գայ վրադ, քուրիկ:

Դարձեալ պատասխան չի կար. առաջ անցաւ զինուորը եւ երբ ստուերը պառաւին վրայ ինկաւ, նա անխոռով գլուխը վեր առաւ եւ չափելով դիմացինը անգամ մը

— Ի՞նչ կ'ուզես, ասպատակէն ի՞նչ լուր կայ,— ըսաւ:

— Աս տղուն համար քիչ մը ուտելիք կ'ուզեմ, քուրիկ:

— Մօ՞տ են թէ կորան գնացին:

Ջաւէն իմացաւ թէ խուլ էր կինը, ուստի ականջին մօտեցնելով շրթունքը, «Քիչ մը ուտելիք, ուտելիք սա տղուն համար», գոչեց եւ այնպիսի ձայնով, որ պատերազմի ժամանակ միայն կը գործածէր:

— Իմացայ, իմացայ, ականջս ծանր է, բայց խուլ չեմ... ի՞նչ սիրուն տղեկ ունիս...— ըսաւ պառաւը Արփենին նայելով եւ գնաց:

Արփենի իջաւ Ջաւէնի գրկէն, սկսաւ պտըտիլ, երբ Ջաւէն կանգնած կը մտածէր, մենք գիտենք թէ ինչ կը մտածէր, բայց Արփենի, որ ներս դուրս ելաւ մտաւ.

— Ջաւէն հայրիկ, այդ կինը չեկաւ, մոռցաւ՝ ուտելիք բերել,— հարցուց,— ես շատ անօթի եմ:— Իսկ Ջաւէն երբ չի լսեց, տղան եկաւ եւ սրունքներէն քաշելով՝ «Ջաւէն հայրի՛կ, Ջաւէն հայրի՛կ», — կանչեց. երբ տեսաւ թէ չիմանար, սկսաւ շրթունքը թուլացնել եւ պիտի սկսէր լալ, երբ Ջաւէն քունէ արթնցածի պէս գրկեց տղեկը.

— Ի՞նչ է, սիրուն Արփենիս, ի՞նչ է, իմ հրեշտակս, մի՛ լար:

— Վախեցայ, որ դու էլ այդ պառաւին պէս պիտի չի լսես:

— Մի՛ վախեր, ես կը լսեմ. երթանք, պառաւը տեսնենք թէ ի՞նչ կ'ընէ, ի՞նչ կը բերէ քեզի:

Երբ ներս պիտի մտնէին՝ տեսան փայտեայ մաքուր սեղանի մը վրայ սեր, մածուն, պանիր, խաղող, լաւաշ դրած, պառաւը կու գար: Բարեբախտաբար տղաք ազնուապետական զգացմունք չեն բերեր իրենց հետ անդիի աշխարհքէն. Արփենի, որ արծաթեայ սկաւառակներու մէջ սովրած էր ուտել առանց ուշադրութեան այդ հողէ ամաններուն՝ ախորժակով կ'ուտեր. եւ Ջաւէն թէպէտ դառնացեալ հոգւով՝ մեծ մխիթարութիւն կը զգար այդ անմեղ հրեշտակին նայելով, որ իւր աչաց առջեւ նաեւ՝ չէր տեսեր որբութիւնը: Բայց պառաւը թելէն դրողելով՝ զինք կը հրաւիրէր ուտելու. ծեր զինուորը թէպէտ կէս-գիշերուրնէ ի վեր շարունակ կը ճանապարհորդէր, բայց ախորժակ չունէր ուտելու. պէտք էր Արփենի զինք կրկին-կրկին հրաւիրէր, որ ուտէ, ուստի քանի մը պատառ առաւ եւ բաժակ մը գինի խմեց:

Շփոթած էր ծեր զինուորը. տղան երբ կշտացաւ մայրիկը կը հարցնէր. իսկ պառաւը՝ ասպատակէն լուր կը հարցնէր. ուստի կարճ կապելու համար հրաժարական բարեւ մը տուաւ պառաւին, հեծաւ ձին եւ քանի մը ժամուան մէջ հասաւ Կաղզուան: Արփենի չիմացաւ այս ճանապարհորդութիւնը, վասնզի մեծ մասը քնացաւ եւ երբ հասան աչքերը բացաւ տեսաւ կանայք եւ աղջիկներ, որ զինք գրկէ գիրկ կը յափշտակէին, մէկը իր խաժուկ աչքերը կը գովէր, միւսը թուշերը կը պագնէր, վերջապէս փոքր տարեկից տղայք նաեւ իրեն հետ սկսան խաղալ. ուստի աղջիկը լաւ զբաղած էր այս կէս գիւղացւոյ, կէս քաղաքացւոյ՝ տան մէջ, որ Ջաւէնի տունն էր: Իսկ Ջաւէնի կինը, որ լաւ կը ճանչէր իւր երկան բնաւորութիւնը եւ շատ խելօք կին էր, առաջ բան չի հարցուց, իսկ երբ առանձին մնացին, սկսաւ հարցնել թէ ի՞նչ էր այդ դառնութիւնը, թէ ստոյգ էր արաբաց Կոզովիտ ասպատակելը, թէ վտանգ կա՞ր իրօք Մամիկոնեան Տիկնոջ համար: Այն ատեն Ջաւէն պատմեց համառօտիւ թէ ինչպէ՞ս ինք Սուրենի եւ Գրիգորի հետ հրաժարելով Թէոդորոսէ, քանի որ Վարդանաբերդի կը մօտենային՝ անհանգիստ լինելով ամբողջին վիճակին վրայ եւ տեսնելով, որ Գրիգոր եւ շատերը յոգնած էին, որոշեց ժամ առաջ երթալ եւ յայտնելով առջի իրիկուրնէ՝ կէս-գիշերուն ճամփայ ելած հասեր էր Վարդանաբերդի մօտ, եւ հեռուանց տեսնելով խուռն բազմութիւն եւ զինուց փայլ՝ վտանգ մը երեւակայելով լճին ճամփան բռնէր սկսէր էր մօտենալ, եւ տեսնելով հեռուանց կին մը եւ աղջիկ մը մակոյկին մէջ, որ դէպի կողին կը դիմէին, եւ իմանալով թէ Բիւրեղ տիկին ինքն էր, երբ հնարք կը մտածէր զինքն ազատելու եւ արդէն նետահար ըրած էր խափշիկը, որ կը հալածէր, տեսեր էր մօր եւ զաւկին ջուր նետուիլն եւ անհետանալը, ուստի այս տղեկը միայն ազատելով կու գար մահն ի սիրտ: Խեղճ զինուորը կը պատմէր եւ կուլար. բարի կինը մտիկ ընելով ջուրի պէս արցունք կը թափէր, երկուքն էլ միասին կը յիշէին Տիկնոջ ազնիւ սիրտը, իւր առաքինի վարմունքը, հեզ հոգին: Նորա ընծաներն էին, որ զարդաբեր էին իրենց տունը, Ջաւէն կը յիշէր այն օրերը, որ նա Մամիկոնեանց տան հարս եկած էր եւ սիրելի եղած էր իր քաղցրութեամբ մեծին եւ փոքրին:

— Իսկ դու Հիմա ի՞նչ պիտի ընես,— ըսաւ կինը:

— Ես այս գիշեր կ'երթամ. այդ ճիւղները կենալու միտք չունին, վասնզի ամբողջին բոցը տեսայ. իշխանիկը կ'երթամ ու կ'աշխատիմ գտնել եւ իմացնել մօր եւ քրոջ մահը, իմացնել իբր մխիթարութիւն Արփենիին ազատիլը, թէպէտ կորուստները մեծ են, բայ ինչ ընենք: Խե՛ղճ երիտասարդ, ինչպէ՞ս մայրը կը պաշտէր... երբ կ'երթայինք վերջին անգամ... «Գրիգորս քեզ կը յանձնեմ, Ջաւէն հայրիկ...»:

Եւ հեկեկանքը խեղդեցին կորովի ծերուն ձայնը:

Իսկ դուրսը պարտեզը մեծ ուրախություն կար. մեծ եւ պզտի տղայք եւ աղջկունք Արփենիի տօնը կը կատարէին. պարտեզին ծայրը Երասխի ափանց նայող բարձրաւանդակին վրայ, գեղջկական կանաչագեղ հովանոցի մը տակ սեղանը կը պատրաստէին, տանտիկինն զբաղեալ էր կերակրոյ պատրաստութեամբ, իսկ Զաւէն յոգնած եւ տխուր խոր քունէ արթնացաւ զօրացեալ, երբ արդէն կէս-գիշերը մօտ էր: Ընթրեաց ժամանակ Արփենի յայտնեց թէ ամրոցէն լաւ էր այս տունը, ուստի կ'ուզէր, որ հոն բերէ Զաւէն հայրիկ՝ մայրիկը: Երբ ընթրիքը վերջացաւ եւ պզտիկները քնացան, Զաւէն հեծաւ եւ ելաւ դառնալու Վարդանաբերդ:

Կէս-գիշերուան մօտ էր, աշնան աղօտ լուսին մը տկար լուսով կը լուսաւորէր Կոզովտի լիճը. բերդին հրդեհին մնացորդ բոցը երկրորդ լոյս մը ձգած էր ջուրին վրայ, ուստի մեծ զգուշութեամբ սկսաւ մօտենալ, եւ ամենեւին ձայն չի լսելով՝ երկայն ժամանակ ուշ դնելէ վերջ իջաւ ձիէն, թողուց, որ արածի, եւ ինք զգուշութեամբ պտոյտ ընելով հասաւ բերդին դռան առջեւ. տեսաւ դռներն ինկած, տեսաւ Մամիկոնեանց պալատը կիսակործան եւ հրոյ ճարակ, տեսաւ դիականց կիսախանձ կոյտը ընդարձակ եւ ծառագարդ գաւթին մէջ թողեալ, իմացաւ թէ այդ գեղեցիկ բերդը կատարեալ գերեզման էր դարձել, ուստի ելաւ պարիսպներէն դուրս՝ սկսաւ լճին հարաւային կողմը երթալ տեսնելու թէ ի՞նչ կայ, հազիւ թէ քանի մը քայլ առաւ դիակ մալ հող պատահեցաւ՝ անցաւ առաջ ուրիշ մը, ուրիշ մէլ՝ եւ տասը-տասներկուք մը համրեց, լուսնի լոյսը շատ աղօտ էր, որ կարենար ճանչել, ուստի քիչ մնառջ որ գնաց, տքալու ձայն մը լսեց, վազեց դէպ այն կողմը: «Ա՛հ, քիչ մը ջուր, ի սէր Աստուծոյ, քիչ մը ջուր», — կ'ըսէր հողին վրայ պառկած մէկը: Դարձաւ մտաւ բերդը, վազեց դռնապանաց աշտարակին տակի սենեակը, ուր փոքրիկ աղբիւր մը կար, հոն հողէ հասարակ ամաններ կը գտնուէին, առաւ լցուց եւ քիչ մը տուաւ, որ խմէ. մարդը երբ ոգի առաւ, այն ստեն՝

— Որդեակ, դու ո՞վ ես, — հարցուց:

— Թաղոսի որդի Տրդատն եմ, — ըսաւ վիրաւորը:

— Դու իշխաններուն հէ՞տն էիր, երբ եկանք:

— Մենք կէսօրին այստեղ հասանք: Երբ բերդին մուխն ու բոցը տեսանք, ետ դառնալ եւ փախչել սկսանք, բայց երկու հարիւրէ աւելի ձիաւորաց խումբ մը, որ շրջակայքն աւարելու գնացեր եւ կը դառնար, մեր ճամփան արգիլեց, ուստի զատեալ թշնամիներէն յուսահատաբար կոռուեցանք. ես վիրաւոր ընկայ, չգիտեմ միւսներն ի՞նչ եղան.

— Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած, այս ի՛նչ պատուհաս է մեր վրայ, — կ'ըսէր ծեր զինուորը:

Ելաւ այց ընելու. բոլոր ինկելոց կը շօշափէր՝ ձեռքը սրտերնուն վրայ կը դնէր, թէ կենդանի ոք թերեւս կարենայ գտնել, բայց ամէնքը լաւ մեռած էին, դարձաւ վիրաւորին քով, պատեց վերքը ինչչափ կրցաւ, հեծուց իր ձիուն վրայ եւ շտկուեցաւ մօտակայ վանք մը, որ լեռանց ափափայից վրայ շինուած դժուարաւ գտանելի տեղ լինելուն կը յուսար թէ բարբարոսաց ոտքերը չեն հասած, եւ իրօք այնպէս գտաւ ինչպէս կը յուսար: Կրօնաւորք սիրով իջան անապատեն թաղելու համար իրենց քրիստոնէայ եղբարց մարմինները: Իսկ Զաւէն, որ Գրիգորի մարմինը կը փնտռէր՝ չը գտնելով ոչ նորա եւ ոչ Սուրենի մարմինը, փառք կու տար աստուծոյ եւ կ'ըսէր. «Օր մը անշուշտ յանկարծ կու գայ եւ ես ձեռքս իրեն կը յանձնեմ քուրիկը»:

Անկից իջաւ ծովեզրը, լիճը խաղաղ կը ծիծաղէր՝ անտարբեր մարդկային ողորմելի յուզմանց վրայ, ելաւ լողալով մակոյկին քով նստաւ, նոյն տեղ, ուր Արփենին առաջի օրը նստած կը

սպանէր իւր մայրիկին, ջուրը իւր վճիտ կերպարանքն առաւ. ան ատեն նայեցաւ եւ տեսաւ ջուրին տակ մայր ու աղջիկ քովե-քով, մտաւ եւ առանց դժուարութեան հանեց զիրենք ցամաք. ըսաւ ինքնիրեն. «Աստ այս կղզին անխօս վկայ այս սքանչելի մօր եւ հրեշտակային զակին պարկեշտութեանց թող իրենց գերեզման լինի. ապագային մէջ աւազակաց եւ արիւնարբու ճիւղաց թերեւս միմիայն ապահովութիւն աստ գտնուի. մինչեւ որ իշխանիկը երեսն էլնէ»:

Մտաւ մակոյկը, գնաց բերաւ ամէն պէտք եղածը, փորեց գերեզմանը սոսույ ծառի մը տակ, եւ երբ ամէն հանգստեան կարգ կատարուեցայ, ինք մեռելաթաղ, ինք սպասաւոր, ինք հայր եւ եղբայր եւ ամենայն լինելով, յորդառատ արտասուօք ողողեց գերեզմանը, ինք նաեւ զարմանալով թէ ծեր զինուոր՝ իւր այդ աչքերը, որ հուր գիտէին թօթափել, ուստի՞ այդչափ արտասուք կը բխէին, որ բոլոր կեանքին մէջ այնչափ ունեցած չէին:

Իսկ երբ արտասուքը սրբեց, ժողովեց Աստուծոյ պաշտօնեայքը եւ հանեց բերդին առջեւ, տուաւ կրակը բորբոքեց մակոյկը, որպէսզի ոչ ոք կարենայ մերձենալ կղզույն, ան ատեն. «Ամենայն ինչ կատարեալ է»,— ըսաւ, եւ գլուխը կուրծքին դրած՝ անցեալին մէջ թաղուած այդ բերդին հանդէսները, կոչունքները, ուրախութիւնքը, սուգերը եւ տրտմութիւնքը նաեւ՝ ամէնքը աչքին առջեւ տեսնելով յաջորդաբար, ուր երկայն տարիներ անցուցեր էր, եւ քսանչորս ժամ բաւական եղած էր անյայտ, անյիշատակ ընելու, դարձեալ Կաղզուանի ճամփան բռնեց մոռնալով նաեւ իր նժոյգը, որ ծանր իր ետեւէն կը քալէր լթիկ եւ տխուր իբր թէ չի համարձակելով իւր տիրոջ խորհրդածութիւնքը շփոթել:

Բայց վերջապէս Չաւէն իբր քունէ արթնացաւ, վասնզի ծունկերը չէին ուզեր իրեն հնազանդիլ, սաստիկ յոգնութիւն մը զինք առեր էր, հեծաւ իրեն ձիուն վրայ, նոր զգացմունք մը՝ գլուխը սկսաւ պտոյտ գալ, այնպէս, որ եթէ չզգուշանար պիտի ինկներ ձիէն, այս նոր երեւոյթներէն արթնացած միտքն եկաւ թէ ամենեւին բերանը բան չէր դրած, եւ արեւը մայր մտնելու մօտ էր, ուստի շտապեց եւ հասաւ այն գիւղը, ուր առջի օրը խուլ պառաւը զինք հիւրընկալէր էր:

Դարձեալ առանձին էր պառաւը՝ նստած իր դռան առջեւ. դարձեալ զիւղն անապատ էր: Թէպէտ ինք հացի պատառ մը միայն ուզեց, բայց բարի պառաւը հացն ու պանիրը եւ կուժով զինին մէկտեղ դրաւ առջեւը: Եւ երբ տեսաւ թէ ախորժակով կ'ուտէր.

— Ես մարած աչքերեդ իմացայ,— ըսաւ,— որ դու շատ անօթի ես. մեր զիւղացիքը ամէնքը լեռները փախան, աւազակներէն կը վախեն:

— Դու չե՞ս վախեր, որ այսպէս մենակ կը նստիս,— հարցուց. Չաւէն քիչ մը ձայնով, քիչ մը նշանացի:

— Իմ վախելու տեղս մնացե՞ր է, որ վախեմ: Ասպատակը երիտասարդ կ'ուզէ, ինձի պէս պառաւներուն վնաս չի հասցներ:

— Դու այնպէս կարծես, բայց հիմկու նորելուկ աւազակները քեզպեսները սուրէ անցուցեր են:

— Է՛հ, ի՛նչ ընեմ,— ըսաւ պառաւը արհամարհանօք ուսերը ցնցելով,— եթէ սպաննեն՝ թո՛ղ սպաննեն, հազար տարի ապրելու չեմ, արդէն հարիւրին մօտ եմ: Թոռներ, տղաքներ, հարսներ ունիմ: Դուք գնացէք՝ փախէք լեռը, ըսի, ես տանս մէջ եթէ պիտի մեռնիմ, խաղաղ կը մեռնիմ:

Այս փիլիսոփայութեան պատասխան չունէր Չաւէն, ուստի լռեց, եւ երբ հացը կերաւ լմնցուց եւ զինուոյ կուժին վերջի կաթիլը նաեւ քամեց, պառաւը՝

— Ռրդի՛, մի՛ ծալլուիր, դու բան չես կերեր այսօր, երէկ այդ տղեկը լաւ կերաւ. կա՛ց հիմա...—
ըսաւ եւ վազեց գնաց՝ ժամանակ չի թողնելով Ջաւէնի, որ արգիլէ, եւ քանի մը վայրկեանն եկաւ
դարձեալ ուտելիք ու գինի բերելով: Եւ երբ Ջաւէն սկսաւ ուտել՝ պառաւն էլ սկսաւ հին
պատմութիւններ ընել, որ Ջաւէնի յիշատակներէն շատ բարձր կին:— Ռրդի,— կ'ըսէր,— դու այն
օրերը գիտե՞ս, երբ Սուրէն պարսիկը ամէն Հայաստան կը կոխկոտէր, յետոյ երբ Վարդան
Մամիկոնեան զայդ Սուրէն սպաննեց, յետոյ երբ պարսից թագաւորը եկաւ, յետոյ երբ մենք
ամենքս լեռները փախանք...

— Ես այդ յետոյ-ներուն յետինն անգամ չգիտեմ:

— Գիտե՞ս, հա՛...— կ'ըսէր պառաւը նորա բերնին շարժումնքը տեսնելով:

— Ո՛չ, ո՛չ, ամենեւին չգիտեմ:

— Բայց գիտե՞ս, որ Հռոմի մեծ թագաւորն որ եկաւ՝ կաթողիկոսը Լուսաւորիչն ուրացաւ (Ջաւէն
իմացաւ, որ Հերակլի եւ Եզրի համար կ'ըսէր՝ գլխով նշանացի ըրաւ թէ՛ այդ՛), հա՛, Աստուած
ողորմի հօրդ հոգուն, ան տարի հռոմը մէկ կողմէն, պարսիկը միւսէն այս մեր լեռն ու ձորը
կոխեցին, տուն, տեղ չի մնաց, ամէն բան քանդուեցաւ. մենք երկու ամառ մէկ ձմեռ սարերուն
գլուխն անցուցինք, ի՛նչ օրեր էին... հիմա ի՛նչ պիտի լինի: Այսօր էլ այդ հռոմներն էին, որ եկան,
սոթած հաւ դարձեր էին, վրայ, գլուխ չի կար՝ անօթի ծարաւ...

— Այսօ՞ր,— հարցուց Ջաւէն:

— Հա՛, մէկ-մէկ քիչ հաց տուի՛ ճամփեցի, ետքը մէկ ծերունին եկաւ երեսուն-քառասուն հոգով,
ուռած, փքուած, հագուած կապուած մարզ էր, քթէն ինկնողն հազար կտոր կը լինէր, կ'երեւի, որ
մեր գիւղին չի հաւնեցաւ՝ էլաւ գնաց Կաղզուանի ճամփան. երթա՛ ի բարին:

Ջաւէն որ արդէն փորը կշտացեր էր, եւ քունն աչքերուն վրայ սկսեր էր ծանրանալ, երբ լսեց թէ
յոյնք, որ անշուշտ արաբաց մագիլներէն փախստականը էին, որ լեռները փրկութիւն գտած հիմա
զանազան ճամփաներով կ'երթային Կարին, եւ եթէ զիրենք բազմաթիւ գտնէին ամէն
անգամութեան ձեռնհաս էին: Թուլութիւն մէկդի թողուց եւ շուտ մը պառաւին մնաս բարովն
ըսաւ, հեծաւ ձին ու Կաղզուան շտկուեցաւ արագութեամբ: Գիշերուան երկրորդ ժամուն հասաւ
աւանը, որ բոլոր տակնուվրայ էր, եկեղեցոյն դռան առջեւ քանի մը հոգի ժողովուած կը խօսէին
թէ ինչ կարելի էր ընել յունաց պահանջմանց դէմ, երբ Ջաւէն մութուն ձիուն գլուխը քաշեց, շուտ
մը զինք ճանչելով իրեն մօտեցան, եւ դեռ ինք բերան չի բացած՝ սկսաւ գանգոյի եւ վիճակը
յայտնել

— Հարիւր յիսուն, երկու հարիւրի չափ փախստական յոյն զինուորներ աւանը մտան, զօրավար
մէլ կար հետերնին. ցրուեցան ամէն տուն. մենք իրենց խեղճութեան ողորմեցանք, անհաւատին
դէմ կռուէ կու գան, ըսինք, խաչապաշտ են, ըսինք, պարտք եղած հիրընկալութիւնն ըրինք, բայց
գոհ չի կրցանք ընել, սկսան զգեստ յափշտակել, զէնք պահանջել, զինոյ կարասներ պարպել եւ
կանանց վրայ աչք ձգել... Մեծերնին իջաւ քու տունն, Ջաւէն եղբայր, շատ կարելի է որ նա էլ իր
աւագակներէն պակաս չի մնայ:

— Քալենք մեզի երթանք, այնտեղ կը տեսնենք եւ կը մտածենք:

Եւ Ջաւէն ձիւն իջած այդ դրկիցներու հետ միատեղ շտկուեցաւ տուն: Դեռ տան դռանը չի հասած՝
կը լսուէին յունական անառակ երգեր ու ձայներ, որ Ջաւէն բաւական կը հասկնար, եւ որ

երգողները կտուրի տակ ընկողմանեալ յոյն զինուորներ էին. առանց սոցա վրայ ուշադրութիւն դարձնելու Ջաւէն ներս մտաւ: Նախ զինք դիմաւորողներն եղան իւր երեք որդիքը, որոնց ամէնէն մեծը քսանհինգ տարու երիտասարդ մէր կ'որաւի եւ ծանրագլուխ. եւ հօր ու որդւոյ մէջ այս իսասկցութիւնն տեղի ունեցաւ կամաց ձայնով.

— Ի՞նչ տեսակ մարդ է, Ներսէս, այս յունաց մեծաւորը:

— Ի՞նչ. գիտնամ, հայր, իբր քառասուն տարու՝ քաղցրալեզու, քաղաքավար մարդ մը կ'երեւայ. ոչխար մը մորթել տուաւ այն ձեւով, որ իբրեւ թէ փողը պիտի վճարէ, մեծ կը խօսի՝ ինքզինքը այնպէս կը ցցնէ, իբր թէ կայսեր շատ ծանօթ մէկն է: Հարցուց թէ այս տունն ո՞ւմն է, հարցուց թէ Արփենին ո՞ւմ աղջիկն է, Վարդանաբերդի, Մամիկոնեանց իշխանուհւոյն, Գրիգոր իշխանին վրայ տեղեկութիւնք փնտռեց: Հրամայեց, որ իր զինուորներուն պէտք եղածը տրուի, վճարմունքը խոստացաւ կայսերական գանձէն շուտով հասցնել:

— Պրոկոպիո՞ս է այդ մարդուն անունը,— հարցուց դաժանութեամբ Ջաւէն:

— Ոչ, հայր, Թումա է իր անունը:

— Մայրդ, աղջիկները ո՞ւր են:

— Ամէնքը ներսն են, չերեւցան օտարներուն:

— Հիմա քովը ո՞վ կայ:

— Տերտերը միայն մնաց, ուրիշ ամէնքը գնացին:

— Մտնենք ներս, բարեկամք, եւ տեսնուինք այս յունական բանակին կոտորտութիւններուն հետ,— ըսաւ Ջաւէն իր դրացիներուն:

ԳԼՈՒԽ Ե

Թումա ընկողմանեալ էր վառարանին քով, եւ ուշադրութիւն անգամ չըրաւ մտնողաց, որ յարգանօք ողջունեցին. իր երկու զինուորները յոտին կանգնած էին դռան քով: Կաղզուանի աւագերեցը նստած էր վարը փոքրկացած յոյն զօրավարին ներկայութեան: Ջաւէն այս վիճակը տեսնելով՝ քահանան հրաւիրեց վառարանին քով անցնիլ նստիլ. եւ նկատելով նորա դանդաղութիւնը՝ օգնեց նաեւ թեւէն բռնելով եւ վեր վարելով, եւ նքն անցաւ քովը նստաւ: Բիւզանդացի յոյնը իւր դիրքին մէջ այս ամէն շարժմունք տեսաւ, եւ լաւ իմացաւ թէ իր արհամարհանաց փոխարէն պատասխանող մը անցաւ իւր առաջ, բայց չիմանալէն եկաւ:

Իսկ Ջաւէն, որ բաւական յունարէն կը խօսէր, սկսաւ հանդարտ կերպով ժողովրդեան գանգատները, իւր զինուորներէն եղած անիրաւ պահանջները առաջ դնել, յոյս յայտնելով թէ «իրեն պէս բարձր զօրավար մը այնպիսի անկարգութեանց ներողամիտ չէր կրնար լինիլ»: Ջաւէնի այս վերջին խօսքերը, ուր երգիծանքը շատ սուր եւ կծու էին, յոյնին բարկութիւնը այն աստիճանի զրգռեցին, որ շտկուելով եւ նստելով՝ եւ խիստ ակնարկ ձգելով Ջաւէնի հարցուց.

— Դու որ զինուորի կը նմանիս կերպարանքովդ, ո՞ւմ քով ծառայած ես մինչեւ հիմա:

— Իմ ըսած խօսքերս կ'երեւայ թէ չի կրցայ հասկցնել. ես աղաչանք մը ըրի, որ հրաման ընէք զինուորներուն անիրաւ պահանջներ չընելու. իսկ դուք ինձ կը հարցնէք թէ ո՞ւմ քով զինուորած եմ. այդ հարցմունքը ինձ զարմանք կու տայ, ուստի ես էլ համարձակութիւն կ'առնում ձեզ հարցնելու թէ ի՞նչ կը նշանակէ այդ հարցմունքը:

— Դու հասարակ շինական՝ կը համարձակիս ինձ՝ հոռոմ իշխանի հարցմունք ընել:

— Ի՞նչ յանցանք կայ այդտեղ, մարդ չգիտցածը միշտ իրաւունք ունի հարցնել: Դուք ինձ կը հարցնէք թէ ո՞ւմ քով ծառայեր եմ, նոյնպէս ես էլ հասարակ շինական համարձակութիւն առի ձեզ հարցնել թէ ի՞նչ մտօք այդ հարցմունքը կ'ընէք. չար միտք եթէ ունենայի կրնայի հարցնել թէ դո՞ւք էիք արաբաց դէմ այդ մեծ յաղթութիւնը կարգադրողը թէ Պրոկոպիոս:

— Դեռ նախատէ՞լ զիս կը համարձակիս, անա՛րգ շինական,— ըսաւ Թումա եւ ելաւ սուրն առնելու:

— Հանդարտ տեղդ նստէ, հոռոմ իշխան,— ըսաւ Զաւէն ծանր եւ արհամարհոտ ձայնով եւ ամենափոքր շարժմունք նաեւ չընելով.— ես երբ հոռոմ իշխան կ'ըսեմ, պէտք է իմանաս թէ իմ մտքիս մէջ այդ քու անարգ շինականներէդ աւելի անարգ բան մը կ'իմանամ, քու այդ սուրէդ վախցող մարդ չի կայ այստեղ, ես գրաւի կու գամ, որ այդ խեղճ սուրը պատեանէն անգամ ելած չէ տարիներէ ի վեր եւ ժանգոտած է: Իսկ եթէ այս խեղճ շինականի սուրը պատեանէն ելնէ յանկարծ՝ Լուսաւորի՛ չ վկայ, որ առանց քանի մը հոգի հանելու տեղը չի դառնար:

Այն անշարժութիւնն, այն հանդարտ ձայնը, այն արհամարհոտ կերպը, որ Զաւէնի վրայ նկատեց յոյն զօրավարը, բաւական եղան, որ կերպը փոխէ եւ ինքզինքը սանձէի ուստի կիրքը թողոյց եւ արհամարհանաց ձեւ մը առնելով նստաւ:

— Հա՛, այդպէս խելօք նստինք եւ մարդու պէս տեսնուինք, դուք մեր հիւրն էք, մեր հայրենական սովորութիւնն է հիւրը պատուել, բայց հիւրը եթէ աւազակութիւն ընէ՝ դեռ այն ժամանակներում չհասանք բոլորովին, որ անպատիւ թողունք, ուստի հիմա քեզ կ'իմացնեմ բարեկամաբար, որ եթէ այս վայրկենէս փոքրիկ բռնութիւն մը լինի աւանիս մէջ, բոլոր յոյները ջարդել կու տամ, եւ որպէսզի մեղք ինձ չի համարուի՝ ահա քու առջեւ կը հրամայեմ.— Տէր Հայր,— ըսաւ աւազերեցին, որ իւր քով նստած էր,— գնա շուտով եկեղեցին, ամէն տեղ իմաց տուր, որ զէնքերնին պատրաստ կենան, եւ առաջին անիրաւութեան եկեղեցիներն իմաց տան եւ եկեղեցոյ մը կոչնակները զարնուած վայրկենէն ամէն ոք իրաւունք ունենա գտած յոյնը սպաննելու Տէ՛, իմացա՛ր, գնա՛ :

Քահանան թեւատարած ոտք ելաւ երթալու, երբ Թումա, որ նստեր մտիկ կ'ընէր, ձայնը եւ կերպը փոխելով մէկէնքաղցրութեամբ ըսաւ քահանային.

— Դու, որ Քրիստոսի եւ աւետարանի աշակերտ ես կրնա՞ս այսպիսի անգութ պատուէր մը քարոզել:

— Աւազակներու պաշտպանութիւն ո՞ւր քարոզեց Քրիստոս, հոռոմ իշխան,— պատասխանեց Զաւէն: Ես, թագաւորեալ քաղաքը՝ Կարին, Տրապզոն կախադաններ տեսայ եւ աւազակներ կախուած, ձեր հոռոմի Քրիստոսը աւազակներու ներողութիւն չի քարոզէր եւ մեր հայոց Քրիստոսը կ'ուզէ՞ք որ քարոզէ: Հրաման տուր քու մարդոցդ, որ անիրաւութիւն չընեն, յափշտակութիւն չընեն, կանանց պատուոյն չի դպչին, այդ անառակ երգերը դադրեցնեն. եւ երբ դու

հրաման տաս՝ մեկը չի հնազանդի եւ դու պատմես, այն ժամանակ կ'իմանամ թէ քու մարդիկդ զինուոր են եւ ոչ աւագակ. իսկ եթէ դու լուռ կենաս, գանգատանաց ականջդ խփես, գողին գողակից կը լինիս եւ ինձ իրաւունք կու տաս, որ քեզ եւ քոյոցդ ինչ չարիք կրնամ հասցնեմ, եւ ինձ սրբազան պարտք կը դառնայ անիրաւութիւնը որ քեզմէ սկսաւ՝ քեզմով վերջացնեմ. բայց դու եթէ գիտնայիր քու գլխուդ հասած վտանգը՝ ինձ պետք էր շնորհակալ լինէիր, որ ժամանակին եկայ հասայ. արդէն բոլոր աւանին բնակիչք պատրաստուած էին զձեզ ամենքդ սուրէ անցնել, եւ կոտորածը հիմա այս վայրկենիս թերեւս սկսած էր, բարեբախտաբար ես եկայ եւ արգիլեցի:

Այս վերջի խօսքերը բոլորովին կերպարանափոխ ըրին յոյն գորավարը: Շուտ մի ելաւ հրամայեց իւր զինուորներուն, որ երթան բոլոր աւանը իմացնեն իւր կողմէն, որ ամենափոքր անկարգութիւն ընողը սուրէ անցնել պիտի տար, եւ թէ թոյլտւոյթուն էր բնակչաց բռնութիւնը բռնութեամբ վանել եւ անզգամին անզգամութեամբ փոխարինել: Եւ դառնալով Ջաւէնի, որ նորա խօսքերէն բառ մը, շարժմունք մը չի կորցնելով անշարժ նստած էր:

— Իրօք շատ շնորհակալ եմ,— ըսաւ,— որ դու խոհեմութեամբ վարուեցար այս նիւթիս մէջ եւ արիւնահեղութեանց պատճառն արգիլեցիր. ես չէի կրնար հաւատալ թէ մեր զինուորները այն աստիճանի անիրաւութիւն ընեն, որ բնակչաց այսչափ զայրոյթ պատճառեն. եւ շիտակն ըսելով ձեզմէ առաջ ոչ ոք գանգատ մը չէր ըրած: Ուստի շատ գոհ եմ ձեզմէ:— Այո խօսքերը՝ բիւզանդական կերպարանքին վրայ դիմակ ծածկելով ըսելէ վերջ՝ ձեռքը Ջաւէնի երկնցուց, որ այս շարժմունքը գուշակելով՝ իբր թէ այդ վատ ձեռքը չտեսնելով՝ դարձաւ իր դրացեաց եւ ըսաւ.

— Գնացէք դուք էլ, եղբարք, հանդարտեցուցէք երիտասարդները, որ չելլեն տարիքի կրակով բան մը հանեն. լսեցիք ահա իշխանին խօսքերը եւ պատուերները, դուք էլ ամէն փողոցի զլուխ զինեալ պահապաններ դրէք, որ արգիլեն անկարգութիւն՝ ուսկից որ գայ. երթա՛ք բարով:

Մարդիկը գոհ սրտով ողջունեցին եւ ելան գնացին: Նոյնպէս Ջաւէն այն ատեն ելաւ եւ ձեռքը կուրծքին վրայ դնելով, ողջունեց յոյն իշխանը եւ քաշուեցաւ իւր ներքին սենեակը՝ ուր ընտանիքը ժողովուած կը նստէին. երախայք արդէն քնացած էին: Հոն իր երեք տղոց ապսպրեց, որ կարգաւ գիշերը պահպանութիւն ընեն եւ դիտեն յունաց ամէն շարժմունքը. ինք հեծաւ իւր ձին աւանին ամէն կողմը պտոյտ մընելէն՝ թաղապետները տեսնելէն եւ զգոյշ կենալու խորհուրդ տալէ վերջ՝ դարձաւ տուն հանգչելու համար այն երկար աւուր քաշած մտաւոր ու մարմնաւոր աշխատանքէն:

Առաւօտեան կոչնակին ձայնին ելաւ Ջաւէն երթալու եկեղեցի: Յունաց համար՝ որ աւագակութիւնը թողած հիւր էին հիմա՝ նախաճաշ պատրաստեցին կանայք: Մատղաշ տղայք անկասկած իրենց խաղալուն զբաղած էին: Արփենի, որ քսանչորս ժամուան միջոցին մէջ ամէնուն հետ բարեկամ եղած՝ էր, երբ Ջաւէնն տեսաւ եկեղեցիէ դարձած, դիմեց իրեն հարցնելու թէ՝ «Մայրիկը բերի՞ր», իսկ Ջաւէն, որ որոշած էր սիրակայսնելուտղայն Կամսարականաց ամբոցը, «Ես քեզ մայրիկին պիտի տանիմ, սիրուն Արփենիս» ըսաւ, եւ նա այն գաղափարով միխթարուած՝ ներս, դուրս, պարտէզը, փողոցը կը շրջագայէր. երբեմն մտնելով սենեակը, ուր յոյն իշխանը եւ Ջաւէն նստած էին: Ամէն բան յայտնի կ'ընէր հոռոմին, որ այդ տղայն բացի դիմաց գեղեցկութենէն՝ թէ իր զարդերուն եւ բեհեզեայ զգեստներուն, թէ իր մորթի ձերմկութեան, թէ ոտքերուն ձեռքերուն մանրութեան, թէ իր համարձակութեան համար տարբերութիւն մը ունէր ուրիշ տեսած տղոցմէն: Ազնուականութեան կնիքը ճակտին վրայ դրոշմուած էր, եւ որ իրեն աւելի հաճելի էր, յունարէն նաեւ եւ կը խօսէր, վասնզի նախարարական տուներ ինչպէս երբեմն

պարսկերէն՝ նոյնպէս յունարէն խօսելու սովորութիւն մտած էր ժամանակներէ ի վեր եւ շատ պալատներու մէջ յոյն ուսուցիչներ եւ դայակներ կը գտնուէին: Չանազան խօսակցութիւններէ իմացաւ նաեւ թէ որք աղջիկ մէ, ուստի անզգամ խորհուրդ մը յղացաւ մտքին մէջ, եւ երբ բոլոր ասանը զբաղած՝ ամէն ոք կէս աւագակ, կէս զինուոր յունաց վրայ ուշադրութիւն կը դարձնէր, յոյն իշխանը Արփենիի հետ կը զրօնուր, կը խօսէր, կատակներ կ'ընէր եւ յանկարծ երբ մէկ միջոց մը մենակ էր իր երկու սպասաւորաց հետ, տղան պատկեցուցին. բերանը թաշկինակ մը խցկեց՝ լաւ մը փաթաթեց, որ չի կարենայ շարժիլ եւ պարկի մը մէջ դնելով՝ իրեն ուրիշ կարասեաց պէս իւր ծառայից մէկուն շալակը տուաւ եւ ինք ձի հեծնելով արտորնօք, բիզանդական ծիծաղով Չաւէնն ու կաղզուանցիք ողջունեց եւ Բասեան գաւառի ճամփան ինկաւ: Երբ ասանէն դուրս ելաւ, հինգ-վեց ձիաւոր իւր սպասաւորներէն հետը, քանի մը վայրկեան սաստիկ արշաւանքով հեռացաւ իւր փախստական գունդէն. ան ատեն հանեցին խեղճ տղեկը իւր սոսկալի պարկէն, տեսան, որ մօտ էր խեղդուելու, հանեցին բերնի խցիկը, եւ թէպէտ մարած եւ ինքզինքն էլած՝ բայց իշխանը առաւ նժոյգին վրայ, կը քշէր կատաղութեամբ, երբ գիւղ կը հասնէր՝ իւր լայն վերարկուին տակ ծածկած խեղճ որբը կ'անցնէր արագութեամբ, որպէսզի այս սոսկալի գողութեան հետք մը չի ձգէ: Վերջապէս ամայի տեղ մը ջուրի մը քով իջաւ ձիէն, տղուն քիչ մը ջուր տուաւ խմելու, արիւնտտ բերանը լուաց. գոյն չէր մնացել սիրուն տղեկին երեսը, աչքերը մարած էին բոլորովին, գլուխը չէր կրնար բռնել. հարցուց թէ քան ուտել կ'ուզէ՞ր. երբ պատասխան չառաւ, հեծաւ ձիուն վրայ, տուաւ տղեկը թիկնապահաց մէկուն, որ բարեբախտաբար աւելի բնական գթած սիրտ ունենալով ինչչափ կարելի էր ջանաց քիչ չարչրկել, մինչեւ հասան Կարին. հոն ամիս մը հիւանդ պատկելէ վերջ, հազիւ թէ առողջացաւ, եւ գարնան արեւն իր աչաց կենդանութիւն բերաւ:

Բայց այս միջոցիս ի՞նչ ըրաւ Չաւէն. երբ տեսաւ թէ Արփենին չի կայ. բոլոր Կաղզուան վեր-վար ըրաւ, ամէն ծակ, ամէն խոռոչ խոյզ եւ խնդիր եղաւ եւ երբ ամէն յոյս կտրուեցաւ՝ խեղճ զինուորը ձեռքը ծնօտին դրած յուսահատութեան արցունք կը թափէր, կը հարցնէր Երասխայ ալիքներուն, կը հարցնէր երկնքի թռչուններուն, ամէնքն անտարբեր՝ պատասխան չէին տար: Վերջապէս յուսահատ կ'երթար եկեղեցի ժամերով կ'աղօթէր եւ տխուր տուն կը դառնար: Շաբաթն անգամ մը, կը հեծնէր ձիւն, կ'երթար լճին քով կը նստէր՝ անթարթափ կը նայէր կղզին եւ կը դառնար, իսկ երբ լիճը կատարեալ սառեցաւ՝ իւր Տիկնոջ գերեզմանին վրայ արտասուք կը թափէր եւ կը դառնար: Օր մը, որ մեծ պահոց երկրորդ կիրակին էր, ելաւ դուրս, մտածութիւն մը զինք բոլորովին գրաւէր էր. հազիւ ճաշն ըրաւ՝ ձիւն ուզեց եւ գնաց այն ճգնաւորաց մենարանը, որոց դիմէր էր իւր վիրաւորը դարմանելու եւ մեռելները թաղելու համար: Առաւ նոցա վանահայրը, հեծուց իւր ձիուն վրայ եւ իջեցուց լճին քով. սառած ջուրին վրայէն քայլելով բերաւ Բիւրեղի գերեզմանին վրայ, հանգստեան կարգ մը կատարել տալէն վերջ՝ խնդրեց, որ Աւետարանը գերեզմանին սառած հողին վրայ դնէ եւ բանայ, Վանահայրը միամտաբար բացաւ, Չաւէն մատը դրաւ՝ «Կարդա՛յ, Հայր Սուրբ, սա խօսքը»,— գրուցեց. «Խնդրեսցիք եւ տացի ձեզ, հայցեցէք եւ գտցիք, բախեցէք եւ բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու եւ որ հայցէ՝ գտանէ եւ որ բախէ՝ բացցի նմա: (Ղուկաս գլ. Ժայ. 9)»,— կարդաց քահանան: Չաւէն ձեռքերը երկինք տարածեց՝ «Փա՛ռք քեզ, Աստուած իմ»,— աղաղակեց: Այն բոլորէն կարծես ծերը երիտասարդացաւ, իր աչաց կորովն եկաւ, եւ երբ տուն դարձաւ, ամէնքը փոփոխութիւնը տեսան եւ զարմացան. առջի մարդն էր իւր կնոջ համար, առջի հայրիկն էր իւր զակներուն, առջի Չաւէն եղբայրն էր իւր դրկիցներուն եւ բարեկամաց համար: Չատիկը կատարեց ուրախ, գուարթ իւր ընտանեաց եւ ազդականաց հետ, եւ չորեքշաբթի առաւօտուն հասարակ մշակի զգեստներ հագած, մախաղ մը, վերարկու մը, երկսայրի կարճ սուր մը գօտիին մէջ ծածկած, տրեխներ ոտքը եւ գաւազան ի ձեռին, ժողովեց

կինը եւ գաւկները, խրատեց զամենքը, ապապրեց մօրերնուն միշտ հնազանդ լինիլ, իրենց մեծ եղբայրը յարգել եւ մեծարել, զնա էլ յորդորեց ամէնուն հետ քաղցրութեամբ եւ սիրով վարուիլ, օրհնեց զամենքը, համբուրեց մէկիկ եւ մէկիկ եւ ելաւ երթալ իւր կորուստը փնտռելու:

Մենք թողունք Զաւէն Կարնոյ ճամփուն վրայ, եւ երթանք փնտռել Գրիգոր ու Սուրէն, որոց դիակունք չի գտնելով նա՝ յոյս ըրած էր թէ օր մը երբ իշխանիկը դառնար, Արփենին գոնէ իրեն պիտի ներկայացնէր, միայնակ եւ սիրասուն նշխար Մամիկոնեան հայրենի ճոխութեան եւ հրեշտականման մօր եւ քրոջ:

Վիրաւորը մեզ պատմեց թէ ինչպէ՞ս Սուրէնի եւ Գրիգորի ձիաւոր խումբը Վարդանաբերդի հրդեհը տեսնելով դիմէր էին հոն նահանջի ճանապարհ միշտ իրենց յուսալով, եւ թէ ինչպէս թշնամոյն բազմաթիւ հեծելոց խումբը վրայ հասնելով՝ շրջապատեալ յամենուստ սկսած էին պատերազմիդ Սուրէն քանի մը հողի կորսնցնելէն վերջ իր խումբէն՝ տեսնելով անխուսափելի վտանգը փոքրիկ բլուրի մը վրայ քաշուեցաւ իրեններով, այդ բլուրը Վարդանաբերդի գերեզմանատունն էր, քիչ հեռաւորութեամբ:

Այդ գերեզմանոցին մէջ՝ մահարձանները պատնէշ առած՝ յուսահատ կռուով իրենց կեանքը թանկ ծախել որոշեցին հայ փոքրիկ խումբը. Սուրէնի հօր ձայնը՝ «Տղա՛ք, մեռնի՛նք, բայց մեռցնենք եւ այնպէս մեռնինք քաջութեամբ», կ'որոտար ամէնուն ականջին. այդ քառասուն-յիսուն հոգին շրջապատ եալ հազարներէ, այնպիսի դիմադրութիւն ըրին եւ այնպիսի կատաղութեամբ կռուեցան երկու ժամ, իրենց աղեղներէն ելած նետերը, իրենց պարսատիկներէն ելած քարերը այնպէս կը հարուածէին հեռունէն, եւ յարձակումներու դէմ իրենց վաղակաւորներն ու մուրճերը այնպիսի հարուածներ տուին թշնամոյն մօտէն, որ Շէլի Ալի այդ քաջութեան վրայ հիացած դադրեցուց յարձակումնքը եւ պատգամաւոր մը յուղարկեց յայտնելով թէ՝ «Ինք պատրաստ էր իրենց կեանքը շնորհել եթէ անձնատուր լինին»: Եւ կէս ժամ միջոց կու տար մտածելու: Սուրէն դաշնադրութեան մտնելու յանձնառու եղաւ. բայց արաբը պայման մը միայն ունէր. «կեանք միայն շնորհել». երբ Սուրէն զիջանիլ յանձն առաւ, իրեն դէմ անկարծելի դժուարութիւն մը ելաւ: Գրիգոր որ առիծի պէս եւ իւր հասակէն վեր պատերազմէր էր, «մեռնի՛նք» բառէն զատ բերնէն ուրիշ խօսք չէր հանէր, այդ հայրենի պալատան բոցն ու ծուխը զինք համոզած էին թէ իր մայրը եւ քոյրերը մեռած էին, ուստի «մեռնի՛նք, մեռնի՛նք» կը կրկնէր: Սուրէնի բոլոր ազդեցութիւնը անօգուտ պիտի լինէր՝ եթէ ամէն պատերազմողք վերջապէս յանձն չառնուին գերութիւնը կենաց հետ փոխանակել: Ուստի պատանին երբ մինակ մնաց եւ ամէնքը զէնքերը թողին, ինք այն բռպէին ինկաւ գերեզմանի մը վրայ, եւ արտասուաց հեղեղ մը սկսաւ իջեցնել. բոլոր Սուրէնի յորդորներուն եւ ապագային համար տուած յոյսերուն պատասխան անգամ չի տուաւ: Մամիկոնեանց սերունդը է՛լ անզգայ եղաւ շղթայներու, ինչպէս անզգայ էր իւր քեռույն ձայնին, որ քաղցրութեամբ «Որդեակ Գրիգոր, այս օրերս էլ կ'անցնին, դժբախտութիւնը ինչչափ որ սոսկալի լինի մշտնջենաւոր չի կրնար լինիլ»,— կ'ըսէր:

Բայց պէտք էր կամայ-ակամայ անողոք բախտին հնազանդիլ, մանաւանդ որ կը տեսնէր Սուրէն, այդ մարդը, որուն վրայ երբէք կեանքին մէջ շողոքորթութիւն, փոքրկութիւն, վատութիւն չէր նշմարած, լրութեամբ եւ անմոռնչ կը տանէր նախատանաց, հայհոյութեանց եւ հարուածոց: Այդ աննկուն Կամսարականը, որ անտարբեր էր իր անձին համար յամենայնի, միայն այն խնդրէր էր Շէլիեն, որ զինք այդ պատանույն չի բաժնէ, եւ արաբը խոստացաւ եւ խոստմունքին վրայ կեցաւ: Բոլոր այդ դաժանելի ուղեւորութեան մէջ, ծանրաբեռնեալ շղթայիք, շատ անգամ հետի, դատապարտեալ եղանակաց խստութեան, անօթութեան եւ ծարաւի, ինքզինք զրկելով հացին

պատահան, ջուրին կաթիլէն, ծնողական խնամքով հազիւ կրցաւ ողջ հասցնել զԳրիգոր Կոզմովտի գաւառներէն Դամասկոսի շրջակայքը, ուր էր Շէյխ Ալիի բնակութեան վայրը:

Հոն՝ այդ գերութեան շղթայներուն մէջ թողլով այս մեր երկու նախարարագունքը, դառնանք Հայաստան, որուն մասամբ ոտնակոխ եւ եղերական վիճակը յայտնի եղաւ բաւական մեր մինչեւ հիմա տուած նկարագրէն: Տեսանք թէ ինչպէս երջանիկ տուներ բարձր եւ խոնարհ, ինկան՝ կործանեցան եւ հիմնահատակ եղան դժոխային արշաւանքի մը սաստկութեան առաջ: Տեսանք նաեւ թէ այն Յունական կայսրութիւնը, որ երկրին տէր ինքզինք կը համարէր՝ ինչպէս պաշտպանեց երկիրը, — տեսնենք հիմա թէ նոքա, որոնց պարտքն էր իրենց անձանց եւ ազգին վրայ հսկել, ինչպէ՛ս իրենց պարտաւորութիւնը կատարեցին:

ԳԼՈՒԽ Զ

Հայաստան բաժնուած երկու մեծ ինքնակալութեանց՝ Բիւզանդական կայսրութեան եւ պարսից Սասանեան պետութեան մէջ, հարկատու երկուքին, ոտնակոխ երկուքէն՝ աննկարագրելի ալեկոծութեան մէջ կը ծփար շարունակ: Այս երկու մեծ տէրութիւնք միեւնոյն հիւանդութեամբ վարակեալ՝ արտաքուստ զօրութեան փայլ մը ունէին, բայց ներքուստ երկուքն էլ հաւասար փտած եւ որդնոտած կործանման վիճակի մէջ էին:

Կոստանդնուպոլիս՝ ոսկեղէն գահոյից վրայ նստող հռոմայեցւոց ինքնակալ կայսրը, որոմն բազկատարած պաղատանօք կը դիմէին մեր նախահարք, երբ Յազկերտ արքայից արքան քրիստոնէութիւնը բնաջինջ վերցնել կը սպառնար Հայաստանէն, այդ «Երանելին Թէոդոս կայսրը, որ խաղաղասէր էր ի Քրիստոս» եւ անարգ հարկատու հոն Ատտիղասայ՝ այն Ատտիղասայ, որ Մեծին Վարդանայ բազկին զօրութեան առջեւ ընկրկէր էր ի Դարբանդ, Յազկերտի աչաց առջեւ, նոյն Ատտիղասայ, որ հռոմէական ինքնակալութիւնը կը դողացնէր արեւելք եւ արեւմուտք, եւ որ այդ Երանելի Թէոդոս չյաջողելով թունաւորել ուր գրոթիւնը կը գնէր եւ ամէն արժանաւոր նախատիւնքներ կը կլանէր: Եւ այդ կայսերութեան օրերը բարեբախտ ու երջանիկ էին արդի վիճակին հետ բաղդատելով. վասնզի հիմա երկու հարիւր տարի ժամանակ անցնելով ապականութիւնը իւր յետին աստիճանները գտեր էր. կրօնամոլութիւն եւ անբարոյականութիւն, գոռոզութիւն եւ անարգութիւն, մեղկութիւն եւ անգթութիւն, շռայլութիւն եւ ազահոյութիւն, յանդգնութիւն եւ վատութիւն, անխղճութիւն եւ խղճահարութիւն, միշտ մոլութիւնք, միշտ ծայրեր զարմանալի հակակշիռք կազմելով, բուն ճշմարիտ առաքինութիւն ոչ ուրեք, ոչ բանի մը մէջ կ'երեւար:

Թէոդոս Մեծէն վերջ այդ կայսերական գահոյից վրայ ի գուր բարձր մարդ կը փնտոէ ոք եւ դժուար թէ առանց աններելի պակասութեանց մէկը կարենայ գտնել: Ամէնէն հոչակաւորն Յուստինիանոս՝ օրէնադիր, մեծագործ, յաղթող շնորհիւղ երկու քաջ զօրավարաց, ամենախոնարհ ծառայ է իւր կնոջ Թէոդորայի, որուն ամէն քմահաճոյից եւ անիրաւութեանց գործիք կը դառնա ամէն բոպէ: Դիւցազնական քաջութիւնը նաեւ կերպարանափոխ եղած կը զարմացնէ զմարդ, երբ կը տեսնէ Բելիսար սարսափ թշնամեաց բանակներու, նեցուկ պետութեան յաղթութեամբ դարձած դափնիներով, իւր տան եւ կնոջ խայտառակութիւնքը պատմել խորհելու վայրկենին, կայսուհւոյն մէկ նամակէն սոսկացեալ՝ իւր մեղաւոր կնոջ առջեւ տարածեալ ոտքերը կը պագնէ, մշտնջենաւոր եւ հաւատարիմ ծառայ զինք կը դաւանի. եւ «կնոջը եւ կայսեր ամենախոնարհ ծառան ասպարիզին վրայ վեհ դիւցագուն կը դառնա»,

Թագաւորութեանց կը տիրէ, եւ նուիրեալ արքայական պսակը կը մերժէ, եւ յաղթանակի հանդիսին կը տեսնուի հետեւակ իր գերի բռնած Թագաւորներով առջեւէն՝ երկրպագելով Թէոդոսի եւ Յուստինիանոսի գահոյից:

Վերջը քանի որ մեր պատմութեան ժամանակին կը մօտենանք, կը տեսնենք, որ կայսերական գահոյից վրայ բարձրացեալ մարդիկ աւելի կը պղտիկնան, եւ մեծ կարծուածները խառնուրդ մը ունին առաքինութեանց եւ մոլութեանց. ի բաց թողեալ Մօրիկ հռոմայեցի կամ Հայկազն (որու ծագումն նշանակութիւն պէտք չէ ունենա հայու համար), որ աւելի ազնիւ սիրտ ցցուց մեռնելու վայրկենին քան թէ գահոյից վրայ. կը տեսնենք եւ Հերակլ՝ դիւցազն Թագաւորութեան սկիզբը եւ վատթար վերջերը: Այն մարդը իր մեծամեծ յաղթութեամբ պարսից դէմ, այն տկարութեան հասցուց բերաւ այդ երկու Թագաւորութիւնքը, որ արաբաց հարուածներուն չկրցան դիմանալ եւ ընկճեցան կամ տապալեցան:

Ի՛նչ հարկ խօսելու յոյն կայսրութեան ժողովրդոց վրայ, որոնց մայրաքաղաքի ապականութիւնը սովորութեանց եւ բարուց, զեխութեանց եւ թշուառութեանց, վատութեանց եւ անզգամութեանց անցան զանցան Հռոմայ քաղաքացւոց վերջին օրերը, մանաւանդ որ սոքա աւելցուցին ամէն մոլութեանց վրայ կրօնամոլութիւն մը՝ ուր կայսրէն սկսեալ յետին ձկնորսը ինքզինք աստուածաբան կը կարծէր, կրկեսները կրօնական վիճաբանութեամբ կը սկսէին եւ արինահեղ կռիւներով կը վերջանային, եւ անիմանալի հաւատս խորհուրդները թեթեւամիտ եւ կիսուսումն մարդկանց խորհրդածութեանց նիւթ էին: Այդ մեծատարած կայսրութեան մայրաքաղաքին մէջ Սուրբ Աստուած երգելու խնդիր մը աւելի կարեւորութիւն ունէր քան թէ բոլոր Ափրիկէի կորուստը. թշնամին՝ հոն, պարսից, աւար, պուկար, արաբ, աշխարհքի ծայրերէն կը հագնէր, հուր, սուր, կոտորած եւ աւերմունք կը բերէր շուրջանակի, Կոստանդնուպոլսոյ պարիսպները կը ծեծէր եւ ներսը քաղաքացին կրօնական վիճաբանութիւնքը նախամեծար կը համարէր, եւ երկրորդական առ դուրս հասեալ վտանգը: Եթէ յաղթուէր անհոգութեան եւ վատութեան չէր յանցանքը՝ այլ աստուածային բարկութեան պատուհասն էր. եթէ յաղթէր, Աստուածամօր շնորհքն էր: Այս կրօնական զբաղմունք ամէն օր նոր հերետիկոսութիւնք կը ծնանէին եւ նոր վէճեր:

Նոյն ոգին՝ ուրիշ ձեւով կը վարէր Պարսից պետութիւնը. յաղթող արքայից արքան՝ արեւուն եւ կրակին կու տար յաղթութեան փառքը. Հպատակ այլակրօն ժողովուրդք իսիստ հալածանաց կ'ենթարկուէին ժամանակ-ժամանակ. եւ ի բաց առեալ քանի մը մեծ մարդիկ, վատթար եւ բռնաւոր կառավարութիւն մը կը տիրէր ամէնուրեք, արդարութեան գաղափարը սահմանափակ էր նաեւ այդ Մեծ Խոսքովի մտքին մէջ, որ Նուշիրվան կ'անուանուէր եւ որ Մասանեանց փառքն եղած էր իւր քաջութեամբք եւ յաղթութեամբք, երկարամեայ Թագաւորութեամբ, եւ ինքզինք արդար կը սիրէր անուանել եւ որ մահուան անկողնին մէջ իր ժառանգին բարի խրատներ կու տար. «Արդարադատ եղիր, սանձահարէ անիրանները, մխիթարէ թշուառները, սիրէ երիտասարդները, պաշտպանէ գիտութիւնը, հետեւէ ծերոց խորհուրդներուն, մի՛ թողուր կառավարութիւնը երիտասարդաց եւ քու ժողովրդոցդ երջանկութիւնը քու նպատակդ լինի: Ընդարձակ Թագաւորութիւն մը կը թողում քեզ, եթէ իմ խրատներս լսես՝ կը պահես զայն, եթէ արհամարհես՝ կը կորսնցնես»: Այս խօսքերը զրուցելէն վերջ, եօթանասուն տարի նաեւ չի քշեց, իւր յաջորդներէն եւ ոչ մէկը իր բնական մահուամբ չի մեռաւ, եւ այդ Թագաւորութիւնը, որ Միջերկրականէ մինչեւ Հնդկաստան, Չինաց սահմաններէն մինչեւ Արաբիայ ամէնքը կը

սարսեցնէր քանի մը տարի առաջ, յանկարծ անհետացաւ կատաղի աղանդաւորաց հրոսակներու առջեւ, որոնք ոչ անուն եւ ոչ կրօնք ունէին նոյնպէս քանի մը տարի առաջ:

Այսչափ երկայն չէինք խօսեր այս երկու մեծ ինքնակալութեանց վրայ, եթէ Արշակունեաց թագաւորութեան ժամանակէն սկսեալ Հայաստան սոցա երկուքին հպատակ, հարկատու եւ պատերազմի դաշտ եղած չլինէր անընդհատ:

Հայոց ազգը երեքի կը բաժնուէր իրօք՝ որոց երկուքը ամէն բան էին, իսկ երրորդը նշանակութիւն չունէր: Եկեղեցական մարմինը, որուն գլուխը կաթողիկոսն էր, եւ զօր նախարարներն եւ եպիսկոպոսները կ'ընտրէին. ոմներ իւր արտօնութիւնները, վասնզի ինքն էր օրէնքները շինող: Իրեն հետ կու գար Նախարարական մարմինը եւ ազատաց խումբը, որ երկրին տէրերն էին: Հրամայել, իշխել, պատերազմել էր իրենց գործը: Նախնի սովորութիւնները եւ արտօնութիւնքը կը պահպանուէին դարձեալ իրենց համար, քաջութիւնը ժառանգական էր այդ ընտանեաց մէջ, իրենց կարգը եւ գահոյքը յարգուած էին նաեւ յունաց ինքնակալներէ եւ Սասանեանց թագաւորներէ, յարկ կ'առնէին եկեղեցականաց պէս եւ չէին վճարէր, մարմնաւոր պատիժ գանահարութիւն չի կար իրենց համար, ինչպէս վանքեր, նոյնպէս իրենց ոստանները, ամրոցները, բերդերը, դղեակները ամուր դիրքերու վրայ եւ պարսպապատ շինուած բաւական ապահովեալ էին թշնամեաց եւ ասպատակաց յարձակումներէն: Կրօնասէր սովորաբար՝ իրենց պալատներէն աւելի վանքերու եւ եկեղեցիներու շինութեանց եւ կալուածոց կու տային իրենց գանձերը: Պարսկական եւ յունական սովորութիւնք, զեխութիւնք եւ անառակութիւնք բնականաբար դիւրաւ մուտ կը գտնէին իրենց մէջ: Ինչպէս բնական է ազնուատոհմութեանց ամէն տեղ արհամարհ աչօք նայիլ հասարակ ժողովրդեան վրայ եւ հարստահարել, նոյնը սովորաբար կ'ընէին հայոց նախարարք եւ ազատք: Վասնզի այդ երրորդ մասը՝ ժողովուրդը, որուն մէկ իրաւունքը յիշուիր մէկ տեղ մը, չի կար հաստատութիւն մը, որուն վրայ ինք յենուէր, չի կար կազմակերպեալ օրէնք մը, որ զինք պաշտպանէր. եթէ լինէր եւս՝ ե՞րբ օրէնքը առանց զօրութեան կրցեր է մէկուն պաշտպանութիւն լինիլ. օրէնքներն ուժ ունենալու համար միշտ կազմակերպեալ մարմնոյ մը պէտք ունէին, եւ օրէնքներն արդար գործադրութեամբ միայն կրնան ժողովրդոց սիրելի լինել եւ իրենց սրտին մէջ տպաւորուիլ՝ սովորութիւն դառնալ: Հայաստանի օրէնսգիրքը բացի հոգեւոր գրեանքէ ուրիշ օրինաց տեղեկութիւն չունէին. Յուստինիանոսի օրէնքները գրեթէ վեց հարիւր տարի վերջ հայերէն թարգմատնութիւն ունեցան. ի՞նչ ուրեմն կը կառավարէր այս ժողովուրդը— սովորութիւնք եւ խղճմտանք: Վաղարշակայ օրէնքները իւր արքունեաց պերճութեան եւ նախարարաց գահոյից համար կարգադրութիւնք էին, եւ քրիստոնէական կրօնքին հետ հրէութիւնը այնչափ ազնուացեր էր, որ Բագրատունիք, Ամատունիք, Գնթունիք հրէական ցեղերէ իջած կը համարուէին, որ շատ կարելի է թէ սխալ մը լինէր. Արծրունիք, Մամիկոնեանք, Կամսարականք օտարազգիք էին: Եւ այս նախարարները հայ ազգին տեսարքն էին իրենք ազատ եւ ժողովուրդն անազատ. նոյն յանցանքին համար կանոնագիրքն կը հրամայէր, որ քահանան եւ ազատը 100 դրամ տուժէ, իսկ անազատը 50 տուժէ՝ շատ մը ծեծ ուտէ, վասնզի ազատին մարմնական պատիժ արգիլուած էր, ուստի՞ ց,— հաւանական թէ ի սովորութեանց:

Կային ժամանակներ ուր նախարարութեան ձեռքը այն աստիճան կը ծանրանար ժողովրդեան վրայ ոսկոյ եւ արծաթի հարկապահանջներ դնելով, որ հեղինակ մը նմանցնէ այդ խեղճ շինականը այսինքն ժողովուրդը՝ «Մարդու, որ կրնկնի ի ծով եւ հնարք չի գտնէր ելնելու» եւ «Հիւանդի, որ ցաւէն տագնապեալ խօսելու նաեւ կարողութիւն չունի»:

Ո՛վ որ լաւ դիտէ եւ ուսնի եւ դիանայ խորհրդածել պատմութիւնը, կը տեսնէ թէ աշխարհագրական դիրքն էր պատճառ ինչպէս ոմանք կարծեցին նոր ժամանակներս, որ հայ ազգը կը տկարացնէր թշնամեաց դէմ՝ կը բաժնէր եւ անմիաբան կ'ընէր, այլ այդ նախարարական իշխանութիւնը, որ մեծ եւ պզտի բռնատրյութեանց աժնելով երկիրը, կեդրոնական իշխանութիւնը կը տկարացնէր, եւ այդ բռնատրները գործիք կ'ընէր օտարին բանսարկութեանց եւ միջամտութեանց. ինչպէս հին ժամանակներէ ի վեր սխալ կարծիք մը կը տիրէ թէ հայք անմիաբան են, իբրեւ թէ անմիաբանութիւնը բնածին պակասութիւն մը լինէր հայուն քով: Եթէ հայք միաբանեցան 300 թուականին, կրցան ընդունիլ միաբանութեամբ քրիստոնէութիւնը, եթէ իրենց օրինակին եւ ազդեցութեան հետեւեցան Վիրք եւ Աղուանք գրեթէ նոյն ժամանակին, եթէ հայ լեզուն կրօնից պէս կրցեր էր անցնիլ այդ սահմաններէն եւ Կուր գետի եզերքներէն մինչեւ Կորդուաց լեռները տարածուիլ, ինչո՞ւ չտեսնենք թէ միմիայն պատճառ՝ քաղաքագիտութեան պակասութիւնն էր Արշակունի թագաւորաց քով, որ Հայաստան անիշխանութեան կը մատնէր: Եթէ Տրդատ նախարարաց դէմ նոյն հանճարն ու զօրութիւնը ի գործ դնէր՝ ինչ որ դրաւ՝ պարսիկը եւ կռապաշտութիւնը վարելու համար Հայաստանէ, Արշակունեաց աթոռը իւր մեռած վայրկենէն չէր սասանէր ի հիմանց եւ Խոսրով իւր որդին չէր կարօտէր յունաց ամբարտաւան օգնականութեան իւր հօրն աթոռը բարձրանալու համար: Ի՞նչ կարօտութիւն ունէր Աղկունեաց դաւաճան Նահապետը եւ նախարարութիւնը ջնջելէ վերջ՝ տեղը նոյն արտօնութեամբդ Մամիկոնեանք հաստատելու: Բայց նախարարութիւնը երբ հանդարտ էր, թաղաւորներու համար ծուլութեան դիրքութիւն կու տար երկրի կառավարութեան մասին, միայն թէ թագաւորները զօրաւոր լինէին: Մենք կը հասկանանք թէ այդպիսի ի գարուց խորարմատ նախարարութիւնը հիմնահատակ ընել դիրքին չէր. բայց նոյնպէս դիրքին չէր հազարաւոր տարիներով արմատացեալ կռապաշտութիւնը ջնջել, եւ այդ կրցաւ ընել Տրդատայ կորովի բազուկը: Ինք պետք էր ընել եւ այդ, եւ ոչ իւր անպիտան յաջորդներէն Արշակայ թողուլ, որ մոլութեանց եւ յիմարութեանց անձոռնի խառնուրդ մէր եւ քան զամենքը վատթարադոյն, եւ որ բնական էր թէ չի յաջողէր այդպիսի մեծ ձեռնարկութեան: Եւ հետեւանքն այն եղաւ, որ այս երկու թշնամեաց թագաւորութեան եւ նախարարութեան պատերազմին մէջ, առաջինն անհետացաւ եւ երկրորդը խաղալիք լինելով օտարին պարսկին եւ հռոմին, երբեք չի մտածեց անկախութեան փորձ մը փորձել թէպէտ շատ յարմար վայրկեաններ ներկայացան: Այլ իր քաջութիւնը կը վատնէր օտարին ծառայութեան մէջ, Մասանեանը բանակներուն հետ կ'երթար մինչեւ Թրքաստան հոնաց եւ հեփթաղաց հետ կը պատերազմէր, բիւզանդական բանակներուն հետ կ'երթար մինչեւ Ափրիկէ եւ Իտալիայ եւ Դանուբի ափանց վրայ վանդալաց եւ գոթաց եւ բուլկարաց եւ սարմատացւոց հետ պատերազմելու համար:

Բայց անկարելի է ուրանալ, որ նախարարութիւնը դիւցազնական վայրկեաններ ունեցաւ. Հազկերտի պէս մեծ եւ յաղթող թագաւորի մը դէմ խիզախեց Վարդանայ հետ եւ քաջութեամբ պատերազմեցաւ Վահանայ հետ Վաղարշ խոնարհեցուց եւ Կաւատայ կրօնամոլութիւնը հալածեց. Վարդան երկրորդի հետ Նուշիրուն Խոսրովու լուծը թօթափել հանդգնեցաւ: Բայց բոլոր այս պատերազմաց մէջ նախարարութիւնը մեծաւ մասամբ միաբան էր, վասնզի կրօնքի պաշտպանութեան էր կռիւր, իրեն ցրուեալ զօրութիւնը միացնելու մեծ շարժառիթ մը պետք էր՝ կրօնքը, վասնզի նախարարութեան բնութիւնը անիշխանութիւն, անմիաբանութիւն էր: Իսկ անմիաբանութեան մասին՝ հայերը նոյնչափ անմիաբան եղած են ինչչափ ամէն աղինք, որ զօրաւոր կառավարութիւն չեն ունեցեր երբեք: Իրենք ոչ երբեք ունեցէք են յունաց պէս քսան, հինգ տարի քշող քաղաքական պատերազմ մը Պեդոպոնէսեան պատերազմի պէս, թէպէտ նա

խարարութեանց անմիաբանութիւնը հար եւ նման էր այդ Յունաստանի փոքր, փոքր հասարակապետութեանց, միայն այն տարբերութեամբ, որ հոն ժողովուրդն ազատ եւ ամէն բան էր, եւ ուսմունքը բանական մարդը բարձրացուցեր էր, իսկ Հայաստան՝ ժողովուրդը ոչինչ էր, եւ իր բռնաւորներն ամէն ինչ: Յունաստան ծովէ շրջապատեալ բնական ամրութեամբ դարձեալ մեծ տէրութեան մը կարգ անցնելու համար պէտք եղաւ, որ Մակեդոնացուց լուծին տակ անցնի եւ Աղեքսանդրի հետ արշաւի: Առանց զօրաւոր կազմակերպեալ իշխանութեան եւ խիստ օրինաց անկարելի է միաբանութիւն, վասնզի փոքրիկ շահեր մեծ շահերու դէմ կապստամբին, եւ մեծ շահեր զօրութեան պէտք ունին պզտի շահեր եւ անոնց բանսարկութիւնքը ճնշելու համար: Խիստ կառավարութեան ամէնէն անպիտանը նախադասելի է անիշխանութեան: Հայ նախարարութիւնն անիշխանութիւն էր արմատացեալ: Եւ որովհետեւ չի կրցաւ կանոնաւոր եալ ազնուապետութիւն մը նաեւ կազմել՝ ինք ինկաւ գահավէժ եւ ազգն էլ իր հետ տարաւ: Այդ ազնուապետութիւնը՝ եթէ կարենար կազմել նախարարութիւնը, ազգին նան երջանկութեան ճամփայ թերեւս բանար. բայց ռեւիցէ՛ բան կազմելու համար՝ արդարութեան եւ կանոնի մը հնազանդել յանձն առնելու է, այս կամքը հազիւ քանի մը նախարարաց քով կ'երելի պատմութեան մէջ, վասնզի անիշխանութիւնը կը ներէ միայն սանձարձակ զեղծմունք՝ ուսկից կամօք եւ մասամբ իսկ զրկուիլը շատ մեծ առաքինութիւն է:

Հայք ընդհանրապէս միաբան եղած են միայն այն վայրկենին, երբ իրենց կրօնքին բռնաբարութիւն հասնէր ռեւէ իշխանութենէ եւ զօրութենէ. ամէն բանի անտարբեր հայը միշտ պատրաստ կը տեսնենք բռնութիւնը բռնութեամբ վանելու, եւ եթէ անկարելի լինի՝ ամէն հալածանաց տանելու անխախտ կենալով հայրենի դաւանութեանց վրայ: Ամէնուն յայտնի է եւ վերն էլ յիշեցինք թէ ինչպէս հայ քրիստոնէութիւնը անընկճելի մնաց Սասանեանց կռապաշտութեան դէմ. նոյնը կը տեսնենք նաեւ Բիւզանդիայ կայսերաց բռնութեանց եւ ամէն տեսակ պատճառաբանութեանց դէմ. կրօնասիրութիւն էր այս ընդհանուր նկատմամբ. բայց անիշխանութիւնը անմիաբանութիւն կարծողաց կը զրուցենք թէ աւելի հետեւանք էր նա եկեղեցական իշխանութեան կանոնաւորեալ կազմութեան, որ հզօր մարմին էր ձեւացեալ վերուստ ի վայր եւ զօրաւոր կապով շղթայեալ: Տգէտ կամ գիտուն այդ եկեղեցական կազմութիւնը բիւզանդական բոլոր աստուածաբանական ուսմանց — նրբութեանց եւ իմաստականութեանց հետ կրցաւ մաքառիլ ու մրցիլ: Մերժեց նորա իրաւացի եւ անիրաւի ուղղափառ կամ չարափառ պահանջմունքները եւ մնաց անթափանցելի ամէն վիճաբանութեանց եւ ամէն հալածանաց դէմ եւ անխախտ պահեց ինչ որ անգամ մը Լուսաւորչէ առած էր:

Կաթողիկոս մը կը հնազանդէր կամ կը խոնարհէր Հերակլ կամ Կոստանդին կայսերաց, բայց եկեղեցական մարմինը եւ ժողովուրդը անշարժ կը մնար հայրենի կրօնական դաւանութեանց իմանալով կամ չիմանալով: Եւ այդ կաթողիկոսը կամ իւր յաջորդը վերջը-վերջը պէտք էր ընդհանուրին հետեւէր, եթէ չուզէր բաժանակից սատանայի համարուիլ:

Եթէ թագաւորութիւն կամ նախարարութիւն կարենային զօրաւոր կառավարութեան մը ձեւ առնուլ եկեղեցական իշխանութեան պէս, այն ժամանակ անիշխանութեան վտանգէն ազատ կը լինէր Հայաստան եւ կրնար ակնածելի լինիլ իր զօրաւոր դրացեաց: Բայց դժբախտաբար երբեք նախարարութիւնը այդ չէր խորհած, եւ որ շատ կարելոր ու գործադրելի էր այս միջոց ժամանակիս մէջ, արուն պատմութիւնը կը գրենք:

Եւ Թէոդորոս Ռշտունի կը մտածէր, այդ մարդը որ «մորմոքեալ ընդ կորուստ աշխարհին», Յունաց յիմար Սպարապետին ամբարտաւան անհոգութիւնը չէր կրցեր շարժել եւ իր

յորդորներով ոչ օգուտ այլ նախատինք քաղեր էր: Հիմա որ ականատես էր՝ ինչ որ արդէն գուշակէր էր, աւերմունք հրայրեացք՝ կոծ ու լաց կը տեսներ եւ կը լսէր, եւ ինչ դարման որ կարելի էր, կ'ընէր, եւ այնպէս կը շարունակէր իր ճամփան անցնելով Գողթան, Նախջեւան, Կոզովիտ, ուր դառն հայեցուածք մը ձգեց Վարդանաբերդի վրայ. կ'երթար Տայոց գաւառը թիկնապահաց փոքրիկ խումբով մը եւ կ'իջնէր ի Թաուուսկերտ աւան, ուր հին ապարանքն էին Տայոց Բագրատունի իշխանաց, եւ ուր կը բնակէր միայնակ նոյն ժամանակներ Համասպրուհի տիկին, մայր Վարազտիրոցի, կին Սմբատ Մարգպանին Հայոց եւ Վրկանաց, որուն քաջութեանց համբաւ հռչակեալ էր բոլոր արեւելք եւ որ այնչափ սիրելի եղած էր Պարսից թագաւորին իւր հաւատարմութեամբ եւ որուն յիշատակը կը պատուէր Թէոդորոս Ռշտունի իւր հայր եւ վարժիչ պատերազմական արհեստից անուանելով: Մանաւանդ որ սերտ բարեկամութեամբ կապուած էր Վարազտիրոց Ասպետի՝ նորա որդւոյն հետ, որ նոյն ժամանակները Արշիպէղագոսի մէկ կողմն աքսորեալ էր ընտանեօք Հերակլ կայսրէ:

ԳԼՈՒԽ Է

Ժամանակն արդէն ձմեռնային՝ ցուրտը սաստիկ էր այն տարի Հայաստանի բարձր գաւառներուն մէջ: Եւ այդ Թաուուսկերտի պալատին մէջ, ուր պառաւ Տիկին մը քաշուած կը բնակէր, որ շատ փառք, մեծութիւն, պատիւ տեսած էր իւր երկանը կենդանութեան եւ որդւոյն առաջի տարիները, եւ որ այն օրերը կը յիշէր, երբ արքայից արքային ընծաներն ու նուիրակները իրարու կը յաջորդէին, յաղթութեանց աւետաբեր սուրհանդակները շարունակ իւր դուռը կը բախէին եւ Պարսկաստան ու Հայաստան

Բազմայաղթ անունը Բագրատունեաց իշխանին կու տային. իսկ հիմա ինք Տիկինը մոռցուած, բարձիթողի եղած, այդ հայոց կանանց առաջինը երբեմն պատուոյ եւ հարստութեան մէջ, կը նստէր տխուր ձմեռուան պէս, եւ կը համբէր օրերը, որ լուր չէր առած իւր սիրական եւ անդրանիկ որդւոյն:

Թէպէտ մահ եւ աքսոր տխրութիւն բերեր էին այդ պալատը, եւ Տիկինը սգաւոր՝ բայց սպասաւորաց, աղախնայց եւ թիկնապահաց թիւն ու հանդերձանքը գրեթէ չէր նուազեալ: Երկրին կառավարութիւնը թէպէտ Սարգիս՝ բնիկ Տայեցի իշխանի մը ձեռքն էր, բայց ոչ երբեք առանց Բագրատունի Տիկնոջ խորհուրդին բան մը կը կատարուէր, վասնզի այս Սարգիս այն քաջերէն էր, որ Սմբատ Մարգպանի բախտին եւ դրօշակին հետեւելով՝ փառաց եւ մեծութեանց տէր եղած էին:

Երբ այսպէս Տիկինը տխուր եւ միայնակ նստած էր, իմացուցին իրեն թէ Սարգիս իշխանը կը ինդրէր զինք տեսնել, եւ թէ հետը երիտասարդ մէլ կար: Եւ Սարգիս մտնելով խորին յարգանքօք ողջունելէն վերջ Տիկինը՝ ներկայացուց Ներսէս Սպան, որ նոր կը դառնար Յունաստանէ եւ որ նամակ ուներ Վարազտիրոց Ասպետն առ Տիկինն եւ առ Թէոդորոս Ռշտունի:

Բագրատունի Տիկինը առաւ իւր որդւոյն նամակը եւ շտապաւ կարդալէն վերջ երկրորդեց եւ երրորդեց իր ընթերցմունքը, վասնզի շատ համառօտ էր եւ դառնալով զօրականին՝

— Կը տեսնես, որդեակ,— ըսաւ,— իմ գաւկիս նամակը շատ համառօտ է. քեզմէ պէտք է տեղեկութիւն առնեմ, ինչպէս ինք կը գրէ. ինչպէ՞ս տեսար զինք, լաւ՞ է, առո՞ղջ է, ինչպիսի՞ կողմ է այս աքսորանաց կողմն. միթէ՞ ազատելու յոյս չի կայ...

— Առողջութիւնը լաւ վիճակի մէջ է, վասնզի այդ կողմին շատ գեղեցիկ է՝ օդն առողջ, նարնջի եւ լիմոնի ծառերով զարդարուած, թեպէտ խիստ պահպանութեամբ կը հսկեն, որ չի փախչի. ընտանիքն էլ բոլորը լաւ են: Իսկ ազատելու յոյս չլինիլ կարելի չէ, ինչպէս յայտնի է, կայսրը իրեն խոստացել է երդմամբ ազատութիւն, բայց պալատին մէջ կան թշնամիք, որ կը ջանան յետաձգել այդ խոստմունքը, ինչպէս ես կրցայ իմանալ:

— Կրնա՞նք իմանալ ինչպիսի անձինք են, որ քեզ այդ տեղեկութիւնք տուին:

— Այո, իշխանուհի, Թէոդորոս զօրավար Երիզագի, որ ձեր որդւոյն Ասպետին շատ բարեկամ կ'երեւի, նա ինձ հրամայեց գաղտնի երթալ եւ տեսնել եւ լուր բերել իշխանին համար: Կայսրը առջի մարդը չէ բոլորովին փոխուած՝ քանի որ տարիքը կ'առնու, կը թուլանայ, Մարտինէ կայսրուհին է, որ կը կառավարէ երկիրը, եւ դժբախտաբար այդ կինը չէ, որ գիտէ լաւ կառավարել, այլ խելքը, միտքը թագաժառանգին տեղ իւր որդին անցնելու լինելով, իւր ձեռնասուններն առաջ կը քշէ, եւ այսպէս ամէն կարգ, կանոն տակնուվրայ եղած է:

Նոյն միջոցին սպասաւոր մը ներս մտաւ իմացնելու թէ Թէոդորոս Ռշտունին հասաւ. եւ երբ եկաւ զօրավարը՝ մեծ յարգանօք ողջունեց Տիկինը եւ ներկա անձինքը, ահա հանեց Ներսէս երկու նամակները Ասպետին եւ Երիզագի Թէոդորոսի կողմանէ: Մեծ ուշադրութեամբ կարդաց իշխանը, եւ կարելի չէր իմանալ իր երեսէն նոցա պարունակութիւնը, մինչեւ Տիկինը չի կարենալով համբերել, հարցուց.

— Այդ նամակներէն կրնա՞ս մեզի տեղեկութիւն տալ, իշխան, թէ որդիս Ասպետը, ի՞նչ պիտի դառնայ:

— Ո՞ւր էր թէ այդ ձեր փափագը, իշխանուհի, որ իմ նաեւ մեծ փափագս է, կատարուէր, վասնզի Ասպետին Հայաստան դառնալը, աս միջոցին մեզի կեանք կրնայ տալ. դուք հոս Հայաստանի մէկ ծայրը չէք գիտէր թէ ի՞նչ սոսկալի արշաւանք կրեց եւ ի՞նչ վիճակի մէջ է աշխարհքիս արեւելեան կողմը...

Եւ սկսաւ պատմել Նախջեւանի, Գողթան, Կոզովտի գաւառաց անցքերը: Եւ ասոնք ամէնքը յիշելէն վերջ՝ դառնալով Ներսէսի՝

— Ահա ասոնք ամէնքը յունացոյ քաջութիւններուն արդիւնքն են,— ըսաւ:

— Խնդրեմ, իշխան, զիս յունաց ստացուածք մըներ, վասնզի ես իրենց ծառայութեան մէջ մտած լինելովս, իմ հայութիւնս երբեք ուրացեալ չեմ, հոգով, սրտով հայ մնացած եմ եւ պիտի մնամ: ուրիշ բան է՝ եթէ իրենց երկրին մէջ գտնուելով՝ իրենց լեզուին եւ գիտութեանց տեղեկութիւն առէր եմ եւ այդ բանին համար կարծեմ թէ գէշ բան մը ըրած չեմ:

— Եթէ այդ գիտութիւնքը քու ազգիդ օգտին ծառայեցնելու միտք ունիս՝ Աստուած քեզ օրինէ. մենք իրենց ուսմանց թշնամի չենք, բայց շատ ու շատ վարձ տուին մեզ իրենց վատութեան պատերազմի մէջ, եւ իրենց քաջութեան ժամանակ շատ վատ բան ըրին, երբ կրօնական խառնակութեամբք Հայաստանի ամէն տուն խռովեցին:

Եւ այս խօսքերը զրուցելուն Թէոդորոսի աչքերը սոսկալի փայլ մը առին եւ դառնալով Բագրատունի իշխանուհւոյն՝

— Այդ Քրիստափորը, որ ամեն հայոց նախարարք միաբանեցան, վար առին կաթողիկոսական աթոռեն, իբրև անդուն բերան, իբրև գրպարտիչ, իբրև չարալեզու, սուրբ մէր, իսկ մենք յիրաւի արժանի պատիժը կրեցինք եւ կը կրենք այսօր կաթողիկոս մը ունենալով, որ երկիւղին եւ տգիտութեան կը գոհե մինչեւ իր Լուսաւորիչը: Ասպետը, Տիկին, այս մարդն աթոռը գրաւ, ինք աքսոր գնաց, եւ ես մինակ մնացի ամեն Հայաստանի մէջ՝ ուր եթէ քանի մը սիրտ ու գութ ունեցող մարդիկ գտնուէին, այս խեղճ հայրենիքը կարելի կը կենդանացնէլ: Թշուառութիւն ամեն կողմէն կը տեղա, արաբացիք՝ աստուածային նոր պատուհաս՝ փոթորկի պէս զարկին՝ անցան գնացին. յոյնք վատ եւ ամբարտաւան իբրև ջախջախ եղեգ խորտակեցան. հիւսիսականաց կատաղութիւնն սանձելու համար հազիւ կը բաւեն Վիրք, Ադուանք եւ Միւնիք, Արծրունիք եւ Անձեւացիք շփոթած հազիւ կը խոստանան երբեմն արեւելեան կողմը պաշտպանել, Մամիկոնեանք Մուշեղ եւ Համագասպ տարտամ պատասխաններ կ'ուղարկեն իմ հրաւիրանցս, իսկ Մոկացոց նախարարն Արդուկ յայտնի համարձակ անամօթութեամբ առաջնորդ եղեր է արաբաց: Դուրսեն թշնամիք, աւարառութիւնդ, հուր, սուր, կործանմունք, ներսեն անհոգութիւն, թուլութիւն, հարստահարութիւն եւ մատնութիւն... ո՛ւմ դիմես եւ ուստի՛ յուսաս օգնութիւն: Աստուած, կ'ըսես եւ ինքնիրենս. բայց Քրիստոսի փոխանորդը՝ Հայոց կաթողիկոսը կը տեսնեմ թէ կայսրէն կը վախէ, իւր ժողովուրդէն կը վախէ. աթոռը թողած՝ Կարնոյ պարիսպներէն չհամարձակիր ելնելու. իմ հրաւերներուս իւր ծերութիւնը՝ հիւանդութիւնը ցոյց տալով կը պատասխանէ: Ահա վիճակը, իսկ դարմանը ուրտե՞ղ... չեմ տեսներ:

Այս խօսքերուն տխուր եւ երկար լռութիւն յաջորդեց. Թեոդորոս կը մտածէր, դառնութիւն երեսին վրայ էր նկարուած: Մարգիս իշխանը ծեր զինուոր իբր յանցաւոր դիմացը կը նայէր: Ներսէս նոր հայրենիք դարձած՝ լսածներուն վրայ կը խորհրդածէր երբ Համասպրուհի տիկինը գլուխը վեր առնելով՝

— Իշխան,— ըսաւ,— միթէ՞ Պարսից պետութիւնը բոլորովի՞ն ինկաւ, միթէ՞ նա բան մը չէ կարող ընել այս վիճակին:

— Ի՞նչ կ'ըսէք, Տիկին, այն ժամանակները, երբ մենք դեռ պատանի էինք եւ դու երիտասարդ, արքայից արքայ մը կը յիշէք, որ Տիգրոն կը նստէր, որուն հրամանները աշխարհք կը սարսեցնէին, եւ Մմբատ Բագրատունի մարգպան մը կար, որ շատ թագաւորներէ բարձր էր,— այդ բաներն երազի պէս անցան: Արքայից արքային Խոսրովու թոռը ո՛ր զիտէ փախստական կը թափառի թէ՛ մեռած կորած է աշխարհքիս մէկ անձանօթ կողմը, մէկը չգիտէր, այդ փառաւոր մայրաքաղաքը՝ Տիգրոն, որուն դուք ականատես՝ ոսկեղէն պալատները կը յիշէք, այդ մերկ, ողորմելի արաբաց աւար եղաւ, եւ հրոյն ճարակ կործանեցաւ, եւ անապատ դարձաւ. այդ անհամար բանակները եւ ահագին Մասանեանց զօրութիւնը ոչինչ դարձան՝ հալածեցան եւ ցրուեցան:

— Միթէ՞ այս արաբացիք անյաղթելի էակներ են, եւ կարելի չէ դոցա դիմադրել, պետք է թողուլ, որ Հայաստան սոցա ոտից տակ ընկնի եւ ոչնչանայ:

— Ես թէ այդ կարծիքէն լինէի՝ հիմա այսպէս չէի դառնանար, բայց փորձեցի՝ տեսայ իրենց զօրութիւնը՝ եթէ այս ստնակոխ եւ ընկճեալ Հայաստան հիմա գլուխը վերցնէ՝ կանգնի միաբան եւ միասիրտ, իմ արեւը՝ վկայ, որ օտարի հետք անգամ չի մնար այս երկրիս մէջ:

— Բայց այդ արաբացիք, զօրավար,— ըսաւ Ներսէս ականածութեամբ,— յունաց մեծ եւ ահագին բանակները խորտակեցին ոչ միայն հոս Կոզովիտ, ինչպէս կը լսեմ, այլ Ասորիք, Եգիպտոս եւ

Պարսից տերութեան այդ անակնունելի հարուածը տուին: Հայաստան ինչպէ՞ս այդ ասպատակաց հարուածներուն կրնայ դիմանալ. ես գոռ պատերազմողներ տեսայ, որ սոսկմամբ կը խօսէին նոցա կատաղի քաջութեան վրայ:

— Ես իրենց քաջութիւնը չեմ ուրանար, բայց չեմ կրնար նաեւ մոռնալ, որ դեռ երէկ երկու հազարով նոցա կրկնապատիկ զօրութիւնը խորտակեցի Աստուծով: Եթէ այդ Պրոկոպիոս իմ ուզած մարդս լինէր, այդ Կոզովիտ մտնողներէն մէկ հատ՝ այո, մէկ հատ մը միայն չէր ապրէր: Բայց երբ վատութիւն եւ ամբարտաւանութիւն կը միանան զօրավարի մը սրտին մէջ յիմարութիւն է յաղթութեան սպասել: Ի՛նչ կ'ընէ, մանաւանդ թէ ի՞նչ ըրաւ Հերակլ, ո՛ւմ կը սպասէր նստած իւր թագաւորեալ քաղաքին մէջ, մի թէ առաջի օրէն պէտք չէ՞ր, որ արթննար թմրութենէն. ո՛չ, այն քաջը չէ, որ մենք տեսանք երբեմն այս Հայաստանի մէջ, երբ կը յարձակէր պարսից վրայ, եւ նոցա բանակներն կը խորտակէր: Ո՛չ, այլ նստած անհիմանալի կրօնական վեճերու մէջ կը մտնէ, ինչպէս երբեմն մեզի նաեւ օրինակը տուաւ Կարին: Զարմանք չէ, որ ինք կայսր՝ եւ զինուոր երբ պատերազմէ կը փախչի, յաղթութիւնն էլ իրմէ կը փախչի: Փոխանակ կենաց փայտը մէկ ձեռքը եւ սուրը միւսին առնելով պատերազմելու անհաւատից դէմ, սուրբ խաչը առէր Կոստանդնուպոլիս փախէր է, եւ ս. քաղաքը Երուսաղէմ մահմեդականաց ձեռք է մատնուէր:

Այս խօսքերը երբ կ'ըսէր Թէոդորոս՝ դարձեալ աչքերը կրակի պէս կը փայլէին, եւ Երուսաղէմի ընկնիլը լսելով՝ ամէնը սոսկմամբ իրարու կը նայէին, եւ Ներսէս աւելի շփոթած՝

— Բայց միթէ՞ այդ լուրն ստոյգ է,— հարցուց,— վասնզի ես երբ Կոստանդնուպոլիս թողի, Եւրոպա եւ Ասիա սաստիկ զօրաժողով կը լինէր եւ կայսրը անձամբ գնացեր էր Ասորիք:

— Կայսրը գնացեր էր Անտիոք, աստուածաբանութիւն ընելու է զբաղէր, իր զօրքերը պատերազմեր են եւ յաղթուէր, եւ արաբացիք Երուսաղէմի տէրեր եւ բոլոր Ասորիք արեան ծով են դարձուցեր: Ահա ինչ որ Կեսարիայի մասնաւոր սուրհանդակաւ նամակ մը կ'իմացնէ: Քու ինձ Թէոդորոս Երիզացիէ բերածդ չորս ամսուան նամակ է:

— Այո, մենք ծովուն վրայ հակառակ քամիներով շատ ուշացանք մինչեւ Տրապիզոն:

Բագրատունի պառաւ Տիկիինը՝ այս վերջի խօսքերուն խոր լռութիւն մը կը պահէր անշարժ արձանի պէս: Եւ երբ ամէնքն էլ լռեցին, վառարանին ճարձատիւնը միայն կը լսուէր եւ ձիւնախառն փոթորկիին ձայնը: Սարգիս իշխանը, որ մինչեւ վերջ բերանը չէր բացեր, ոտք ելաւ հրաժարականը տալու. Ներսէս նորա օրինակին հետեւեցաւ:

— Սարգիս իշխան,— ըսաւ Տիկիինը,— եթէ այս երեկոյ ընթրիքը մեզ հետ միատեղ ընէք ձեր սպային հետ, մեզ շատ գոհ կ'ընէք:

Սարգիս ընդունեցաւ խոնարհաբար Տիկնոջ հրաւերքը, եւ Տիկիինն ու Թէոդորոս մինակ մնացին: Համասպրուհի ոտք ելաւ, եւ թէպէտ եօթանասունն անցեալ էր գեղեցկութիւնը խամեալ, բայց վսեմութիւն միշտ կար իւր կերպարանաց եւ քայլուածքին վրայ: Գնաց դէպի դուռը, նիզը դրաւ, եւ փոքրիկ բանալի մը հանելով՝ ատաղձեալ պատին մէկ կողմը խրեց, եւ անյայտ դուռ մը բացուեցաւ:

— Որդեակ Թէոդորոս,— ըսաւ,— դու դիտես թէ ես ոչ միայն իբրեւ զաւակ զքեզ կը սիրեմ, այլ նաեւ քու վրադ մեծ համարմունք ունիմ. այս դուռը գաղտնիք մէ, որ միայն Վարազտիքոց իմ անդրանիկս գիտէ. եւ հիմա ահա քեզի նաեւ կը յայտնեմ. եւ ոչ միայն գիտնալուդ համար բացի

առջեւդ, այլեւ անոր համար, որ Բագրատունեաց գանձատունը Թեոդորոս Ռշտունոյ առաջ բաց է, երբ ազգին պիտոյքը պահանջէ եւ ինչչա՛ փ ուզէ լիաձեռն առնու եւ գործածէ: Ուստի արի եկ, որ տեսնես:— Երբ Թեոդորոս մօտեցաւ, տեսաւ փոքրիկ սենեակ մը լեցուն դրամոց քսակներ իրարու վրայ դիզուած. իսկ պատուը նոյն սենեկին մէջ գաղտնի դուռ մէկ բացաւ, որ ընդարձակ սենեակ մը կը հանէր եւ որ յիրաւի արքայական գանձատուն համարիլ կարելի էր: Հագարներով լիտր ոսկի, ձոյլ-ձոյլ դրուած էր գետինը. ազնիւ փայտերէ գգրոցներ, որ անտարակոյս գոհարեղէն կը պարունակէին, ոսկի եւ արծաթ գահոյքներ, արգարտահեռ վարսակալներ, զարմանալի եւ անգին ոսկէ զարդ զենքեր դարերէ ի վեր դիզեալ եւ հաւաթեալ աչք եւ միտք կը շլացնէին: Թէպէտ Բագրատունեաց խնայութիւնը հռչակեալ էր ի Հայաստան, բայց Թեոդորոս չէր կարծէր եւ չէր կրնար հաւատալ եթէ աչօք չի տեսնէր այնչափ հարստութիւն: Իսկ պատուը՝

— Առանց դրամի բան առաջ չէրթար, որդեակ Թեոդորոս,— ըսաւ,— դու այսօր ազգին միմիայն յոյն ես, առանց շողոքորթութեան կրնամ գրուցել թէ Ասպետը՝ որդիս նաեւ եթէ հոս լինէր իրմէ աւելի քու վրադ վստահութիւն ունիմ, ինչպէս գիտեմ թէ նոյնպէս Հայաստան քու վրադ միայն կրնայ այսօր յոյս դնել աստուծմէ վերջը. եթէ ազգը պիտի կորչի, թո՛ղ Բագրատունիք եւ իրենց գանձերն ալ կորչին: Դարձեալ կը կրկնեմ, ինչ որ պէտք ունենաս ազգին համար այս գանձատունը քեզի բաց է, աւելորդ է քեզի յանձնել թէ որդիս դարձնելու համար աքսորէ պէտք եղած ծախքը չես խնայէր: Ա՛ռ, ուզէ ինչչա՛ փ որ յարկ կը համարիս:

Թեոդորոս քիչ մը մտածելէն վերջ ծանրութեամբ այս պատասխանը տուաւ.

— Իշխանուհի, ես միշտ յարգէր եմ զքեզ ինչպէս գիտէք, Բագրատունեաց Տէրը՝ ձեր այրը, մեր հայրը եւ մեր զօրավարն էր: Պատերազամի արհեստին մէջ ոչ միայն ես՝ այլ գրեթէ հայոց ամեն նախարարք իւր ձեռասունն եղած են. իւր գերագանցութիւնն ոչ ոք կրնար ժխտել, հիմա եթէ ինք ողջ լինէր, Հայաստան կը հանգչէր աներկբայ: Վասնզի իր ձայնին անհնազանդ լինիլ մէկը չէր յանդգնէր: Դուք, Բագրատունեաց Տիկին, իմացէք ձեր այս առաջարկութեամբ՝ ինչպէս միշտ յայտնի ըրած էք՝ թէ նորա ոգին ի ձեզ կենդանի է. երբ ազգը պէտք ունենա, կը դիմեմ ձեզ, ապահով եղիք. հիմիկուհիմայ կրնաք Մարգսի հրամայել, որ հազար հոգւոյ ընտիր խումբ մը կազմէ եւ պէտք եղած ժամանակը ինք անձամբ առաջնորդելով, հոն բերէ ուր ես հրամայեմ: Գարնան հաւանական թէ պէտք ունենանք ընտիր խումբի մը. ո՛ր գիտէ, բախտը ի՞նչ կը պահէ մեզի:

— Բայց,— ըսաւ Տիկինը,— դու որ այդ աւերակաց եւ թշուառներուն այց ըրիր Գողթն, Նախջեւան եւ Կոզովիտ, ես զքեզ կը ճանչեմ, անշուշտ այդ իւեղճերուն տուիր ինչ ունէիր, եւ հիմա ստակի պէտք ունիս Ռշտունեաց երկիրը հեռու է. ուստի կարեւոր պիտոյից համար հարկաւոր եղածը առնունք եւ այնպէս դռները զոցենք:

Եւ ինչպէս ըսաւ այնպէս էլ ըրաւ: Թեոդորոս կանչելով իր գանձապետը յանձնեց քանի մը քսակ ոսկւոյ: Եւ երբ միայն մնացին այն ատեն սկսաւ իշխանը Տիկնոջ յայտնել իր մտքերը Հայաստանի եւ Ասպետին փրկութեան համար, վասնզի նորա ներկայութիւնը անհրաժեշտ կը համարէր այն մեծ գործին:

ԳԼՈՒԽ Ը

Կան աշխարհքիս մէջ մեծասիրտ մարդիկ, որ Դիոգինէսի՝ կամ անապատ ականներ ու եւ կամ տեսակ մը փիլիսոփաներու պէս կ'արհամարհեն հարստութիւն եւ շատ անգամ խստութեամբ կը դատեն հարուստները եւ նոցա հարստութեան միջոցները, բայց փորձը յայտնի կը ցնէ, որ շատ քիչեր կը գտնուին, որ իրենց սրտին ճշմարիտ համոզմունքը կը խոստովանին, վասնզի արդար կամ անիրաւ շահն նաեւ ձեռք բերելու եւ պահելու համար բնական յարմարութիւն եւ պարագայից օգնութեան պէտք է: Շատ անգամ դիտողութեան արժանի է, որ չքաւորութենէ հարստութեան ելած մարդիկ ոչ միայն իրենց կենցաղավարութիւնը կը փոխեն, այլեւ իրենց լեզուն. արհամարհ ոսկին կ'անցնի իր արժանավայել աթոռը, ուր մարդկութիւնը զինք ամուր եւ անշարժ զետեղէր է. վասնզի առանց անոր ոչինչ մեծ գործ կարելի չէ առաջ տանիլ:

Սպարտա այն օրը, որ Յունաստանի տէր լինիլ մտքին մէջ հաստատեց, իւր երկաթի դրամը թողուց եւ ոսկին ձեռք առաւ:

Թէոդորոս բարձր եւ ազնիւ սրտով այն մարդոցմէ էր, որ ոսկին չեն պաշտէր, բայց անոր կարեւորութիւնը մեծ գործ մը առաջ տանելու համար լաւ կը ճանաչէն, ուստի Բագրատունի Տիկնոջ գանձին օգնութիւնը իր սրտին յոյս բերաւ, եւ երբ սեղան նստան ամէնքը նշմարեցին, որ իւր ճակտին կնճիռները բաւական պարգուած էին, եւ այդ մարդը աւելի քաղցր ու զուարթ կը խօսէր:

Ներսէս Տայոց գաւառի Իշխան գիւղէն էր, գրեթէ քառասնամեայ, վայելուչ, սիրուն կերպարանօք էր. ազատ եւ չքաւոր ծնողաց զաւակ, զինուորութեան հետեւելով, սրամիտ եւ ուսումնասէր ի փոքր հասակէն, մայրենի լեզուին հետ յունարէն նաեւ սովորելով, Հայաստանի զանազան գաւառները շրջելէն վերջ, թողած էր հայրենի տունն ու երկիրը, գնացեր էր Յունաստան, Անտիոք, Աղեքսանդրիա եւ Կոստանդնուպոլիս զինուորական աստիճաններու մէջ բաւական յառաջայ դիմութիւն ունեցեր էր, ոչ զինուորական քաջութեանց համար՝ այլ աստուածաբանական վիճաբանութեանց մէջ բաւական հմտութիւն ցնելուն: Վասնզի ո՛վ էր մարդ այն ատեն, որ գիտուն կամ տգէտ այն անսահման եւ անիմանալի գիտութեան անտեղեակ լինէր. արքայական գահոյից բարձրութեան վրայ նստեալ կայսրը ոսկի զաւագան ի ձեռին աստուածածին բնութեան քննութեան կը պարապէր լրջաբար, լրջաբար նոյնպէս խոհակերը ջնջոց եւ դրգալ ձեռին, նոյն նիւթերուն վրայ կը խորհրդածէր, մին իւր տէրութեան կառավարութիւնը կը մտնար՝ միւսը՝ իւր կերակուրին վիճակը:

Ռշտունեաց տէրը, որ յունաց սովորութեանց լաւ տեղեակ էր՝ անրնդհատ յարաբերութիւն ունենալով այս ազգին հետ, որ գրեթէ Պարսից տէրութեան անիշխանութեան եւ տկարանալէն վերջ Հայաստանի տէր ինքզինք կը համարէր, ամէն տեսակ տեղեկութիւն կը հարցնէր, կը փնտռէր այդ յունական սպային, որ իւր հարցմանը խելօք եւ գոհացուցիչ կը պատասխանէր, եւ որ մեծն է տխուր համեստութեամբ զարմացուց զԹէոդորոս, մինչեւ որ իւր սովորական զգոյշ ծանրութենէն ելնելով, հարցուց.

— Այս ամէն իմ հարցմանց կը տեսնեմ, որ շատ հմտութեամբ կը պատասխանես, բայց խնդիր մը միայն կը մնա պարզել, ընդհանուր քու վրայ տխրութիւն մը կը տեսնեմ, միթէ կարելի չէ իմանալ թէ ինչի հետեւանք է այդ:

— Ժամանակիս դառնութեան վիճակը, իշխան, ամէն անհատի վրայ իւր ազդեցութիւնն ըրած է կերպով մը. ես էլ բնական թէ իմ բաժինս պետք էր ունենայի՝ եւ ունեցայ այս ունայնութեան աշխարհիս վրայ, եւ կը գտնեմ, որ շատ ապրեցայ, զարմանք չէ, որ ուրախ չեմ:

— Քառասունը հազիւ անցած այս լեզուն գործածելու եւ այս սրտի տխրութեան համակելու համար պետք է որ մարդու մը շատ յոյսերն դերել ելած լինին. ես քու գաղտնեաց հետաքրքիր լինելու փափագ չունիմ, բայց խորհուրդ կու տամ, որ ռեւիզի՝ դժբախտութեան եւ բախտին հակառակութեան առջեւ մարդ եթէ մարդ է կորով ունենա եւ չընկճի մինչեւ իւր շունչի վերջի վայրկեանը: Դու դեռ երիտասարդ՝ պատերազմի դաշտի վրայ զենքերու մէջ փորձ առած, ինչպէ՞ս կը համարձակիս այս ծեր զօրավարին առջեւ (ցցնելով զՄարգիս Տայեցի), որ Սմբատայ նիզակակից՝ Շեփթաղայ ահագին մարտից մասնակցեր է, երբ հարիւր հոգով ի բիրաւորաց պաշարեալ ոչ օրով, ոչ շաբաթով այլ ամիսներով յուսահատութեան պատերազմը պատերազմեր է, այսպէս խօսիլ: Փոխէ՛ այդ լեզուդ, ո՛վ քաջ, ե՛կ ինձ հետ, տե՛ս որչափ գործ եւ ինչչափ ընդարձակ ասպարէզ կայ առջեւնիս. կամ այն է որ կը կանգնեցնենք այս խեղճ Հայաստան, այս ինկած հայրենիք, կամ իրեն հետ կ'իջնենք գահավեժ... Բայց ոչ, մենք շատ կարելի է, որ իջնենք, բայց նա դեռ կ'ապրի եւ պետք է ապրի, վասնզի Աստուած չի կրնար մեր նախարարաց, իշխանաց, ազատաց յանցանքը տուժել տալ անմեղ ժողովրդեան, որ մեր լուծը կը տանի, որ զմեզ կը սնուցանէ, որ մեր պերճութեանց, մեր քմահաճույից, մեր անտակութեանց կը ծառայէ, եւ զօր մենք մեր գոռոզ ամբարտաւանութեան մէջ՝ անազատ եւ շինական կ'անուանենք արհամարհանօք եւ իր համբերող ուսոց վրայ բեռ բեռան աւելցնել չենք դադարիր անխղճաբար: Այո՛, կու գայ անշուշտ օր մը, օրը ապագայ գարուց ստուերներու մէջ ծածկեալ, այն օրը, ուր մեր նախարարական անունները անհետ, աներեւոյթ լինին Հայաստան աշխարհքի վրայէն եւ ապատն ու անազատ ի մի ձուլեալ բոնութեան մուրճերու հարուածներէն՝ միաբան եւ միաւսիրտ թօթափեն շղթայները եւ եղբայր զիրար անուանեն:

— Եթէ այդ խօսքերը Ռշտունեաց Տէրը՝ Հայոց Մարգպանն եւ զօրավար չի գրուցեր՝ եւ ինձի պէս սովորական ազատ մը համարձակեր՝ իբրեւ խռովարար ժողովրդեան ամէն իշխան պատմել իրաւունք կը համարէր:

— Ի՛նչ զարմանք, որ ամէն իշխան անիրաւութիւնը օրէնք համարի, երբ Լուսաւորչայ այթոռին հաստատութեան պահապանն նորա հիմունքը կը վարէ: Բայց ո՞ւմ է յանցանքը. դարձեալ եւ միշտ կ'ըսեմ. անաչառ մարդը՝ Քրիստափոր, անարգեցինք, նորա լեզուն «սուր սուսեր» է ըսինք, չարախօսներ, զրպարտիչներ, սուտ վկաներ բերինք եւ աստուծոյ մարդուն կենաց սրբութիւնը աղտեղել ջանացինք. իսկ նա ինչպէս կը վայելէր ճշմարիտ քահանայապետի աստուծոյ, այս միայն ըսաւ. «Իբրեւ յաջորդ Ներսէսի Մեծի այս այթոռին բարձրութիւնը չեմ խոնարհեցնէր անարգանք. այլ անոր պատիւը եւ միութիւնը պահելու համար իմ կամօքս կը հեռանամ. Քրիստոս հրամայեց զփոշի ոտից թօթափել, եւ ահա այս փակեղը կը թողում: Աստուած, որ կը սիրէ իւր հոտը՝ արժանաւոր հովիւ տայ իրեն»: Եւ աստուած, որ չէր կրնար սիրել ապերախտ ժողովուրդ մը, Եզրը տուաւ իրեն կաթողիկոս, որ իւր հոտը հերկուս պատահեց: Բայց թողունք այս խօսքերը. հանգչինք, եւ վաղն առաւօտ երթանք մեր ճամփան, տեսնենք աստուած՝ ի՞նչ կը ցցնէ:

Ի՞նչ էր Թեոդորոսի միտքը:— Հայաստանի վերա կազմութիւն մը ինք կ'երկներ: Տեսնելով Պարսից անկումը, Յունաց ինքնակալութեան տկարութիւնն ու թուլութիւնը, կը մտածէր միաբանութեան ուխտ մը հաստատել հայ նախարարութեանց գլխաւորներուն մէջ, միացնելով վրաց եւ աղուանից

իշխանները, որով շատ լաւ կարելի էր դիմադրել ամէն օտարաց: Արաբաց այդ սուկալի նորածին զօրութիւնը փոխանակ զինք վիատեցնելու՝ իր մեծ հոգւոյն կորովն աւելցուց, եթէ այդ վայրենի ժողովուրդք, որոց անունը, խօսքը չի կար քանի մը տարի առաջ, հիմա իրենց հոչակաւ, իրենց զօրութեամբ, իրենց աշխարհաւարութեամբ կը սպառնային, ոչինչէ ինչ դառնալով, ուրեմն կարելի էր նոցա օրինակաւ խրախուսվիլ, գոնէ երկրին պաշտպանութիւն մը կազմակերպելու համար:

Կը յիշէր ինք իւր սուր յիշողութեան մէջ երիտասարդութեան այն օրը՝ որ ցնցոտիներու փաթաթեալ կիսամերկ մուրացկան ողորմելի արաբ մը, արքայից արքային Խոսրովու կը ներկայանար Տիգրանի ոսկեղէն արքունեաց եւ յաղթական փառաց մէջ, թուղթ մը ի ձեռին Մուհամմդի առաքելոյն աստուծոյ գրեալ առ Խոսրով՝ թագաւոր Պարսից, որ հազիւ ակնարկի մը արժանի համարելով՝ պատռած նետած էր զայն արհամարհանօք: Եւ ո՛ր կ'ըսէր թէ այդ ինքնակալին, որու դուռը ինը հարիւր վաթսուն փիղք, քսան հազար ուղտք, վեց հազար նժոյգ կանգնած կը սպասէին արքունեաց հաճոյից եւ փառաց ծառայելու համար, որու վեց հազար թիկնապահք, տասներկու հազար ստրուկք, եւ երեսուն հազար ազատորդիք՝ պարծանք Ասիական աշխարհաց պահպանութեան կը հսկէին, որու դարբասին գրակնոտիկոն կապոյտ գմբէթը հազարաւոր արծաթեայ սիւներ կ'ամբառնային, ուսկից բլուր ոսկի գնդակներ կախուած երկնից աստղազարդ կամարը երկրիս վրայ կը կերպարանէին եւ ուրիշ անբաւ ճոխութիւնը՝ պերճանք ոսկեթել կիտուած բեհեզներ՝ մետաքսեղէններու, ականց, գոհարեղինաց, խնկեղինաց, ո՛վ կրնար հաշիւն ընել, եւ ո՛վ կը գուշակէր, որ այդ ինքնակալին, որոյ նախնեաց դարաւոր համբաւոյ մեծութիւնը եւ այդ հոչակաւոր մայրաքաղաքը հազիւ թէ քսան տարի անցած՝ իբրեւ փոշի մը ի հողմոյ ոչինչ եւ ի չիք պիտի դառնար, նոյն այդ Մուհամմդի հետեւողաց եւ յաջորդաց արշաւանաց առջեւ:

«Եթէ աշխարհքիս բախտը այդչափ անկայուն է, որ մէկ կողմէ այդչափ մեծութիւն եւ այդչափ զօրութիւն այսպէս շուտով քանդուին, եւ միւս կողմէն այսչափ նուազութիւն եւ այսչափ սկարութիւն այսպէս շուտով կը կանգնին, ի՛նչ ուրեմն կարգիլէ կենդանացնել այս ժողովուրդը, որ ոտնակոխ կը հեծէ առաջին ամպատակին առաջին յարձակողին դիմաց, վեց-եօթ զլխաւորաց միակամութիւն եւ միաբանութիւն՝ բաւական են երկաթեայ կորով մը իրեն տալու եւ կանգնեցնելու»:

Այս խորհրդածութեամբք ահա երկրորդ օրը կը թողուր Թաւուսկերտ, կ'ելնէր ճամփայ դէպ հիւսիս, Ռշտունի որավարը իւր հետն առած Ներսէս — սուրհանդակ արձկելով առջեւէն՝ վրաց իշխանաց փափագ յայտնելով իրենց հետ տեսնուելու: Գուգարաց գաւառը Շամշուղէ ժամադիր կը լինէր, եւ երբ նոքա իր հրաւերին պատասխանելով եկան ժողովուեցան՝ յայտնեց իր խորհուրդը թէ ընդհանուր հասարակաց օգտին համար եկեր էր ինք, եւ թէ միաբանութիւն մը միայն երեք ազգութեանց, որ միեւնոյն աղբիւրէ էին սերեալ՝ կրնար զամենքը փրկել արաբական պատուհասէն. յայտնի ցոյց կու տար թէ ի՛նչ վիճակի էր հասեալ Բիւզանդական կայսրութիւնը եւ որո՞ւ վրայ յոյս դնելը ինչչա՛փ անօգուտ էր, եւ զՆերսէս նոր հասած ի Յունաստանէ վկայ կ'ընէր իւր բանից. եւ այնպէս իւր խօսքերէն համոզուեցան վրաց իշխանք, որ երդմամբ ուխտ եւ դաշինք դրին փոփոխակի օգնութեան հասնիլ, յարձակումը ուստից գայր, եւ ժամադրեալ տեղին գտնուիլ իւրաքանչիւրն իրեն զօրքով եւ կարողութեամբ:

Այսպէս Վրաց այդ դաշանց միաբանելէն վերջ, առանց ձմեռուան ցուրտին ուշ դնելու կ'անցնէր Թեոդորոս Միւնեաց երկիրը եւ հոն դարձեալ Միւնեաց եւ Ադուանից նախարարքը ժողուելով,

նոյն միաբանութեան դաշինքը կը հաստատէր, գրով եւ երդմամբ ամենքը կ'ապահովէր, եւ կու գար Վասպուրական իւր համազգի եւ համակամ Արծրունեաց Նահապետին ցոյց կու տար մինչեւ այնօր ինչչափ կրցեր էր յաջողիլ, եւ այնպէս կը դառնար իր Ռշտունեաց Ոստանը հանգչելու պատերազմի եւ տաժանելի ուղեգնացութեանց յոգնութենէն: Իւր հանգիստը նաեւ անխոնջ գործունէութիւն մէր, բերդերը կ'ամրացնէր, Աղթամարայ կղզւոյն ջրային պարիսպը բաւական չի համարելով աշտարակաց ամրութեամբ անառիկ կ'ընէր, զիւղացւոց ապահովութեան համար ի բնէ ամուր տեղուանք հողապատնէշներով կը զօրացնէր եւ համբարանոցներ կը շինէր. եւ ամէն տեղ անձամբ կը շրջէր աչօք տեսնելու համար թէ իր հրամանները լաւ կը կատարուէին:

Ոստանի մէջ զէնքեր, զրահներ կը շինուէին, Բզնունեաց ծովուն վրայ նաւերու թիւր կ'աւելնար, եւ Ռշտունեաց երկրին երիտասարդք ամենքը զինավարժութեան կը զբաղէին ազատք եւ անազատք:

Ռշտունեաց Տիկինն Սէթա, իշխանին առաջին օգնականն էր այս աշխատութեանց մէջ, շատ անգամ կը տեսնուէր, որ երկանն սկսածը ինք վերակացութիւն կ'ընէր ի գլուխ հանելու համար: Վասնզի Թէոդորոս մեծ մասը ժամանակին երկրէն դուրս անցնելու պարտաւորեալ՝ միշտ կնոջը կը յանձնէր երկրին կառավարութիւնը: Իսկ զինուորական կառավարութեան գործերը կը կատարէր Ատոմ Շահունի՝ ծեր զօրավարը, որուն բնաւորութեան խստութեանը մանաւանդ թէ դաժանութեան փորձն առինք նախընթաց գլխոյ մը մէջ: Բայց առանց պատճառի չէր բոլորովին այս դաժանութիւնը, բախտին զանազան եւ բազմադիմի հարուածներ զինք դառնացուցեր էին, ուստի ոչ մէկ տեղ իւր ժպիտը չէր տեսնուէր, եթէ ոչ Ռշտունեաց Ոստանը, եւ այն շնորհքը միմիայն անձի մը համար պահուած էր եւ այն՝ տասներկու-տասներեք տարեկան Ռշտունեաց Օրիորդն էր: Թէոդորոս ինքը նաեւ, որու վրայ միայն Ատոմ համարմունք եւ յարգանք կը ցցնէր՝ կարճ եւ համառօտ պատասխան կ'ընդունէր: Իր սպասաւորքը շատ անգամ վարժած էին իմանալ նորա կամքը ակնարկութենէ մը եւ պէտք է նաեւ արդար լինելու համար ըսել թէ ամենակարեւորն միայն կը պահանջէր եւ եթէ ծառայքը դանդաղէին ինք անձամբ իւր պէտքը կը լցնէր: Եօթանասունն անցած՝ տոկուն եւ անխոնջ պատերազմի մէջ՝ խիստ էր զօրաց պարտաւորութեանց մասին, որոց կատարման ինք օրինակ կու տար անձամբ: Բայց ինչպէս խիստ էր պատժելու, նոյնպէս ճիշտ էր վարձատրելու: Ուստի զինուորը, որ իրմէ սաստիկ կը վախէր՝ նոյնչափ էլ կը սիրէր: Քսան տարիէ աւելի էր, որ թողած իւր հայրենի գաւառը՝ Շահունիք, Բզնունեաց ծովուն եզերքը անառիկ դիրքի մը վրայ դդեակ մը շինած կը բնակէր, երբ պատերազմի ձայն չի կար եւ երկրին մէջ խաղաղութիւն կը տիրէր: Ժամերով նստած ծովեզրը տխուր ալեաց կը նայէր, եւ ոչ ոք չէր համարձակէր զինքն այն վիճակէն արթնցնելու, հազիւ երբեմն կ'ելնէր պտոյտ մընելու շրջակայ գիւղեր, ոչ մեծի, ոչ պզտիկի հետ ամենեւին մերձաւորութիւն չընելով: Կիրակիէ կիրակի ու տօնի օրեր կ'երթար մօտակայ Աստուածածնայ փոքրիկ եւ անշուք վանքը միշտ առաջին լինելով մտնողներուն եւ վերջին ելնողներուն: Քանի մը ծեր սպասաւորք միայն կային, որ իւր ծառայութիւնն կ'ընէին, իսկ յիսունի չափ թիկնապահաց խումբը իւր տունէն հեռու ունէին իրենց բնակարանները պարիսպներուն քով, որպէսզի ձայն իրեն չհասնէր: Իւր կահ-կարասիքը պարզ էին եւ սովորական, բայց մաքուր, եթէ շքեղութիւն մը կար՝ իւր զէնքերուն եւ զրահներուն վրայ կարելի էր նշմարել, եւ իւր քանի մը նժոյգներուն, սրոց երբեմն այցելելու պատիւ կ'ընէր: Եթէ այս միայ յնութենէ յանկարծ ելնէր որ երբեմն երկու-երեք ամիս կը տեւէր, Ռշտունեաց Ոստանը էրթալու համար էր, եւ իւր պատրաստութենէն կ'իմանայ լին սպասաւորք թէ երկրորդ օր ուղեգնացութիւն կար, ու երբ կը տեսնէին ծեր զօրավարը իւր ճանապարհի պարկերը կարգադրած, կ'իմանային թէ առանձնութենէ փորը կշտացեր է:

Բայց այս անգամ հազիւ թէ Թեոդորոս Ոստան հասաւ, մասնաւոր նամակաւ սուրհանդակ հանեց Ատոմայ, որ գայ զինք տեսնէ, եւ ահա երկրորդ օրն Ատոմ ճամփայ ելաւ գալու հրաւերին. երբ Թեոդորոս իրեն իմացուց թէ զինուորական կրթութիւն կը փափագէր բոլոր երիտասարդաց համար գաւառին մէջ, եւ իրեն կը յանձնէր այս պաշտօնը, ծեր զօրավարը «լաւ» բառը միայն պատասխանեց եւ գնաց քաշուեցաւ իր սենեակը: Իսկ ուրիշ իշխաններ եւ սպանէր երբ կը հարցնէին Թեոդորոսի թէ՛ «Այդ պատասխանով գոհ կրնա՞ր լինիլ, որ ըստ իւր փափագանաց պիտի կատարէր Ատոմ այդ գործը»: Թեոդորոս պատասխանեց թէ՛ «Երբ Ատոմ լաւ կ'ըսէր, էլ ոչ ոք իրաւունք չունէր իրմէ հաշիւ պահանջելու, վասնզի իւր սովորութիւնն էր միշտ լաւը գործել»:

Եւ իրօք, քանի մը ժամ ետքը եկաւ Ատոմ եւ թուղթ մը տուաւ Թեոդորոսի, եւ ինք նստաւ անմոռնչ, այն թուղթը կը բացատրէր ճշտիւ թէ ինք ինչպէս եւ ինչ եղանակաւ պիտի կարգադրէր այդ զինամարզութիւնը, այնպէս որ ոչ ժողովրդեան մեծ շարժումներ ու եւ դժուարութեանց առիթ լինի եւ ոչ իրենց առտնին գործոց վնասակար. եւ միեւնոյն ժամանակ օգտակար իրենց զինուորական կրթութեան: Թեոդորոս շատ շնորհակալութեամբ երբ «կեցցէ՛ւ Ատոմ հայրիկ» ըսաւ, ծերուն՝ չոր երեսին կնճիռները քիչ մը պարզուեցան, որ նշան էր իւր գոհունակութեան: «Վաղը ուրեմն գործի կը սկսինք»,— ըսաւ եւ ելաւ քանի մը պտոյտ ընելէն վերջ սենեկին մէջ յաջ ու ձախ՝ հարցուց իշխանին.

— Թէնին չիմացաւ՞ իմ գալստ, զօրավար:

— Կը ներես, հայրիկ,— ըսաւ Թեոդորոս,— հիմա... եւ դառնալով թիկնապահաց... Տղաք,— զրուցեց,— իմաց տուէք Թէնիին թէ Ատոմ հայրիկ եկաւ եւ զինք կ'ուզէ:

ԳԼՈՒԽ Թ

Ծընի՛ կ'անցնի եւ կը հասնի

ամենայն ճակատագրին իւր անորոշն ի սահման.

Առ ովկէան՝ տըխտուր ալիք,

Քամւոյն՝ տերեւ փախուսիկ,

Լոյսն՝ իրիկուան եւ մարդ՝ մահուան:

Սակայն ում փոյթ, ո՛ր սիրելիս,

Մեր օրերուն չափն անձանօթ.

Միայն հանդարտ թող ի հալիս

Եւ յարահետ անուշահոտ

Ըզմեզ վարէ սուր ժամանակ:

ԼԱՄԱՐԹԻՆ

Ամենքը զարմանքով կը նայէին այդ չոր՝ բարձրահասակ ծերուն վրայ, որ շարունակ կը շրջէր եւ միշտ դռան կը նայէր սպանելով աղջկայ մը, նա, որ աշխարհքիս բոլոր մարդկանց համար անտարբեր էր. ամէն ցաւ, ամէն թշուառութիւն, ամէն սէր, ամէն զգացմունք իբր թէ ոչինչ էին իրեն համար: Իսկ երբ Ռշտունեաց գեղահասակ Օրիորդը ներս մտաւ եւ տեսաւ հինգ վեց պատկառելի իշխանագուն մարդիկ, որոց ամէնէն երիտասարդը քառասունն անցած էր, եւ ամէն աչք իրեն կը նայէին, ինք որ միայն հայրը եւ Ատոմը կարծէր թէ պիտի գտնէր փափուկ կարմրութիւն մը եկաւ երեսին եւ իւր գեղեցկութեան աւելի փայլ մը տուաւ. բայց առանց շփոթելու գնաց դէպի ծերունին եւ ձեռքը պագաւ, իսկ նա երկու երկայն թելերով գրկելով Օրիորդը՝ «Թէնի՛, Թէնի՛, ինչպէս ես, որդեակ Թէնի», կ'ըսէր եւ կրկին կը համբուրէր: Յիրաւի, զարմանալի հակառակներ կը կազմէին այդ երկու կերպարանքը. այդ մագաղաթեայ դեղնած կնճոտած երեսները, այդ ձիւնի պէս ճերմակ մազերն ու մօրուքը, այդ ցցուեալ ոսկորներով կաշիէ մը պատեալ մարմինը մէկ կողմէն, եւ միւս կողմէն գողտրիկ վարդափթիթ երեսներ, լուսաւիր նշածեւ աչքեր, սեւ-սեւ յօնքեր եւ մազեր, ձիւնափայլ պարանոց մը եւ վայելուչ հասակ:

Ծերը քանի մը անգամ նոյն հարցմունքը կրկնեց, իսկ Օրիորդը կամաց ձայնով շնորհակալութիւն եւ լաւութիւն իմացուց, եւ երբ կերպէն հասկցաւ թէ կ'ուզէ քաշուիլ՝ ձեռքն առաւ՝ «Եկ, Թէնի, քեզ հետ քիչ մը աս պարտէզն երթանք եւ խօսինք, ձմեռուան արեւը առողջարար է»,— ըսաւ, ու դուրս ելան: Այս մարդատեաց ծեր զինուորը եւ օրիորդը հազիւ դուրս ելան՝ բազմականք ամենքը գաղտնի ծիծաղը յայտնի ըրին, եւ Թեոդորոս ինք ժպտելով՝

— Այս տեսարանը, տեսարք, ձեզ ծիծաղ կը պատճառէ, այնպէս չէ՞,— ըսաւ.— այո, ես էլ ձեզ հետ կը ծիծաղէի, եթէ սոսկալի խրատ մը չի ծածկէր ամէն ծնողաց: Պատմեմ եւ ուշ դրէք.— հազիւ քսան տարու էի, երբ Վահրամ հայրս զիս փոքրիկ խմբով մը արքայից արքայի դուռը կ'ուղարկէր նամակաւ մեծ Մարգպանին ղիս յանձնելով. Ասպետը նամակը կարդաց եւ ծիծաղելով դարձաւ քովը նստած գրեթէ քառասնամեայ սպառազնի մը՝ «Ատոմ զօրավար,— ըսաւ,— ահա առ քեզի աշակերտ մէկ Վարազտիրոցիս հետ միատեղ, Ռշտունեաց Տէրն ինձի կու տայ իւր զաւակը մարգելու, մի՛ խոժոռիր, էլ ուրիշ չի կայ, այս երկուքը բաւական են»: Աւելորդ է գրուցել թէ այս մարդը ի՛նչ զինուորական խստութեամբ զմեզ դաստիարակեց երկու տարի, մեր սպասաւորները նախ մեզմէ հեռացնելով, ամառ-ձմեռ արշալոյսի հետ զմեզ ոտք հանելով, կերակուրներու փափկութենէ զմեզ դրկելով, այդ ամենքը երկայն են: Բայց այն միայն պէտք է գրուցեմ թէ այդ մարդը կը խօսէր, կը ծիծաղէր, կատակ նաեւ կ'ընէր, մանաւանդ պատերազմի վտանգալի վայրկեաններու: Երկու տարուընէ վերջ մեզ երկուքս տարաւ մեծ Մարգպանին՝ «Ահա՛ զօրավար, ինձ երկու տղայ տուիր, ես քեզ երկու մարդ կը դարձնեմ, իրենց երաշխաւորը ես եմ,— ըսաւ,— կրնաս վստահանալ»: Եւ հայրենիք դարձաւ, երկու տարի տունը կ'երթար կը կենար, տարի մը կու զար դուռը եւ բանակը կ'անցնէր, իւր քաշութիւնն յայտնի էր ամէնուն եւ արքայից արքային, եւ ինչչափ որ զինք մեծցնել ուզեցին յանձն չառաւ, վասնզի Մարգպանէն չէր ուզեր զատուիլ: Վերջապէս, անգամ մէկ որ գնաց՝ եւ ես եկայ Ռշտունիք հօրս հրամանաւ, զինք բոլորովին կորուսի տարիներով, երբ Մարգպանին մարմինը բերին Տիգրոնէ, տեսայ Ատոմ թաղման հանդիսին, բայց փոխուած եւ այնպէս տխուր, որ հետը կարելի չէր խօսել, ես ինչչափ մօտեցայ՝ անկարելի եղաւ իւր միավանկները բազմավանկի դարձնել. վերջը իր մէկ ծեր սպասաւորէն իմացայ թէ ի՛նչ էր այս տխրութեան պատճառը:— Ատոմ ամուսնացեալ՝ զաւակներու տէր եղած էր, մեծ աղջիկը որոշել էր ամուսնացնել, բայց աղջիկն այդ ամուսնութեան հակառակ էր եւ բնականաբար չհամարձակելով հօրը խօսիլ՝ մօրը յայտնած էր: Բայց ո՛վ կարող էր Ատոմի պէս մարդու մը դէմ գալ, եւ ինք կրնա՛ր երեսակայել թէ կինը մարդ է,

աղջիկը կրնա՝ յ կամք ունենալ: Ինք մինչեւ այն օրը միտքը դրած էր թէ ընտանիք՝ կին եւ զաւկներ զօրականաց գունդ մէին, որ զօրավարին ձայնին պէտք էր անդարձ հնազանդէին: Ուստի սպառնագին հրամանը երկրորդեց, տունը յուսահատ արտասուաց մէջ թողուց, եւ ինք միմիայն իւր որսի գուարճութեանց պարապուեցաւ: Երբ դարձաւ եւ իրեն իմացուցին թէ նշանած աղջիկը հիւանդ է, խաբէութեան հնարք մը կարծելով իւր սպառնալից ձայնը լսեցուց հիւանդին. բայց երբ մօտեցաւ տեսաւ զաւակը կրակներու մէջ կը տոչորի, կը գառանցէ, երեսները վիրալից եւ ծաղկած, սոսկումը զինք պաշարեց, եւ որ դժբախտութեան մեծն էր՝ հինգ զաւկներն միեւնոյն հիւանդութեամբ անկողին ընկան, եւ ոչ մէկն ազատեցաւ. վերջապէս կին նաեւ զաւկներուն ցաւին չղիմացաւ՝ քանի մը ամսէն վախճանեցաւ՝ որդեկաց մահուան պատճառ այդ անողոր հայրն համարելով: Թէ երկթէ նաեւ լինէր ոք, եւ Ատոմ ինքն, հարուածը սոսկալի էր. ուստի ամէն օր՝ կ'երթար կը նստէր իրեններուն գերեզմանին վրայ անխօս՝ խնդրելով, որ մահը զա զինք տանի, բայց մահը չէր գար՝ չէր հասներ: Այս վիճակիս մէջ էր ահա Ատոմ, երբ Սմբատայ մահուան լուրը տարածուեցաւ, եւ այդ մարդը իր զօրավարին վերջին պատիւն ընելու համար եկեր էր: Իւր այս անտանելի ցաւը տեսնելով Վարազտիրոց եւ եւ իւր հին աշակերտները՝ ամէն ջանք ըրինք յուսահատ վիճակէն հանելու, այսչափ միայն խոստացաւ, որ քանի մը օր Ոստան ինձ հիւր լինի: Ահա այս դահլիճը նստած էինք, քանի մը բարեկամք, եւ ինք Ատոմ ամենեւին ուշ չէր տար մեր խօսակցութեանց, երբ այս Թէնի մէկ ու կէս տարու նոր ոտք էլած, յանկարծ ներս մտաւ թոչտելով, եւ երբ ամէնք «Թէնի՛, Թէնի՛» ըսին տղեկին ձայն տալով, Ատոմ իբր քունէ արթնցաւ, եւ Թէնի ամենէն փախելով՝ վազելով գնաց Ատոմի ծունկերուն մէջ ինկաւ: Իւր թշուառ աղջկան անունը Թէնի էր. այն օրէն սկսաւ Ատոմի եւ Թէնիի բարեկամութիւնը եւ այդ անմխիթար մարդը, որ երբեք չի ծիծաղիր, որ մէկուն հետ չի խօսիր, նորա համար խօսք էլ ունի, ծիծաղ էլ: Թէնիի պատճառաւ թողեց Շահունիք, եկաւ Բզնունիք բնակելու, եւ այն օրէն վերջ, երբ հայրենիքը պէտք ունի՝ զինուորական ծառայութիւն նաեւ յանձն կառնու, ինչպէս այս վերջին կռուին մէջ՝ այս տարիքով արաբաց դէմ երիտասարդի պէս կռուեցաւ եւ ամէնքը զարմացուց:

Այս երկայն պատմութեան ժամանակ, ձեր զօրավարին եւ Օրիորդին գլուխները կ'երեւային պարտէզին մէջ, երբ նոքա միատեղ կը շրջագայէին, եւ Ատոմ կը խօսէր զուարթ իբրեւ թէ ուրիշ մարդ փոխուած լինէր:

Ուստի այս փոփոխութիւնը լաւ իմանալու համար պէտք է տեսնենք թէ ի՛նչ կը խօսէին այս մեր երկու կենաց՝ կերպարանաց եւ մարդկութեան ծայրերը գտնուող բարեկամք. եւ որ զարմանալին է Թէնի շարունակ կը խօսէր եւ արտասուքը կը սրբէր, եւ Ատոմ զուարթ ինքզինք ցցնելու կ'աշխատէր եւ ծիծաղ կերպարանք առնել կը ջանար:

— Շաբաթ մը կեցաւ այստեղ, հայրիկ,— կ'ըսէր Թէնի,— եւ ի՛նչ քաղցր երիտասարդ էր, առջի տեսած օրես չեմ գիտէր ինչ հաճոյք զգացի, իբրեւ թէ ինձ համար օտար ոք չէր, եղբայր մը կրնամ զրուցել, բայց եղբայր նաեւ չէր. եւ Վարդ շատ կը սիրեմ, բայց այս Գրիգոր ուրիշ բան էր. կ'ուզէի, որ ամէն վայրկեան զինք տեսնեմ, իրեն հետ խօսեմ, իւր ձայնը լսեմ, գիշերը երազիս մէջ կը տեսնէի, արթուն իր կերպարանքն իմ աչացս առջեւէն չէր երթար, երբ ինք ներկա չէր. եւ այս զարմանալին է՝ մարդու զրուցել նաեւ չէի համարձակէր, եւ մինչեւ այսօր մօրս եւ եղբօրս չեմ կրցեր յայտնել. քեզ կը սպասէի, հայրիկ, որ կարենամ սիրտս բանալ, եւ դու քանի ամիս եղաւ, որ ուշացար:

— Բայց դու, Թէնի, այդ երիտասարդին հետ խօսեցա՞ր առանձին. ինք քեզի նոյն զգացմունքներն յայտնէ՞ց:

— Ոչ, առջի օրերը մենք անտարբեր կը խօսեինք, բազմութեան մէջ. մայրս զբաղած էր, Վարդ ամէն օր որսի երթալ իւր գուարճութիւնն էր. ես մինակ էի, Գրիգոր մինակ էր տան մէջ, գրքերու սենեակը կ'անցնէր մեծ մասը. ես էլ հոն կ'երթայի երբեմն. կը զարմանայի, որ յունարէն, պարսկերէն գրքեր ամէնն էլ կը խառնէր՝ կը կարդար, վերջը օր մը ըսաւ թէ՝ «Ձեր գրքատունը շատ խառնակ վիճակի մէջ է, Օրիորդ, ես որ գործ չունիմ, եթէ ուզէք կարգի կը դնեմ». ես էլ շնորհակալ եղայ եւ աղախիններուն հետ իրեն օգնեցի. իր կատակները՝ իր խօսակցութիւնը այնպէս պարզ էին եւ այնպէս անուշ եւ այնպէս ծանր ու համեստ, որ ամէնքը կ'ակնածէին իրմէ իբրեւ թէ շատ տարիքով ոք լինէր: Կ'ելնէինք պարտէզ իրեն հետ կը շրջագայէինք. զարմանալին հոն է, որ երբ միայն մնայինք՝ կը կապուէինք, խօսք չէինք գտնէր գրուցելու. կարծես ինքը կը կարկամէր, ես կը պապանձէի: Իր երթալու խօսք երբ կը լինէր սիրտս կը ճգմուէր, եւ հազիւ թէ արտասուքս կը սանձէի. կը վազէի՝ կ'երթայի իմ սենեակս, առանձին կու լայի եւ կը թեթեւնայի, բայց օրը մօտեցաւ, եւ առաջի գիշերը որ...

Նոս աղջիկը չի կրցաւ ալլէս շարունակել եւ արտասուքը ձայնը խեղդեցին, իսկ ծերը շփոթած եւ տխուր՝ ձեռքէն բռնեց եւ հովանոց մը տանելով.

— Որդեակ Թէնի, շատ լաւ է, որ կուլաս, կ'ըսեն թէ արտասուքը սիրտ կը զովացնէք լա՛ց իմ սիրուն աղջիկս, լա՛ց, եթէ ես կ'արեւնայի՝ ես էլ կուլայի, բայց Աստուածինձ այդ շնորհքը չէ աւեր: Բայց գրուցէ ի՞նչ եղաւ առջի գիշերը:

— Ալն երթալու օրուան առջի գիշերը շատ գեղեցիկ լուսին մը կար, ծովը հանդարտ հայլիի պէս կը փալլէր, քունը աչքես փախաւ, իջայ վարի պարտէզը մուշտակ մը վրաս առած, նստայ եւ տխուր կը մտածէի, երբ աւագին վրայ ոտքի ձայն մը լսեցի պարէզին միւս ծայրը, տեսայ, որ Գրիգոր ինքն էր. գլուխը կախած կը շրջագայէր, երբեմն կը կանգնէր երկինք կը նալէր, երբեմն ծովուն. կ'ուզէի փախչիլ երթալ իմ սենեակս, բայց ծնկվներս կարկամէր էին, սիրտս կը բաբախէր եւ այնպէս բռնուած անշարժ մնացի. մինչեւ տեսայ, որ տխուր՝ լուր մտածութեանց մէջ թաղուած, գլուխը ծռած, առանց իմանալու դէպ ինձ սկսաւ գալ. իր այդ տխրութիւնը՝ այդ ցաւագին վիճակը ինձ զօրութիւն մը տուին, եւ երբ մօտեցաւ՝ զիս տեսաւ նստած անշարժ, հազիւ թէ՝ «Կը ներէք, Օրիորդ, ձեզ անհանգիստ կ'ընեմ» ըսելով ետ քաշուելու եղաւ. ես զինք քաջալերեցի եւ հրաւիրեցի քովս նստարանին վրայ նստիլ. իբրեւ թէ վախելով քովս նստաւ. շփոթած էր բոլորովին, չէր համարձակէր բերան բանալու, կարծես կը դողար, եւ սրտին բաբախմունքը կը լսէի. զարմանալի բան, ես հանդարտած էի ալն վայրկենին եւ սկսայ հետը խօսիլ. նա միավանկ բառերով կը պատասխանէր, իր մօրը վրայ խօսեցայ, զիտէի ինչպէ՛ս կը սիրէր. թէ անշուշտ ինչպէս իրեն երթալու անհամբեր էր. «Ո՛հ, պատասխանեց, ես իմ մայրս շատ կը սիրեմ, բայց ինք նաեւ զիս շատ կը սիրէ»: Ես ալն ատեն ըսի. «Միթէ կարելի՞ է սիրել առանց սիրուելու»:— «Ո՛յ զիտէ,— ըսաւ,— կարելի է, կան ալնպիսի թշուառ անձինք, որ կը սիրեն եւ չեն զիտէր թէ կը սիրուի՞ն փոխադարձ»:— «Այդ անկարելի է,— ըսի եւ քաջութիւնս»:— «Ինչպէ՛ս անկարելի, ես կը խոստովանիմ, որ ոչ թէ կը սիրեմ՝ այլ կը պաշտեմ անձ մը, որ եթէ զիս սիրէր՝ կեանքս կու տայի»:— «Անկարելի, որ ձեզի պէս երիտասարդ մը երբ սիրէ՝ չի սիրուի,— պատասխանեցի ես: Ես ինչ երկալն ընեմ, նա՛՝ ես երկուքս էլ խոստովանեցանք թէ իրար կը սիրենք...

Եւ հեկեկանքը դարձեալ խօսքը դադրեցուցին: Իսկ ծեր զինուորը շրթունքն ամփոփած՝ մէկ ձեռքով Թէնիի ձեռքը բռնած, միւսը ծնօտին դրած, ուշ կու տար այս խօսակցութեան զարմանքով, այս սիրոյ լեզուն, այս զգացմունքը իրեն համար նոր էին, առաջին անգամն էր, որ կենաց մէջ այսպիսի պատմութիւն մէկն իրեն կ'ընէր. միտքը բոլորովին իւր հարազատ աղջկան Թէնիին

գնացեր էր, որ գրեթե այս Թէնիին տարիքն ունէր, եւ որ սիրոյ գոհ լինիլն երեւակայէր էր, եւ գոհարար ինքն էր. ուստի երբ պատմութեան հեկեկանքը փոխանակեց՝

— Թէնի, որդեակ Թէնի,— ըսաւ,— վերջը ի՞նչ եղաւ, ինձմէ բան մը մի պահէր, դու պէտք է գիտնաս, որ ես միայն քեզի համար կ'ապրիմ այս անիծեալ աշխարհքիս մէջ, քեզմով եւ քեզի համար միայն Աստուածիմ մեղացս պիտի ներէ, եւ այնպէս կը հաւսամ, որ այն օրը հոգիս պիտի առնու, երբ զքեզ երջանիկ ինձ ցոյց տայ՝ նշան իմ մեղացս թողութեան. ուստի մի՛ լար, զրուցէ նձ համարձակ, եթէ յանցանք մը նաեւ կայ՝ ինձմէ մի՛ քաշուիր, շարունակէ՛:

— Ի՛նչ յանցանք, հայրիկ, մենք այն գիշերը խօսք տուինք իրարու, որ ուրիշին չլինինք մահ նաեւ եթէ հասնի. մեր ապագայ երջանկութեան վրայ խօսեցանք, ինք խօսք տուաւ, որ երթայ մօրը իմացնէ մեր սէրը եւ զիս հարսնութեան ուզէ:

— Այսչա՞ փ, այսչա՞ փ,— ըսաւ ծերը:

— Այո, միայն երկրորդ առաւօտուն հրաժարական ողջոյնը տուաւ մօրս եւ ինձ ու ելաւ գնաց:

Օրիորդը, դարձեալ աչքերը կը սրբէր: Իսկ ծերը սրտնեղութեամբ

— Բայց, Թէնի, ի՞նչ կայ այդտեղ տխրելու,— կ'ըսէր,— այդ Գրիգորը տեսայ ես կարծեմ, Դաւիթ Մամիկոնէին որդին ինձ ըսին, այդպէս չէ՞:

— Այո՛, հայրիկ:

— Լաւ, ես այդ տղան տեսայ՝ դեռ անմօրուս պատանի, լաւ կը կռուի, Կամսարականին հետ էր: Այդտեղ անկարելի բան չիկայ, Բագրեւանդայ մէկ մասը եւ Երասխաձոր իրենցն է: Վարդանաբերդ կը բնակին ընտանեօք, գեղեցիկ ամրոց մէ:

— Բայց, հայրիկ, Վարդանաբերդ այրեր են արաբները եւ Գրիգոր մեռեր է:

— Աղջիկ, դու ինչ կ'ըսես. Գրիգոր մեզ հետ էր պատերազմին մէջ, ողջ առողջ մեզմէ զատուեցաւ, անկից վերջ էլ պատերազմ չի կար: Դու փուճ տեղ կու լաս, իմ Թէնիս. ես կ'իմանամ ամէն բան արագութեամբ, հիմա մարդ կը հանեմ Կոզովիտ. դու հանգիստ եղիր...

— Բայց, հայրիկ, եթէ Գրիգոր մեռած է՝ ես կուսանաց վանք մը կը մտնեմ...

— Յիմար խօսք մընէր, իմ սիրուն Թէնիս, Գրիգոր մեռած չի կրնար լինիլ, եթէ այնպէս նաեւ չինի՛ Գրիգորներ շատ կան աշխարհքիս վրայ, իսկ Թէնի՛ մէկ հատ միայն մնաց. նա էլ պէտք է ապրի եւ երջանիկ լինի...

— Չէ, Հայրիկ, եթէ նա չի կայ, ինձ երջանկութիւն չի կայ, աշխարհս մութ է ինձ համար...

— Թէնի՛, Թէնի՛, այդպէս մի՛ լար, այդպիսի խօսք մընէր, տե՛ս, իմ սիրտս էլ կ'այլայլի, դու դեռ երեխայ ես: Ես կ'իմանամ, քեզի տեղեկութիւն կառնում այդ Գրիգորի համար... Դու սիրտդ հանգիստ բռնէ: Հա այսպէս:

Եւ ծեր զինուորն այս խօսքերը զրուցելուն՝ կը ջանար իւր կերկեր ձայնին փափկութիւն մը տալ, եւ իր սառ, չոր, ոսկրուտ, երկայն մատներով նորա գողտրիկ երեսները կը շոյէր: Բայց տեսաւ նաեւ խեղճ աղջիկը, որ դայլայլած այս երկար նկարագիրն ըրած էր՝ շատ մը արտասուք թափելով, եւ ցուրտ չէր զգացած՝ հիմա կը դողար՝ կը սարսռէր, վասնզի դեռ ձմեռ էր եւ գարունը

բաւական հեռի եւ արեւի ջերմութիւնը տկար. ուստի յորդորեց, որ երթայ տաքանայ: Ռշտունեաց Օրիորդը աչքերը սրբելով եւ կերպարանքին անտարբեր ձեւ մը տալով ելաւ հովանոցէն եւ արագութեամբ փոքրիկ դռնէ մը եւ նեղ սանդուխներէ անցնելով, գնաց վերին կանանոցին սենեակները՝ ծածկելու համար ամէն աչքէ իւր տխրութիւնը, որ միայն Ատոմ հայրիկին կրցաւ յայտնել:

Իսկ ծերը իւր անթափանց երեսով, որ իրեն բնական էր եւ իր տխուր կերպարանքով, որ աշխարհաճանօթ էր, մտաւ եւ նստաւ, ուր Խաչեան Առաւելեան, Թեոդորոս Վահեւունի, Շապուհ Ամատունի, Խոթէն Խորխոռունի, Գագրիկ Քաջբերունի, Վարազ Ներսէի Երուանդունի եւ ուրիշ քանի մը զօրավարք Մարգպանին հետ կը խօսակցէին: Եւ բնականաբար իրենց ամէն վիճաբանութիւնք Հայաստանի վրայ կը դառնային: Խօսակցութիւնը կ'երկարէր, ամէնքն իրենց կարծիքը կը յայտնէին, եւ ինչպէս միշտ ընկերութեանց մէջ կան մարդիկ, որ ամէնուն հաճոյանալու հնարք ունին եւ ոչ երբեք որոշ կարծիք, ինչպէս էր Խորխոռունեաց իշխանը, որ յանկարծ խօսքն ընդհատելով դարձաւ Ատոմի՝

— Զօրավար, — ըսաւ, — դուք ամենեւին կարծիք չէք յայտնէր, ամէնուն փափագելի էր ձեր կարծիքն իմանալ, մանաւանդ որ այնչափ տարիներու փորձառութիւն ունիք:

— Իմ կարծիքս, — պատասխանեց ծերը առանց գլուխը շարժելու, առանց Խորխոռունունյն երեսը նայելու, այս մարդն է, որ Մարգպան եւ զօրավար է Հայոց:— Եւ յանկարծ աչքերը վերցնելով եւ նայելով ամէնուն, նշմարելով ոմանց դէմքին վրայ հեգնական կերպ մը՝ ձայնը բարձրացուց.

— Ո՛չ այսպէս, հայոց իշխանք, ո՛չ, մենք նաեւ ունեցեր էինք Մարգպան եւ զօրավար, Սմբատ Բագրատունին, նա էլ զմեզ խորհուրդի կը ժողուէր, բայց մենք քիչ կը խօսէինք եւ շատ կը գործէինք: Եւ այն միայն կը գործէինք, որ մեզի կը հրամայէր, եւ ամէն բան կարգի կանոնի մէջ կը յաջողէր, եւ այն մարդը, որ ամէնքը բազմայաղթ կ'անուանէին, եւ արքայից արքան իւր գահոյից սիւն կը համարէր եւ յիրաւի, վասնզի Սմբատայ մահուան են քիչ վերջը գահոյքն էլ ինկաւ, թագն էլ, այն մարդը կ'ըսէր մեզ թէ՛՝ մեր բոլոր յաջողութիւնք եւ յաղթութիւնք ձեր միակամ զինուորական կարգապահութեան եւ ձեր զօրավարին հնազանդութեան արդիւնքն են: Իմ այս մագերս պատերազմի ասպարիզին վրայ են ճերմկած եւ մէկ օր չեմ ըսած եւ ոչ մտքէս անցուցած թէ սոքա, որ իմ զաւակս կրնային լինիլ, ինչո՞ւ ինձ հրամայեն, այլ իբրեւ սուրբ պարտիք ինձ տրուած հրամանները կատարէր եւ կենացս վտանգաւ: Միտք ըրէ՛ք իմ փորձառութեանս, տղա՛ք... իշխանք, մի՛ ծիծաղիք իմ սպիտակ ալեաց եւ մորուաց վրայ, եւ իմ բազմամեայ վշտաց վրայ. այլ մանաւանդ հետեւեցէք իմ օրինակիս, որ մինչեւ այս տարիքիս մէջ աւելի հնազանդել փափագեցայ, քան թէ հրամայել:

Ծիծաղողք ափ ի բերան մնացին, եւ Մարգպանն ինքն տեղաց ելնելով, եկաւ ծերուն ձեռքը բռնի պագնելով, իր «վարպետը», իր «դաստիարակը» զինքն անուանելով ծերուն սիրտը շինեց: Եւ Թեոդորոս Վահեւունի, որ համեստ եւ առաքինի մարդ էր՝

— Ես շատ ուրախ եմ, — կ'ըսէր, — որ սխալմունք մը այսչափ երկար ատենաբանութեան առիթ եղաւ, վասնզի ո՛ր գիտէ քանի տարիներ են անցել, եւ Ատոմ այսչափ երկայն եւ այսչափ լաւ չէր խօսէր:

Իսկ այս խօսքերը եւ ոչ լսեց ծեր զօրավարը, շտկուեցաւ դռան եւ իր թիկնապահներէն մէկն առնելով եւ առանձին տեղ մը տանելով՝ իրեն հրաման ըրաւ Բագրեւանդ երթալ, աչօք տեսնել

Վարդանարեղ, տեղեկություն առնուլ Դաւիթ Մամիկոնէի ընտանեաց վրայ եւ շուտով դառնալ:
Եւ այս ամէնքը յայտնի է թէ Թէնիի համար էր:

ԳԼՈՒԽ Ժ

Մենք Ռշտունեաց Ոստանի մէկ դահլիճը տեսանք, ուր Թէոդորոս հայ իշխանաց ոմանց հետ երկրին պաշտպանութեան կէտերը զօրացնել պատասպարել կը մտածէր, այնպէս որ այս լեռնային երկրին, ինչպէս էր Հայաստան, զանազան կիրճերն եւ անցքերը բռնելով, նաեւ զօրաւոր թշնամոյ մը քիչ զօրքով երկայն դիմադրութիւն ընել դիւրին կը լինէր եւ այնպիսի նեղ տեղուանք պատերազմիլ բազմաթիւ զօրաց դէմ յաղթութիւն կրնար պարգեւել:

Թէոդորոսի մարզպանութեան հասնիլը հազիւ մէկ-երկու տարի էր, բայց Հայոց զօրավարի անունը եւ պատիւը տասը-տասնհինգ տարի էր, որ կը կրէր. այնպէս որ Վարազտիրոց Բագրատունոյ եւ Դաւիթ Մահառունոյ մարզպանութեանց ժամանակ ոչ միայն սոսկ իբր զօրավար, այլ իւր անձին գերազանցութեան եւ մտաց ու զինուց կարողութեամբ մեծ ազդեցութիւն ունէր երկրին մէջ, եւ այն աստիճան, որ մարզպաններուն անունը երբ հազիւ թէ կը յիշուէր՝ Թէոդորոսի անունն էր, որ կը գործէր: Ամառները շատ անգամ Այրարատայ եւ Բարձր Հայոց կողմերը Թէոդոսուպոլիս եւ Դուին գտնուելով, ձմեռները գործերուն դադարման ժամանակ Ոստանը կու գար հանգչելու, թէպէտ այդ անդադար եւ գործունեայ բնաւորութիւնը հանգչել չէր գիտէր: Կը յիշեն ընթերցողք, թէ մեր այս պատմութեան սկիզբ լսեցինք, որ Ռշտունեաց Սէթա տիկին առնացի բնաւորութեամբ ինչպէ՛ս կառավարութեան ոգի ունէր եւ գիտէր երկիրը յանձանձել իշխանին բացակայութեան, որ սովորական բան էր: Ռշտունեաց Ոստան կատարեալ արքունական պալատի կերպարանք ունէր. աւանին եւ ծովուն մօտ բարձրացեալ սարաւանդին վրայ պարսպապատ եւ ամրակառոյց, որին վերջին ամրութիւնն Աղթամարայ կղզին էր: Ծովահայեաց դահլիճը, ուր ձմեռները Թէոդորոս նստած գրեթէ բոլոր Հայաստան կը կառավարէր, ամառները Սէթայի՝ Ռշտունեաց եւ Վասպուրականի մեծ մասին կառավարութեան ատեանն էր, ուր շարունակ սուրհանդակներ կը հասնէին՝ հեծելոց սպառազէն խումբեր կու գային եւ կ'անցնէին նորա պատուհաններուն առջեւէն, ամէն աստիճանի հիւրեր՝ իշխանագունք եւ բարձրաստիճան եկեղեցականք կ'երթեւեկէին, եւ այդ կիներ որ ձմեռներն իբր թէ կը քաշուէր եւ իշխանին կը թողոր երկրին կառավարութիւնը, դարձեալ ինքն էր ամէն բան տեսնողը, վասնզի Թէոդորոս այդ տեսակ գործերը եւ աղերսագիրները Տիկնոջ կ'ուղարկէր: Ուստի Ռշտունեաց ընդարձակ գաւառին բնակիչք գիտէին ում պէտք էր դիմել, եւ իշխանուհին կանանոցին առաջին յարկը դիւանատուն մը դարձուցեր էր, որու մէկ քանի սենեակը Ատոմ Շահունիի սահմանեալ եւ ուր նա միշտ գաւառին զինուորական գործերուն յանձանձիչն էր՝ ինչպէս ըսինք:

Յայտնի էր թէ իշխանուհին խելացի եւ սրամիտ կին էր, ունէր թէ դատաստանական, թէ մատակարարութեան գործերու համար փորձառու մարդիկ, որոց խորհրդով եւ գործակցութեամբ կը վարուէր եւ ամէնքը գոհ կ'ընէր, բայց, որ ամէնէն կարելորն էր, իւր զանձապետն էր՝ տան վերակացու՝ Յուսիկ Արտամէտցի, որ բացառութիւն կրնար համարուիլ իւր պաշտօնակցաց մէջ:

Այս Յուսիկ իւր ազահութեան համար ոչ ոք բարեկամ չունէր Ոստանին եւ բոլոր Ռշտունեաց մէջ, եւ իւր առաջին հակառակորդ իշխանուհին ինքն էր, վասնզի ամէն օր հետը վիճելու եւ զանգուելու նիւթ ունէր: Իսկ Յուսիկ ինքն համբերութեան, քաղցրութեան, հեզութեան եւ հաւատարմութեան զարմանալի խառնուրդ մէր. եւ բարկութեամբ խօսողին ինքն

համբերութեամբ կը պատասխանէր անվրդով իւր առաջադրութեան մէջ: Այնպէս որ իրեն հետ գործ ունեցողը կը յուսահատէր եւ հնարք չէր գտնէր զինքն որսալու: Ուստի շարունակ գանգատ եւ բողոք անպակաս էին իր անձին դէմ: Մանաւանդ զինուորական դասը միշտ դժգոհ իրմէ կը գանգտէին, երբեմն կը նախատէին եւ երբեմն կը սպառնային: Միայն մէկ մարդ կար,— եւ այն Թեոդորոս ինքն չէր,— որուն կամքը շուտ եւ անդանդաղ կը կատարէր Յուսիկ, եւ ինչ գումար դրամոյ որ խնդրէր, վայրկենին կ'ուղարկէր կամ կը վճարէր, այդ մարդը Ատոմ Շահունին էր: Վասնզի ծեր զօրավարը օր մը յայտնի ըսէր էր Ռշտունեան իշխանին եւ իշխանուհոյն թէ՛ «Լաւ գիտենայ այդ Յուսիկ, որ ես կատականաց գիտեմ համբերել, բայց օր մը չի կարծած վայրկենին կախել կու տամ զինք առանց երկար արարողութեանց»: Երբ իմացուցին գանձապետին այս սպառնալիքը, քիչ մը մտածեց, ետքը քթին տակն կամաց մը ժպտեց, յետոյ գնաց ծեր զօրավարին հետ խօսեցաւ եւ համաձայնեցաւ: Երբ իրեն կ'առարկէին թէ Ատոմին հրամանները շուտ կը կատարէր եւ անդանդաղ՝ կը պատասխանէր. «Ռշտունեաց գաւառին մէջ այդ ծերուն պէս անշահասէր մարդ մը ինձ ցցուցէք, ես պատրաստ եմ Հայոց զօրավարին բոլոր գանձն իրեն յանձնելու»: Եւ վերջը ծիծաղելով կ'ըսէր՝ «Ոսկին ի՛նչ պիտի ընէ այդ ծերը, ինք արդէն ոսկի է, ինձ եթէ չէք հաւատար՝ երեսը նայեցէք», Ատոմի դեղնած երեսին ակնարկելով:

Իսկ երբ Թեոդորոս գանգատներէ ձանձրացած Յուսիկն իր պաշտօնէն հանել կը մտածէր, Սէթա միշտ կը հակառակէր, վասնզի լաւ խելահաս եղած էր թէ այդ ծեր Յուսիկ ամենահաւատարիմ մարդ էր եւ գերագոյն մատակարար: Իւր ազահուրթիւնը իր անձին հարստութեան համար չէր այլ ոսկին կը սիրէր իր բնութեան համար, գանձը բանալ, իւր տետրակներուն հաշիւը քննել, տեսնել եւ միշտ եկամուտը ծախքէն աւելի գտնել, հոն էր իւր բոլոր գուարճութիւնն ու գոռոզութիւնը եւ այն ատեն ինքնիրեն կամաց եւ անլսելի ձայնով կ'ըսէր. «Թող տեսնեն Ռշտունիք թէ ի՛նչ մարդ է Արտամեւոցին Յուսիկ եւ ինչ կ'ընէ, երբ գանձատան մը գլուխ կը կենայ»:

Եւ այս բացգանչութեան վրայ զմայլած էի դարձեալ, երբ Ատոմ Շահունի իւր դաժան կերպարանքով սեւ մուխի մը պէս ներս մտաւ. աչքերը սովորականէն աւելի խոր թաղուած եւ երեսին սովորական դեղնութեան վրայ կնճիռներն աւելի սաստկացած իւր դէմքին աւելի խստութիւն մը տուած էին: Յուսիկ, որ բնականաբար չէր գիտէր ոչ Թէնիի խօսակցութիւնը եւ ոչ երիտասարդ իշխանաց վարի դահլճին մէջ երգիծական ծիծաղին հետեւանքը ծեր զօրավարին վրայ, այսպէս բարկացած զինքը տեսնելով զարհուրեցաւ. բայց առանց յայտնի ընելու եւ ամենայն քաղցրութեամբ եւ ակամայ ժպիտով՝

— Ի՞նչ հրաման ունիք, զօրավար,— ըսելով ոտք ելաւ:

— Դու բոլոր Ռշտունեաց գաւառի ազգահամարն ունիս, Յուսիկ, այնպէս չէ՞,— գոչից որոտաձայն ծեր զօրավարը:

— Այո՛, իշխան:

— Լաւ՛, այս գիշեր ցուցակը շինել տուր եւ վաղն առաւօտ կանուխ ինձ պէտք է տաս:

— Բայց, զօրավար...

— Բայց... ի՞նչ ըսել է Բայց... Բայց-մայց չի կայ. այդ բոլոր քու արկղերդ, քու դարաններդ գլուխդ կ'անցնեն:

— Լաւ՛, շատ բարի, շատ բարի,— ըսաւ Յուսիկ հեզ ու քաղցր ձայնիւ եւ իւր սովորական ժպիտով:

— Ի՞նչ,— ըսաւ ծերը կատաղութեամբ,— զիս կը ծաղրէ՞ս, իմ վրայ ծիծաղիլ կը համարձակի՞ս...

— Ի՞նչ կ'ըսես իշխան,— պատասխանեց Յուսիկ աչքերը բանալով՝ ետ-ետ քաշուելով եւ հեռանալով իրմէ՝ տեսնելով ծերը, որ տաք առնելով իրեն կը մօենար — ո՞ւմ մտքէն կրնայ անցնիլ ձեզի պէս ազգանուէր, բազմարդիւն զօրավարը ծաղրել. եթէ այդպիսի լիբբ մը գտնուէր Հայաստանի մէջ՝ Վասպուրական նմանը գտնել կարելի չէ ժողովուրդը այդ մարդը չապրեցնէր. իշխանէն սկսեալ մի թէ՛ ամէն մարդ ձեզ չի ճանչէր... Ձեր կամքը կը կատարուի, ապահով եղէք:

Ծերը ձեռքը երախակալէն վեր առաւ եւ ելաւ գնաց առանց բան մը զրուցելու: Իսկ Յուսիկ ետեւէն նայելով, երբ գուռը գոցուեցաւ՝ «Այս կատաղի ծերը ո՞ր դժոխք դուրս թափեց,— կ'ըսէր ինքնիրեն տետրակներն առաջ քաշելով բարկութեամբ,— ե՞րբ եկաւ, որ մարդ նաեւ չիմացաւ: Այս մարդն Աստուծոյ պատուհաս է իմ գլխուս, ամէնուն խօսք հասկցնել կարելի է՝ մէկուն երեսին կը ծիծաղիս, միւսը կ'անուշես, ուրիշի մը իրաւունք ունիս կ'ըսես եւ գիտցածդ կ'ընես. բայց սա գազան մէ՛ խօսք չի հասկնար, քաղցր խօսիս՝ կը կատողի, դառն խօսիս՝ սուր կը քաշէ, կամքը չի կատարես՝ կը կախես կ'ըսէ, վերջապէս պատուհա՛ս, պատուհա՛ս: Չէ՞ որ զինուոր են, մարդկային արինով շաղախեալ, շաղուեալ մարդիկ. ի՞նչ տարբերութիւն ունին աւագակներէ: Օրինաւոր աւագակնէ ր, ոչ մարդու յարգ գիտեն, ոչ արծաթի: Սոցա ամէնէն լաւը, ամէնէն խելօքը իշխանն է, որ կարդալ գրել գիտէ, հաշուել նաեւ գիտէ, եւ այդ մարդը զիս իմ պաշտօնէս հանել կրցեր է մտածել առանց խորհրդածելու թէ ուրիշ Յուսիկ մը գտնել կարելի չէ բոլոր Վասպուրականի մէջ. վերջապէս զինուոր ր, եւ որովհետեւ քանի մը քսակ ոսկոյ ձեռք ձգէր է ո՛ր գիտէ ուստից՝ անշուշտ աւագակութեամբ՝ միտքը դրեր է թէ Յուսիկի պէտք չի կայ... Իբրեւ թէ ոսկոյ աղբիւր գտեր է: Բարեբախտաբար իշխանուհին՝ թէպէտ շատ պակասաւոր բայց երկնէն խելօք՝ իմացեր է թէ Ռշտունեաց տունը առանց Յուսիկի չի դառնար, զինքն արգիլել է, ինչպէս եւ խոստովանեցաւ... Երբեմն կը մտածեմ, վասնզի ինձ էլ կիրք կու գայ, որ սոցա հպարտութիւնը պատմելու համար թողում հրաժարիմ: Այո, հրաժարիմ, երթամ քաշուիւմ Արտամէտ, նստիմ տունս. հանգիստս նայիմ, բայց երբ միտքս կու գայ թէ այսչափ տարի խնայութեամբ ժողովուած հազարաւոր ոսկոյ քսակներս պիտի թողում, որ գան ուրիշները յիմարաբար, շոայլաբար, ցանուցիր ընեն, գողնան, գողցնեն, չեմ կրնար համոզուիլ: Ոչ իշխանը, ոչ իշխանուհին չեն հասկնար՝ խելքերնին չի հասնիր. Աւետարանը զրուցէր է. «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց». մե՛ծ խրատ կայ այդ խօսքին մէջ. ես լաւ կը հասկնամ, պէտք չէ, որ այսչափ տարի աշխատելէս վերջ թողում այս ոսկիները, որ դարձեալ մարգարիտ կը նշանակեն, եւ աւելի լաւ արժէք ունին. ժամանակին կը դիմանան, դեղնելէ վախ չունին, չեն ժանգոտիր, հրդեհէ չեն վախեր:— Բարեբախտաբար չեն գիտեր նաեւ թէ ի՞նչ ունին տայս Ռշտունիք, եւ ես չեմ յայտներ...»:

Այս խորհրդածութեանց վրայ էր Յուսիկ, երբ սպասաւոր մը եկաւ թէ իշխանուհին զինք կ'ուզէր տեսնել: Արկղ, երկաթի դուռ, փայտի դուռ՝ ամէնն էլ զգուշութեամբ գոցելէն վերջ, ուղղուեցաւ իշխանուհոյն սենեակը:

Սովորական կին չէր Ռշտունեաց Տիկիւնը, հազիւ քառասնամեայ՝ շատ աւելի պակաս կը ցցնէր. իւր կերպարանաց գեղեցկութիւնը այնպիսի փայլ չունէր, որ աչք շլացնէր, այլ այն վարպետներու նկարներուն կատարելութիւնն ունէր, որ քանի նայի ոք՝ աչքը կը գրաւի, կը յափշտակէ, վայելուչ հասակը, դիմաց համեմատութիւնը, հոնից եւ աչաց հրամայող ականարկը խառնուրդ խստութեան եւ քաղցրութեան, որք ձգող եւ տիրապետող զօրութիւն մունէին, ժպիտը, որ հաճոյք կամ արհամարհանք կը յայտներ, իւր նազելի շարժումնքն ու քայլուածքը, իւր մանր ձեռքերն ու

նոքերը, եւ վերջապէս բոլոր այս մարմնոյ կատարելութիւնք իւր սրամտութեան, իւր նուրբ ճաշակին հետ միացեալ կանանց ակումբի մէջ նաեւ ամէն մարդու նկատողութեան եւ ակնածութեան զինք առարկայ կ'ընէին: Ո՛ր մնաց որ Ռշտունեաց Տիկին մէր, եւ ամէնը գիտէին թէ առանց իշխելու երկանը իւր՝ մեծ ազդեցութիւն ունէր իւր մտաւոր կարողութեանց համար եւ նորա կատարեալ վստահութիւնը: Մարգարտային վարսակալ պսակը ճակտին բեհեզեայ քօղին վրայ, փունջ մը մազերու խոպոպիք իջած այտից երկու կողմէն, սամուրենին մետաքսեայ պարեգօտին վրայէն ձգեալ, ոսկեթել մուճակներ ուտքերուն, Ռշտունեաց Տիկինը թագուհւոյ կը նմանէր իւր բազմոցին վրայ: Վստահ իւր արժանեաց եւ Թէոդորոսի սիրոյն՝ գեղեցիկ սպասուհիներէ էր շրջապատեալ. իւր բնական առատաձեռնութեամբ միշտ ամէնուն սիրելի էր, եւ դիտէր այնպիսի ձեւ տալ խնայութեան, որ ատելին՝ խեղճ Յուսիկին վրայ կ'իյնէր, թէպէտ սա էլ ամէն խոժոռ նայուածքէ չէր վիրաւորուիր:

Այսպէս յոգնած տարածեալ էր իշխանուհին իւր ծիրանի բազմոցին վրայ, երբ Յուսիկ ներս մտաւ, ողջունեց խոնարհաբար եւ հարցուց թէ ի՞նչ հրաման ունէր. Սէթա՝ իշխանազն հիւրերուն համար սեղանի պատրաստութեանց վրայ կրկին եւ կրկին պատուերներ տալէն վերջ, որպէսզի խնայողութեամբ չի վարուի իւր տան վերակացուն, եւ երբ Յուսիկ թթու երեսով դուրս ելնելու կը պատրաստուէր, ըսաւ իշխանուհին

— Մոռցայ նաեւ զրուցել քեզի թէ իշխանը հրաման ունի, որ Ատոմ զօրավարն ինչքա՛ն դրամ ուզէ պէտք է տալ, դիտես իւր բնաւորութիւնը, պէտք է ջանալ քաղցրութեամբ գոհ ընել զինքն ամէն կերպով:

Յուսիկի երեսը խաւարեցաւ վայրկեան մը, քիչ մը մտածելէն վերջ, դարձեալ ժպիտ ի շրթունս՝

— Ով կարող է Ատոմի դիմադրել,— պատասխանեց,— տէրը դուք էք, եթէ կ'ուզէք գանձին բանալիքները նաեւ իր առաջը դնեմ:

— Անշուշտ, Յուսիկ, դու իրեն հետ վէճ մը ունեցեր ես, կերպո՞ւ, ձեռք այնպէս կը ցցնէ,— ըսաւ Տիկինը ծիծաղելով եւ նուրբ հայուացք մը ձգելով:

— Վէճ... ես մարդու հետ չունիմ, իշխանուհի, ուր մնաց Ատոմի հետ. բայց ճշմարիտը խօսելով ինձ շատ հաճելի է իւր սիրուն կերպարանքը, անուշ նայուածքը, քաղցր ձայնը չի լսել եւ չի տեսնել տարիներով եւ բոլոր կեանքիս մէջ, եւ եթէ կարելի է հանդերձեալ կենաց մէջ նաեւ իրեն չի հանդիպիլ, որ շատ հաւանական է:

— Թուի թէ իրեն չի հանդիպելու համար արքայութենէ նաեւ պիտի հրաժարիս:

— Մանաւանդ թէ արքայութիւն երթալու համար ամէն ջանք պէտք է ընեն անոնք, որ Ատոմ Շահունիի հանդիպիլ չեն ուզէր անդին, վասնզի հոն յայտնի է թէ իւր տեղը արքայութիւն չի կրնար լինիր

— Ինչպէ՞ս, ինչ՞ դճ Ատոմ, այդչափ գէշ համարմո՞ւնք ունիս դու իւր վրայ:

— Գէշ համարմո՞ւնք ունենալ, ո՛չ երբեք. բայց ես այնպէս կը հաւատամ թէ արքայութիւն ըսուած տեղը պատերազմի դաշտ չէ, ուր մարդիկ ջարդեն, կոտորեն, հայհոյեն, հրդեհեն, այլ այնպիսի տեղ մը, ուր մարդիկ հանդարտ, սիրով, խաղաղութեամբ...

— Անշուշտ նաեւ խնայութեամբ ապրելու համար պիտի երթան,— ըսաւ իշխանուհին ծիծաղելով, եւ ամէնքն սկսան խնդալ: Իսկ Յուսիկ անխռով ժպտելով՝

— Այո՛, իշխանուհի, խնայութիւն ամէն տեղ պէտք է, իսկ արքայութեան մէջ անհրաժեշտ է,— պատասխանեց,— վասնզի հոն ոչ ուտել, ոչ խմել, ոչ շինել ոչ հագնիլ եւ ոչ պատերազմիլ կայ:

— Եթէ ամէնքը քու խորհրդոցդ հետեւին՝ աշխարհք արքայութիւն կը դառնա այսօր եւ վաղն անապատ:

— Ես չեմ ըսեր թէ մարդիկ չուտեն, չզգենան, չբնակին, այլ աւելորդ ծախքեր չընեն, որով շատ անգամ նեղութեան կը դատապարտուին. տեսէ՛ք, ահա Կամսարականք, որ օրաւոր կ'ոչնչանան, Շիրակայ մէկ մասը դեռ երէկ ծախեր են Բագրատունեաց Տիկնոջ, անշուշտ քանի մը տարիէ մնացածն էլ կը ծախեն եւ Բագրատունիք, որ ազահ անուն ունին, հայոց առաջինք կը լինին. ո՛չ քաջութեամբ, վասնզի Ատոմ Շահունիէ ո՛վ քաջ կայ. փա՛ռք ստեղծողին, ձեռքը միշտ սուրին վրայ է, մարմինը՝ անսպի, ողջ տեղ չի կայ դրամի չափ, այլ խելքով եւ խնայութեամբ:

Այս միջոցիս Թեոդորոս, որ ներս մտեր էր եւ Կամսարական, Շիրակ, Բագրատունեաց անունները լսելով կանգ առեր էր, առանց տեսնուելու Յուսիկէ առաջ անցաւ:

— Դու ուսկի՞ց գիտես,— ըսաւ,— որ Շիրակայ մէկ մասը գներ է Բագրատունեաց Տիկնոջ, ես որ այն կողմերն էի դեռ երեք ամիս կայ հազիւ՝ չիմացայ: Երկու գիշեր Շիրակաւան Կամսարականաց հիւր էի, նշան մը չի տեսայ:

Եթէ Յուսիկ միասին լինէր,— զրուցեց իշխանուհին ծիծաղելով,— շատ նշաններ կը տեսնէիր...— Եւ յանկարծ շուրջ եւ տխուր կերպարանք առնելով,— Բայց Կամսարականը սելով չանցնինք, Բիւրեղի համար ձայներ կան թէ Վարդանաբերդի քանդուելուն չէ կրցեր ազատիլ, ոմանք կ'ըսեն թէ գերի տարեր են ընտանեօք, ոմանք կ'ըսեն թէ ջարդուեր են: Դու, իշխան, տեղեկութիւն չունի՞ս:

— Ինչպէ՞ս չունիմ,— պատասխանեց Թեոդորոս դառնութեամբ:— Երանի՛ թէ հիւր չլինէի գիշեր մը Վարդանայ բերդ եւ անգամ մը եւս տեսած չլինէի այդ հրեշտակայի կինը:

— Ուրեմն ճշմարի՞տ է իւր մահը,— ըսաւ Սէթա դողալով եւ ոտք ելնելով:

— Տուր եւ աղջկան մարմինը լճին մէջէն հաներ են:

— Ո՛հ խեղճ Բիւրեղ, թշուա՛ռ մայր,— զրուցեց Սէթա եւ հեկեկանօք սկսաւ լալ երկու ձեռաց մէջ երեսները ծածկելով:

— Ես գիտէի թէ ինչչափ ցաւ պիտի պատճառէ քեզ այս լուրը, եւ անոր համար մինչեւ հիմա լռեցի:

— Բայց այդ ճիւղները՞, այդ գազանները՞...

— Այդ գազաններուն ձեռք չընկնելու համար իւր նորահաս աղջկան հետ ինքզինք նետեր է լիճը եւ խեղդուեր:

— Ռերդին, Գրիգոր՝ որ մեզի հիւր էր՝ նա ի՞նչ եղեր է:

— Գրիգոր եւ քեռին մեզ հետ էին. իւր տարիքէն վեր քաջութեամբ կը պատերազմէր. երբ մենք Գողթն էինք, յորդորեցի, որ երթան, որպէսզի Բիւրեղ մտատանջութենէ ազատի, գնացին, եւ թեպէտ հարցնել տուի՝ լուր չի կրցայ առնուլ:

Սէթա կու լար կամաց ձայնով, Թեոդորոս խոժոռ վեր-վար կը պտըտեր, Յուսիկ կը խորհրդածէր, սպասաւորք եւ սպասուհիք իրենց տեարց օրինակին հետեւելով տխուր կերպարանք առեր էին:

Բայց Սէթա քանի մը վայրկենէն վերջ, աչքերը սրբելով, դարձաւ իշխանին՝

— Գոնէ,— ըսաւ,— արժանավայել թաղում մը լինէր այդ առաքինի եւ հրեշտականման կնոջ:

— Թաղման հանդէսն կատարողը Հայոց օրինաւոր կաթողիկոսն է, Քրիստափոր ինքն,— ըսաւ Թեոդորոս,— ես իրմէ խնդրեցի, որ վայելուչ շիրիմ մը նաեւ կանգնէ իւր վրայ եւ նա խոստացաւ: Եւ պէտք եղած ծախքը նաեւ տուի:

Երկրորդ եւ երրորդ օրը ինչպէս միշտ Թեոդորոս իր ծանր զբաղմանց հետ էր. Սէթա թէպէտ բարեկամուհին կը յիշէր՝ բայց գաւառին եւ մեծ տան մը հոգերը զինք գրաւած էին. միայն խեղճ Թէնի տխուր էր ամիսներով եւ գրեթէ ոտքի վրայ հիւանդ կը նիհարնար ի մեծ մտատանջութիւն իւր ծնողաց: Իսկ Ատոմ առանց մարդու հետ խօսելու, իւր զինուորական մարզերէն քանի մը օրն անդամ մը կը դառնար, մխիթարական խօսքեր կ'ընէր աղջկան, անիծելով բոլոր Մամիկոնէից յիշատակը, նոքա, որ անհետ կը լինէին՝ եւ նոքա, որ իբրեւ ժառանգ Կոզովիտի գաւառը կը գրաւէին: Վասնզի Մուշեղ եւ Համազասպ հօրեղբօրօրդիք Գրիգորի՝ իբրեւ ժառանգորդք՝ առանց երկար խոյզ եւ խնդիր ընելու եւ քիչ մը գոհութեամբ նաեւ Գրիգորի մահուան լուրը տարածելով գրաւեցին Կոզովիտ:

ԳԼՈՒԽ ԺԱ

Անցան երկու տարի եւ աւելի ժամանակ այս դէպքերուն վրայ, ոտնակոխ եղած Հայաստանի այդ հարուստ գաւառաց ժողովուրդը սկսաւ քիչ մը հոգի առնուլ, շինականը իւր տունը դարձեալ շինեց գետնի խորը, զօր ոմանք որջ անուանեցին, առանց մտածելու առանց հաշուելու թէ անտէր, աւազակաց եւ անիշխանութեան մատնեալ Հայաստանի մէջ, ուր յենք, ասպատակք եւ գաղթականք անպատասպար երկիր մը կը դիմէին յամենուստ Քսենոփոնի օրերէն ի վեր, ուրիշ տեսակ տուն շինել անօգուտ էր:

Թեոդորոս կ'աշխատէր՝ կը դիմէր ամէն կողմ, ժողովուրդը կը քաջալերէր եւ կը պաշտպանէր, մեծամեծները միութեան եւ դաշնակցութեան կը յորդորէր առանց երբեք յաջողելու իւր մտածութիւնը ընդունել տալու համար: Յայտնի դիմադրութիւն ոչ ոք չէր ցոյց տալ, բայց զանխուլ դիմադրութիւն կար, որ անտարբերութիւն նաեւ չէր: Նախարարաց շատերը օտարէն աւելի Թեոդորոսէ կը վախէին. այդ մարդուն գործունէութիւնը, պատերազմի մէջ քաջութիւնը, խորհրդոց մէջ առաջնութիւնը, օտարաց առաջ իւր համբաւը, անհրաւութեանց դէմ խստութիւնը միմիայն պատճառ էին իւր առաջադրութեանց ընդունելի չլինելուն: Հեռաւորք՝ Վիրք, Աղուանք եւ Միւնիք կը միաբանէին, մերձաւորք՝ Անձեւացիք, Արծրունիք, Մամիկոնեանք, Մոկացիք խէթի կը նայէին: Թեոդորոս շատ սրամիտ էր, որ չի հասկնար, ուստի ամէն ջանք ի գործ կը դնէր Վարազտիքոց Ասպետը բերել տալու համար աքսորէն: Իւր բարեկամաց հետ ան անպակաս կը թղթակցէր, եւ հազիւ թէ գործը կարգի կը դնէր կամ խռովութիւն մը պալատին մէջ կամ որսացեալ զօրաւոր պաշտօնէի մը փոփոխութիւնը իւր ջանքերէն ի դերեւ կը հանէին: Եւ իրօք, եթէ Բագրատունեաց նախարարը դարձ շատերու մտքին մէջ կշիռ մը կը կազմուէր զօրութեան եւ Թեոդորոսէ երկիւղ կրողները ուրիշ յենակէտ մը ունենալով, միաբանութեան դաշինքէն հեռու չէին կենար:

Այս միջոցիս Գրիգոր եւ Սուրեն ամասկոսի մօտերը իրենց գերութեան շղթաները կը կրէին, նախատանաց՝ դժնդակ ծառայութեանց կը տանէին եւ աչաց առջեւ կը տեսնէին գունդագունդ ուրացողաց թիւը, որ ստրկութեան տառապանաց չդիմանալովդ ազատութիւն կը գտնէին ուրիշ տեսակ մը գերութեան մատնուելով, ուրանալով կրօնից հետ հայրենիք՝ վերջապէս ամէն հին կապերը խզելով, արաբացի կնոջ կամ մարդու մը հետ կապուելով:

Զաւէն նոյն ժամանակներուն Կարինէ մինչեւ Տրապզոն ծանր ճանապարհորդութեամբ ամէն քաղաք կենալով եւ հետագօտելով, իւր Արփենին կը փնտռէր եւ այնպէս կը հասնէր Կոստանդնուպոլիս. մշակութիւն, ծառայութիւն, շէնքերու մէջ բանուորութիւն, ամէն բան ընելով կ'ապրէր, խելքը, միտքը իւր կորուստին վրայ միշտ լինելով. խեղճ մարդը շատ անգամ բեռն ուսին՝ փոքրիկ տղայ մը տեսնելուն պէս կը վազէր կը սլանար, որ տեսնէ որոշ թէ միգուցէ Արփենին լինի: Իշխանաւոր, զինուորական կամ քաղաքական կը դիտէր, որ տեսնէ միգուցէ Թումա լինի. վասնզի Կարին առած տեղեկութիւնքը զինք համոզած էին թէ Թումա էր իւր աւագակը, բայց անօգուտ. հայկական յարատեւութեամբ միտքը դրած թէ օր մը չէ օր մը անշուշտ իւր կորուսեալ որդին կը գտնէ՝ թաղ-թաղ իւր աշխատութեան տեղերը կը փոխէր այդ ծովացեալ մայրաքաղաքին մէջ:

Այսպէս, Կաղզուանի գիւղացի զինուորը Բիւզանդիոյ փողոցները կը պտըտէր, մշակի հագուստներու տակ ծածկած ազնիւ սիրտ մը եւ անիրաւ գողութեան մը դէմ իւր մտքին մէջ պատերազմ հրատարակէր էր մեծ իշխանի մը հակառակ, եւ որ թուի թէ իրմէ կը փախչէր, վասնզի տեղ մը զինք չէր գտներ: Չորս երկայն տարիներ անցան: Ոչ գթումա եւ ոչ գԱրփենի տեսաւ. տխրութիւնը զինք պատեց, լքաւ, զօրութիւնը տկարացաւ, եւ ինքնիրեն, «Ո՛հ, Աստուած իմ,— կ'ըսէր,— միթէ՞ կարելի է, որ քու Աւետարանդ զիս խաբէ, քու սեղանիդ առջեւէն ինձ ձայն եկաւ թէ՛ «Այս իմ որդին, որ կորուսեալ էր՝ գտնուեցաւ, եւ սուրբ մայր մը իր գերեզմանին մէջէն կրկնեց քու խօսքը. «խնդրեցէք եւ տրուի ձեզ» եւ այս չորս տարին կը կատարուի, որ պանդուխտ թափառական կը պտըտիմ, որք մը՝ հրեշտակ մը կը փնտռեմ եւ չեմ գտներ. ո՛հ Աստուած իմ, յիշէ քու արդարութիւնդ եւ ողորմէ՛ ինձ, ողորմէ՛ որբացեալ հրեշտակին»: Այսպէս կ'աղօթէր առաւօտ մը խեղճ Զաւէն, եւ այդ երկաթեայ մարդը իր ողորմելի բնակարանին մէջ՝ իր խշտիին վրայ ինկած արցունք կը թափէր: Յետոյ աչքերը սրբելով ելաւ փողոց, տեսաւ ժողովուրդն աղմկեալ, ամէն կերպարանաց վրայ երկիւղ եւ յոյս կը տիրէին, ամէնքն իրարու լուր կու տային թէ կայսրը մեռած է եւ կը դիմէին Սուրբ Սոփիա եկեղեցւոյ եւ արքունեաց կողմը: Հերակլէս մօտէն տեսած եւ իւր յաղթական դրօշակին տակ պատերազմած մարդ էր Զաւէն, իր մտքին մէջ դիւցազին յիշատակը միայն կենդանի էր, նորա վերջին տարիներուն մեղկութիւնը, որ վատութեան գրեթէ կը հաւասարէր, չէր կրնար զգալ եւ հաւատալ. զարմանալով կը նայէր ժողովրդեան՝ նորա մահուան համար տեսնուած անտարբերութեան վրայ, որ իւր յաջորդին համար աւելի եռանդուն էր: Ոմանք մեծ որդւոյն Կոստանդինի կողմնակիցք էին, ոմանք նորա հակառակ կայսրուհւոյն եւ փոքր որդւոյն Երակլոսի կողմը կը բռնուէին: Ուստի ինք, որ որոշած էր ճանապարհորդել դառնալ հայրենիք՝ թողած իւր շալակը իւր բնակարանին մէջ՝ սկսաւ հետեւիլ այդ խառնիճաղանջ ժողովրդեան, որու ալեկոծ ընթացքին մէջէն որոտման ձայներ կ'ելնէին, կեցցէ Կոստանդին, կամ կեցցէ Երակլէակ աղաղակելով: Զաւէն աչքը շուրջ պտըտցնելով եւ տեսնելով այդ խուժանին փրփրած վիճակը որ քանի կ'երթար կը շատնար կատաղի եւ զինեալ խումբերով, ձեռքը գօտիին կը տանէր երկսայրի պատրաստ վիճակի մը մէջ դնելով, եւ այնպէս ժողովրդեան հետ մտաւ Մայր եկեղեցին, ուր գիշերուընէ բերուած էր կայսեր ոսկեղէն դագաղը եւ մէջտեղ դրուած բարձր արծաթեայ պատուանդաններ ու վրայ:— Վերջին անգամ մը տեսնելու Համար այդ

քաջին կերպարանքը, որուն դրօշակին տակ Նինուէի դաշտերուն մէջ պատերազմած էր, իւր կորովի բազուկներուն ուժ տուաւ եւ ճեղքելով ժողովուրդը անցաւ հասաւ մինչեւ թիկնապահաց խումբին կոնակը, որ շրջանակ մը կը կազմէին դագաղին չորս կողմը. հոն ակնակապ պսակ ի գլուխ ծիրանիներու մէջ տեսաւ կապկի դիակը այն քաջին, զօր ինք պատերազմի դաշտին վրայ առիւծ մը տեսեր էր. զգուանք եկաւ իրեն, կ'ուզէր ետ քաշուիլ, երբ խումբ-խումբ պալատականաց փառաւոր ամբոխը սկսան շարուիլ կարգաւ դագաղին շուրջը. եւ ահա կայսրուհին Մարտինէ եւ հարագատ որդին Երակլեակ եւ թագաժառանգը Կոստանդին եկան իրենց պատրաստեալ գահոյից վրայ բարձրացան: Անմիջապէս եկեղեցական երգեր լսուեցան, եւ պատրիարքը կրօնական շքեղ խումբով հանգստեան կարգն սկսաւ կատարել: Զաւէն՝ լուրջ մարդ՝ այս հանդէսին պերճանաց վրայ աչք մը պտտցնելէ վերջ՝ սկսաւ դիտել այդ ամէն կերպարանքները. կը տեսնէր Մարտինէ, որ իւր խորթ որդւոյն վրայ այնպիսի աչքեր կը դարձնէր, որ երկու թունաւոր սլաք կարելի էր համարել. կը տեսնէր Կոստանդին ժամանակէն առաջ ծերացեալ, աչուրներուն լոյսը մարած, մարմնոյն կորովը կորած. իսկ Երակլեակ թեթեւ երիտասարդ հօրը դիակը չի տեսնելով՝ կանանց խումբին կը հառեր. պալատականք, սինկղիտոսք եւ բոլոր մեծամեծք իրենց նայուածքներէն, իրենց կերպարանքէն հա եանի կ'ընէին թէ աստուածային երգերուն ուշադրութենէ աւելի ուրիշ կարելոր մտածութիւնք ունէին իրենց գլխուն մէջ: Այս դիտողութեանց ժամանակ յանկարծ Զաւէնի աչքին հանդիպեցաւ Թումայի կերպարանքը, որ թագաժառանգին մօտ կանգնած էր իւր հետեւորդաց մէջ: Կարծես նոր կեանք, նոր յոյս, նոր զօրութիւն առաւ Զաւէն. աչքերն այդ հրաշալի գմբէթին դարձնելով եւ միտքը գմբէթէն վեր թռչելով. «Փառք քեզ, աստուած, փառք քեզ», — ըսաւ. եւ իբրեւ թէ Արփենին թելերուն մէջ՝ իւր նժոյգին վրայ Հայաստանի ճամփան կ'երեւակայէր թէ կը սլանար: Սիրտն ուրախութեամբ կը տրոփէր եւ աչքերը Թումայի վրայ տնկած՝ նորա ամէն ակնթարթը, ամէն շարժումնքը կը դիտէր, որ աչքէ չի կորսնցնէ:

Բայց սրտի առաջին յուզումնքն անցնելէն վերջ՝ մտածեց թէ, երբ հանդէսը վերջանար եւ Թումա այդ արքունական ամբոխին հետ անհետ լինէր, ինք ուսկի՞ց գայն պիտի գտնէր: Ուստի պէտք էր նոյն միջոցին տեղեկութիւն առնուլ այդ մարդուն վրայ, եւ այդ բանին համար աչքն սկսաւ շուրջը պտրտցնել. տեսաւ քիչ մը հեռուն թեթեւսոյիկ, շատախօս մարդ մը, որ շարունակ պալատականաց կը նայէր եւ քովիններուն հետ կը խօսէր. ամէն ջանք ընելով՝ հրելով, հրմշտկելով մօտեցաւ: Առաջ նորա ամէն խօսքերուն մեծ ուշադրութիւն տուող ձեւացաւ եւ վերջը քանի մը անձանց վրայ սկսաւ տեղեկութիւն հարցնել, մինչեւ կարգը Թումայի բերաւ հասուց: Իսկ այդ շաղակրատը Թումայի ազգաբանութենէն սկսելով կը պատմէր թէ Թրակացի էր նա, թէ Պրոկոպիոսի հետ դառնալով Հայաստանի պատերազմէն կորակոր՝ ինչպէս սովորութիւն էր այն ատեն դառնալ յունաց ամէն բանակներու ամէն տեղէ, թագաժառանգին հետ գնացեր էր յասորիք եւ նոյնպէս դարձեր էր կորակոր, եւ թէ դեռ քանի մը շաբաթ առաջ միայն եկեր էր Կոստանդնուպոլիս եւ սիրելի եղած էր արքայորդւոյն իւր ծառայական բնաւորութեամբ եւ թէ այդպիսի անպիտաններուն շուքն անկարելի էր, որ երկար տեւէր, վասնզի կայսրուհին շատ մեծահանճար կին էր եւ իր Երակլեակը պիտի թագաւորեցնէր: Իսկ Զաւէն, որ համբերութեամբ մտիկ ըրած էր ամէն բան, հարցուց, ուր էր այդ Թումայի տունը եւ իմացաւ թէ Պրոպոնտիդի վրայ՝ ծովեզրեայ պալատ մը՝ իւր քրոջ հետ կը բնակէր, որ Փիլակրիոս անուն թագաժառանգին կինն էր: Եւ թէ այդ իւր քրոջը շնորհիւք, որ Կոստանդինի սիրուհին էր, այդ Թումա զօրավար լինիլ յաջողէր էր:

Այս պատասխանը լսելով ծերը՝ տղու պէս ուրախութենէն պիտի ցատկեր եթէ չամաչէր եւ այդ սեղմուած վիճակին մէջ շարժելու տեղ ունենար: Ուստի հանդէսը երբ վերջացաւ, մեծ եռանդով ինչչափ որ կրցաւ ջանաց շուտով դուրս ելնել եկեղեցիէն, եւ ամբոխին խուժանէն հագիւ թէ ազատած մտաւ իւր բնակարանը, առաւ իւր թեթեւ կարասիքը եւ թողլով այն կեդրոնական թաղը, հաստատուեցաւ նոյն ծովեզրին մօտ՝ իջեւանի մը սենեակ, ուր էր Փիլակրիոսի պալատը:

Թեպէտ կը տեսնէր ութ տասը պալատանման տուներ, բայց ապահով էր թէ պիտի գտնէր Արփենին, ուստի նստած ծովեզրը տախտակէ նաւամատոյցին վրայ գեղեցիկ ծովուն հանդարտ ծուփը կը նայէր. այդ թաղը հանդարտ թաղ մէր, մանաւանդ այն օրը, վասնզի խառնիճադանջ եւ հասարակ ժողովրդեան բնակարանք քիչ կային, եւ ճամփաները մարդ չէր երեւէր. ամբոխը բոլոր թաղին կեդրոնը՝ վերն էր: Այդ մեծ պալատներու քանի մը մաքուր հագուած ծառայք իրարու հետ կը խօսէին, կը վիճէին, վասնզի նոքա ալ իրենց տեարց պէս Կոստանդնի կամ Երակլեակի կողմնակիցք էին եւ ամէն աստիճանի մարդ քաղաքագիտութիւն ունէր իւր ծոցը հաւասար աստուածաբանութեան:

Զաւէն ուշադրութեամբ մտիկ կ'ընէր երկու սպասաւորաց մէջ խօսակցութիւն մը, որ երկու մեծ դռան մէջ կեցած կը վիճէին բաւական բարձր ձայնիւ.

— Ո՞ւր է քու Կոստանդնիի առաւելութիւնը, կ'ըսէր մէկը միւսին, կնոջ մը տիրապետութենէն, որ դու վնասակար կը համարիս: Այսպիսի ժամանակ. ի՞րր թէ Հերակլի օրով եւ այդ քու Կոստանդնիի աչաց առջեւ Երուսաղէմ եւ Անաիոք չի կորուսի՞նք. եւ այսօր Եգիպտոսի կորուստը կատարեալ եղեր է, վասնզի Աղեքսանդրիայ նաեւ արաբաց ձեռքն է անցեր, եւ այդ քու Կոստանդնիը իբրեւ զօրավար կայսրութեան բանակաց ոչինչ չի կարենալով ընել անօգնական թողեր, փախեր եկեր է, եւ դուք նորա կուսակիցք կը ծածկէք ժողովրդէն: Բայց այդպիսի գոյժ կարելի՞ է ծածկել, վաղը ինչպէ՞ս պիտի սնուցանէք այս ծովու նման քաղքին բնակիչքը, որ իւր հացը Եգիպտոսէն կ'ընդունէր:

— Եթէ Կոստանդնի՞ն՝ որ պատերազմաց մէջ այնչափ քաջութիւն ցոյց տուած էր՝ չի կրցաւ այդ կատաղի արաբաց դէմ դնել եւ յաղթուեցաւ ու ետ քաշուիլ պարտաւորուեցաւ, տկար կնոջ մը այդ ձեր ողորմելի Մարտինէի ձեռքին տակ ի՞նչ կը յուսաք, որ լինի այս ինքնակայ էութիւնը, վասնզի Երակլեակը մարդ չէ՝ թեթեւտիկ երիտասարդ մէ խեղճ, գործիք իր մօրը ձեռքին մէջ:

— Տէ՛, յիմար, կանանց վրայ մի՛ համարձակիր լեզուդ արհամարհանօք երկնցնելու: Առանց կնոջ մը աչաց քու վրադ խոնարհելուն ի՞նչ էիր դու եւ ո՞ւր պէտք է գտնուէիր հիմա. ինչ շուտ մոռցար քու երեկուան յարդանոցդ, ախոռապետի ծառայ, եւ հիմա չես ուզեր յիշել թէ սա ըտպէիս վերէն Տիկնոջդ հրամանն՝ ամենափոքր ակնարկութիւնը զքեզ կը սարսեցնէ եւ իւր մտերմական հաճոյից գոգալով կը ծառայես. ինչպէ՞ս կը մոռնաս, որ ադ Տիկնոջդ գեղեցկութեան շնորհիւն է, որ Փիլակրիոս իր երիկը եւ Թումա իր եղբայրը եղած են ինչ որ են:

Զաւէն Թումայի անունը լսելուն աչքերը բացաւ. տունը որ կը տեսնէր՝ հոն էր անշուշտ իւր Արփենին. ուստի բոլորովին ուշադրութիւն դարձուց բառ մը չի կորսնցնելու համար. կը ջանար իւր սրտին բարախմունքը նաեւ դադրեցնել՝ եթէ կարելի լինէր: Բայց խօսակցութիւնը յանկարծ դադրեցաւ, վասնզի սրարշաւ ձիու մը սմբակներու ձայն լսուեցաւ, եւ արքունական սպասաւոր մը գահավիժելով ձիէն իջաւ, «աւետի՛ս, կեցցէ՛ Կոստանդնի կայսր» աղաղակելով:

Զաւէն, որ դռան մօտեցեր էր, կը տեսներ գաւթին ներսը սպասաւորք եւ սպասուհիք ուրախութեան ձայներով «աւետի՛ս, աւետիս» գոչելով տունը կը հնչեցնէին, սանդուխներէ վեր կը վազէին պատուհաններ կը բացուէին աւետաբերը տեսնելու, եւ ահա երեւցաւ երիտասարդ կին մէլ իւր բոլոր գեղեցկութեամբ Ափրոդիտի նման, որու երեսին վրայ ուրախութիւն կը նշուէր եւ լեցուն քսակ մը ձեռքը աւետաբերին կարկառէր:

Նոյն միջոցին միւս քովի պալատան՝ ուր Մարտինէ կայսրուհւոյն կողմնակիցքը կը բնակէին, դռները կը գոցուէին եւ վարագոյրները կը ծածկուէին, իսկ Զաւէն իւր տեսածով գոհ չի կրնալով լինիլ, կը դառնար ծովեզրը, կը նստէր նաւամատոյցին վրայ, եւ կը մտածէր թէ իր սիրուն Արփենին արդեօք հոն ներսը՝ այդ պալատին մէջն էր, այդ այնչափ գեղեցիկ եւ այդչափ անբարոյական կնոջ ճանկերուն մէջ ի՛նչ չար օրինակներու ենթարկուած էր:

Այս մտածութեամբք եւ մտատանջութեամբք երկայն ժամանակ մնացած՝ ծովուն ալիքներուն կը նայէր, երբ յանկարծ թիակներու ձայն մը լսեց եւ ճերմակ ներկուած ոսկենիշ եւ ոսկեգօծ թելատարած արծիւ մը ծայրը մեծ նաւակ մը տեսաւ, որ ծովուն ափունքը կը քերէր. եօթ ջուխտ կորովի երիտասարդք կը թիավարէին. նաւուն խորը կ'երեւէր գեղեցիկ կին մը բեհեզներու եւ ծիրանիներու մէջ փաթաթեալ, ոսկեթել բաստեռանց վրայ ընկողմանեալ: Շուրջը՝ վեց հաստ տասը-տասներկու տարեկան շքեղագարդ աղջկունք շարուած էին, իսկ կռնակը բարձրաւանդակին վրայ մաքուր հագուած սպասաւոր մը սիրամարգի փետուրներէ հովանոց մը կը բռնէր Տիկնոջ գլխուն վրայ՝ որու ծարիր աչքերը ուրախութեան մէջ կը լողային: Այս նոր Կղեպատրան իւր քիչ առաջ տեսած Տիկինն էր, որ արքունիք կ'երթար, ուստի իւր սուր աչքերը տնկեց Զաւէն եւ քիչ մնաց, որ նաւուն մէջ նետէր ինքզինքը. վասնզի անմիջապէս դիմացը մօտը ճանչցաւ Արփենիի աննման աչքերը. «ո՛հ» ըրաւ եւ ինքզինք սանձեց. ինչչափ մեծցեր էր չորս տարուան մէջ: Ուզեց ոտք ելնել եւ ոտքերը կապուեցան. նաւակը սրացաւ անցաւ ճերմակ փրփուր մը եւ ճեղք մը թողլով ծովուն երեսին վրայ, որ քանի մը վայրկենէն անհետացաւ: Ծերը ծունկի եկաւ, «Փա՛ռք քեզ, Աստուած իմ, փառք քեզ, դու որ այսօր այսչափն ինձ շնորհեցիր, անշուշտ իմ հրեշտակիս ազատութիւնը նաեւ կը շնորհես, դու չես ներեր, որ Մամիկոնեանց անարատ ծաղիկը այդ աղտեղի ձեռաց մէջ խամրի, եւ խեղճ Զաւէնի կը շնորհես տանիլ Արփենին իւր սուրբ մօր գերեզմանին քով չոքեցնելու եւ եղբօր ձեռքը յանձնելու»:

Այսչափ յուզմունքներ ունենալէն վերջ ազնուասիրտ զինուորը ելաւ կանգնեցաւ եւ մտքին մէջ հազար տեսակ հնարքներ կը ստեղծէր յափշտակելու համար իւր կորուստը, երբ մուօն սկսաւ իջնել, եւ ինք քաշուեցաւ իւր խղճուկ բնակարանը, այն մեծ գոհութիւնն «ունենալով, որ իւր Արփենին իրմէ հեռու չէր:

ԳԼՈՒԽ ԺԲ

Ո՛վ անդունդք անսահման. Ըզքնքուշ մանկութիւն քան մատնել պղծութեան Չէ՛ր լաւ եւս ի վերա անպաշտպան այդ մահձին Գերանդեաւ կտրատել գեղանի զայդ մարմին՝ Ձիւնափայլ վիզն առնուլ ոլորել ոսկորներ: Չէ՛ր լաւ եւս երկաթեայ ձեռնոցով կիր աւեր Լուսատիպ երեսաց գերթ դիմակ գետեղել. Քան հայլի ջինջ վտակ արտաքուստ ցուցանել՝ Արտասփիւռ զծաղկունս՝ սըրարշաւ զաստեղունս, Ի ծոցին ամրարեալ դըժոխոց ժահ ըզթոյնս:

ԱԼ. ՏՇ ՄԻՒՄԷ

Զաւեն, երբ ելաւ երկրորդ առաւօտուն իւր աղքատիկ բնակարանէն եւ աչքը դարձուց պալատին, ուր էր իւր Արփենին, ապշեցաւ մնաց. թէպէտ առաւօտ էր եւ շատ կանուխ՝ տեսաւ փառաւոր պատգարակներ, կառքեր ու ձիեր լցուցեր էին նաւամատոյցի հրապարակը մինչեւ այդ տան դռները, որոց երկու փեղկերը բաց էին: Եթէ առջի օրուան սպասաւորաց խօսակցութիւնը չլինէր՝ ծեր զինուորը պիտի կարծէր այդ պալատը արքունիքն էր, բայց յայտնի էր իրեն թէ Կոստանդնի սիրուհին լինելով այդ կիներ ամենքը մեծ եւ պզտի կը դիմէին նորա պաշտպանութունն մուրալու: Իսկ որ Զաւենի շատ տհաճելի երեւցաւ, այն էր, որ զինուորաց խումբ մը պահպանութիւն կ'ընէր:

Բայց տխուր կամ ուրախ պէտք էր հասներ նպատակին, ուստի մտաւ իւր բնակարանը, հագաւ իւր մաքուր զգեստները եւ խառնուեցաւ կառապանաց, ձիապանաց, պատգարակ կրողաց խումբին մէջ, մտիկ ընելու համար նոցա խօսակցութիւնը:— Նոյն միջոցին ծեր զօրավար մը բազմաթիւ սպասաւորաց խումբով կը հասներ եւ կը մտներ ներս, երբ ձիասպասը ձի դուրս հանեց եւ լսեց, որ ծառայքը հայերէն կը խօսէին՝ կենդանութիւն առաւ: Չորս տարուան ժամանակի մէջ երբեմն հայոց հանդիպած էր, բայց շատ քիչ անգամ նոցա հայերէն խօսիլն լսած, ուստի գաղտնի զուարթութեամբ ուշ կը դներ: Սոքա սպասաւորք էին Թեոդորոս Ելէիզացի հայ զօրավարին, որ շերակլի հաւատարմաբար ծառայէր էր եւ որ անդրանիկին՝ օրինաւոր ժառանգի իրաւունքը չէր փափագէր ոտնակոխ լինիլ: Ուստի Ծերակոյտի ժողովքին մէջ ամէն ջանք ըրած էր զկոստանդին աթոռ բարձրացնելու համար: Եւ Փիլակրիոսի՝ որ մեծ հազարապետ անուանեալ էր արքունեաց եւ տէրութեան առաջին պաշտօնեայ՝ այցելութիւն կու տար:

Զաւեն այն ատեն վիճակը յայտնի եւ պայծառ տեսաւ.— թշնամին, որ իր Արփենին գողցեր յափշտակէր էր, շատ զօրաւոր էր եւ նորա հետ պատերազմիլ իւր կարողութենէն վեր. բայց թողուլ երթալ, երբ Աստուածիրեն յաջողութիւն ցոյց էր աւեր տեսնելու իւր սիրելի կորուստը, այս նաեւ անկարելի էր, Ուրեմն կ'ըսէր. «Պէտք է համբերել եւ սպասէի այսպիսի անզգամաց յաջողութիւնը անշուշտ երկար չի տւեր, եւ պէտք է նաեւ աղջիկը տեսնել անգամ մը՝ հետը խօսիլ, գուցէ յանկարծ չուզէ երթալ, եւ ես այն ատեն ի՛նչ ընեմ: Եթէ այնպիսի պարագայ մը հանդիպի, ակամայ իւր կամաց պէտք է այդ խեղճ աղջիկը այդ ապականութեան պալատեն ազատեմ. եթէ մեր Տիկինը՝ նորա մայրը ողջ լինէր եւ ինձ ըսէր. «Զաւեն, գնա՛, զաւակս գտի՛ր եւ ինձ բեր», ի՛նչ պիտի ընէի, տղու պէս պիտի խորհրդածէի, ոչ, այլ եթէ յարկ լինէր սուր ի ձեռին՝ զինք պիտի կորզէի... Այդ սուրբ Տիկնոջ մահուան՝ իր աս զակին ողջութեան Աստուած զիս վկայ եւ գործիք ըրաւ, որ իւր առաքինութեան ժառանգ եւ յաջորդ լինի Արփենին: Եթէ տեսայ եւ հետը* խօսեցայ եւ ուզեց ինձ հետ գալ սիրով, լա՛ւ, ապա թէ ոչ բռնութեամբ նաեւ պէտք է զինք հանեմ այդ խորխորատեն»:

Այս խորհրդածութեամբք, սկսաւ ամէն օր այն տեղուանքը շրջիլ. թեթեւ ծառայութիւններ ընել, Փիլակրիոսի սպասաւորաց ձրի օգնել, այնպէս որ ամիս մը չեղած՝ Զաւեն անունը ծանօթ եղաւ պաղատի ծառայից, բեռ մը, ծանր բան մը վերցնելու օգնութեան եթէ պէտք լինէր դուրսէն մէկը փնտռել, զգաւն կ'ուզէին եւ Զաւեն կը կատարէր ուրախութեամբ ամէն գործ, եթէ բան մը չի տային ձայն չէր հանէր, եթէ քիչ տային առանց վրան նայելու գրպանը կը դներ, ոչ զանգատ եւ ոչ դժգոհութիւն ամենեւին չէր ցցնէր: Ուստի գոհ էին իրմէ ամենքը, որոց առաջին շահ շորթումն էր: Իւր այս անշահասիրութիւնը դիտելով տնտեսը, որ իր պաշտօնին պարտաւորութեամբ պալատին առաջին գողը կրնար համարուիլ, հրաւիրեց զգաւն իւր բնակարանը թողուլ եւ ծովեզրին մօտ՝ պարտեզին ծայրը գիշերային պահպանութեան համար փոքրիկ խրճիթը բնակիլ:

Այս գերադոյն առաջարկութիւն մէր կորովի ծերուն համար, որ շուտ մը իւր թեթեւ կարասիքը երաւ եւ այն խրճիթին մէջ գետեղեցաւ:

Հիմա իւր Արփենին կրնար տեսնել եւ միջոց նաեւ ունենալ հետը խօսելու առանձին, եթէ դիպուածը ներկայանար՝ եւ որ չուշացաւ: Նոյեմբեր ամսու գեղեցիկ առաւօտ մը կանուխ տեսաւ, որ պարտեզի դուռը բացուեցաւ, եւ Մամիկոնեան Օրիորդը ելաւ դուրս եւ առանց պարտեզին ուշադրութիւն ընելու շտկուեցաւ դէպի ծովեզրը: Ջաւին իւր փոքրիկ լուսամուտեն կը դիտէր ոչ միայն նորա կերպարանքը, այլ ամենափոքր շարժումնքը. աչքերն այդ արտաքոյ կարգի սետութիւնը եւ գեղեցկութիւնը պահած էին անփոփոխ, երկայն թարթիչները այնպիսի բնական քօղ մը ձգած էին այդ աչաց վրայ, անպատմելի քաղցրութիւն մը կու տային իւր նայուածքին. արեւը տկար ճառագայթներ կ'արձկէր Խրիսուպոլսոյ կը սղմեն եւրոպական ծովեզրին վրայ, ծովը հանդարտ լիճ մէր, եւ Արփենի նստած այդ գեղեցիկ տեսարանին կը նայէր: Ջաւէն տեսաւ, որ աղջկան աչքերը լցուեցան եւ այդ առանձնութեան մէջ իբրեւ մեծ մարդ խորհրդածելով արցունք կը թափէր: Այդ արցունքը ծերուն սիրտը ոչ տխրութեամբ՝ այլ ուրախութեամբ լցուց. ուստի ելաւ սիրտը թունդ իւր բնակարանէն եւ սկսաւ մօտենալ ծովեզրին:

Արփենի աչքը սրբեց եւ դարձուց դէպի ծերը. իսկ սա աւելի մօտենալով, քաղցրութեամբ եւ հայերէն

— Ջիս կը ճանչե՞ս, Արփենի,— հարցուց:

Երկայն լռութիւն մը յաջորդեց այս հարցմունքին, աղջիկն անշարժ ծերուն երեսը կը նայէր. կարծես թէ այդ պշտմին մէջ յիշատակութիւնը կու գար ոչ միայն դիմացինին կերպարանաց՝ այլեւ լեզուին, որ չորս երկայն տարիներ ոչ խօսած էր, ոչ լսած: Եւ ահա տխուր ծիծաղ մը եկաւ այդ երեսին, եւ ծանր, հատիկ-հատիկ՝

— Ջաւէն հայրիկ, դո՞ւ ես,— ըսաւ Արփենիի քաղցրիկ ձայնը:

Այս չորս բառերուն մէջ՝ գրուցուած եղանակին ու ձեւին եւ այդ անշարժութեան մէջ այնպիսի անբացատրելի բան մը կար, որ ծերուն սիրտը տրորեց եւ աչքերն արտասուքով լցուեցան. այդ բոլորը կը գրուցէին իրեն, որ այդ աղջիկը կ'իմանար թէ որք էր, թէ պանդուխտ էր, թէ թշնամեաց ձեռք գերի էր, թէ անպաշտպան էր, փրկութեան յոյս չունէր, եւ այս ամէնքը դեռ տասնմէկերորդ տարիքին մէջ: Ուստի ծերը մօտեցաւ.

— Միրուն Արփենի, ինչպէ՞ս մեծցեր ես, ինչպէ՞ս գեղեցիկ ես:

Դարձեալ պատասխան չիկար. նոյն նայուածքն էր. իբրեւ թէ տղան բան մը կը փնտռէր, փնտռածը լեզուն էր. բառերը խառնակ կու գային իր յիշողութեան մէջ, եւ վերջապէս դարձաւ ըսաւ. «Ջաւէն հայրիկ» եւ մնացածը յունարէն.

— Ինչչա՞ փ ժամանակ է, որ ես այստեղ եմ, եւ դու ո՞ւր ես. ես մէկը չունիմ, ամէնքը հայր, մայր, եղբայր, քոյր ունին, ես ոչ ոք, բայց կը յիշեմ թէ ունէի. մայրիկս միտքս է, իւր անկողնին քով կը պառկէի. նա զիս կը սիրէր, կը պագնէր, մենք պզտի ծով մը ունէինք. ես այս ամէնքը կը յիշեմ, երբ առանձին եմ: Մենք բարբարոս ենք, պէտք չէ այդ յիշատակութիւններն ընենք, այնպէս կ'ըսեն ինձ ամէնքը, բայց միշտ այդ բաներն իմ միտքս կու գան. եւ ես կը սիրեմ այն տղայութեան ժամանակները, այն լեռները, այն ծաղիկները, հոն ոչ ոք ինձ չէր բարկանար, ամէնքը քաղցր էին ինձ հետ, ամէնքը զիս կը սիրէին:

— Քեզ հոս չե՞ն սիրեր, Արփենի:

— Չե՛, ես հոս Արփենի էլ չեմ. Ջոյի եմ: Մէկ նոր մարդ մը եկաւ հիմա, մեր տիրուհոյն եղբայրն է. նա զիս կը սիրէ. Բայց ես այդ մարդէն կը վախեմ, կը քաշվիմ, նա զիս իր փոքրիկ բարբարոսը կանուանէ, երբ զիս գիրկը կառնու, կը համբուրէ ինձ սուկում կու գայ, կը փախչիմ: Իսկ ուրիշները զիս չեն սիրեր, այդ մարդն էլ չեմ ուզեր, որ սիրէ:

— Բայց մենք քեզ կը սիրենք, Արփենի, չե՞ն ուզեր մեզի դառնալ, այն լեռները երթալ, այն ծաղիկներուն երթալ, որ դու ըսիր թէ կը սիրես:

— Կարելի՞ է դառնալ՝ հոն երթալ. ամէն բան կործանած է հոն, ըսին, բարբարոսք ամէն բան ոչնչացուցեր են, այրեր են. մարդիկը բոլոր սպաններ են:

— Բարբարոսք ամէն բան կ'ուզեն ոչնչացնել, Բայց մենք աստուծով կը շինենք, եւ բոլորովին չենք ոչնչանար, ինչպէս զիս կը տեսնես, որ Աստուած պահէր, որ զքեզ դամ ազատեմ եւ տանիմ նորէն քու մայրիկիդ տունը: Զիս չե՞ն յիշեր, Արփենի:

— Ես զքեզ կը յիշեմ, որ զիս ձիուդ վրայ կառնուիր, Բայց ես հիմա էլ չեմ ուզեր ձիու վրայ նստիլ, ետքը հիւանդ կը լինիմ:

— Խե՛ղճ Արփենի, այդ անզգամը զքեզ վախցուցեր է: Հիմա ինձ այն զրուցե՛ չե՞ն ուղեր քու եղբորդ, ազգականներուդ, քու տունդ երթալ, որ զքեզ կը սիրեն, եւ հոն տիրուհի լինիլ:

— Ինչպե՛ս չեմ ուզեր,— ըսաւ աղջիկը աչքերը բանալով,— Բայց կարելի է երթալ, ինձ այն զրուցե՛:

— Ես պիտի երթամ, կու գա՞ս հետս:

— Կու գամ, Բայց կը թողո՞ւն:

— Մենք ծածուկ կը փախչինք կ'երթանք:

— Քեզի հետ ամէն տեղ կ'երթամ, Զաւէն հայրիկ, Բայց դու այսչափ ատեն ինչո՞ւ զիս մոռցար:

— Խե՛ղճ աղջիկ, քանի տարի է, որ զքեզ կը փնտռեմ եւ դեռ նոր գտայ:

— Երթանք ուրեմն,— ըսաւ տղան եւ ոտք ելաւ:

— Հիմա դեռ պատրաստ չենք, դու մեր այս խօսքերը պէտք չէ, որ մարդու յայտնես. դու զիս ճանչելդ, իմ անունս մարդու պէտք չէ իմացնես. ես գաղտուկ ամէն բան կը պատրաստեմ, կարգի կը դնեմ. եւ օր մը յանկարծ կ'երթանք քեզ հետ մայրիկին:

— Մայրիկն ուրեմն ո՞ղջ է,— ըսաւ Արփենի եւ աչքերուն արտաքոյ կարգի կենդանութիւն մը եկաւ:

— Նուրբերը ողջ են միշտ, իմ սիրուն Արփենի:

— Արփենի այս խօսքին զօրութիւնը չիմացաւ, եւ ծերուն ձեռքը բռնելով.

— Շուտ տես պատրաստութիւններդ, Զաւէն հայրիկ,— ըսաւ:

— Դու համբերէ. երբեմն եկ հոս այսպիսի ժամանակ, երբ ամէնքը քնած են. կը տեսնուինք եւ կը խօսինք: Միայն մի՛ մոռնար, որ մարդ պէտք չէ իմանայ:

— Դու երեխա՞յ ես:

— Լաւ՛,— ըսաւ ծերը ծիծաղելով այս հարցմունքին,— գնա՛, որդեակ, ոչ ոք կասկած չառնու:

Եւ աղջիկը «մնաս բարով» գրուցեց ու մտաւ տուն: Իսկ Զաւէն կը նայէր ետեւէն եւ կը մտածէր ու կ'ըսէր ինքնիրեն. «Ի՞նչ վիճակ է այս աղջկան վիճակը, ինչո՞ւ այդ փոփոխութիւնը իւր վրայ, ես կարծէի թէ զիս տեսնելուն ու Կանչելուն ինձ պիտի դիմէ՝ զիրկս պիտի ընկնի... «Զաւէն հայրիկ» ըսաւ. բայց այն հին ոգին, հին եռանդը թուի թէ կասկածը, գերութիւնը, բռնութիւնը սպաննէր են: Այնպէս թուի, որ եթէ ազատութեան հասնելու փափագը չէ մեռած, յոյս եւ հաւատք գրեթէ մեռեր են լուր փոքրիկ սրտին մէջ... Այո՛, այդ ճիւղները փրկութեան յոյսը սպաննէր են սրտին մէջ: Հայաստան քանդեր խլէր են իր սրտէն: Տէր աստուած, ի՞նչ խօսք էր այդ՝ «Մենք բարբարոս ենք», եւ ինչ տխուր եւ յուսահատ եղանակ այդ խօսքը գրուցելուն, եւ այդ Մամիկոնեան ի մը՝ Վարդաններու եւ Վահաններու թոռներուն բերանը... Ո՛հ, եթէ Կամսարական Սուրէն իշխանը Հոս լինէր, տեսնէր լուր աշխոյժ քեռորդուն այս ջլատ ձեւը եւ տխուր բարբառը... Բայց ի՞նչ խառնուրդ տղայութեան եւ արբունութեան իւր կերպին եւ խօսից մէջ... Եւ այս ամէնքը հետեւանք չորս դառն ստրկութեան տարիներու...

«Օրինակ մը ահա իմ սիրտս կը յուզէ, իսկ անո՞նք, որ հազարներով գնացին այդ Արաբաց երկիրը, ուր ոչ խաչ կայ, ոչ Աւետարան եւ ոչ Քրիստոս: Եթէ Գրիգոր կենդանի է, նա էլ այս գերութեան վիճակէն անցած կը լինի, ինչե՛ր քաշած է այդ արաբաց ձեռք... Բայց նա անշուշտ ազատութիւն գտած է հիմա. հօրեղբայրքն անշուշտ փրկանք տուած են... եթէ մեռած լինէր դիակը ես կը գտնէի, անտարակոյս գերի գնացել է, նոյնպէս Կամսարականը. եւ այդ վանահայրը, որ արնալիւ լուրջ մարդ էր ինձ խոստացաւ Մամիկոնեից ամէնուն իմացնելու, որ մարդ դրկեն Արարատ երկիրը... Աստուած, որ Արփենին պիտի ազատէ՝ Գրիգոր էլ կազատէ. Հիմա ես երթամ պատրաստութիւն տեսնեմ զնայ փախցնելու: Մանչ տղու մը զգեստներ, նաւ մը մեզ Տրապզոն կը հանէ կամ Ճորոխի ափանց մօտ տեղ մը, էլ Հայաստան ոտք դրած կը համարիմ: Ելլենք անգամ մը եւ ժամ առաջ այս անիծեալ քաղքեն... ո՛հ անզգամ Թումայ, քու փոքրիկ բարբարոսդ, Մամիկոնեանց եւ Կամսարականաց սերունդը՝ ... եւ այդ մարդիկն են, որ աշխարհք կը կառավարեն. անմեղութիւնը՝ դեռաբոյս գեղեցկութիւնը իրենց գարշելի կրից խաղալիք ընել կը փափագին... Բայց դու, Աստուածիմ, չես ներէր այս պղծութեանց, դու ինձ յայտնեցիր Արփենին, դու զնայ պիտի փրկես»:

Բայց թողութ Զաւէն երթալ ի գործ դնել իւր խորհուրդը, մտնենք վայրկեան մը Արփենիի հետ պալատին ներքին կեանքը տեսնելու:

Թողունք նաեւ հայ աղջիկը, որ երթայ իւր սենեակը, ուր տարեկից աղջիկներ ամէնքը դեռ քնած տեսնելով սիրտը կը հանգստանայ՝ ապահով լինելով թէ ոչ ոք չէ իմացեր իւր տեսութիւնը հայ գիշերապահին հետ:

Երթանք վայրկեան մը այդ Անկելինայ տիկնոջ սենեակը, ուր փափուկ գորգեր, ոսկեզարդ մահճակալներ, փետրալից անկողինքեւ բաստեռունք, զանազան ձեւերով աթոռներ, ծիրանի վարագոյրներ, արծաթի հայելիք, մետաքսեայ եւ բեհեզեայ հանդերձանք միայն կ'երեւէին: Ի՛նչ որ բիւզանդական հեշտութիւնը հնարած էր պերճանք եւ զեխութիւն եւ անառակութիւն, ամէնքը հոն կարելի էր տեսնել մինչեւ պատերը այնպիսի նկարներով էին զարդարեալ, որ կրնային սուրբ ճգնաւորները անգամ գայթակղեցնել եւ սատանայի աշակերտ ընել: Անկելինայ նոր էլած

անկողնեն բեհեզներու եւ ազնիւ մուշտակներու ծածկուած փափուկ բազմոցի մը վրայ ընկողմանեալ էր, երբ եղբայրը՝ Թումա ներս մտաւ:

— Ես կ'ուզէի քեզ տեսնել, եղբայր,— ըսաւ Տիկինը,— շատ հարկաւոր խօսք ունէի քեզ ըսելու:

— Ի՞նչ է արդեօք այդ հարկաւորը՝ շատ հետաքրքիր եմ իմանալու:

— Հարկաւորն այն է, որ դու այդ հայ աղջիկը բոլորովին ինձ պիտի թողուս:

— Միթե՛ քեզ թողած չեմ, դու իր տիրուհին չե՞ս:

— Ոչ, իմ խօսքս չես ուզէր իմանալ. այդ աղջիկը գիտեմ ի՛նչ նպատակաւ յափշտակէր ես, բայց այդ նպատակդ պէտք է մոռնաս:

— Հիմա որ աղջիկը հասաւ, դու էլ ինձմե՞ կ'ուզես յափշտակել,— ըսաւ ծիծաղելով Թումայ,— այդ անկարելի բան է, այդ պզտի բարբարոսը այնպիսի աչքեր ունի, որոց նմանը բոլոր Կոստանդնուպոլիս կ'արելի չէ գտնել:

— Ահա այդ բանին համար, որ այնպիսի աչքեր ունի, դու պէտք է իրմէ հրաժարիս բոլորովին:

— Այս ի՞նչ կը նշանակէ, այս ի՞նչ բռնութեամբ է, Անկելինայ. դու իմ պզտի ոյրս, որ այնչափ խնամքով, այնչափ հոգերով, այնչափ զոհողութեամբ այս վիճակը հասուցի, այս հրամայական ձեւերը ինձի՞ հետ նաեւ կը գործածես. էրկանդ հետ մինչեւ հիմա: Վարուեցար ինչպէս ուզեցիր, խեղճ մարդը բաւական չէ, որ գերի ես ըրեր, հիմա զիս էլ կ'ուզես հար եւ նման գերի ընել եւ ոտքերուդ տակ ճզմել: Բայց մտածէ, լաւ մը չափէ, որ իմ անունս Փիլակրիոս չէ...

— Գիտեմ թէ քու անունդ Թումա է, գիտեմ նաեւ թէ ո՛ր կը հասնի քու սրտիդ ազնուութիւնը, բայց իմ անունս էլ Անկելինայ է,— ըսաւ Տիկինը հեզութեան ծիծաղով: Եւ յանկարծ կերպարանքը փոխելով՝ շտկուելով եւ սլաքի պէս աչքերը փայլեցնելով,— ի՛նչ եւ ո՛ւմ կը պարծիս թէ խնամք, հոգ եւ զոհողութիւն ունեցեր ես իմ վրաս, եւ այս վիճակի ես հասուցեր. քու շահուող համար՝ քեզի պատուանդան շինելու համար իմ գեղեցկութիւնս, իմ մարմինս, զիս՝ որք քոյր մը՝ ամիր սնուցիր, ինչպէս այդ որք թշուառ աղջիկը քու ապագայ անարգ պազշտութեանց յագուրդ պատրաստեցիր: Երանի թէ քեզ նման եղբայր չունենայի, եւ գեղացի աղջիկ մը պարզ ու համեստ մնայի:

— Ո՛վ կարգիլէ քեզ դարձեալ պարկեշտ ու համեստ լինիլ, քաշուիլ գիւղի մը մէջ, սոխ սխտորով ապրիլ, անատակ պերճութիւնդ ուրանալ, հաստ կապերտի մը վրայ ընկողմանիլ, փոխանակ արքայական զգուանաց՝ կոպիտ էրկան մը բռնցի հարուածներուն տանիլ, փոխանակ բռնաւոր տիրուհի լինելու խոնարհ աղախին...

— Տէ՛, տէ, երկայն ճառերու պէտք չի կայ: Որովհետեւ ուզեցիր եւ ջանացիր զիս բռնաւոր տիրուհի մը ընել՝ դու պէտք է հնազանդիս իմ կամացս եւ իմ հաճոյիցս:

— Այ՛ ս աստիճանի կ'իջեցնես զիս, Անկելինայ:

— Այո, այս աստիճանի:

— Բայց վերջը կը գոջաս:

— Յիմա՛ր, անմիտ մարդ: Չե՞ս իմանար, չե՞ս տեսներ, որ ել քեզմէ զօրաւոր եմ. մոռցա՞ր թէ ինչ որ ես եւ եղեր ես իմ շնորհիւքս է, եւ ինձի՛ կը սպառնաս: Դո՛ւ վատ եւ անպիտան՝ զօրավար լինելու մա՞րդ էիր առանց իմ կամացս, դու պատճառ Հայաստանի Բանակին պարտութեան եւ առաջին փախստական, ինչպէ՛ս պիտի արդարանայիր Պրոկոպիոսի ամբաստանութենէն եւ զինուորական դատաստանեն, եթէ իմ ազդեցութիւնս չի հասներ, դու գող աւագակ, որ բանակներ անօթի, անզէն թողէր էիր, եւ իմ շնորհիւ քեզմէ հաշիւ պահանջողներուն բերանը կարկեցաւ: Եւ հիմա ելեր ի՞նձ կը սպառնաս:

— Բայց դու կը մոռնա՞ս, Անկելինայ, որ մենք միմակ ենք այս սենեկիս մէջ, եւ ես սուր մը ունիմ...

— Մո՛ւր ունիս դու եւ ինձ կը պարծենաս, յիմար, բիւր անգա՛մ յիմար: Այդ սուրովդ գնա ուրիշներուն պարծի՛ր: Նայէ՛, դա աս գաւաթին եթէ ձեռք դպցնես, քովեն անցնիս՝ ես հեռուէն կանցնիմ. դու կրնաս թունաւորին քու այդ քաշուքիւնդ գիտեմ եւ փորձը տեսեր եմ. բայց սո՛ւր քաշել, քաւ՛ լիցի, քեզի պէս քաշ զօրավարի գործ չէ:

Բայց շա՛տ եղաւ, Անկելինայ:

— Մանաւանդ թէ շատ քիչ եղաւ. եւ եթէ ուզես դեռ շատ բան կրնամ գտնել խօսելու:

— Բայց դու, սիրական քուրիկս, զրուցէ անգամ մը թէ ի՞նչ կրնաս ընել ինձ, որ կը պարծիս թէ զօրաւոր ես:

— Հա՛, այդպէս անուշ խօսէ, թատերական ձեւերդ մոռցի՛ր, երբ ինձ հետ ես: Աղուէս, առիւծ մի՛ ձեւանար, կատու, օձու պէս մի մոնչէր. քու հին արհեստդ ձեռք ա՛ռ, սողուն, գետինը գալարիր որպէսզի թունաւորես:

— Ես չեմ ուրանար թէ անզգամ մեմ, բայց դուն էլ, Անկելինայ, ինձ արժանի քոյր ես:

— Այո այս նաեւ ճշմարիտ է, միայն հոն է մեր երկուսին տարբերութիւնը, որ դու ի բնէ անպիտան ու վատ ծնէր ես, իսկ ես ինչ որ անզգամութիւն ունիմ քու չարութեանդ հետեւանքն է, եւ վտանգի առջեւ գոնէ անխռով քաշուքիւն ունիմ:

— Ո՛վ իմ սիրելի քոյրս ինչչա՛ փ ազնիւ յատկութիւնք ունիս, ինչչա՛ փ առաքինութեանց եւ մոլորութեանց խառնուրդ ես...

— Լո՛ւ, թո՛ղ ձեռքս, մի՛ հպիր ինձի, հեռո՛ւ:

— Կը վախես ինձմէ՝ քու մէկ հատիկ եղբորմեդ:

— Թումայ, լաւ համոզուի, որ քեզմէ չեմ վախեր, եւ ինչո՞ւ, զիտե՞ս:

— Ինչո՞ւ:

— Ստութեան, խաբէութեան սատանայ, չգիտե՞ս. ես քու մտքիդ մէջինը գիտեմ, եւ դու չդիտե՞ս: Լաւ, զրուցեմ, որ գոհ լինիս: Ես քեզ պէտք եմ, առանց ինձ դու ոչինչ ես, այդ բանին համար սեպենք թէ վաղը դու յաջողիս զիս թունաւորել եւ ես մեռնիմ, ո՛վ քեզ պիտի պաշտպանէ. ահա միմիայն պատճառը, որ ես իրաւունք ունիմ քեզմէ չի վախելու: Դեռ երէկ կայսրը կ'ըսէր ծիծաղելով. «Եղբորդ պէս վատթար զինուոր եւ անամօթ գող հաստ մէլ չի կայ բոլոր կայսրութեան մէջ: Քու սիրոյդ համար միայն կարելի է համբերել, եթէ ոչ տասն անգամ կախաղանի դատապարտուած էր մինչ հիմա»:

Իրաւ, այդպէ՛ս ըսաւ կայսրը:

— Անամո՛թ, դու կը ծիծաղիս այս լսելով, եւ ես ամաչեցի: Տե՛՛, գլուխս ցաւ մտաւ, շատ խօսեցայ հետդ եւ կիրք էլ ելայ, որ չէր արժէր: Ահա քեզի կը պատուիրեմ կրկին եւ կրկին. ոչ մարդու առջեւ, ոչ առանձին այդ հայ աղջկան մագին, զգեստնին պիտի չի հպիս. վա՛յ քեզ եթէ լսեմ եւ իմանամ: Աղջկանը կ'իմացնեմ, որ մինչեւ քու նայուածքդ ինձ իմացնէ, զիս մի պարտաւորէր խստութեան: Իմացա՛ր, կրնաս երթալ:

— Լաւ՛, ես յանձն կառնում այդ գոհողութիւնն ըսել եւ այդ գոռոզ հրամանաց զիջանիլ, բայց գոնէ զրուցէ ինձ, ի՞նչ է միտքդ:

— Էհ, շատ երկայն եղաւ այս խօսակցութիւնը եւ դու գիտես թէ քանի մը տարիներ կան ոչ Փիլակրիոսի, ոչ քեզի խորհուրդ հարցնելու պէտք չեմ զգացեր, եւ ոչ իմ մտածութիւնքս յայտնելու:

— Յանցանք իմն էր, որ քեզի պէս գազանի մը յանձնեցի աղջիկը, իբրեւ թեւ մարդ կը պակսեր, ըսաւ Թումայ՝ ելաւ եւ սկսաւ երթալ:

— Զրուցէ ինչ որ կ'ուզես, բայց մի՛ մոռնար իմ պատուերս, զի վերջը կը գոջաս...

Իսկ երբ եղբայրն անհետ եղաւ, իր գոռոզ գլուխը շարժելով կ'ըսէր ինքնիրեն. «Յիմարնէ՛ր, չեն իմանար թէ երբ իմ ապագան կ'ապահովեմ, իրենցն ապահոված կը լինիմ»:

ԳԼՈՒԽ ԺԳ

Դու, որդեակ իմ շէրմէս, դու իմ յոյս գեղանի. Դու պտուղ իմ երկանց՝ յարատեւ վաստակոց, Նպատակ սիրելի տասնամեայ իմ հրսկմանց, Որ այնչափ ծանր՝ անուշ խրնամք ինձ արժեցիր, Մըտերիմ բերկրանաց եւ դարման իմ վըշտաց. շեռաւոր ծովերու՝ հեռաւոր հողերու, Անուշիկ իմ ընկեր անստոյգ քայլերու, Ով որդեակ իմ, այսօր ինչ է քո ճակտի գիր:

ԱՆԴՐԷ ՇԷՆԻԷ

Թումա իւր քրոջ այս բռնութեան կամայ, ակամայ հնազանդիլ պարտաւոր եալ էր, ինչչափ որ հոգին ապստամբէր: Այն խօսքը՝ «Ես քեզմէ զօրաւոր եմ», լաւ կը հասկնար, վասնզի գիտէր թէ իր ազնիւ քրոջ մէկ խօսքը բաւական էր զինք պաշտօնով կամ անպաշտօն Ափրիկէի կամ Աիկիլիոյ մէկ կողմը արքայութիւն տալու, ինչպէս քանի մը անգամ սպառնացեր էր. ուստի լռեց եւ համբերեց եւ հետաքրքիր՝ կը սպասէր իմանալ նպատակը:

Անկելինայ մէկ գիշեր փոքրիկ երեկոյթ մը տուաւ իւր պալատը: Կայսրորդին Կոստանդ միայն հրաւիրուած էր այս ընտանեկան հանդիսին. Արփենի իւր տարեկից եւ ընկերակից աղջիկներով, նորբ բեհեզներ հագած զանազան եւ նտորահնար կաքաւներ կը պարէին, որոնց համար մասնաւոր վարպետով վարժուած էին առաջուց: Պագշոտ եւ զերծ կաքաւփն՝ մեղկ եւ լկտի երաժշտութիւն մը կ'առաջնորդէր: Թագաժառանգ իշխանը դեռահաս պատանի՝ տանտիկնոջ քով նստած հազիւ թէ նորա փաղաքուշ խսաքերուն կը լսէր՝ իւր բոլոր ուշադրութիւնը՝ պարը, երաժշտութիւնը եւ սիրոյ լպիրշ երգերը զրաւած կին, եւ իւր երեսին գոյնը վայրկենէ վայրկեան կը փոխէին: Աչաց ակնարկն այդ մանր եւ թեթեւ կայթող ոտից հետ հիռ կու գար, այդ փափուկ մարմնոց ամէն բեկբեկ տատանմունքը իւր գլխուն համակիր շարժումներ կը պատճառէին, որ Անկելինայի դիւական աչքերուն գոհութեան ժպիտ կը բերէին: Ենք ուրախութեամբ կը դիտէր թէ

արքայազն պատանին արդէն սրարբեալ՝ յիմարեալ էր պագշտութեամբ եւ փոքրիկ հառաչանքներ կը խեղդէր. ուզելով զինք համարձակեցնել, ակնարկեց եւ անուշ ըմպելիք ու քաղցրահամ մրգերու սեղան մը բերուեցաւ: Իւր դիւթիչ ձեռք Տիկինն ինքը արքայազնին կը մատուակէր, որ վերջապէս չի կրնալով համբերել, եւ գինուով զօրացեալ՝

— Տիկին, ձեր հիւրընկալութիւնն անգին է, եւ այսպիսի գուարճութեան դեռ չէի հանդիպած, բայց ո՞վ է այդ նորահրաշ աչքերով աղջիկը, որուն նմանը չեմ տեսեր՝ եւ որ այնչափ լաւ կը պարէ:

— Դա որք, անտէրունչ օտար աղջիկ մէ, արքայորդի:

— Բայց ուստի՛ ձեր ձեռքն է ընկեր այդ հրաշալի ծաղիկը:

— Քանի մը տարի առաջ ինձ ընծայ ըրին, երբ փոքր էր: Կը ջանամ դաստիարակել, բայց չէք կրնար երեւակայել թէ ի՛նչ դժուարութիւն կը քաշեմ այդ բնութիւնը ճնշելու: Կ'երեւայ թէ իր լեռներուն ազատութեան վարժած եւ վայրենի ազնուականաց սերունդ, ամէն բանի արհամարհոտ եւ անտարբեր կակնարկէ:

— Եթէ դուք նաեւ չի կարենաք, ո՞վ կրնայ զինք ընտելացնել,— ըսաւ պատանին, տիկնոջ ձեռքը շողոքորթութեամբ բռնելով:

Իսկ Տիկինը իւր լուրջ հրամայական կերպն առնելով՝ երբ կաքաւը վայրկեան մը դադրեցաւ՝

— Չոյի՛,— ձայնեց. եւ երբ Արփենի մօտեցաւ իւր սեւ եւ գանգուր մագերն ուսն ի վայր ընկած, ճերմակ թուշերուն վրայ փափուկ կարմրութիւն մը եկած, եւ աննման աչքերը Տիկնոջ ու պատանուն յառեց, ուր յայտնի կ'երեւէր թէ երկիւղը միայն զբարկութիւնը կը սանձեր, Անկելինայ հրամայեց զինի մատուակել արքայորդուն, Արփենի տուաւ դինին եւ քաշուեցաւ, բայց այնպիսի կարմրութիւն մը աւելցաւ իւր երեսներուն վրայ եւ այնպիսի՛ կրակ մը փայլեցաւ աչքերուն մէջ, որ կինը ինք նաեւ զարմացաւ, եւ պատանին էլ զգալով դարձաւ՝

— Յիրաւի, Տիկին, անընկճելի բնութիւն եւ սքանչելի գեղեցկութիւն կ'երեւայ թէ միացեր են այդ ձեր փոքրիկ լեռնցիին մէջ:

— Մէկ-երկու տարիէ եւ խօսք կու տամ, որ այդ վայրենի էակը գառան պէս ընտելացեալ ձեզ կ'ընծայեմ:

— Մի թէ այդչափ երկայն ժամանակի կարօտ էք դուք. Տիկին,— ըսաւ երիտասարդը լեզուն քիչ-քիչ ծանրանալով եւ մարմնած աչքերը գոցելով... Երաժշտութիւնը քաղցր օրօրի հնչիւններ կ'արձկէր, երբ պատանին փետրալից բարձերուն մէջ խոր քունի ընկղմեցաւ տակաւ առ տակաւ:

Ան ատեն երաժիշտք եւ կաքաւ դադրեցան, լոյսերն սկսան խաւարիլ, եւ չորս մաքուր սպասաւորք ամենայն գոուշութեամբ իւր բազմոցով իրեն համար պատրաստուած անկողինը տարին զարքայորդին:

Երբ Թումայ, Փիլակրիոս եւ Վաղենտինոս՝ որ սորայ զինակիրն էր՝ գեղեցիկ երիտասարդ մը՝ մինակ մնացին, Անկելինայ ոտք ելաւ եւ գոհ ու գոռոզ ակնարկ մը ձգելով ըսաւ Թումայի.

— Յիմա՛ր, կ'իմանա՞ս հիմա թէ ինչչա՛փ սրամիտ եւ հեռատես եմ:

Եւ երեքին հաւասարապէս՝

— Դուք միայն ոսկի դիզել եւ ձեր անարդ կիրքերը յագեցնել գիտէք, իսկ ես վաղն էլ կը մտածեմ եւ կը հոգամ:

Փիլակրիոս ամենեւին ձայն չի հանեց, իսկ Թումա իր քոյրն մէկդի առնելով եւ իր սովորական ծիծաղով հծծելով, ըսաւ.

— Միթէ՞ կայսրը մահուան դատապարտուած է, որ թագաժառանգը այսչափ նախահոգութեամբ կը մեծարես:

— Ո՞վ է անմահ, յիմա՛ր:

— Մեր անարգ կիրքերը, որ կ'ամբաստանես, իրաւունք ունիս, իսկ Վաղենտինոսի համար քու զգացածդ ինչ աստիճանի ազնիւ է, իմ առաքինի եւ սիրուն քուրիկս...

Հարցուց Թումա ծիծաղելով, բայց շուտ մը ետ քաշուեցաւ, վասնզի նկատեց, որ իւր առաքինի քուրիկը իրեն լաւ ապտակ մը կը պատրաստէր:

Այդ փառասէր եւ իշխանութեան փափագող կինը, որ Յուստինիանոսի Թէոդորա կայսրուհին միայն կը յիշէր եւ նորա վիճակը կ'երեւակայէր ու այդ ապագան պատրաստելու համար կ'աշխատէր, տեսնենք թէ ինչչափ յաջողեցաւ...

Պարահանդէսին վրայ մէկ-երկու շաբաթ անցաւ, Ջաւէն ամէն օր կ'երթար յարմար նաւ մը նայելու, եւ առաւօտները կը սպասէր իր Արփենին տեսնել: Ուրախութեամբ կը նկատէր աղջկան վրայ զգալի փոփոխութիւն մը, երրորդ եւ չորրորդ տեսութեան իւր հայերէնը բոլորովին գտած էր եւ իր վրայ վստահութիւնը բոլորովին դարձած: Միտըր նաեւ հանդարտ էր, այն կողմանէ, որ Արփենի իրեն իմացուցեր էր թէ ինչպէս Տիկինը իրեն հրամայած էր, որ իր եղբօրը զգուանքէն հեռու կենայ եւ մերժէ:

Նաւը պատրաստ էր եւ միայն հարաւային քամիի մը կը սպասէր Ջաւէն, որ կ'ուշանար: Ուստի առաւօտ մը, երբ Ս. Սոփիայի հրապարակի կողմը գնացեր էր պտոյտ մընելու, տեսաւ ժողովրդեան մէջ յուզմունք կար, խումբ-խումբ բաժանուած ամբոխը, կը խօսէին գրգռուած. տեսաւ Անկելինայ տիկնոջ սպասաւորին հետ վիճող դրացի մարդը նստարանի մը վրայ ելած կը ճառեր, բորբոքած, սկսաւ ուշադրութեամբ մտիկ ընել:

«Այո՛, կ'ըսէր, արքայական զահոյից վրայ դուք կարծէք թէ Կոստանդին անունով կայսր մը ունիք, ոչ, շատ կը սխալիք, կին մէ, որ կը կառավարէ եւ ամէն կամքը կատարել կու տայ: Այդ կնոջ գրգռութենէն է, որ որդին հօրը Հերակլէսի գերեզմանը բանալ տալու յանգնեցաւ ականակուտ պսակը հօրը գլխէն յափշտակելու համար: Այդ կնոջ անյազ գրգռութեամբ է նաեւ, որ Մարտինէ կայսրուհւոյն եւ նորա որդւոյն՝ օրինաւոր ժառանգին համար պատրիարքին պահեստի յանձնուած դրամը պահանջուեցաւ եւ արքունի գանձը գրաւուեցաւ: Դեռ ձմեռուան սկիզբն ենք, թանկութիւնը կը տիրէ, այս ձմեռ սովէ պիտի ջարդուինք եթէ այդ կնոջ թագաւորութիւնը տեւէ...»:

— Ո՞Յ է այդ կինը, անունը՛, անունը գրուցէ մեզի,— կ'աղաղակէին հազար ձայն միաբերան:

— Փիլակրիոսի կինն է, Անկելինան, որ երկանը եւ եղբօր Թումայի հետ բաժնէր են թագաւորութիւնը, ցորենի շտեմարանները գրաւէր եւ արգիլէր են, որ պաշար չի մտնէ քաղաքը. երեւակայեցէք, ժողովո՛ւրդք, եթէ այս վիճակը տեւէ աղքատն ի՞նչ կը դառնա...

Զաւէն այս խօսքերուն համբերութեամբ ուշադրութիւն ըրաւ, եւ տեսնելով շուրջ ժողովրդեան գրգռութիւնը եւ մոնչիւնը... ճղքեց ամբոխը եւ վազելով ծովեզր իջաւ, նաւակ մը վարձեց մտաւ մէջ եւ Փիլակրիոսի պալատը գնաց՝ նաւակին սպասել ապսպրեց: Ապահովութիւն եւ հանդարտութիւն կը տիրէին ներսը, մտաւ գաւիթը, եկաւ ցամաքային դուռը, տեսաւ պահապան զինուորները զինաթափ եւ անհոգ նստած կամ իրենց գործերով զբաղած, վասնզի տանուտէրք դէռ պատկած կամ նոր ելած էին. մեծաւ ուշադրութեամբ ականջ կը դնէր եւ փողոցի երկայնքին կը նայէր դարուէր. ամպի պէս մթութիւն մը տեսաւ գագաթը, որ կ'իջնէր, կը մօտէր. առանց դռնապանին թան ըսելու մտաւ ներս հանդարտութեամբ, ելաւ սանդուխներէն վեր՝ տնտեսին սենեակը ուղղուեցաւ. նեղ սրահ մը կար ուստի փողոցը կ'երեւար. հոն՝ պատուհաններուն առջեւ կեցած՝ նայեցաւ, որ ամպը մարդկային ամբուխ դարձեր էր եւ կը յառաջանար: Սպասեց, մինչեւ որ աղաղակները բարձրացան եւ Լսելի եղան, այն ատեն մտաւ տնտեսին քով միամիտ ձեւ մը առնելով՝ «Դուրսը փողոցը կարծես խառնակութիւն մը կայ»,— ըսաւ, իսկ նա՝ «Պահապան զինուորները միթէ՞ վարը չեն»,— հարցուց անհոգ կերպով: Զայներն աւելի բարձրացան, պալատին դռները շառաչմամբ փակուեցան, եւ դրսէն սպառնալիքներ սկսան լսուիլ: Տան բոլոր բնակիչքը մեծ եւ փոքր սենեակներէն դուրս թափեցան, Տիկինը կիսամերկ, մաղերը ձգած տեղեկութիւն կը հարցնէր. իշխանը եւ Թումա «ի՞նչ է, ի՞նչ եղանք» կ'ըսէին: Իսկ վարեն պահապանք գոնէրը կ'ամբաստնէին, ծառաները շփոթած չէին գիտէր թէ ի՞նչ ընեն, աղախինք լալով «Տէր ողորմեա» կ'ըսէին, տնտեսը Զաւէնի հետ կը խօսէր շուտ մը արկղը բանալով իւր գրպանները լցուց դրամով, եւ Զաւէնի նաեւ երկու քսակ «առ դու էլ ասոնք» ըսելով ձեռքը խօթեց: Իսկ սա իբրեւ թէ այս բանիս համար կեցեր էր, հանդարտութեամբ ծոցը դնելով քսակները՝ դուրս ելաւ այդ շփոթեալ անձանց մէջէն, եւ յանկարծ տեսաւ Արփենին, որ ապշէր, մնացեր էր. «Քայլէ, աղջիկս, եկ իմ ետեւես պարտեզ»,— ըսաւ եւ սկսաւ սանդուխներէն իջնել արտորնօք: Արփենի նոյնպէս վազելով հասաւ իրեն, ան ատեն մտուց իր հիւղիկը, աւաւ նորա համար պատրաստուած մանչու զգեստները, փակեղն անցուց գլուխը մազերը մէջն ամփոփելով եւ իջան նաւակը, որ իրենց կը սպասէր: Ասիական քաղաքը տանիլ հրամայեց Զաւէն նաւավարին, եւ նաւն ուղղուեցաւ դէպի պալատը, վասնզի հոսանքը կրնար զիրենք դուրս նետելի ուստի դողալով Արփենինին համար, որ յանկարծ չի ճանաչուի, իւր մեծ վերարկուն քաշեց լաւ մը իւր գլուխը եւ տղան էլ ծածկեց կիսով, եւ ժամ էր, վասնզի ահա իրենց ետեւէն երկու մեծ-մեծ նաւեր կու գային, որոց առաջինը եօթ ջուխտ կը թիավարէր եւ երկրորդը հինգ ջուխտ: Առաջինին մէջ Փիլակրիոս, Տիկինը եւ Թումա նստած էին, իսկ երկրորդին մէջ աղախնայք խառնիխտուն իրարու վրայ լցուած: Այս նաւերը նետի պէս կ'երթային, մանաւանդ առաջինը, եւ երկիւղը զիրենք այնպէս շուարել էր, որ Զաւէնի աղքատիկ նաւին նայելու անգամ ժամանակ չունէին:

Ծովը հանգարտ էր, երկինքը մառախլապատ, ուստի նաւավարը թողուց եւրոպական ավուները. ձկնորսի նաւերը միայն կ'երեւէին ծովուն վրայ եւ Խրիսուպոլսոյ իջնող նաւեր. ուստի Արփենին գլուխը Զաւէնի վերարկունէն դուրս հանեց.

— Զաւէն Հայրիկ,— ըսաւ կամաց ձայնով,— ազատեցանք:

— Փառք աստուծոյ, որդեակ,— պատասխանեց ծերը, եւ կը յիշէր այն օրն, որ չորս տարի առաջ դարձեալ այս աղջիկն առած կուրծքին վրայ՝ շողալով փոքրիկ լճակէ ազատէր էր: Եւ երկրորդ անգամն էր, որ Աստուած այս հրեշտակին ազատութիւնը իրեն կը շնորհէր:

— Հիմա զիս կը փնտռե՞ն,— հարցուց աղջիկը:

— Դեռ քեզ փնտռելու ժամանակ չունին, որդեակ:

Եւ իրօք այնպէս էր, վասնզի այդ կատաղի ամբոխը, որ դռները սկսէր էր կոտորտել եւ ներս խուժել, հազիւ թէ ժամանակ թողէր էր այդ պալատին տեսարց ծովին կողմէն փախչելու: Եւ զանկելինայ, զփիլակրիոս եւ զԹումա չի գտնելով՝ իւր կատաղութիւնը թափէր էր ամէն բանի վրայ, որ առջեւը կը տեսնէր: Այդ բոլոր բիւզանդական պերճանքը հարստութիւնը, կարասիքը խորտակեցան, աւար, կողոպուտ եղան խաժամուժին, եւ թէ որ զօրականաց խումբք չի հասնէին, տոմէր հիմն ի վեր կը տապալէր:

Իսկ Զաւէն Խրիստոպոլիս երբ ելաւ սկսաւ մտածել թէ ի՞նչ պէտք էր իւր սիրուն տղեկին. ուստի առանց աչքէն բաժնելու գնաց փոքրիկ անկողին մը ու ուրիշ ինչ որ պէտք էր առաւ եւ այդպէս գնաց մտաւ նաւոյ, որ Սեւ ծովու ափունքը քերելով պիտի երթար մինչեւ Տրապզոն: Ժամանակը ձմեռ էր. իր անձին համար չէր մտածէր զինուորը, բայց աչքը կը դարձնէր շարունակ այդ սիրելի աղջկան՝ որուն համար տունը, տեղը, իւր զակները ամէն բան թողէր թափառական ու պանդուխտ պտըտէր էր այնչափ ժամանակ, եւ հիմա գտնելով եւ այնպիսի հօր ձեռքէ յափշտակելովն ինքզինք լիովին վարձատրեալ կը համարէր. միայն այն կը խնդրէր աստուծմէ. որ ինչպէս դիրացուց իրեն այն օրը՝ դիրացնէ եւ խեղճ որբին համար այդ ճանապարհորդութիւնն ի հայրենիս:

Իւր աղօթքն Աստուած ընդունեց. Պոնտոսի ծովը իր սեւ կերպարանքը չի ցցուց սիրուն աղջկան. ձմեռուան յունուար ամիսը աշնան ցուրտ օրերուն պէս անցան եւ Ճորոխի եզերքն ի վեր ճանապարհորդելով հասաւ Տայոց գաւառը, եւ հոն առաջին անգամ յայտնեց Արփենիի սեռը Բագրատունեաց Տիկնոջ, եւ զգեստները փոխելով եւ խումբ թիկնապահաց հետն առնելով՝ այնպէս Մամիկոնեանց Օրիորդը տարաւ Շիրակ Կամսարականաց դղեակը Երազգաւորս, իւր մօրեղբօր Սուրենի եղբօր՝ Ներսէի իշխանին յանձնեց:

Հայաստանի վիճակին վրայ դեռ չի խօսած՝ նոյն միջոցին Կոստանդնուպոլիս ինչ վիճակ որ ունեցաւ այն պատմենք համառօտի:

— Կոստանդին հազիւ թէ հօրն աթոռը բարձրացեալ՝ իւր ազահութեան ոգին յայտնի ըրաւ, ինչպէս տեսանք, հօր գերեզմանը կողոպտելով եւ մորուին համար պահեստի դրամը բռնի յափշտակելովէ Իսկ Մարտինէ կայսրուհին, որ համբերութեան առաքինութիւնն չունէր՝ շուտ մը փոխարէն աւելիով հատոյց. թունաւորեց զկայսրը եւ որդին Երակլեակ աթոռը նստեցնելով, Կոստանդին երկու որդիքը կրօնաւորաց վանք փակել տուաւ եւ նոցա կողմնակիցքը հեռացուց պաշտօններէ:

Կոստանդինի թագաւորութիւնը երեք ու կէս ամիս տեւեց. իսկ Մարտինէի որդւոյն թագաւորութիւնը ութն ամիս տեւելէն ետք՝ Օերակոյտին վճռով եւ զինուորական յայտնի ապստամբութեամբ մը, որու զլուխ Վաղենտինոս էր՝ վերջ առաւ: Մարտինէի լեզուն եւ Երակլեակի քիթը կտրելէն վերջ՝ տէրութեան հիւսիսային սահմանազլուխը արքայեցին, եւ Կոստանդին անդրանիկը Կոստանդ կայսրը եղաւ եւ հօր անուամբ զինք Կոստանդին կոչեցին: Վաղենտինոս տէրութեան ինամաձու եւ մեծ հազարապետ անուանեցաւ եւ Անկելինայ դարձեալ կը թագաւորէր:

ԳԼՈՒԽ ԺԴ

Լցաւ քաղաքդ գաժկանօք, քաղաքդ պերճացեալ. վիրաւորք քոյ՝ ոչ վիրաւոր սուսերի, եւ ոչ դիակունք քոյ՝ դիակունք պատերազմաց: Ամենայն իշխանք քոյ փախստեայք, եւ կալանաւորք քոյ կապեալք սաստկութեամբ եւ հզօրք քոյ առ հասարակ կապեցան, բացէ ի բաց փախստականք: Վասն այտորիկ ասացի, թոյլ տուք ինձ լացից դառնապէս, մի բռնադատեք միսիթարել զիս ի վերայ բեկման դստեր ազգի իմոյ:

ԵՄՍՅԻ

Այս գրքիս սկիզբը կը յիշեն ընթերցողք թէ ինչպէ՛ս Պրոկոպիոս Յունաց Սպարապետը իւր անհոգութեամբ կորուսեր էր պատերազմը ի Կոզովիտ եւ զօր ժամանակին պատմիչք անուանեցին Մարդոցէից պատերազմ, եւ թէ ի՛նչ աներակք, կոտորաւք եւ գերութիւնք հետեւանք եղան այդ պատերազմին: Պատմեցինք նաեւ Թէոդորոս Ռշտունի ինչպէ՛ս կը ջանար այդ վիճակը դարմանել եւ նոյնանման արաբացի արշաւանաց առաջն առնուլ:

Երեք տարի անցան այն դժբախտ օրերուն վրայ, հազիւ թէ երկիրը քիչ մը ոգի առաւ եւ սկսաւ շնչել. աշնան վերջի օրերն հասան. Հայոց զօրավարը Հերակլի մահուան լուրն առնելով կը յուսար նորապսակ կայսեր օրով Վարազտիրոցի աքսորէ դարձը, մանաւանդ որ մասնաւոր նամակաւ իրեն կ'իմացնէին թէ կայսրը մահուան անկողնին մէջ իւր յաջորդին կտակաւ յանձնէր էր վերջ տալ Ասպետին աքսորանաց: Ուստի հանդարտ սրտով դարձաւ Ռշտունեաց երկիրը ձմեռելու: Երկրին ապահովութեան համար Արտագու եւ Նախջեւանու գաւառները յանձնեց Ներսէի Կամսարականի, որ բաւական զօրքով եւ Անձեւացեաց օգնութեամբ կրնար ամէն թշնամիներէ պատսպարէի իսկ Տարոնոյ կողմէն Մամիկոնէից վրայ վստահանալով, այնպէս կը յուսար թէ վտանգ չի կայ:

Երբ հազիւ Ոստան մտած՝ կը յուսար հանգչիլ իւր ընտանեաց ծոցը, գուժկանը կը հասնէր Վահան Կամսարականի կողմէն, որ եղբօրը տեղակալն էր՝ թէ արաբաց բանակ մը Անձեւացեաց Սահուռ իշխանին մատնութեամբ եւ օգնութեամբ մտաւ Արտագ: Թէոդորոս առանց դանդաղելու առաւ զօրքը եւ հազիւ Քաջբերունեաց երկիրն հասած՝ գուժկան մէլ կը հասնէր Տարոնոյ կողմէն թէ ուրիշ արաբացի բանակ մը եւս անարգել անցեալ կը դիմէր Դուին առաջնորդութեամբ Սոկաց նախարար Վարդիկի:

Շուարեցաւ Թէոդորոս, ո՛ր կողմ պէտք էր դիմէի թշնամի՞ն պէտք էր մտածել թէ ընտանին, որուն վրայ կարելի չէր վստահիր Բայց անխռով կերպարանք առնելով շարունակեց իւր ճանապարհը եւ մտաւ Արտագու դաշտը՝ օգնելու Վահանայ: Մակայն մատնութիւնը ամէն բան խանգարէր էր, Սահուռ Անձեւացեաց նախարարը ոչ միայն առաջնորդէր էր թշնամեաց, այլեւ պատերազմի ժամանակ հարց՝ իր եղբարցը վրայ դարձնելով զէնքը սկսէր էր ահազին կոտորած հասցնել, թէպէտ իր արժանաւոր պատիժը գտեր էր Տիրան քաջ իշխանի մը սուրին բերանն ինկնելով, որ թշնամեաց բազմութենէն պաշարեալ զոհ եղեր էր վեջապէս քաջութեան: Վահան քանի մը քաջերով թշնամեաց բազմութիւնը ճեղքելով հազիւ ազատած կոտորածէն՝ Թէոդորոսի բանակը եկաւ:— Այս փախստականք զօրութեամբ չէին, վասնզի ահաբեկեալ՝ երկիրդ կ'ազդէին զօրաց իրենց թշուառ պատերազմին պատմութեամբ. բայց Թէոդորոս շարունակեց իւր ճամփան՝ հետամուտ լինելով թշնամոյն, որուն հասնիլ անկարելի եղաւ, վասնզի՝ ինչպէս ժամանակակից պատմիչ մը կ'ըսէ. «Օդաթեւ արագութեամբ իբրեւ օձք թունաւորք արձակեալք եառաջկին թշնամիք եւ զկնի իւրեանց թողին զօրս Հայոց»: Եւ այսպէս կը յարձակէին Դուին քաղաքին վրայ

Կոգովտե անցնելով: Երեք իշխանք միայն, որ մնացեր էին ցրուեալ զօրքը ժողուեղու՝ Թեոդորոս Վահեունի, Խաչեան Առաւելեան եւ Շապուհ Ամատունի՝ որ կործանեցին Մեծամորի կամուրջը եւ գնացին լուր տալու քաղքին:

Անգէն եւ պատերազմի անվարժ ժողովուրդն ամէն կողմէն ապաստանեցաւ բերդը, եւ թշնամին Մոկաց իշխանին առաջնորդութեամբ անցաւ Երասխը եւ եկաւ բանակեցաւ Խոսրովու անտառին եզերքը: Հինգերորդ օրը արաբացիք մեծ կրակ վառեցին պարսպին տակ եւ մուխով ու նետաձգութեամբ հեռացուցին պահապանները եւ սանդուխներով ելան տիրեցին պարսպին, բացին դռները եւ ներս խուժեցին: Տասներկու հազար մարդ ջարդեցին, երսունհինգ հազար տղայք ու կանայք դերի վարեցին, եւ քաղաքն աւարեցին ու կողոպտեցին: Եւ նոյն Կոգովտի ճանապարհը բռնեցին ետ դառնալու համար:

Թեոդորոս Նախջեւան իմացաւ թշնամույն արարքը եւ բազմութիւնը: Թէեւ զօրքը բաղդատմամբ շատ քիչ էին, չի կարենալով համբերէք անցաւ սպասեց իրենց ճամփան Կոգովտի՝ յարձակեցաւ իրենց վրայ եւ արինահեղ պատերազմէ մը վերջ շատ զօրք կորսնցնելով պարտաւորեցաւ ետ քաշուելու, եւ աւազակաց ազգն ազատ համարձակ գնաց Ասորեստան ողբ, արին եւ աւերակ թողով ետին:

Հայաստանի այս պատուհասին վրայ աւելորդ է երկար գրել, ժամանակակից պատմիչի մը այս խօսքերը բաւական կը համարինք. «Եկեղեցիք քանդեալ եւ քայքայեալ, քահանայք խողխողեալ, տիկնայք փափկասունք որոց ոչ էր առեալ զփորձ նեղութեան գանալից—թքոք թշնամանեալ եւ քարշէալք ի հրապարակս՝ զկականումն ողբոյ բարձրացուցանէին վասն յեղակարծումն օրհասին Այլ եւ աշխարհախումբ բազմութենէն ըմբռնեալք ուստերօք եւ դրստերօք ի նոյն վտանգս, եաճախէին զհառաչանս եւ զհեծութիւնս, զի ոչ գիտէին զօ՞ր առաւել ողբացեն, զխողխողեալս եթէ զկենդանուոյն ազատեալս զուստերս եւ զդստերս օտարացեալս ի Քրիստոս...»:

Իսկ Թեոդորոս Կոգովտի բարձանց վրայէն դառնացեալ կը նայեր ոչ միայն եղած աւերակաց վրայ, այլեւ այն ապագայ դարերուն վրայ, որ դեռ աւերակներ պիտի բերէին եւ անապատը պիտի ընդարձակէին, վասնզի յայտնի երկու դաւաճանք այս դժբախտութեանց պատճառ կ'երեւէին, եւ գաղտնի ուրիշներ ստուերներու մէջ կային, որ չէին երեւեր: Ո՛ր էին Մուշեղ եւ Հմաեակ Մամիկոնեանք, ինչո՞ւ չէին շարժեալ, երբ թշնամին իրենց երկիրը կը մտնէր: Իսկ նոքա, որ եռանդուն խոստմունքներ ըրած էին՝ իշխանք Սպերացոց, Բագրատունեաց, Մանանաղեաց, Դարանաղեաց եւ Եկեղեաց գաւառին, իշխանք Վանանդայ եւ Դիմաքսենից, ոչ ուրեք չէին երեւեր. նոյն Արարատայ կողման ազատախումբը՝ Առանեանք, Վարաժնունիք, Գնթունիք եւ Սպանդունիք հազիւ թէ ակամայ եւ առ երեւոյթս կը շարժէին: Վրացիք, Աղուանք եւ Սիւնիք միայն հաւատարիմ իրենց միաբանութեան գունդագունդ կը հասնէին, բայց հարուածն արդէն եղած էր: Արաբական հրաբուխի դժոխային գետը երկրին մէկ ծայրէն մինչեւ մայրաքաղաքը իր ապականիչ կրակով տոչորել էր:

Կոգովտի լեռանց պափարներուն մէջ՝ ծեր բարեկամ մը կար միայն մենացեալ, որ հայոց էն բարձր աթոռին վրայէն կամովին իջած զրպարտութեանց եւ քսութեանց պատճառաւ կ'ողբար առանձնութեան մէջ իւր ազգին վրայ, եւ նա միայն կը հասկնար Թեոդորոսի հառաչանաց մորմոքը:

Քրիստափոր կաթողիկոսն էր սա, որ ոչ ներկային եւ ոչ ապագային առջեւ արդարանալ չէր խնդրած, այլ մաքուր՝ իւր աստծոյն եւ խղճին առջեւ կը սպասէր ժամուն ելնելու աղետակից

կ'եանքեն, որ իրեն կաթողիկոսական պսակը փուչերով էր կազմել: Այս բարեկամին գնաց Թեոդորոս, ո՛չ միսիթարութիւն դռնէու, այլ իմանալով Եզր կաթողիկոսին մահը, խորհուրդ հարցնելու թէ ո՞վ կարելի էր ընտրել, եւ արժանաւորը: Քրիստափոր խորհուրդ տուաւ Տայոց եպիսկոպոս Ներսէսն ընտրել, որ աշխարհիս ամէն փորձերէն անցեր էր. զինուոր, զիտուն, տեղեակ աստուածաբանական ուսմանց, զործունէայ եւ առաքինի վարուք կրնար լաւ օգնական լինիլ իրեն, աշխարհաշինութեամբ եւ խորհրդով:

Ներսէս արդէն մեզ ծանօթ սպան է, որովհետեւ զինք տեսանք երբեմն Բագրատունեաց Թաւուսկերտի պալատը: Զանազան եւ իրեն միայն յայտնի պատճառներով քահանայական կեանք ընտրելով քաշուէր էր աշխարհքն: Բագրատունեաց Տիկինը բռնի զինք Տայոց եպիսկոպոս ձեռնադրել աւեր էր, եւ հիմա Թեոդորոսի հրաւիրելով՝ ժողուեցան նախարարք եւ եպիսկոպոսունք Դուին, եւ աւերակաց եւ դիականց վրայ զներսէս ընտրեցին կաթողիկոս:

Ազգաց վիճակին մէջ կան այնպիսի վայրկեաններ, որ պարտաւորութիւն ճանչցող մարդկանց իւելօքները կընկրկին՝ փառքն եւ պատուէ կը հրաժարին: Ներսէս աշխարհք տեսած՝ փորձ եւ սրամիտ մարդ էր: Կը տեսներ Հայաստանի մայրաքաղաքը կոյտ աւերակաց, գերեզման անթաղ եւ նեխեալ դիականց, բնակարան զիշակեր թռչնոց, ցանուցիր ի բնակչաց, նախարարք եւ իշխանք հարստահարող, կասկածոտ, տգէտ, նախանձոտ, քաջք միմեանց դէմ, վատք օտարին դէմ, ուստանիկք եւ ազատք խումբք աւազակաց եւ փոքրիկ բռնաւորաց, իսկ ռամիկք եւ շինականք անասնացեալ եւ խելագար եալ ի բռնութեանց եւ ի գրկանաց:

Այս տեսարանը զինք վիհատեցուց եւ հրաժարեցաւ, բայց նախարարաց՝ մանաւանդ Թեոդորոսի յորդորը մէկ կողմէն, իւր ընկերակից եպիսկոպոսաց մեծագոյն մասին անարժութիւնն ու սգիտութիւնը միւսէն զինք ստիպեցին եւ յանձն առաւ, եւ սկսաւ գործի: Թաղել տուաւ դիակունքը եւ գարշահոտութիւնը վերուց, այրած եկեղեցիները եւ կաթողիկոսարանը եւ հիւրանոցը նորոգեց, պարիսպներն ամրացուց, պարտեզներ եւ այգիներ տնկեց եւ Գառնօ գետէ ջուր բերաւ ոռոգելու համար: Դուին շունչ առաւ կենդանացաւ քանի մը տարուան համար, աւերակաց վրայ պալատներ, տուներ եւ շուկաներ բարձրացան, բայց գերիները չի դարձանք եւ ամէն տուն իր կորուստները կ'ողբար: Աստուծոյ պատուհասն է, կ'ըսէին բեմերու վրայէն քարոզիչք եւ վարդապետք, ժողովուրդը ապաշխարութեան եւ ողորմութեան կը յորդորէին, եւ ժողովուրդը ամէն զոհողութիւն յանձն կատնուր, երբ զոհը ինքն էր, իւր զաւակը, իւր կինը, իւր ծնողքը, իւր եղրայրքը եւ իւր քորքը, իր ստացուածով՝ պատուովը, որ զարմանք է թէ զգալու կարողութիւն դեռ ունէր:

Այո, այդ ազգին քով, զօր կրօնքը եւ գերդաստանի սէրը պահած են կորստենէ մինչեւ այսօր ընտանեկան պատիւը միշտ կենդանի մնացած է, եւ հայ կինը շրջագայ ազգաց հետ բաղդատմամբ աւելի խնայող եղած է իւր համեստութեան: Բռնաբարութիւն եւ յափշտակութիւն հօտարեն ի բաց առեալ՝ բարոյականի զեղծմունքը աւելի բացառութիւն եղած են հայուն քով:

Ուստի Դուին սկսաւ բարձրանալ իր աւերակաց վրայ, իշխանք եւ մեծատունք շինեցին եւ նորոգեցին իրենց ապարանքը կաթողիկոսին օրինակին հետեւելով. թէպէտ այն կնոջ կտաւն էր ամէն շինութիւն Հայաստանի մէջ, որ ցորեկը շինէր՝ զիշերը կը քակէր. հայը այս տարի կը շինէր՝ օտարը գալ տարի կը քանդէր:

Իսկ Թեոդորոսի նոյն միջոցին զօրավարութեան հրաման կը հասներ եւ Կոստանդնուպոլսոյ, բայց ի՞նչ էր հրաման մը որ զօրութիւն չունէր, երբ թագաւորեալ քաղքին մէջ անգամ անիշխանութիւն

կը տիրէր: Թէպէտ Ռշտունեաց Տէրը անվհատելի մարդ՝ կ'աշխատէր, կը յանձանձէր երկիրը ինամօք եւ ժողովուրդը զինք իրեն միմիայն ապաւին կը ճանչէր: Բոլոր այդ ձմեռն անցուց Այրարտայ գաւառը, ամէն տեղ բերդերն ամրացնել կու տար, բնակիչք կը յորդորէր քաջութեան եւ անձանց պահպանութեան եւ այնպէս դարնան կը դառնար Ռշտունեաց գաւառը մխիթարութիւն գտնելու իւր ընտանեաց մէջ: Եւ իր դարձը ոչ միայն ուրախութիւն էր իւր տան՝ այլ բոլոր Վասպուրականի. քանի-քանի՝՝ անգամ Աղթամարայ կղզին ապաստան եղած էր զանազան զավառաց, մինչ ինք Թէոդորոս պարթեւական պատերազմ կը վարէր թշնամույն դէմ, որ չէին զիտէր թէ ո՞ր ժամանակ աւելի վտանգաւոր էր, երբ առջեւին ներկա կը տեսնէին զի՞նք կամ երբ անհետ փախստական էր իրենցմէ:

Հիմա որ հազիւ կը հանգչէր եւ սիրտն ուրախութեան մէջ էր իմանալով թէ Բագրատունեաց Ասպետին հրաման եղած էր դառնալ հաքսորանաց ի Կոստանդնուպոլիս, յանկարծ զուժկան հասաւ թէ աբարացիք յարձակեցան Այրարատ, եւ Նախջեւան ու Երեւան կը պաշարէին: Առանց վայրկեան մը կորսնցնելու՝ պատրաստ գտնուած վեց հարիւր սպառազէն հեծելոց խումբը առաւ եւ հետեւակազօրը Ատոմ Շահունոյ յանձնեց շուտով հասնիլ Ետեւէն: Ոչ զիշէր կար այս արշաւանաց մէջ եւ ոչ ցերեկ, հազիւ թէ ձիուց կարելոր հանգիստ կը թողուր, ուստի լուր առաւ թէ թշնամին չի կարենալով ոչ Նախջեւանու եւ ոչ Երեւանու եւ ոչ բերդերու վնասել, եկեր պաշարէր էր Արծափու բերդը, ուր Մասեաց Ոտն գաւառին բնակչաց բազմութիւնն ամրացեր էին ընտանեօք եւ ինչիւք:

Արծափու բերդը իւր համանուն գետին առաջ շինած՝ լաւ ամրացեալ էր. արաբացիք տեսան, որ անելանելի ժայռերուն վրայէն քառասունի չափ զօրականք պաշարելոց օգնութեան հասան եւ մտան Դարոնից բերնէն: Նոյն զիշէրուան խաւարն օգնական առած իրենց, նոյն ճամփով սկսան վերելակէի եւ զանգոյշ պահապանքը քունի մէջ գտնելով կոտորեցին եւ տիրեցին պարսպին այն կողմին: Կիրակի առաւօտ մէր, երբ իրենց գազանային աղաղակը հնչեց ներսէն եւ դուրսէն, յիմար եալ պահապանաց շատերը սուրէ ազատելու համար գահավէժ կը մեռնէին, ոմանք փախստեամբ կ'ազատէին, իսկ կանանց եւ տղայոց բազմութեան լացն ու գոռում-գոչումը անբաւ էր եւ ողորոց արժանի: Երբ թշնամիք բոլորովին տիրացան ամրոցին, պատերազմող մարդիկը կապեցին, իջուցին բերդէն գերիներու եւ անասնոց անհամար բազմութիւնը, եւ տուին ինքզինքնին շուայտութեան՝ ուտելու եւ խմելու.: Եւ ահա հասաւ Թէոդորոս իր գնդով եւ դժոխային հանդէսը հազիւ սկսած՝ արեանց հեղեղին մէջ խեղդուեցաւ: Թէպէտ թշնամույն բազմութիւնը մեծ էր՝ բայց Հայոց զօրավարը ժամանակ չի տուաւ սթափելու. երեք հազար ընտիր սպառազէնք ինկան դիակնացեալ, փախստեցի մէկ մասը Ատոմի սուրին բերանը գացին, եւ հազիւ քանի մը հոգի րցան ազատիլ եւ հասնիլ Ասորեստան: Այս պատերազմին մէջ մեռան իրենց երկու զօրավարքը՝ Օսման եւ Օգմայ:

Գերիներու բազմութիւնն ազատեցաւ, եւ թշնամույն աւարեն հարիւր արաբացի նժոյգ յուղարկեց Թէոդորոս Կոստանդին կայսեր՝ ի Կոստանդնուպոլիս:

Թէպէտ նոյն միջոցին ուրիշ խումբ մը այս աւազակաց Տայոց, Վրաց եւ Աղուանից կողմը շատ վնաս կը հասցնէր աւար եւ դերի տանելով եւ աւերակաց կոյտեր ձգելով, բայց Թէոդորոսի Արծափայ պատերազմին յաղթութիւնն այնչափ մեծ էր, եւ այնչափ քաջալերիչ, թէ թշնամույն կոտորածին, թէ ազատաց գերույն բազմութեան եւ այնչափ քիչ զօրքով՝ այնչափ բազմութեան դէմ, որ վնասուն բաւական փոխարիներեց եւ մխիթարութիւն համարեցաւ:

ԳԼՈՒԽ ԺԵ

Չորս տարի կը, որ Հայաստան թշուառութեան մէջ կը հեծէր: Մեռեալները կը թաղուէին, զիրենք ծածկող հողը թէւ մոռացութեան թանձր վարագոյր չէր սիրելեաց սրտին համար, բայց երբ գերելոց հետ բաղդատուէին նոքա՝ ամէն հայ մարդ՝ «Երանի մեռելոց որ ի տէր ննջեցին» կ'ըսէր: Այն ատենուան ամենայն դասակարգի մարդկանց մէջ այսօրուան զօրաւոր գլուխները չէին ստեղծուած որ գորտերու սաղմի սերունդ համարէին մարդկութիւնը. եւ հայ ազգը, որ գերդաստանի սերը, նահապետական կեանքը միշտ պահած էր, իւր զաւակներուն վրայ կ'ողբար, որ շղթայակապ արաբական ճիւղին առջեւէն կենդանեաց նախիրներու հետ եւ պէսկը թողուին հայրենի երկիրը երթալու ծառայութեան, ուրացութեան եւ պղծութեանս մատնուելով:

Առաջին դերին երէն էին Գրիգոր եւ Սուրէն, զօրս մենք թողինք Դամասկոսի մօտ Շէյխ Ալիի պալատին մէջ: Ամառանոց մէր այդ գեղեցիկ պալատը՝ բնակարան երբեմն բիւզանդացի յոյն հարուստ իշխանաւորի, որ իր սկարութենէն տաք կլիմային դիմել պարտաւորեալ՝ ամենայն վայելչութեամբ զարդարած էր զայն: Ընդարձակ պարիսպ մը պտղատու ծառերու պարտէզ մը կը շրջապատէր, որու մէջտեղ քառակուսի բնակարան էր հաստատեալ հովանոցներով, եւ որ ներքին ծաղկոց մը ունէր եւ շատրուան: Այդ ներքին պարտէզին չորս կողմն էին սենեակները՝ իրենց դռներով եւ պատուհաններով: Եւ այդ քառանկիւն պարտէզին ներքին կողմն կանանոցին դուռն էր: Միայնակ էր տունն եւ Լիբանանու մայրեօք շինեալ. բայց կիսամերկ եւ բոկոտն արաբացին, որ նոր ելած էր իր աւագներուն մէջէն՝ դեռ չէր սովոր շինել՝ այլ քանդել միայն, ուստի շէնքն անխնամ առանց նորոգութեան սկսել էր ապականիլ: Տան դռան մուտքին մէջ քանի մը շղթայաւորեալ քրիստոնէայ դերիք իրենց բնակութիւնն ունէին, առաջ շատ էին, տասը-տասներկուք կը լինէին, բայց մահը, կօնափոխութեամբ ազատութիւնը, չորս տարուան մէջ իրենց թիւք երեքի իջուցեր էր. Գրիգոր, Սուրէն եւ Գագրիկ անուամբ հայ շինական մի կային:— Առաջին երկու տարին Սուրէն ժամեժամ կը սպասէր ազատութեան, միշտ յուսալով թէ Մամիկոնեանք եւ Կամսարականք իրենց փրկանաց գինը վճարելով՝ զիրենք կ'ազատեն այդ անտանելի գերութենէն, եւ այս բանիս համար քանի մը նամակներ յուղարկած էր Սուրէն Մամիկոնեանի եւ Հրահատ Կամսարականի իւր եղբօր, բայց անօգուտ ելնելով իւր ակնկալութիւնը, միտքը փոխեց՝ առերես ուրացութիւն յանձն առնուլ որոշելով, սկսաւ յորդորել զգրիգոր, որ վայրկենի մը համար յանձն առնուն այդ անօրինութիւնը: Այնպիսի դիմադրութիւն մը գտաւ եւ այնպիսի խիստ պատասխան ընդունեց, որ տարի մը նաեւ համբերեց եւ նոյն խնամքով կը հոգար իր սիրական քեռորդին, միշտ սպասելով դարձեալ, որ պատասխան կ'ընդունի հայրենի երկրէն: Չէր գիտէր ինչ մարդը, որ Կամսարականք խաբուած էին Սուրէնէ, որ Գրիգորի եւ Սուրէնի գերութիւնը լսելով՝ նոցա մահուան լուրը ամէն տեղ ջանացեր էր տարածել, իբրեւ թէ սուրհանդակներ հանած, լրտեսներ դրկած եւ Ասորեստան եւ Ասորիք իմացեր էր ստոյգը: Եւ այսպէս հաւատացացեր էր նաեւ Կամսարականաց, որ դրամի պէտք ունենալով՝ Սուրէնի ժառանգութիւնը ծախէր էին Բագրատունեաց, ինչպէս վերը իմացանք Յուսիկէ: Սուրէն տոկուն եւ ինչօք մարդ էր, ուստի տեսնելով վիճակը, իմանալով օրաւոր արաբաց յաջողութիւնքը եւ համարելով գերութեան տարիները, որ չորս կը լինէին՝ սկսաւ յուսահատիլ: Ուստի հարկաւոր սեպեց Գրիգորի հետ խօսակցութիւն մը նաեւ ունենալ, եւ որովհետեւ կը տեսնէր Գագրիկ թէւ շինական մարդ՝ Գրիգորի խելքէն էր՝ եւ հաստատ իւր կրօնից մինչեւ ի մահ: Ուստի առանձին Գրիգորի այսպէս խօսեցաւ.

— Որդեակ Գրիգոր ահա գրեթե չորս տարի է, որ մենք շղթայներու մեզ կապրինք, եւ այս վիճակին մէջ անցնել թէպէտ մեծ առաքինութիւն է, բայց պէտք է խոստովանիմ, որ մեր ազատութեամբ, երբ կրնանք օգտակար լինիլ մեր հայրենի երկրին, աւելի մեծ առաքինութիւն ըրած կը լինիմք:

Գրիգոր այս խօսքերուն ամենեւին պատասխան չի տուաւ, գիտենալով թէ խօսքին նշանակութիւնը եւ վերջաբանը ո՛ր պիտի յանգեր: Իսկ Սուրէն առանց շփոթելու նորա լռութենէն՝ դարձեալ հանդարտութեամբ շարունակեց.

— Դու լաւ գիտես, վասնզի արդէն այս բարբարոսաց լեզուն կը հասկնաս կատարեալ եւ կը խօսիս, որ ինչչա՛ փ աւար եւ գերի բերեր են Հայաստանէ այս օրերս, որ Դուին առէր այրեր են, որ մինչեւ հիմա քրիստոնէութիւնը ի՛նչ ահագին վնաս տեսած է այս գազաններէն՝ նստա բնակած տեղերնիս նաեւ կը վկայէ, որ քրիստոնէի բնակարան է եղեր քանի մը տարի առաջ. ուրեմն որը՞ լաւ է, այս գերութեան մէջ յամառութեամբ մեռնի՞լ թէ ազատիլ երթալ հայրենի երկիրը, կռուիլ նորա պաշտպանութեան համար եւ փառքով ու պատուով մարտիրոսանալով, նմանիլ մեր նախնեաց՝ Վարդանայ, Վահանայ, Արշաւրի եւ իրենց ընկերաց... Պատասխան չե՞ս տար:

— Ի՞նչ պատասխան կ'ուզես, որ տամ. եթէ այդ քաջերոմն կենաց մէջ մեծ յանցանք մը, մեծ արատ մը կայ՝ ուրացութիւնն է. եւ ես այդ յանձն չեմ կրնար առնուլ. մահն ինձ հազար անգամ սիրելի է:

— Այդպէս ըսէր էր ժամանակաւ քու նախահայրդ՝ Վարդան, բայց վերջն աւելի խոհեմութեամբ մտածելով՝ ազգին ու կրօնքին օգուտը վերադասեց, իւր յամառութիւնը թողեց եւ այսօր իւր անունը բոլոր Հայաստան կօրհնէ եւ կը փառաւորէ, վասնզի իւր ուրացութիւնը աւելի օգտակար եղաւ քրիստոնէութեան զէն ի ձեռին մեռնելով Քրիստոսի համար՝ քան թէ Հազկերտի դիմադրելով, մեռնէր դերութեան մէջ Սազաստան:

— Ես ո՞վ եմ ինքզինքս Վարդաններու եւ Վահաններու հետ բաղդատելու համար, նոցա համբար, օրինակը կրնային օգտակար լինիլ ազգին եւ եղան. իսկ ես երէկուան պատանի՛ անձանօթ ամէնուն...

— Ոչ այդպէս, որդեակ, մենք այս թշուառ վիճակին մէջ փորձառու եղանք իմացանք թէ ի՛նչ է գերութիւնը, երբ հայրենիք երթանք ոչ միայն պէտք է պատերազմինք՝ այլեւ օրինակաւ եւ խօսքով քարոզենք զինվիլ եւ զինել, ցոյց տանք թէ ռամիկ եւ շինական ամէնը պէտք է զին վին, եւ հետեւինք արաբաց օրինակին:

— Հիմա ո՛ր գիտէ թէ ինչ ունինք աշխարհքիս վրայ, ո՛ր գիտէ աւերմունք եւ յափշտակութիւն բան մը թողայ ծ են մեզ ժառանգութիւն:

— Այդպէս երիտասարդ կը յուսահատի՞ս շուտով. գերութիւնը քու սրտիդ կորովն սպաննէ՞ց: Տղա՛ յ, դու կարծես թէ ես աստից ելած օրս ձեռնունայն կ'երթամ հայրենիք, դու խօսք տուր երկչոտութիւնը թողուլ եւ ինձ հետեւիլ եւ այնպէս կը մտնենք Հայաստան, որ հայոց նախարարը ամէնքն ակնածութեամբ նային մեր վրայ:

— Չեմ դիտէր գաղտնիքդ եւ հետաքրքիր նաեւ չեմ իմանալու, միայն կը խնդրեմ քեզմէ, սիրելի մօրեղբայրս, որ զիս հանդարտ թողուս իմ խղճմտանքիս հետ...

— Դարձեալ այդ խղճահար յամառութեան մէջ պիտի փչացնե՞ս իմ եւ քու կեանքդ ի վնաս հայրենեաց: Եւ աստից վերջ թո՛ղ գրուցեն թէ ուսմունքը, ընթերցմունքը մարդս կը կատարելայ գործեն...

— Ի՛նչ կ'ուզես գրուցէ, իսկ Քրիստոսի «Որ ուրացի զիս առաջի մարդկան՝ ուրացայց եւ ես գնայ առաջի Հօր իմոյ» խօսքը չէ կրնար մոռնալ, որ կարծես կրակէ գիրերով աչքիս առջեւ կը փայլեն միշտ:

— Այդ խօսքերը դիտանալու չափ ես էլ կարդալ զիտեմ, բայց ահա այդտեղ է ձեզ պէս տղայոց կարճամտութիւնը, որ կարդացածնիդ չէք հասկնար եւ բաղդատելու կարողութիւն չունիք:

— Ի՞նչ կ'ըսես, մօրեղբայր իմ, այս խօսքերն որոշ եւ յայտնի են, մեկնութեան կարօտութիւն չունին:

— Ինչպէ՞ս չունին. Քրիստոս այդ խօսքը գրուցեց եւ հազիւ քիչ մը ժամանակ անցաւ՝ ահա Պետրոս իր աշակերտը ուրացաւ, եւ ոչ միայն ուրացաւ անպիտանը, այլեւ նգովեց ինչպէս գրուած է Աւետարանին մէջ...

— Բայց դու ձեռքդ դիրք չես առնուր, ուսկի՞ց գիտես այս բաները:

— Յիմա՛ր, ես քեզի եւ քու նմաններուդ պէս զուլիս հազար անպէտք խառնաշփոթ բաներով չեմ լեցնէր... պէտք եղածը միայն երբ կը լսեմ կը պահեմ եւ կը բաղդատեմ. բայց դու լաւ մտիկ ըրէ իմ խօսքս եւ պատասխան տուր:— Ես ըսի թէ այդ Պետրոսը, որ վատ զինուոր էլ էր նաեւ՝ ահագին սրով ականջ մը միայն կրցեր էր կտրել եւ Քրիստոսի աշակերտաց՝ Յուդայէն վերջ ամենէն անպիտանն էր՝ վասնզի նա միայն ուրացաւ, Քրիստոս զինք չուրացաւ եւ դարձեալ իւր աշակերտաց մէջ զինք ընդունեցաւ, եւ մենք Պօղոսի հաւասար զինք սուրբ եւ զլիաւոր առաքեալ կը դաւանինք...

— Բայց Պօղոս ուրիշ, Պետրոս ուրիշ...

Ի՞նչ ուրիշ, մենք կը տօնենք այդ երկուքը միւս սուրբ առաքելոց հետ, եւ որ զարմանալին է, «զլիաւոր առաքեալ» այս երկուքը կը համարինք, որոց մէկը կուրանայ եւ միւսը քրիստոնէնայք կը հալածէ: Քրիստոս, որ Աստուածէ, մեծասիրտ է, մարդկանց առերես ուրացութեան զիտէ ներել. այդ խօսքը գրուցէր է մեր աչքը վախցնելու համար ամէն վայրկեան ուրացութիւնը խաղալիք չընենք, բայց եթէ ինք մեր վիճակին մէջ գտնուէր...

— Տէ՛, մօրեղբայր իմ, հայեոյութիւն է ըրածդ:

— Տղա՛յ, դու լռէ՛, մտի՛կ ըրէ իմ խօսքս վերջացնեմ: Այսպէս ըսեմ, եթէ այդ առաքեալները մեր վիճակին մէջ գտնուէին՝ չորս տարի հայեոյութիւն, թուք ու մուր, ծեծ ու փետ, շղթայ էրող արեւուն եւ անձրեւին տակ քար, հող, աղբ կրել պարտաւորէին, արեւ՛ս վկայ, որ տասներկուքն էլ Քրիստոս կուրանային... Կա՛ց, խօսքս մընդհատեր... Եւ ի՞նչ մարդ էին այդ առաքեալները. Պարթեւաց ցեղէն իջած Կամսարականնէ՛ր էին, թէ Մամիկոնեանց Մուշեղներու, Վարդաններու, Վահաններու զակնէ՛ր. ոչ, այլ ողորմելի ձկնորսներ, որ իրենց արհեստը նաեւ լաւ չէին զիտեր, որ պզտի լճի մը տկար ալեկոծութենէն կը դողային, բարեբախտաբար իրենց համար, որ Քրիստոս ցաւեցաւ, փոքրաւոր առաւ զիրենք, վրանին հոգւոյն սրբոյ շնորհք բերաւ եւ առաքեալ եղան:

— Բայց Լուսաւորչի համբերութեան այնչափ տարի չարչարանաց եւ այնչափ տարի վիրապին մէջ...

— Տղա՛յ, Լուսաւորիչ մէկ հատիկ է սուրբերու մէջ, Լուսաւորիչ այդ անպիտան ձկնորսներուն հե՛տ կը բաղդատես. նա մարդու զաւակ՝ Պարթեւաց ցեղէն էր: Եւ աստուած, որ զինք պահեց եւ կրցաւ դիմանալ այդ չարչարանաց՝ իր վրայ մեծ՝ խնամք ունէր, Վիրապին մէջ հրեշտակներ կոպային զինք կը զուարճացնէին: Մենք ո՛ր, նա ո՛ր: Մեզի Աստուածիւնը աւեր է, կ'երթանք հիմա Շէյխի՛ն, կ'երթանք կ'ըսենք թէ մենք իրենց մարգարէն կընդունինք, սա շղթայներէն կազատինք, այն ժամանակ դիտեմ թէ ի՛նչ պէտք է ընել. նշան դի՛ր իմ խօսքիս, ութ օրէն Հայաստանի ճամփան կը բռնենք եւ առաջ աստուած՝ ամէն վտանգէ անցնելով կը հասնինք հայրենիք... Ի՞նչ կը մտածես, ահա ժամն է, խօսէ հիմա եւ պատասխան տուր... Եթէ կ'ուզես մինչեւ վաղն առաւօտ մտածէ, բայց դարձեալ քեզի կ'ըսեմ, Գրիգոր որդեակ, տասը տարի էլ մտածես՝ եթէ խելքի կշիռ չունիս, եթէ բան մը ուրիշ բանի մը հետ բաղդատելու, խելօքը խելառեն, լաւը վատեն, օգտակարը վնասակարէն որոշելու կարողութիւն չունիս, փուճ է ամէն բան, այստեղ կը փտինք:

— Բայց դու ազատ ես, մօրեղբայր իմ, դու քու ազատութիւնդ ինձ համար...

— Դարձեալ այդ յիմար խօսքն ինձ պիտի կրկնե՞ս: Ես՝ դու, չի կայ. միտքդ դիր թէ Սուրէն զքեզ չի կրնար թողուլ, քեզմէ չի զատուիր, մահ եւ կեանք մէկտեղ պիտի լինի: Ամէն բան պատրաստ է, միայն քու մէկ բառիդ կսպասէ եւ շաբաթ մը վերջ ազատ ենք:

Այս միջոցիս շղթայներու ձայն լսուեցաւ եւ Գագրիկ ամենայն յարգանքով մտնելով ըսաւ թէ՝ «Ձեզ կ'ուզէ վերակացուն, իշխանք», իսկ Սուրէն ծիծաղելով՝

— Մարդ,— կ'ըսէր,— դեռ չի կրցայ քեզ հասկցնել թէ մենք իշխան չենք, քեզ նման շղթայակապ գերիներ ենք, քեզի պէս հող, ջուր կը կրենք, քեզի հետ հացին պատառիկը կուտենք եւ քեզի պէս՝ աւազն է մեր անկողինը:

Իսկ Գագրիկ վիզը ծռելով՝

— Ի՞նչ ընենք, իշխան, այս անցաւոր աշխարհքին մէջ այսպէս որոշէր է աստուած,— պատասխանեց:

Ելան երկուքն էլ գնացին, եւ յիրաւի ծանր էր տեսնել Մամիկոնեանց եւ Կամսարականաց զաւկներ, որ կ'աշխատէին բեռնակրի պէս հաստ կտաւէ շապիկ մը միայն հագած, շղթայ մը ոտքերնին, որուն ծայրը մէջքերնուն գօտույ տեղ կապուած չուանին էր անցուցած. քրտինքն ճակատներէն կը վազէր եւ գլխնուն վերեւ կեցած բոկոտն արաբացի մը խարազան ի ձեռին տիրաբար կը հրամայէր նախատանօք եւ հայհոյութեամբ: Գրիգորի իւր քաշածեն աւելի ծանր էր տեսնել գտուրէն, որ լուռ եւ առանց տքալու այդ վիճակին կը տանէր, մանաւանդ այն օրէն ի վեր, որ ջանք ըրած էր զինք համոզելու առերես ուրացութեան. ուստի հիմա դարձեալ տեսնելով նորա անփոփոխ կերպը, դառնացեալ ըսաւ.

— Որովհետեւ այս վիճակը վերջ չունի, եւ մենք չենք էլ մեռնիր, որ ազատինք, ընենք ինչպէս կուզես...

— Որոշ, հաստա՞տ ես իմ խորհրդոցս հետեւելու, որդեակ Գրիգոր, գիտե՞ս, որ ամէն բանի կրնամ Համբերել, բայց քէնէ խաբէութիւն մահ է ինձի:

— Կ'ընեմ ինչպէս կ'ուզես:

— Շատ բարի, վերջը քեզի հետ կը խօսիմ եւ կը տեսնես թէ այդ կրօնափոխութիւնն ինչչափ առ ժամանակեայ եւ թեթեւ պիտի անցնի մեզի համար, եւ այս մեր բռնաւորներն ինչպէս պիտի զոջան, երբ Սուրենի վրեժխնդրութիւնը իւր սոսկալի հրով ու սրով տեսնեն առջեւնին:

Բայց Սուրեն վախելով, որ միգուցէ յետոյ զոջա Գրիգոր եւ դիտաւորութենէն խախտի, երբ աշխատութիւնը լրացաւ, ըսաւ վերակացուին թէ՝ կ'ուզեն Շէյխը տեսնել. իսկ նա իմաց տալ խոստացաւ, եւ հազիւ թէ քանի մը վայրկեան անցաւ, Շէյխին ներկայութեանն էին մեր երկու իշխանք:

Երբ Շէյխն իմացաւ նոցա որոշմունքը, փառք տուաւ իւր աստծոյն եւ հրամայեց, որ երկուքին էլ շղթայներն հանեն ոտքերնէն, եւ հրամայեց նոյնպէս իւր իմամին, որ իրենց պէտք եղած կրօնական տեղեկութիւնքը տա, եւ շաբաթէ մը թլպատուելով կատարեալ հաւատացեալ դառնան:

Երբ դուրս ելան իր ներկայութենէն Սուրեն դառնալով Գրիգորի եւ դառն հեզմութեամբ.

— Այդ բարբարոսը կարծէ թէ շաբաթ մը մենք իր քովը պիտի մնանք,— ըսաւ,— շաբաթը չեղած Հայաստանու ճամփան կ'առնանք:

— Բայց այդ ինչպէ՞ս կարելի է,— կ'ըսէր Գրիգոր դառնութեամբ:

— Դու կարծես թէ մենք հետեւակ եւ շղթայակապ պիտի դառնանք նոյն վիճակին մէջ ինչպէս զմեզ բերին այս անհաւատները, իրենց նժոյգներուն վրայ հեծած իշխանի պէս պիտի մտնենք հայրենիք:

— Չեմ հասկնար միտքդ, Աստուածլսէ ձայնդ:

— Հիմա կը հասկցնեմ ես քեզի:

Երբ հասան իրենց դռնամէջի սենեակը՝ որ առանց պատուհանի փոքրիկ ծակ մը ունէր ուստի նուազ լոյս մը հազիւ կրնար թափանցել ցորեկ ժամանակ, իսկ հիմա, որ երեկոյին մութը սկսէր էր տիրել մարդու աչք բան չէր տեսնէր. Սուրեն գնաց փոքրիկ ճրագի կտոր մը առաւ, որ պատի ճեղքի մը մէջ պահած էր, եւ տանելով դիմացի նոյն դիրքով սենեակը՝ պատին քով գետնին աւազը մէկդի ըրաւ եւ մեծկակ քար մը ցոյց տուաւ:

— Այս քարը տեսա՞ր, Գրիգոր,— ըսաւ,— այս քարը երբ վերցնենք տակը ճամփայ մը կը գտնենք եւ այդ ճամփան մինչեւ կանանոց կը տանի եւ այն սենեակը, որ Շէյխի զինարան ու գանձարանն է միանգամայն:

— Դարձեալ չեմ հասկնար, մեր երկուքնուս ինչ օգուտ այն ճամփեն:

— Մեր երկուքնուս այն օգուտը կայ, որ անիծեալ շղթայներէ ազատելնես վերջ՝ կը մտնենք ներս մեզ պէտք եղած մաքուր արաբացի զգեստ, զէնք եւ մեր չորս տարուան ծառայութեան գինը կառնունք՝ մեր վրէժը կը լուծենք եւ կ'երթանք մեր ճամփան:

— Բաւական է որ մենք աղատիւնք ողջ, առողջ, եւ իրենց կը շնորհեմ գինն էլ, վրէժն էլ:

— Ես այդչափ մոռացկոտ չեմ: Բաւական է այսքանը, երթանք մեր հացն ուտենք ու պանկիւնք:

Այս ըսելով աւագը վրայ բերաւ, ծածկեց իւր թանկագին քարը ամենայն զգուշութեամբ, եւ դարձան իրենց սենեակը:

ԳԼՈՒԽ ԺԶ

Անհանգիստ գիշեր մէր այդ գիշերը Գրիգորի համար, ոչ գետնախշտի լինելուն այլ իւր խղճմտանքին ձայնը չէր թող տար քուն լինիլ: Ելաւ անշշունջ գնաց շատրուանին քով նստաւ, Դամասկոսի վճիտ եւ աստղագարդ երկնից աչքերը բարձրացուցած կը մտածէր իւր բախտին վրայ. կը յիշէր հայրենի պալատը՝ մանաւանդ իւր սքանչելի մայրը՝ որ չէր գիտէր ազատէ՞ր էր՝ կամ կատաղի բոցերու ճարակ եղեր էր: Կը յիշէր եւ Ռշտունեաց Ոստանը եւ հոնտեղի իր ութնօրեայ սիրալիւր կենակցութիւնը Օրիորդին հետ եւ վերջին գիշերը, ուր յայտներ էին միմեանց իրենց արտին սերը: Կ'ուզէր աստուծոյ բարձրացնել իւր աչքերը՝ ի վեր քան զայդ երկնից գեղեցիկ կամարը, բայց խղճմտանքը իբր վարագոյր համարձակութիւն չէր տար իւր մաղթանաց այդ դատաւորին դիմելու, որու աչքերն ամէն յանցանք ամէն ոճիր կը տեսնեն:

Կը մտածէր թէ այս ուրացութեամբ, որ աղօթել չէր համարձակէր աստուծոյ, որ ամէն զաղտնիք գիտէր, ինչպէ՞ս պիտի երեւար մարդկանց, ի՞նչ պիտի զրուցէր իր առաքինի մօրը, եթէ ողջ էր, իսկ եթէ մեռած էր ի՞նչ աչքով կը նայէր երկնքէն իւր ուրացեալ զաւկին վրայ. նոյն Ռշտունեաց Օրիորդն ինչպէ՞ս պիտի ընդունէր ուրացողը, եւ փոխանակ սիրոյ, ի՞նչ արհամարհանք՝ ի՞նչ զգուանք պիտի զգար իւր վրայ: «Ո՛հ իմ սիրելի շղթայներս,— կ'ըսէր, ինեղճ երիտասարդը,— դուք հազար անգամ սիրելի էիք ինձ, վասնզի ոտիցս վրայ կը զգայի բեռ եւ սրտիս վրայ ծանրութիւն չի կար. հիմա շունչ քաշել նաեւ ծանր է ինձի: Մայրս՝ եթէ ողջ է՝ իբր անառակ որդի ընդունի զիս, բայց Թէնի՝ ո՛հ, Թէնի ի՞նչ նայուածք պիտի ձգէ վրաս, արդէն այս երկար գերութեամբս թերեւս զիս մոռցած գրեթէ՝ հիմա ուրացութեամբ նաեւ աղտեղեալ ի՞նչ տեսակ անարգ ու զգուելի էակ պիտի երեւամ իրեն: Ես որ երբեմն կ'երագէի, քունիս մէջ կը տեսնէի իւր գեղեցիկ աչքերը, իւր կարապի պարանոցը. այլեւս չի կայ ինձ համար այդ մխիթարութիւնը: «Ուրացողը՛, ուրացողը՛», պիտի ըսեն ետեւես, եւ մեր ծառաներն անգամ: Հապա Ատուեն ի՞նչ պիտի զրուցէ. ինեղճ մարդը, որ այնչափ զիս կը սիրէր, որուն վրայ մայրս այնչափ վստահութիւն ունէր, եւ ամէն անգամ աչքէն հեռանալուս զիս իրեն աւելի կը յանձնէր քան թէ իւր եղբօր Սուրենին, եւ որ զիս ազատելու համար կրակի մէջ իր անձը կը նետէր... ցաւոց առարկայ՝ զգուելի էակ ամէն աչաց պիտի երեւամ, եւ այսպիսի կեանք վարելու համար պիտի ապրեմ աշխարհքիս վրայ»:

Այս խորհրդածութեանց մէջն էր Գրիգոր, երբ դիմացի կանանոցի դուռը կամաց եւ զգուշութեամբ ճոնչեց եւ նեղ մը բացուեցաւ: Հայ երիտասարդը մտածեց շուտով ետ քաջուիլ, վասնզի գիշերով կանանոցի դռան մը բացվիլը եւ նոյն միջոցին երիտասարդի մը հոն ներկա գտնուիլը նաեւ յանցանք կրնար համարուել. բայց շարժմունքը ուշադրութիւն արթնցնել էր, եւ աւելի խոհեմութիւն սեպելով՝ անտեսանելի մնալու համար անշարժ կենալը վերադասեց. կիսաբաց դռնէն տեսաւ, որ էլաւ ճերմակներ հագած փոքրիկ աղջիկ մը հազիւ տասնմէկ-տասներկու տարեկան. մէկէն ճանչեց Շէլիսին աղջիկը՝ Էսմա: Կը յուսար, որ զինք առանց տեսնելու կ'անցնի, բայց նա սուր աչքերով ամէն կողմ զննելով եւ ուշ դնելով առաջ կու գար, երբ շատրուանին մօտեցաւ, կանգ առաւ, լաւ մը դիտեց եւ այդ մթութեան սովոր վայրենի աչքերը նշմարեցին թէ ով էր արձանը, որ ծառի մը կոթնած նստեր էր. շտկուեցաւ դէպի նա. Գրիգոր խոհեմութիւն սեպեց քուն ձեւանալ, իսկ նա եկաւ վայրկեան մը իւր աչքերն ուղղեալ Գրիգորի, ծռեցաւ եւ սկսաւ

այնպէս մօտէն աչքերուն նայիլ, որ իւր շունչը երիտասարդին չափազանց մօտենալով պարտաւորեցաւ գլուխը քաշել եւ աչքերը բոլորովին բանալ:

— Դուն արթուն ես եւ քո՞ւն կը ձեւանայիր,— ըսաւ աղջիկը կամաց ձայնով:

— Լուացուելու եկեր էի, վայրկեան մը նստայ, քունս տարեր է, երթամ տեղս պառկիմ,— պատասխանեց Գրիգոր եւ ուզեց ելնել:

— Մի՛, նստէ՛, խօսի՛նք, ես քեզի համար եկայ,— եւ այս ըսելով ձեռքն ուսին վրայ դրաւ:

— Ինչպէ՞ս, ինձի՞ համար, գնա տեղդ, դու տիրուհի մէս, իսկ ես խեղճ գերի մը. քեզի չի վայլէր կանանոցէն դուրս ելնել այս ժամանակ:

— Բայց դու էլ դերի չես, ազատ ես, հայրս այնպէս ըսաւ մօրս, ուրիշ բան մէլ ըսաւ...

— Ես հետաքրքիր չեմ իմանալու. թո՛ղ. տիրուհի, երթամ. եւ կը շտկուէր ելնելու:

Իսկ աղջիկը փոխանակ ետ քաշուելու երիտասարդին լուրջ խօսքերէն, ցատկեց եւ ծանկերուն վրայ նստաւ, աջը վզին վրայ ձգելով: Այս լրբութեան վրայ զայրոյթ մէկ կողմէն՝ երկիւղ միւսէն, վերջին այլալուծեան հասուցին զգրիգոր, ձայն հանել՝ խիստ խօսիլ կը վախէր, վասնզի եթէ մէկը վրայ հասներ եւ այն դիրքին մէջ զինք տեսներ՝ իր վիճակը շատ վտանգաւոր կը լինէր, ուստի քաղցրութեամբ խօսիլն ընտրելով.

— Դու այսպիսի մեծ Շէլլի մը աղջիկ ես, քեզ կը վայելէ՞ այսպէս վարուիլ քու ծառայներուդ հետ. խնդրեմ ելիր գնա տեղդ, որ ես էլ երթամ,— ըսաւ եւ ձայնը կը դողար կիրքէն:

Իսկ աղջիկը, որ արդէն իւր տարիքէն մեծ էր, ոչ մարմնով այլ ժամանակէն առաջ արթնութեամբ, որ տաք կլիմայի զակներուն բնական է, եւ ուր բարոյական դաստիարակութեան գաղափար անգամ չի կայ, ծիծաղելով պատասխանեց.

— Ի՞նչ բանէ կը վախես, ինչո՞ւ սիրտդ կը բաբախէ, հոգ մի ըներ, հայրս քեզ ինձ հետ ամուսնացնելու դիտաւորութիւն ունի. այնպէս կ'ըսէր մօրս, մեր օրէնքն է, որ երբ անհաւատ մը ճշմարիտ կրօնը, կ'ընդունի, պէտք է հաւատաց եալի հետ ամուսնանայ. դու լաւ գեղեցիկ երիտասարդ ես, ես քեզի կը հաւնիմ:

— Բայց տիրուհի, խնդրեմ, զիս թող, որ երթամ, հիմա այսպիսի բաներու վրայ խօսելու ժամանակ չէ, կէս-գիշերը մօտ է...

— Այդ վնաս չունի. ես քուն չունիմ:

— Գրիգորի ճակտէն քրտինքը ջուրի պէս կը վազէր, եւ այդ աղջիկը իր ծնկվներուն վրայ՝ ձեռքը ուսին վրայ այնպիսի սոսկում իրեն կ'ազդէր իբր թէ վագրի մը ձագ գիրկը նստեր եւ ճիրանները ծոծրակին մէջ մխած լինէր, եւ որ մեծն էր՝ բռնութեամբ մէկդի նետել կը վախէր, ուստի յանկարծ ուշադրութիւն մը ձեւացնելով՝

— Էսմա, ոտքի ձայն է, մարդ կու գայ,— ըսաւ այլալլած, եւ աղջիկը կապկի մը պէս սատկեց ելաւ ուշ գնելու, եւ Գրիգոր առանց բռայէ մը կորսնցնելու արագութեամբ սկսաւ հեռանալ, եւ կը լսէր աղջկան մռնչելը, որ ետեւէն՝

— Անհաւատի որդի, զիս կը խաբէ՞ս, հէ՛, — կ'ըսէր:— Բայց փոխարէն կը հատուցանեմ քեզ, կը տեսնես...

Իսկ Գրիգոր գոհ այս փոքրիկ ճիւղին ձեռքէն անվտանգ ազատելուն, առանց ետին նայելու գնաց երկնցաւ իւր խոտի բարդին վրայ. եւ բաղդատութիւն կ'ընէր մտքին մէջ այդ Շէյխին սատանայական աղջկան եւ Ռշտունեաց չքնաղագեղ Օրիորդին հետ մինչեւ քունն աչքերուն իջաւ եւ հանդարտեցուց յուզեալ սիրտը:

Երեք օր անցաւ այս դիպուածին վրայ, Գագրիկ տխրութեամբ կը տեսնէր, որ հայ իշխանաց շղթայները հանուած էին, չէր համարձակէր խօսելու պարզ եւ բարի շինականը, կ'իմանար, կը լսէր ամէն բան, ուրացեալ եւ մահմեդական ծառաներէ, որ կը պատմէին իրեն պանծանօք եւ կը յորդորէին, որ ինքն եւս թողու իւր սուտ կրօնքը եւ ընգունի ճշմարիտը: Իսկ նա քնն հրաւերներուն լռութեամբ միայն կը պատասխանէր եւ Գրիգորի ծանր տխրութիւնը իւր սոգիտութեան մխիթարութիւն կը համարէր: Անշուշտ, կ'ըսէր ինքնիրեն, խեղճ իշխանագունը այս վիճակին չի դիմանալուն յանձն կառնու ուրացութիւնը, այս անիծած կեանքին ինձ պէս շինական մը հազիւ կրնայ դիմանալ. իսկ սա՝ փափկասուն տղայ՝ հալեցաւ ոսկոր ու կաշի մնաց, սա, որ վարդապետի պէս ամէն ճշմարտութիւն կը ճանչէր՝ այդ տխրութեամբ կը վկայէ, որ ճշմարիտ գուտ կրօնքը մեր հայրենականն է. ինչ ողորմուկ աչօք կը նայի այդ կրօնուսոյց մօլլային, որ կու գայ առասպելներ խօսելու. բայց այդ Կամսարական իշխանը... բան մը կը մտածէ. ինչ է իր մտածութիւնը. երեսն բան մը իմանալ կարելի չէ. երբեմն յանկարծ՝ կ'եցած տեղը կը ժպտի՝ այնպէս ժպիտ մը, որ կարծես թէ բոց կ'ելնէ աչքերէն: Տեսնենք վերջը թէ ողջ մնացի՞նք»:

Նոյն գիշերը Սուրէնի անթափանց կերպարանքը այլայլութիւն մտնէր, կը մտնէր, կ'ելնէր, կը նստէր եւ չէր կրնար նստել, կը շրջագայէր դուրս կ'երթար մեծ պարտէզը պատէրուն տակ, ախտոններուն այցելութիւն կ'ընէր, ուր ձիեր եւ ուրիշ կենդանիք եւ երկու անասնապահք միայն կային, եւ մէկ կողմ փլփլկած ախտո մը կար, ուր ինք բոլոր տարին ինչ խոի որ բերած էր քամին՝ ժողուած էր, հոն կ'երթար եւ կու գար. Գրիգոր պառկած տեղէն կը դիտէր այդ իւր ել եւ մուտքը եւ իր քունն թէպէտ փախած՝ բայց չուզելով իւր տխուր սիրտը յայտնել, քուն ձեւացաւ: Գիշերն արդէն յառաջացեր էր, ամէնքը քնած էին, եւ Սուրէն մօտենալով եւ զգրիգոր գննելէն յետոյ՝ վառեց իւր ճրագը եւ ամէն զգուշութեամբ ելաւ դուրս. շտկուեցաւ դիմացի սենեակը, որ նոյն դիրքն ունէր դռան քով, եւ, որուն խորը Սուրէն այն մեծ քարն ցցուցեր էր իրեն: Կը լսէր Գրիգոր կամաց ձայնով խօսակցութիւն մը, կ'երեւակայէր թէ Գագրիկի հետ կը խօսէր. բայց դարձեալ չի շարժեցաւ տեղաց, եւ ամէն ձայն անհետացաւ: Վերջապէս երբ ժամէն աւելի անցաւ, հետաքրքրութիւնը. զօրացաւ, ելաւ կամաց մը եւ տեսաւ թէ ոչ ոք չի կար. երկուքն էլ անհետ եղած էին:

Ոտքի վլայ այդ բաց դռան առջեւ, զօր չէին գոցեր անապատի զաւկները, տեսաւ, որ կանանոցի դուռը բացուեցաւ եւ Էսմա դուրս ելաւ նոյն զգուշութեամբ. սկսաւ շատրուանին չորս կողմը պտըտիլ, իսկ Գրիգորի սիրտն սկսաւ բաբախել, երբ կը տածէր թէ այդ յանդուգն աղջիկը կրնայ մինչեւ իւր սենեակը գալ եւ յանկարծ Սուրէնի գաղտնիքը, որ ինք նաեւ կատարեալ չէր գիտէր, այլ կ'երեւակայէր՝ հա եանի լինի. եւ շփոթած երբ կը խորհէր թէ ինչ ընէ՝ ահա տեսաւ, որ աղջիկը շտկուեցաւ դէպ ուղիղ իր կողմը. պէտք էր հեռացնել զինք այդ տեղէն, վասնզի թէպէտ մթութիւնն արգելք մէր, բայց գիտէր արաբացի աչք խաւարին մէջ լաւ կը տեսնեն: Եւ իրօք տեսաւ զինք Էսմա ու մօտեցաւ:

— Անհաւատի որդի՛, անցեալ գիշեր զիս խաբեցիր, ոտքի ձայն է ըսիր եւ փախար միտքդ դիր թէ իմ ձեռքես ազատեցա՞ր,— կ'ըսէր խստութեամբ նորահաս աղջիկը Գրիգորի ձեռքէն բռնելով:

— Բայց դու, տիրուհի,— կը պատասխանէր Գրիգոր ամենայն քաղցրութեամբ,— գիտե՞ս թէ ի՞նչ մեծ անխոհեմութիւն կ'ընես այսպէս գիշերով գալովդ, գիտե՞ս, որ հայրդ եթէ յանկարծ իմանայ բոլոր իւր բարկութիւնն իմ վրաս կը թափէ, եւ դու անշուշտ չես ուզէր իմ պատժվփլս:

— Այո, չեմ ուզէր, բայց երբ դու զիս չես խաբէր. իսկ եթէ խաբես՝ գրկեղ նետելու համար սուտ կը զրուցես, այնպիսի զրպարտութիւններ կ'ընեմ եւ այնպէս պատժել կու տամ, որ կը զոջաս:

Գրիգորի ծանր էր այս ողորմելի աղջկան գոռոգութիւնը, բայց ստրուկի վիճակը կը պարտաւորէր այդ բաներուն տանիլ, եւ ինք չորս տարուան միջոցին սովորած էր այնպիսի նախատանաց համբերել. դեռ քանի մը օր առաջ՝ այդ փոքրիկ կատաղին Գագրիկի աչքերուն ափ մը աւազ նետելով՝ զուարճացեր էր խեղճ մարդուն մարմնութեամբ. դեռ աւելի փոքր՝ մէկ-երկու տարի առաջ խարազան մը իւր տկար ձեռաց մէջ զուարճութիւն էր իրեն աջ ու ձախ գերիներուն զարնել. եւ այդ քաջութիւնը աւելի կը գրգռէին շողոքորթ եւ բարբարոս սպասաւորք. Հիմա որ հասած աղջիկ էր՝ բարեբախտաբար այնչափ շատ ընտանութիւն չունէր մարդկանց բնակարանին հետ, բայց չարութեան ոգին նոյն էր միշտ:

Իսկ այս միջոցիս Գրիգորի սիրտը կը դողար, որ երբ Սուրեն իրմէ գաղտուկ գործի զբաղած էր՝ յանկարծ այդ անզգամին յայտնի կրնար լինիլ, ուստի կը ջանար քաղցրութեամբ զինք իւր տեղը դրկել, մանաւանդ որ շատ կարելի էր կանանոցին մէջ աղախին մը արթննալով եւ դուռը բաց տեսնելով աղաղակ բարձրացնէր ու բոլոր պալատը ոտք հանէր. այս վիճակին մէջ էր, երբ փոքրիկ լոյս մը տեսաւ այն սենեակը, ուր գետնափոր ճամփուն մուտքը կար. վախելով, որ աղջիկը նաեւ տեսնէ, իւր պառկելու սենեակն սկսաւ քաշուիլ. իսկ սա առանց Գրիգորի ձեռքը թողելու հետը ներս մտաւ: Գրիգոր շփոթած էր բոլորովին՝ իսկ աղջիկն անխռով:

— Ո՛ւր է քո ընկերդ,— հարցուց:

— Չգիտեմ... անշուշտ քնած է, եւ ամօթ է մեր երկուքին համար հոս միատեղ գտնվփլս:

— Իրաւ՝ որ դուք անհաւատքդ երկչոտ ժողովուրդ էք, ամէն բանէ կը վախէք, երբ մենք հաւատացեալքս քաջասիրտ ենք. դու հորմես կը վախես, ինձմէ կը վախես, ծառայներէն կը վախես, հիմա էլ ելեր քու ընկերեդ կը վախես: Նստե՛ այս խոտին վրայ:

Բայց Գրիգոր նոյն միջոցին աչք եւ ականջ էր. դիմացի սենեակը տեսաւ, որ լոյսն անհետ էր եղեր, եւ շշունջ կը լսէր դուրսը, ուստի վախը մէկդի թողուց եւ քիչ մը հանգստացաւ.

— Չե՛ս լսէր, նստե՛ կ'ըսեմ քեզ,— Կրկնեց աղջիկը հրամայելով եւ թեւէն քաշելով, որ նստի:

— Դու խօսք չես հասկնաք,— ըսաւ ձայնը քիչ մը բարձրացնելով եւ եղանակը փոխելով,— ես քեզ այնչափ քաղցրութեամբ աղաչեցի, որ երթաս տեղդ հանգչիս եւ դու մտիկ չըրիր, ամօթ է ըսի, չի հասկցար, տե՛, թո՛ղ ձեռքս: Գնա՛ տեղդ:

— Ի՛նչ, ինձի դո՞ւ պիտի հրամայես, անհաւատի որդի՛, գիտես, որ հիմա որ ձայնս ձգեմ բոլոր տունը ոտք կը հանեմ, եւ երբ ամէնքը հոս ժողուեմ եւ ըսեմ դու զիս յորդորեցիր, որ գիշերով գամ՝ քու վիճակդ ի՛նչ կը վիճի... Նստե՛ կ'ըսեմ... թէ ոչ հիմա ձայնս կը բարձրացնեմ...

Մրդէն ձայնը բարձրացուցեր էր բաւական եւ Գրիգոր շփոթած այս փոքրիկ ճիւղին սպառնալէաց առջեւ՝ կը մտածէր գլխուն այնպիսի կռուփի հարուած մը տալ, որ գետինն անցնէր, բայց միւս կողմէ երբ խոհեմութեամբ հանդարտեցնելը աւելի լաւ կը համարէր մտքին մէջ, յանկարծ տեսաւ ձեռք մը որ փայլակի պէս անցաւ՝ աղջկանը վիզէն բռնեց եւ յափշտակեց՝ խիսալու ձայն մը լսուեցաւ եւ Սուրէնի ձեռքերուն մէջ աղջկան կոկորդը տրորուած խեղդուած՝ անշունչ դիակ մը գետինն ինկաւ, եւ Սուրէնի մոմոցը լսուեցաւ:

— Օձի ծնունդ, գնա՛ քու հորդ սատանային գիրկը:

— Ի՛նչ ըրիր, մեռա՛ւ աղջիկը,— ըսաւ Գրիգոր եւ ծռեցաւ տեսնելու խեղճին վիճակը:

Իսկ Սուրէն՝

— Երկայն խօսակցութեան եւ ողբերու ժամանակ չէ, քալէ՛, եկ ինձ հետ,— զրուցեց հրամայական ձայնիւ:

Եւ երբ դիմացի սենեակը մտան՝ ծածկուած ճրագի աղօտ լուսով մաքուր պարեգօտ մը, վերարկու մը եւ փաթթոց մը ցցուց:

— Աստնք յագուէ՛ եւ աս զէնքերն էլ որն որ քեզի յարմար գա ա՛ն,— ըսաւ:— Շո՛ւտ ըրէ, ժամանակ չի կայ կորսնցնելու:

Եւ ինք նոյն միջոցին՝ Գագրիկ տեսաւ, որ ահագին խռիւներու դեզի մը տակ կորսուած կու գար:

— Ապրիս, Գագրիկ, դեռ կա՞յ,— հարցուց:

— Ոչ, այս վերջի բեռն է:

— Լաւ, դի՛ր այդ ալ ծառայից սենեկին դռան առաջ:

Բռնկցուց եղոտ փայտ մը, սկսաւ տալ կրակը բոլոր դռներու դիմաց դիզուած խռիւներուն. կէս-գիշերուան կանոնաւոր քամին սկսած էր արդէն, վայրկենին լուսաւորուեցաւ տունը: Գագրիկի թեւէն բռնած ցցուց նոյնպէս զէնքեր եւ հագուստներ եւ ինք նաեւ շուտ մը տուաւ օրինակը. հագուեցաւ, գլուխը փաթթեց ճերմակը, առաւ կապարձը, աղեղը, նիզակը, պողովատիկը մէջքէն կախեց, եւ երբ երեքն էլ պատրաստ էին, առաւ ջիւտեայ մախաղը ձեռքը եւ ելաւ դուրս. դռան առջեւ Գագրիկի հետ վառեց մնացած բոլոր խռիւր: Բոցը կը բարձրանար: Սուրէն հեզնական եւ սուկալի ծիծաղով մը նկատեց:

— Հիմա հանգիստ եմ,— ըսաւ Գրիգորի,— նայէ՛ ինչպէ՛ս գեղեցիկ է, ինչպէ՛ս կը նմանի սա Վարդանաբերդի հրդեհին:

— Ո՛հ, ես այսպիսի անգութ տեսարաններ չեմ սիրեր...

— Ես էլ նոյնպէս. վասնզի այս հրդեհը եւ մէջի գոհերը քիչ են մերիններուն քով:

Գրիգոր այն ատեն երբ քեռուոյն երեսը նայեցաւ, նորա աչքերն այնպիսի կատաղութեամբ կը փայլէին, որ գլուխը անդին դարձուց. իսկ Սուրէն «երթանք» ըսաւ եւ դէպի ախոռը շտկուեցաւ. պատրաստ եւ թամբեալ արաբացի նժոյգ մը հանեց, Շէյխին ամէնէն սիրելի նժոյգն էր. «Տէ՛ Գրիգոր, հեծիր»,— ըսաւ. նոյնպէս Գագրիկին, նոյնպէս իրեն. երեք ամէնէն ընտիր ձիանքն էին:

Ձի մէլ ետեւնէն, որ միայն իրենց ձիոց համար դարի եւ իրենց համար քիչ մը պարսպիմատ բեռնաւորեալ էր՝ կու գար:

Իսկ հրդեհը կը բորբոքէր, կը մեծնար եւ ամէն կողմէ կը ճարճատէր: Եւ ահա մարդկանց աղաղակներ կը բարձրանային, իսկ Սուրեն՝

— Լաւ՝ է, լաւ, դեռ մերայնոց ողբոց եւ հեծութեանց շատ ոչինչ պատասխան են սոքա,— ըսաւ եւ հեծաւ. ծանր ընթացք մը տալով ձիերուն Գրիգորի եւ Գագրիկի հետ սկսաւ խօսիլ:— Նայեցէք ի՛նչ կ'ըսեմ. ուշադիր եղէք, վասնզի մեր ամէնէն դժար բանը այս պատրաստութեամբ այս ձիերուն վրայ գտնուելն էր. եւ ես երկու տարի է, որ մտածէր եւ կարգազրէր էի աս փախուստը: Նայեցէք երկինք, սա աստղը (հիւսիսային աստոր ցցուց) ձեզի առաջնորդ պիտի բռնէք միշտ եւ դէպի նորա աջ կողմը պիտի շեղիք քիչ մը՝ մինչեւ որ Եփրատը գտնէք. այդ գետը հասնելէն վերջ՝ նա ձեզի կ'առաջնորդէ:

— Ի՛նչ կը նշանակեն այս խօսքերը,— ըսաւ Գրիգոր,— միթէ՞ մենք իրարմէ պիտի բաժանուինք:

— Ինչչափ կարելի է կը ջանանք չի բաժնուելու, բայց եթէ հան կարծ դիպուածները զմեզ բռնադատեն եւ ես ձեզի ըսեմ «Ազատեցէք ձեր անձերը», իմ խօսքիս պէտք է հնազանդիք եւ ձեր փրկութեան նայիք: Ուստի հիմա պէտք է նաեւ ձեռի ստակ տամ, որ այսպիսի դիպուած մէջ առաջին զէնք կը համարուի: Եւ բացաւ բանալիքով մը մախաղին մէկ աչքը, եւ երկուքին էլ մէկ բուռ սսկի տուաւ, որ իրենց գրպանին մէջ դրին: Եւ երբ այս գործողութիւնն էլ լրացաւ, վերջին անգամ ար գլուխը դարձուց հրդեհին նայեցաւ, եւ սկսաւ ի՛նք առջեւէն, միւսներն ետեւէն՝ քշել դէպի Բալմիրայի անապատի կողմը:

ԳԼՈՒԽ ԺԷ

Բարեբախտաբար ժամանակը ձմեռ էր, այդ սոսկալի արաբական կլիմայի տաքը չի կար, եւ արեւը երբ ելաւ, մեր երեք ճանապարհորդէք սիրով ողջունեցին նորա ելքը, թէպէտ աւելի սիրելի Գագրիկ տեսնելով այն միջոցին Սուրենի քունը՝ դարձաւ ըսաւ Գրիգորի.

— Յիրաւի, իշխան, քու քեռին զարմանայի մարդ է, այս մեր փախուստը եւ ամէն պէտքերը ինչպէ՛ս մտածեց ու պատրաստեց:

— Ինչչա՞փ ժամանակ է, որ դու այս իր խորհուրդը եւ պատրաստութիւնքը գիտէիր:

— Տարի մը կայ եւ աւելի, որ կէսօրէն վերջ սաստիկ տաք ատեն, երբ ամէն մարդ թուլցած շարժելու կարողութիւն չունէր, դիպուածով մտայ այդ կիսաւեր սենեակը եւ տեսայ իշխանը երկայն փայտի մը օգնութեամբ այդ մեծ քարը շարժել կը ջանար, եւ քրտինքը ճակատն ի վար կը վազէր: Երբ զիս տեսաւ, «Գագրիկ, դու գաղտնիք պահող եւ ուժով մարդ ես, եկ ինձ օգնէ»— ըսաւ. իսկ ես, մեղա-մեղա՞, որ այդպիսի քարեր շատ վերուցեր եմ, մեծ զրուցել չլինի, մեր գիւղի շրջակայքը եւ Բագրեւանդայ մէջ կրնամ ըսել թէ քիչ մարդ կար, որ ինձ չափ ծանր բան կարենար վերցնել, «կաց իշխան», ըսի, փորձեցի եւ. տեսայ, որ քարը կը շարժի՝ ուժ տուի եւ սահեցուցի. «Ապրիս, Գագրիկ»,— ըսաւ եւ վար նայեցինք, որ մարդաչափ փոս մը միայն կար առաջնիս. ինձ սպասել հրամայեց եւ պահպանութիւն ընել. ինք մտաւ ներս. տեսայ, որ ժամի չափ անցաւ եւ իշխանը չէր երեւեր, վախը զիս առաւ թէ վտանգի հանդիպեցաւ, ուստի ես էլ իջայ, որ նայիմ՝ եւ տեսայ թէ երկու ճամփայ կար, մէկը դէպի ներս տան մէջ կը տանէր՝ իսկ միւսը դէպի դուրս:

Իշխանն անշուշտ դեպի դուրս գնաց կարծելով՝ այն ճամփան գնացի խարխափելով եւ վերջապէս երբ երկուքի տեսայ բաժնուած այդ ստորերկրեայ ճամփան՝ ետ դարձայ, եւ հակառակ ուղղութիւնը բռնեցի, վերջապէս լուսոյ տկար գիծ մը երեւեց, եւ իշխանը տեսայ, որ պատի մը կռթնած կեցեր դեպի լոյսը ներս կը նայէր: Երբ զինք ողջ գտայ՝ փառք տուի աստուծոյ, վասնզի իմ վախս այն էր, որ օձի, կարճի, գահավեժի վտանգ մը յանկարծ իրեն հանդիպած չլինի. ուստի ետ դարձայ նոյնպէս զգուշութեամբ, որ ոտքի շղթայիս ձայնը չի լսուի: Իշխանն էլ ետեւես հասաւ եւ էլանք դուրս. դարձեալ քարը տեղաւորեցի, եւ ոչ հարցուցի ի՞նչ էր այդ տեղը, իսկ ինք անի մը անգամ մտաւ հոն, մինչեւ վերջին անցեալ գիշեր եւ ոչ հարցմունք մըրի:

— Բայց անցեալ գիշեր դու էլ այդտեղ իջար, Գագրիկ:

— Անցեալ գիշեր իջանք իրեն հետ՝ ինք ճրագն առջեւէն կ'երթար. եւ ես բրիչը ձեռքս ետեւէն. մինչեւ հասանք այդ մուկի ծակին բերանը, զգուշութեամբ անձայն՝ պատը ձեռքով քան թէ բրիչոյ քակեցինք, եւ նոյն բերանն էլ մեծցուցինք, որ աւելի դիւրին էր քան թէ քովի ամուր փայտէ դուռը բանալ, որ այդ ստորերկրեան կը հանէր: Իշխանը գլուխը ներս երկնցուց՝ երկայն ուշ գրաւ, սենեակը մարդ չի կար, ուստի երբ ծակն այնչափ եղաւ, որ ինք կրցաւ անցնիլ՝ ցատկեց էլաւ վեր եւ ճրագն առած սկսաւ ինձ անցնել նախ զէնքերը մէկիկ-մէկիկ, յետոյ բանալիքներու խորձ մը, յետոյ զգեստները. վերջը կոտորեց բացաւ փոքրիկ երկու զգրոցներ՝ պարպեց մէյիները՝ այդ կաշեայ երկբերան մախաղին մէջ, որ պատեն կախուած էր, եւ երբ այն էլ անցուց ինձ նոյն զգուշութեամբ՝ բայց բեռնաւորեալ այդ ամէն բաներով՝ մտանք ճամփուն մէջ. հոն այդ բանալիքներով իմ շղթայես զիս ազատեց եւ էլանք դուրս: Նախ գնացինք ախոռները, ուր երկու ձիապան կը խորդային, զանոնք գամեցինք գետին եւ անկից վերջ ընտրեցինք, թամբեցինք ու խռիւներ եւ խոտի խուրձեր բերինք լցրինք ամէն գլխաւոր դռներու առջեւ: Բան մը չի մոռցաւ նա՝ մեր եւ ձիերու ճամփու պաշարն էլ մտածէր էր: Զարմանալի մարդ է:

— Ինձի ինչո՞ւ չիմացուցիր այս ձեր նախապատրաստութիւնը:

— Իշխանը կ'ըսէր թէ՛ նա շատ բարեսիրտ է, արիւն թափելու թշնամի է, աւելի լաւ է, որ ամէն գործ կատարուի եւ յետոյ իմանայ ինք:

— Դու ի՞նչ կարծես, Գագրիկ, Աստուածմեզմէ հաշիւ չի՞ պահանջէր այդ արիւններուն համար, այդ հրդեհին մէջ ողջ-ողջ...

— Իշխանն, բայց այդ մարդիկը մեր երկիրն հրով ու սրով քանդեցին, չորս տարուան մէջ ամէն օր սպաննեցին մեր դաքը, երբ չէին ուրանար եւ կը մեռնէին՝ շան սատակ կը համարէին: Մենք էլ այդ թաները աստուծոյ կը յիշեցնենք եւ ամէն բան կը վերջանայ:

Գրիգոր տեսաւ, որ Գագրիկ Մուրէնի վարդապետութեան աշակերտներէն էր՝ վերջացուց խօսքը: Եւ դեռ երբ կը շարունակէին ճամփան նայեցաւ, որ սուրին քովէն ահագին մուրճ մը կախուած էր Գագրիկի գօտիէն, հարցուց թէ այդ զէնքը շատ օգտակար ր կը սեպէր:

— Ո՛հ իշխանիկս,— կ'ըսէր Գագրիկ,— այդ՝ սուրէ լաւ է ինձ համար, ես տեսայ Շէյխին սենեակը այդ եւ աչքս մնաց. երբ Մուրէն իշխանը ուշադրութիւն չէր դարձնէր՝ խնդրեցի առնուլ. մենք շինականքս աւելի լաւ գիտենք գործածել զայս քան թէ սուրբ:

Բայց արեր ելաւ հորիզոնին վրայ, եւ քիչ մը առաջ անցան՝ ահա քաղաք մը երեւցաւ հեռունէն: Գրիգոր քաշեց ձիուն գլուխը, եւ կենդանիները կանգ առին. Սուրեն վայրկենին արթնացաւ, եւ աչքերը շփելով, «Ի՞նչ կայ, ի՞նչ եղաք»,— հարցուց:

Եւ տեսնելով կանգուն ահագին տուներ, պարիսպներու բեկորներ, իմացաւ թէ Բալմիրայի աւերակներուն առջեւ հասած էին, եւ Եփրատ հեռու չէր:

— Երթանք, տղաք,— ըսաւ,— հայրենի հողը թեպէտ հեռու՝ բայց ջուրը մեզի հասաւ, երթանք նորա եզերքը յոգնութիւն առ նունք:

Գրիգոր սքանչացաւ մնաց այդ մեծ քաղքին աւերակաց վրայ, անապատին մէջ այդպիսի փառաւոր քաղաք մը իւր հետաքրքրութիւնը կը շարժէր եւ ակամայ՝ ձիուն գլուխը դէպի արեգակն տաճարը կը շրջէր: Կը կենար կարդալու համար յունական արձանագրութիւնները: Իսկ Սուրեն իմանալով քեռորդոյն ձգտումնքը՝

— Որդեակ Գրիգոր, ուրիշ օր մը այդ փափագը կը լեցնենք, հիմա ժամ առաջ այս անիծած երկրեն դուրս նետենք մեր անձինքը,— ըսաւ:

Անցան քաղքին արեւելեան դռնէն եւ շարունակելով ճամփան՝ Եփրատ իւր բոլոր վսեմութեամբ երեւցաւ իրենց, իջան եզերքը ջուր խմեցին, իրենց պաքսիմատը կերան ձիերուն դադար եւ ուտելիք տուին, իրենք նաեւ հանգչեցան:

— Հապա՛, տղաք, կարծեմ ժամ է հեծնելու, երկու ճամփայ կայ առաջնիս, կամ այս կողմէն գետն ի վեր, կամ անցնիլ գետը եւ դիմացեն երթալ, դուք որը՞ կ'ընտրէք:

— Դո՛ւ որոշէ,— պատասխանեց Գրիգոր,— մենք պատրաստ ենք քեզ հետեւելու: Բայց ահա դիմացի կողմը ձիաւորներ կ'երեւան, վեց հոգի են:

— Ուրեմն այդ մարդիկը,— ըսաւ Սուրեն դիտելով,— մեզ կ'ուզեն զրուցել թէ՛՝ եթէ կամիք խաղաղ ու հանգիստ ձեր ճամփան շարունակել, գնացէք այդ կողմէն, մեզ մի՛ մօտիք, վասնզի աւազներու որդի աւազակ կը ծնինք եւ աւազակ կապբինք եւ աւազակի պէս կը մեռնինք:

Սկսաւ Սուրեն գետին աջ կողմէն երթալ դարձեալ: Թեպէտ Շէլխին գանձատունէն առած էր զէնքերը՝ բայց չէր գննած նոցա լաւութիւնն. հիմա միտքն եկաւ՝ քաշեց պողովատը եւ սքանչանալով երկաթին վրայ ու շողացնելով, զոհ սրտի գրաւ պատեանը եւ դառնալով իր ընկերաց ըսաւ.

— Այդ մեր Շէլխը լաւ աւարի վրայ ինկեր է, իր անապատները չէին կրնար բուսցնել ոչ այսպիսի զէնք եւ ոչ այդպէս ոսկիներ: Նայեցէք ձեզ տուած ոսկիներս՝ բոլոր Սասանեանց են, եւ այս զէնքերն էլ բոլոր Պարսից արքայական դրոշմը կը կրեն:

Այս խօսքերը զրուցելուն գլուխը կը դարձնէր երբեմն դիմացեն եկող հեծելոց, որ գետին ը մօտենային յանդուգն արշաւանոք: Իրենց այս ընթացքը, որ Սուրենի կ'իմացներ եւ իրենց նպատակը, փոխել չի տուաւ իւր հանդարտ քայլուածքը եւ քթին տակէն կ'ըսէր. «Եթէ այսքան քիչուոր էք՝ մեզմէ ձեզի օգուտ չի կայ»: Աչքը դիմացը կը հետագօտէր, աւազի բլուր մը հանդիպելով ձին քշեց վեր ելաւ. առջի նայուածքին՝ յօնքերը խաւարեցան թոպէ մը, սեւ ամպ մը պատեց երեսը. բայց փայլակի պէս անցաւ եւ ժպիտ մը յաջորդեց, սակայն այդ ժպիտը նաեւ ահարկու էր:

— Տղաք,— ըսաւ,— տասն-տասներկու հոգի մեր առջեւ կ'ելնեն, մեր ձիերը Արաբիոյ հազարներու ընտիրքն են, մեր զէնքերն ամենալաւն են, դու, Գրիգոր, Մամիկոնեանց քաջ թոռն ես, դու էլ, Գազրիկ, որ անզէն՝ արջ մը խողովու ուժ ունիս, քաջ եղի՛ր, միայն ամուր կեցիր ձիուդ վրայ, նիզակի հարուածներէ լաւ պաշտպանէ ինքզինքդ վահանովդ, իսկ մուրճդ՝ գործածէ՛ ինչպէս գիտես: Տէ՛, մտրակեցէ՛ք ձիերը եւ ինձ հետեւեցէ՛ք:

Այս խօսքերուն վրայ ամպի փռոշի մը պատեց երեք հեծեալքը եւ ձին, որ պաշարը բարձած էր՝ կը հետեւէր անբաժան Գազրիկի ձիուն որուն ընկերն էր: Երբ արաբք տեսան սոյլս ընթացքը, որ իրենցմէ կը իտուսէին եւ կը խտտորէին հաջէ ձախ, իրենք էլ խտտորեցան արգիլելու համար: Երկու-երեքը միասին նիզակով Սուրէնի վրայ յարձակուիլ կը պատրաստուէին, որ միշտ առջեւէն կը ձիավարէր, եւ որու նիզակի հարուածը նոցա առաջինը գլորեցուց առանց շարժելու ժամանակ թողլու: Գրիգոր նորա օրինակին հետեւելով նիզակի հարուած մը տուաւ իւր վրայ յարձակող աւազակին եւ այնպիսի սաստկութեամբ, որ նիզակը խորտակեցաւ, երբ մարդը գետինն ինկաւ: Իսկ Գազրիկ, որ իւր նիզակը բեռ մը կը համարէր՝ «Ա՛ռ իշխանիկ» ըսաւ եւ Գրիգորի տուաւ: Ենք մուրճը աջն առած՝ վահանով պատրաստեալ սկսաւ շարունակել իր ընթացքը, վասնզի արաբացի խումբը երկու գոհ տալէն վերջ դադրեցաւ եւ կը նայէր այս երեք անձանց մոլեգին գնացքին եւ, որու հասնիլ կարելի չէր եւ վտանգաւոր էր: Բայց չի թողուց բոլորովին մեր հայոց հետքը: Սուրէն սրատես եւ սրամիտ, երբ տեսաւ, որ արաբը հեռուանց իրենց կը հետեւէր, վայրկեան մը ուշացուց ընթացքը եւ ըսաւ ընկերաց:

— Տղա՛ք, մեր առաջը հաւանական թէ թշնամեաց ուրիշ խումբ մը կայ, վասնզի այս անգամներն անօգուտ մեր ետեւէն չէին գար: Մի՛ թուլանաք, քաջ եղի՛ք: Աստուծով՝ լաւ սկսանք, լաւ կը վերջացնենք:

Շատ չանցաւ, աւելի բազմաթիւ խումբ մը երեւցաւ, Սուրէն նոյն առաջին գործողութիւնն ըրաւ, խտտորեցաւ արահետեն եւ սկսաւ բացուիլ, քանի որ հեռու էին թշնամիք. նոյնպէս այս արաբք սկսան ճապաղիլ, որպէսզի սոցա ճամփան արգիլեն, եւ այս անգամ, տեսաւ Սուրէն, որ աւելի դժուար էր գործը, վասնզի հսկայ արար մը ահագին նիզակ ճեռին իւր վրայ կը դիմէր, առանց շփոթելու ուղղեց նժոյգը նորա դէմ, եւ երբ նա նիզակն իրեն կը շեշտէր՝ մտրակ մը տուաւ ձիուն, հարուածը վահանին վրայէն սահեցուց եւ նիզակը աւազին մէջ մղելով սուրբ հսկային վրայ փայլեցուց: Մա վահանաւ ուզեց արգիլել հարուածը, բայց այնպէս էր Սուրէնի արագութիւնը, որ գլխուն կէտը կտրեց, եւ հսկան գետին գլորեցաւ: Գրիգոր նոյն միջոցին կը կաւեր կատաղի մարդու մը հետ, որ երկու տեղէն վիրաւորուած՝ արիւնլուայ նիզակի տկար հարուած մը միայն կրցաւ տալ Գրիգորի ձիուն, եւ այդ աննման կենդանին այնպէս գայրացուց, որ կատաղի ընթացք մը առաւ եւ Գրիգոր այդ պատերազմէն դուրս գտաւ ինքզինքը եւ Եփրատի ափանց վրայ: Սուրէն տեսնելով նորա անհետանալը, տեսնելով եւ Գազրիկ երկու թշնամեաց մէջ առաջեն ու ետեն զինք շամփրել կը ջանային իրենց նիզակներով եւ կորովի շինականը, որ առջեւինին դէմ իւր վահանը բռնած դիպող առթի կը նայէր մուրճը իջեցնելու, յարձակեցաւ եւ ետեւին սպառնացող վտանգէն ազատեց նիզակի հարուածով մը, ճիշտ նոյն բոպէին, երբ Գազրիկ նաեւ դիմացինին գլուխը ջախջախելով ձի են վար կը գլորէր:

Բայց մեր կորովի զինուորները վտանգէն չէին ազատած. երկու քաջաձի նիզակաւորք կը մօտենային. իսկ Սուրէն պատրաստուելով նոցա դէմ հարձակելու, ըսաւ Գազրիկի՝ «Դու զիս թո՛ղ, գնա՛յ սա ուղղութեամբ հասի՛ր Գրիգորի, նա Եփրատի ափունքը գտած պէտք է լինի: Ես եթէ ձեզ

հասայ քանի մը վայրկեանէ՝ լաւ՝, եթէ ոչ անցէք գետը, Հայաստան կը տեսնվինք, քաջ եղիք, մի՛ յուսահատիք, հայոց աստուածը մեծ է»:

Գագրիկ ճամփան ազատ գտնելով մտրակեց ձին եւ անհետ եղաւ, բայց մէկ քանի րոպէէն լսեց, որ արշաւասոյր մէկը կու գար ետեւէն, իւր արինաներկ մուրճը ձեռքը՝ շրջեց ձիուն գլուխը եկող թշնամույն դէմ, բայց իւր ձիուն ընկեր պաշարակիր ձին էր, որ կու գար խիսնջելով եւ դափր հատանելով: Ուստի շարունակեց ընթացքը եւ տեսաւ Եփրատայ ափանց քով Գրիգոր, որ իջած կը լվար ձիուն վերքը:

Իսկ նոքա, որ Սուրենի վրայ կու գային՝ տեսնելով նորա իրենց դէմ յարձակելու պատրաստութիւնքը՝ պաշտպանողական դիրք մը առին եւ իրենց միւս ընկերաց կը նայէին, որ կու գային բազմութեամբ վեց եօթ հոգի միասին իր ճամփան կտրելով, որ չի կարենայ Եփրատայ կողմն երթալ. իսկ սա տեսնելով նաեւ, որ առաջին խումբը եկեր միւսներուն կը խառնուի, եւ Գրիգոր ու Գագրիկ ազատած են, աստուծոյ յանձնէք զանոնք ու մտրակեց երկու ոտքով, ապահով, որ ոչ ոք իրեն կրնայ հասնիլ, եւ նոյզն սկսաւ թռանիլ Ամանոսի լեռանց ուղղութեամբ:

ԳԼՈՒԽ ԺԸ

Գրիգոր այն միջոցին մտախոհ կը կենար Եփրատայ ափանց քով, երբ Գագրիկ, որ Սուրենի խիստ հրամանն առած էր՝ ըսաւ.

— Բայց մտածելու ատեն չէ, պէտք է անցնինք, վասնզի իշխանը կրկին, կրկին ապսպրեց անցնիլ եւ ճամփայ ելնել: Եթէ մենք քիչ մը ուշանանք՝ այդ անօրէնները մեր ետեւէն կը հասնին, ի՛նչ օգուտ կը լինի, մանաւանդ որ մենք նորա յաջողականութիւնը չունինք, եթէ նա չլինէր մենք երկուքս էլ մեռած էինք:

— Բայց ինք հիմա ի՞նչ վիճակի մէջ է, թշնամիներէ պաշարեալ,— կ'ըսէր Գրիգոր տխրութեամբ:

— Դու ի՞նչ կարծես, այդ մարդը իսքզինքը միշտ կազատէ, քալէ, իշխանիկս, անցնինք Եփրատ եւ յետոյ կը խօսինք:

— Աստուած ինք հոգա զմեզ եւ զնայ:

Եւ Գրիգոր այս խօսքը գրուցելէն վերջ՝ հանուեցաւ, կապեց զգետները ձիուն վրայ եւ մէկ ձեռքը երասանակ սկսաւ լողալ: Գագրիկ նոյն օրինակին հետեւեցաւ, մինչեւ հասան Եփրատայ ձախ կողմը:

— Հիմա,— կ'ըսէր Գագրիկ,— քիչ մը բան ուտենք, իշխանիկս, մինչեւ այն ատեն եթէ իշխանը հասաւ՝ բարի, եթէ չի հասաւ՝ կը շարունակենք մեր ճամփան եւ ինչպէս ինքն ըսաւ՝ Հայաստան կը տեսնուինք:

— Բայց, Գագրիկ, դու կարծես թէ Եփրատ որ անցանք՝ Հայաստա՞ն մտանք:

— Ո՛չ, գիտեմ թէ Հայաստան շատ հեռու է, բայց այն նաեւ գիտեմ թէ այս արաբաց երկրեն մէկ մը որ դուրս ելնենք եւ քրիստոնէից երկրի հողը կոխենք՝ է՛լ փրկուած ենք:

— Ո՞ր քաղաք հասնիս կարծես թէ փրկուած ենք:

— Ես իմ չի տեսած քաղաքաց անունները չգիտեմ, երանի՛ թէ այդ անիծեալ Դամասկոսի անունն էլ չդիանայի: Երբ քաղաք մը կը հասնինք, ուր խաչի նշան՝ եկեղեցւոյ սրածայր գմբէթի վրայ կանգուն տեսնեմ, մարդիկ, որ քրիստոնէի պէս հայեվար կը խօսին՝ աստծու բարեւը կու տան առաւօտ եւ իրիկուն, այն ատեն կ'իմանամ, թէ փրկութիւն գտած ենք: Բայց խօսքով ժամանակ չանցնենք, իշխանիկս, քիչ մը հաց ուտենք եւ ճամփայ ելնենք:

Այս ըսելով բարի շինականը գնաց պաքսիմատի պարկը բերաւ, եւ տեսնելով Գրիգոր, որ տխուր կը մտածէր ու չէր շարժէր ուտելու՝

— Գիտեմ,— ըսաւ,— ինչ կը մտածես, իշխանիկս, բայց հոգ մընէր, նա այն մարդն է, որ ո՛ր երթաւ հաց կը գտնէ: «Հացը քարէն կը հանէ», որ կ'ըսէ առակը՝ Մուրէն իշխանն է. ես նորա Հայաստան ողջ-առողջ հասնելուն ամենեւին չեմ տարակուսիր. մենք մեր գլխուն ճարը տեսնենք...

Նայելով, որ Գրիգոր դարձեալ չուտէր՝ ինքն լ գնաց ձիերուն զարին տուաւ եւ գնաց մէկ կողմ տխուր նստաւ:

— Գագրի՛կ եղբայր, ես ախորժակ չունեմ, երբ որ ուզեմ քեզ կը գրուցեմ:

— Լաւ՛,— ըսաւ Գագրիկ եւ տրտմութեամբ առաւ պարկը տեղը դրաւ:

— Բայց դու չե՞ս ուտէր:

— Երբ դու ախորժակ չունիս, ես էլ չունիմ:

— Բե՛ր ուրեմն, եղբայր,— գրուցեց Գրիգոր յուսահատած, եւ սկսաւ պաքսիմատ մը կրծել:

Ահա հիմա իմ ախորժակս էլ եկաւ,— գրուցեց պարզ մարդը, եւ ինքն եւս սկսաւ ուտել:

Երբ ձիերը զարին կտրեցին, եւ իրենք էլ կշտացան, Եփրատայ ջուրն էլ խմեցին, հեծան եւ սկսան իրենց ճանապարհը շարունակել գետն ի վեր:

Դիւրին էր մտածել թէ Եփրատն ի վեր շարունակելու էր ընթացքը հասնելու համար Հայաստան: Բայց երկիրն աւերակ էր գրեթէ եւ Եփրատայ եզերքը գտնուող քաղաքները արաբական արշաւանքներէ անմարդի: Իսկ մեր երկու ճանապարհորդք, որ երկրին վիճակին տեղեկութիւն չունէին, չգիտէին թէ շէնը՞ իրենց աւելի վտանգաւոր էր թէ անշէնը, բայց զարմանալի բարեբախտութեամբ գիշեր եւ ցերեկ ճանապարհելով՝ քիչ հանգիստ առնելով անվտանգ հասան մինչեւ Պիրդայ, ուր առաջին անգամ քրիստոնէի երես տեսաւ մեր Գագրիկ եղբայրը: Երբ երկրորդ գշերը մտան Եդեսիա, ուր ոչ միայն քրիստոնէայ կար՝ այլեւ հայ քրիստոնէաք, երկրորդ առաւօտուն խեղճ մարդը գնաց մտաւ իւր հայրենական եկեղեցին եւ չորս երկայն տարիներէ վերջ կը լսէր դարձեալ սաղմոսները, շարականները, որ իւր տղայութենէն ի վեր լսած էր, յայտնի է թէ անգրագէտ մարդ քիչ բան կը հասկնար, բայց ի՞նչ քաղցր էին նոքա իւր ականջին. ինչչա՞նք անցելոյն յիշատակներ կային ծնողաց, ամուսնոյ եւ զաւակաց այդ աղօթքներուն մէջ: Կրկին եւ կրկին երկրպագութիւն կը կրկներ, հազար անգամներ երեսը կը խաչակնքէր:

Հեռուն՝ դռան մօտ կանգնած էր Գրիգոր՝ Վարդանայ թոռը, խեղճ երիտասարդ, իբր թէ ամօթով էր խաչելութեան պատկերին առաջ, իւր վայրկենական ուրացութիւնը խիղճը կը խայթէր, հայրենեաց դռան առջեւ հասած՝ իր պալատին հրդեհը ոչինչ կը համարէր, բայց մայրը, քոյրերը, բայց ընտանիքը, այդ Ձաւէնը, որոմն այնչափ խնամքը վայելէր էր. ամենքը աչաց առաջնէն կ'անցնէին, եւ ասոնցմէ ո՞վ կենդանի պիտի կարենար տեսնէի ո՛ւմ համար պիտի գրուցէին թէ

մեռաւ, ո՛ւմ համար թէ գերի գնաց բարբարոսաց:— Իր յիշատակաց համար Աբգարու քաղաքն էր այդ, այդ քաղքին մէջ Խորենացին մատենադարաններ խառնած էր, այդ եկեղեցոյն մէջ հայ պատմադրաց հայրը պատարագ մատուցեր էր: Եւ քսանմէկ տարու երիտասարդը, որ արտաքո կարգի սրամտութիւն ունէր եւ իւր ժամանակին համար մեծ հմտութիւն, այդ բաները կը յիշէր, կ'աղօթէր եւ երանի կու տար այդ սոգէտ, բարի կրօնասէր իւր ընկեր շինականին, որ մեծ յոյս ունէր իւր ընտանիքն ու փափուկ զակները տեսնելու: Իսկ ինք չէր դիտէր, որ Ռշտունեաց Ոստանը զինք յիշող մը մնացե՞ր էր...

Դեռ Եդեսիա չի մտած Գրիգոր պատուիրած էր Գագրիկի մարդու չի յայտնել իւր ով լինիլն. նա էլ հաւատարմաբար այս պատուերը պահելով՝ անձանօթ օտարականք իրենց գղեստներու հայկական ձեւ տալով ելան Եդեսիայէ եւ քանի մը ճանապարհորդաց հետ հանգիստ եւ անվտանգ երթալով հասան Ամիդ. առանց դադարելու Հայաստանի այդ սահմանագլխոց վրայ կ'անցնէին Օռփաց եւ Աղձնեաց գաւառներէն ու կը մտնէին Տարօն՝ ժառանգութիւն Մամիկոնեան մեծ իշխանաց Մուշեղայ եւ Համագասպայ: Գրիգոր՝ որուն սրտին մէջ կասկած մտած էր Սուրենի խորհրդածութիւններէն՝ հօրեղբօրը եւ հօրեղբօր որդւոյն վրայ, դարձեալ խստիւ պատուիրեց Գագրիկի ամենեւին մարդու չի յայտնել իւր ո՛վ լինիլն, եւ այնպէս մտան Մշոյ քաղաքը:

Մուշ Տարոնոյ գլխաւոր քաղաքն էր բլրի մը վրայ շինուած, բաւական ընդարձակ, աթոռանիստ Գրիգորի հօրեղբօր Մամիկոնեան Մուշեղի, որու պալատը ամրացեալ պարսպօք եւ աշտարակօք կը բարձրանար կը տարածուէր իւր պարտեզներով՝ բոլոր Մշոյ դաշտին վրայ ձգելով իւր հայեցուածքը: Իսկ Հմաեակ Մամիկոնեան, որ աւելի հեռաւոր ազգական էր Գրիգորի, կը բնակէր Արածանիէ անդին Խնունի բերդը:

Մեր երկու ճամփորդք եկեղեցոյ մը քով իշեւանեցան, բայց ինչչա՛փ որ պարզ էին իրենց զգեստները, ամէնուն ուշադրութիւնը վրանին դարձնելու դարձեալ բան մը կար. եւ այն բանը՝ իրենց արաբացի աննման նծոյզներն ու զէնքերն էին: Ուստի շատ ժամանակ չանցաւ, երկրորդ առաւօտուն հրաւեր եկաւ տեսութեան Մամիկոնեան իշխանէն Եդեսիոյ եկող երկու հիւրերու: Գրիգոր արդէն կը փափագէր այդպիսի մի տեսութեան, գրեթէ վստահ լինելով թէ հօրեղբայրը զինք չէր կարող ճանչել, վասնզի տասը տարիէ ի վեր տեսած չունէր. ուստի միայն քանի մը հրահանգներ տուաւ Գագրիկի, որ միգուցէ անհամաձայն գտնուին իրենց խօսակցութեանց մէջ:

Ժամանակը ձմեռ էր, կաղնի փայտի փայլուն կրակ մը կը ճարճատէր վառարանին մէջ. Մամիկոնեան նախարարը իւր գահոյից վրայ նստած, սամոյրներու մէջ թաղուած, հիսնամեայ մարդ մէր Գրիգոր զինք հազիւ կրցաւ ճանչել, այնչափ վախուած էր եւ ժամանակէն առաջ ալեւորեալ, այտերը խռոչացեալ բայց իւր կապոյտ աչքերը դեռ շատ հուր ունէին եւ շատ խորամանկութիւն: Երբ Գրիգոր ներս մտաւ՝ ըստ հայկական սովորութեան գնաց ձեռքը պագաւ, Մուշեղ քովը տեղ ցցուց եւ հրամայեց նստիլ. իւր սովորութիւնն էր. խոր աչքերը ուղղելով երիտասարդին՝ լաւ մը գննելէն վերջ՝

— Բարի ես եկեր,— ըսաւ,— լսեցի թէ Եդեսիոյ կողմերէն կու գաք, այդ կողմերը պէտք է շատ վտանգաւոր լինին այս ժամանակներս:

— Այո՛, Տէր,— պատասխանեց Գրիգոր անխռով պարզութեամբ,— բայց մենք, գոհութիւն աստուծոյ, անվտանգ եկանք:

— Ո՞ւր տեղացի ես դու, որդեակ:

— Շիրակայ կողմերեն:

— Ի՞նչ գործով գնացիր Եդեսիա:

— Ազգականի մը ժառանգութիւն կար, այն առնելու համար.

— Գոնէ յաջողեցա՞ր, նպատակիդ հասա՞ր:

— Քիչ-շատ յաջող գնաց գործերնիս, Կամսարական իշխանը արաբացի նժոյգ կ'ուզէր երեք հատ, անոնք առինք իւր հաշուին, եւ այնպէս կը դառնանք:

— Մենք Կամսարականաց հետ բարեկամ ենք, խնամութիւն նաեւ ունեցել ենք, այդ կենդանիները մեզ նաեւ ծախէք՝ զինք գոհ կ'ընէք կարծեմ: Բայց այդ խօսքը թող մնայ հիմա:— Արաբաց վրայ ի՞նչ կը գրուցուի Եդեսիա:

— Մեծ երկիւղ կայ այդ բարբարոսաց յարձակմունքեն: Վասնզի ինչպէս կը պատմեն բոլոր ասորոց տիրէր են արդէն եւ Կիլիկիա կը յարձակին:

— Մեզ է, շատ վնաս տուին անօրէնները, եղբօրս տան մուխը մարեցին, անճետ ըրին աշխարհքէ:

— Բայց մենք լսեցինք, Տէր, երբ Եդեսիա էինք թէ ձեր եղբօրորդին իւր քեռույն Կամսարական Սուրեն իշխանի հետ ազատէր են դերաթենէ եւ հասեր են Մալաթիայ:

Այս խօսքերն ամենայն միամտութեամբ գրուցելով Գրիգոր, հօրեղբօր կերպարանքը դիտեց, որ լսելուն յօնքերը կնճռեց, բայց դարձեալ անտարբեր կերպն առնելով րոպէին վրայ բերաւ.

— Երանի՛ թէ ստոյգ լինէր այդ լուրը, բայց գազանաց ձեռքէն ազատիլ դիւրի՞նք քան է: Ես քանի՛ խնդրակներ դրկեցի Արաբիայ, ամենն էլ անօգուտ, պարապ դարձան: Գաւառը՝ Կոզովիտ աւերակ եղաւ, օգնեցի բնակչաց, փախստականները դարձուցի, ջանացի, որ երկիրը շէնսա, եղբօրորդիս, որ գայ շէնք շնորհք գտնէ, ըսի, անցեալ տարի դարձեալ եկան անօրէնները, Դուինը աւարեցին, այս ամառ եկան մտան Այրարատ, եւ հիւանդ էի, չի կրցայ ելնել, Աստուածերկա՛ր կեանք տա, Ռշտանեաց Տէրը Արծափայ քով լաւ հարուած քը տուաւ անօրինաց, Համագասպին հրաման դրկեցի, որ երկրին յօդ տանի, բայց աւերակ աւերակի վրայ աւելցաւ: Աստուածինքն ողորմի, ի՞նչ գրուցեմ:

— Դուք, Տէր Մամիկոնէից, իբրեւ հայ եւ նախարար ձեր պարտքը կատարէր էք, եւ շատ կարելի է, որ ձեր այդ խնդրակաց շնորհիւ ազատած լինին այդ Մամիկոնեանն ու Կամսարականը:

Այս խօսքերուն, ծեր աղուէսը շեշտակի եւ խուզարկու նայուածք մը ձգելով երիտասարդին վրայ եւ տեսնելով նորա պարզամիտ ձեւը, իւր կասկածները դարձեալ փարատեցան եւ բեկեալ ու ցաւած սրտիւ պատասխանեց.

— Եմ խնդրակներս երկու տարի եւ աւելի է, որ գնացին եւ դարձան յուսահատ. երկուքն էլ վախճանուած են խոստովանող մահուամբ, իրենց հոգիները մեզ բարեխօս ընդունի աստուած:

Եւ այս գրուցելուն՝ երեսը կը խաչակնքէր, Գրիգոր պարտական լինելով նորա խաբէութեան հետեւելու ինքն էլ խաչակնքեց, եւ որոշեց այլեւս իւր կողմէն չի կրկնել այդ ազատութեան դիպուածը, վասնզի յայտնի տեսաւ, որ անյագ ծերը այդ ժառանգութեան տիրանալու մեծ փափաղ

ունէր եւ իր նպատակին հասնելու համար ամէն բանի ձեռնարկել կարող էր. ուստի ոտք էլաւ հրաժարականը տալու համար, իսկ Մուշեղ՝

— Նիստ, որդի, ի՞նչ կը շտապես,— ըսաւ,— սա նժոյգներուն խօսքը դեռ չի կրցանք լմնցնել, քեզի էլ մեղք է, ես գիտեմ, որ հիմա այդ Կամսարականք Արշակունեաց տեսարք՝ մեծ գին չեն կարող վճարել, վասնզի իրենց մեռած եղբօր Սուրենի ժառանգութիւնը Բագրատունեաց Տիկնոջ ծախեցին, ուստի դու լաւ կ'ընես եթէ մեզի տաս այդ կենդանիները եւ արժեքն ընդունիս մեր գանձէն:

— Ձեր կամքը հրաման է, իշխան, բայց ես եւ իմ ընտանիքս Բագարան կը բնակիմք եւ եթէ ձեռնունայն դառնանք՝ Կամսարական իշխանին կամքը առանց կատարելու, ձեր իմաստութիւնը կերեւակայէ թէ ի՞նչ դժուար վիճակի մէջ կրնանք գտնուիլ:

— Այո, այդ ճշմարիտ է, բայց Կամսարականք շատ բարեսիրտ են եւ ներողամիտ, միայն այդ Սուրենը շատ խիստ եւ չարահոգի էր, ես իրեն պէս կամակոր, ռիսապահ տղայ չեմ տեսել հայոց իշխանաց մէջ, Աստուածը ուսաւորէ հոգին: Բայց Ներսէս լաւ մարդ է, անյիշաչար է, դու կրնաս աներկիւղ ձիերն ինձ տալ, որդի՛:

— Շատ սիրով, միայն մենք պզտի մարդիկ ենք, կը վախենք, իշխան, հրաման տուէք ձեր ատենադպրին երկու տող գրել՝ իմացնելով Կամսարական իշխանին թէ ձեր բարձր հրամանին հնազանդելու համար ձիերը թողինք. եւ մեր նուաստութիւնը ուրախ եւ հանգիստ սրտով կ'երթանք:

— Հիմա շուտով ճամփա՞յ պիտի ելնէք:

— Ոչ, դեռ քանի մը օր հոս ենք: Դեռ ուխտ ունինք Սուրբ Կարապետ...

— Լաւ՛, դեռ ժամանակ կայ այս նիւթիս վրայ խօսելու: Վաղն առաւօտ այս ատեններս եկ տեսնուինք:

— Հրաման է իշխանիս,— ըսաւ Գրիգոր եւ խոնարհաբար ողջունելով երբ դուրս պիտի ելնէր՝ սպասաւոր մը ներս մտաւ ձեռքը թուղթ մը եւ ըսաւ.

— Տէր, պատգամաւոր սուրհանդակ մը Կամսարականաց Ներսէի իշխանի կողմէն հասաւ, այս թուղթը կը բերէ Ձեր տէրութեան:

Մուշեղ առաւ թուղթը կնճռոտ եւ զբաղած երեսով, ձեռքով նշանացի իմացուց Գրիգորի, որ կրնայ երթալ, եւ նա էլաւ դուրս, բայց բնականաբար շատ հետաքրքիր էր իւր քեռույն պատգամաւորը տեսնելու եւ իւր մօր ընտանեաց վրայ տեղեկութիւն առնելու, վասնզի մորմէն յուսահատած՝ խօսքն անգամ կը վախէր ընելու. մանաւանդ որ հօրեղբայրը կը տեսնէր յայտնի թէ իւր մահուան ինչչա՛ փ աւելի կ'ուզէր հաւատալ քան կենդանութեան: Սակայն դանդաղիւ այս ապարանից մէջ խելք չէր, ուստի էլաւ դուրս եւ հարցուց զգազրիկ. իսկ սա զինք տեսնելուն՝ խորհրդաւոր կերպարանք առած մօտեցաւ եւ կամաց ձայնով «Երթա՛նք, իշխանիկս, քեզ բանէր ունիմ պատմելու»,— ըսաւ: Եւ երբ պալատէն քաղաք կ'իջնէին, սկսաւ Գազրիկ իւր պատմութիւնը.

— Նախ պէտք է գրուցեմ թէ քու հօրեղբայրդ՝ եթէ ծառայից հարցնես՝ շատ... ընդունելի մարդ չէ: Որովհետեւ նոքա այնպէս կը պատմեն թէ շատ սուտ եւ խարդախ է: «Անպիտա՛ն, կ'ըսէր մեկը միւսին, գնացիր Բոնաշեն չորս ամիս տունդ պառկեցար, ետքը մէջտեղ էլար թէ Արաբաց երկիրը

գնացի իշխանին եղբոր որդին փնտռելու համար, մեռեր ու թաղուէր է ըսիր երդումով, եւ ահա ամէն տեղ ձայն կը տարածուի, որ Գրիգոր եւ քեռին Սուրեն՝ երկուքն էլ ողջ եւ կենդանի ազատէր Հայաստան կու գան: Այդ մարդիկն այնչափ տարի քու խաբէութեամբդ չարչարուէր են, եւ քու սուտ երդմանց համար Կամսարական իշխանին խնդրակները ետ դարձան ու նոցա փրկանաց դիները ետ տարին»:

— Լաւ՛, այս ի՞նչ կը նշանակէ, Գագրիկ,— այն միայն որ հորեղբայրս խարդախ ծառայ մը ունի եղեր, որ զինք խաբէր է:

— Բայց դու պատմութիւնն ամբողջ մտիկ ըրէ՝ վերջը դատէ: Այդ ծառան առաջ համբերեց, կատակի տեղ առաւ այդ խօսքը, յետոյ երբ մէկ քանին վրայ ինկան եւ սկսան զինք նախատել՝ «Ես իմ գլխես այս բանը չի հնարեցի, եղբարք, մեծ իշխանին հրամանաւ եւ խրատով չարժեցայ», ըսաւ: Այն ժամուն եւ կարծեցի թէ ամէնքը պիտի լռեն, բայց ահա մէկն էլաւ, «Իշխանը այդպիսի բանէր հնարելու շատ վարպետ է, ըսաւ, այս ամառ, երբ իրեն լուր տուին Ամդայ թէ արաբը կու գայ՝ ձայն չի հանեց, չիմանալ կեղծեց. երբ Տարօն մտնելու եղած՝ հազիւ թէ գեղերու ձայն տուաւ, որ ամբանան, շատ մարդ ոտքի տակ գնաց, ինքն էլ սուտ հիւանդ եղաւ, երբ Ռշտունին օգնութեան գօրք ուզեց»: Ամէնքն այսպիսի պատմութիւններ ըրին: Յայտնի կը խօսին եւ կը զրուցեն թէ ինք Կոզովիտ գրաւելու համար եղբորորդոյն քու մահը կը փափագի: Հիմա իմացա՞ր, խելքը ժամ առաջ փախչիլն է: Այսպիսի բան եւ հորեղբորդ համար չէի համարձակէր զրուցել, բայց իւր ամէն ծառայք երեքը, չորսը համարձակ միաբան կ'ըսեն:

— Բայց ես, Գագրիկ, ուրիշ բան մը կը մտածեմ, Կամսարական Ներսէի իշխանի կողմանէ պատգամաւոր մը եկեր է Մուշեղի, ինձ շատ փափագելի է այդ մարդը տեսնել. բայց հորեղբորս կերպէն յայտնի եղաւ թէ ինք չուզէր իմ տեսութիւնս նորա հետ՝ որովհետեւ մեր նժոյգներն առնուլ կ'ուզէ, եւ ես ըսի թէ Ներսէին են նոքա:

— Ես երթամ այդ մարդը տեսնելու:

— Երթալ դիւրին է, բայց ի՞նչ պատճառանք պէտք է կարկըտես, հնարես ներս մտնելու համար:

— Այդ չգիտեմ... ի՞նչ զրուցեմ... կրտեմ թէ ես, որ շիրակացի եմ, լսեցի թէ մեր գաւառացի մարդ եկեր է եւ ինձ ազգական, նա կու գամ տեսնելու:

— Երթանք հիմա իջեւան եւ այդ մասին մտածենք:

ԳԼՈՒԽ ԺԹ

Իսկ նոյն միջոցին Մուշեղ Մամիկոնեանց մեծ իշխանը, Գրիգորի երթալէն վերջ Ներսէիի նամակը ձեռքը՝ քիլ մը մտածեց եւ յօնքերը պարզելով աչքերը վերուց սպասաւորին, որ կը սպասէր

— Այդ պատգամաւորը հոս բեր, բայց զգուշացիր, որ այդ երիտասարդին հետ չի տեսնուի, եւ ոչ միայն չի տեսնուին՝ այլեւ իրար ամենեւին չի տեսնեն:

Այս հրամանն առնելով սպասաւորն էլաւ դուրս, եւ երբ Գրիգոր հեռացաւ՝ առաւ պատգամաւորն ու բերաւ իշխանին քով. սա անշարժ՝ մտնող մարդուն վրայ ականարկ մը նետելով, վայրկեանին ճանչեց իւր եղբոր Դաւթի հաւատարիմ մեր քաջածանօթ Զաւենն էր որ իւր զինուորական

կերպարանքն ու սպառազինութիւնն ձսռած աւելի երիտասարդ կ'երեւեր, քան թէ մշակի հագուստներով ի Պոլիս:

— Բարի է գալուստդ, Ջաւէն եղբայր,— ըսաւ Մուշեղ,— ուրախալի լուր մը կու տայ մեզ քու բերած նամակդ, եղբօրս աղջկան Պոլսէ դարձն աւետելով, ինչչափ որ դժուար հաւատալի էլ լինի, դարձեալ մեծ ուրախութիւն կ'իմանանք այսպիսի լուր մը առնելով եւ շնորհակալ ենք Կամսարական իշխանին, որ մեզ գայն կ'իմացնէ: Միայն նամակը այնպիսի խօսք մ'էլ ունի, որ ես չի կրցայ հասկնալ, ի՞նչ կը նշանակէ. «Եթէ Գրիգոր օր մը երեւան չելնէ, Ձեր եղբօր Դաւթի ժառանգ յայտնի լինելով, Արփենին, Մամիկոնեանց եւ Կամսարականաց սերունդը բոլորովին շիջեալ չի համարուի: Այս միայն ուրախութեան առիթ է Ձեզ համար, ինչպէս եղաւ մեզ համար»:

— Մեծ իշխան, ես գրագէտ մարդ չեմ,— պատասխանեց Ջաւէն,— որ ձեզ պէս կարենամ իշխանական դրութեանց մեկնութիւն տալ, բայց ինձ այնպէս կ'երեւայ թէ այդ խօսքերը կը նշանակեն. Աստուածմի արասցէ եթէ Գրիգոր իշխանը մեռած նաեւ լինի, իւր քոյրն Արփենին օրինաւոր ժառանգ է հայրենի իշխանութեան եւ կալուածոց:

Եւ այս խօսքերն ըսելուն՝ տեսնելով Ջաւէն Մուշեղի երեսին խաւարիլը, շուտ մը աւելցուց.

— Դարձեալ կը կրկնեմ, իմ խելքս չի հասնիր, եւ տեղեկութիւն չունիմ ամենեւին օրինաց. ձեր հրամանէն բռնադատ եալ ըսի ինչ որ ինձ թուեցաւ:

— Այո,— ըսաւ Մուշեղ հեգնական ժպիտով,— եթէ այդպէս կ'իմանան Կամսարականք, բոլոր նախարարական օրէնք եւ սովորութիւնք վեր ի վայր կը լինին, եւ Բաբելոնական խառնակութիւն կը տիրէ Հայաստան:

— Բաբելոն գնացած չեմ, Տէր իշխան,— զրուցեց ամենայն պարզամտութեամբ:

— Այո, Բաբելոն գնացած չես, բայց անոր շրջակայքը գտնուած ես:

— Լսած եմ, Տէր, Տիգրան եղած ժամանակս, եւ դուք նաեւ հոն էիք, արքայից արքային դուռը, թէ Բաբելոն շատ հեռու չէր:

Մուշեղ, որ մարդը կը ճանչէր եւ չէր իւղեր վիճաբանութեան մէջ մտնել շինական զինուորի մը հետ՝ չիմանալու զարկաւ այդ սրախօս պատասխանը եւ խիստ ձայնով հարցուց.

— Այդ նամակը ե՞րբ գրեց իշխանը, ո՞վ կար իւր քովը, նամակի գրութեան տեղը Դուին դրուած է:

— Այո՛, Տէր, Ռշտանեաց իշխանին հետ եւ իւր պալատն էին կաթողիկոսն եւ ուրիշ նախարարք, երբ Կամսարական իշխանն զիս փնտռել տուեր էր եւ ինձ յանձնեց ձեր տէրութեան տանիլ այս նամակը, եւ պատասխանը բերել:

Մուշեղի երեսը բոլորովին մթնեցաւ, եւ զսպեալ կ'իրքով ըսաւ.

— Դու միա՞յն եկար թէ ուրիշ մարդ էլ ընկեր ունիս:

— Կը տեսնէք, Տէր, թէ ես ինչչա՞փ ծերացեր եմ. Կամսարական իշխանը ինձ հետ երկու թիկնապահ էլ դրաւ:

— Ո՞ւր են այդ մարդիկը:

— Վարը քաղաքը թողի եւ ես միայն ելայ:

— Բայց պետք է դիտարկել, որ ես առանձին այդ նամակին պատասխան չեմ կրնալ տալ. պետք է Համագասպ Մամիկոնեանի նաեւ հաղորդեմ եւ ըստ այնմ պատասխանեմ:

— Ենք մեզ ըսաւ թէ այդ նամակին պատասխանը Մամիկոնեանց նահապետին կը վերաբերի, եւ այդպէս նամակաւ պատասխանել խոստացաւ Կամսարական իշխանին, վասնզի ես հոս չեկած Համփու վրայ Խնուն հանդիպեցայ եւ նամակ մէլ իրեն ունէի՝ տուի:

— Այս ի՞նչ կը նշանակէ,— ըսաւ դառնութեամբ իշխանը,— կաթողիկոս, զօրավար, նախարար միաբաներ են թուի թէ իմ անձիս դէմ, բարեկամական նամակի մը ձեռով փափագ կայ հին նահապետական դրութեան օրէնք եւ սովորութիւնդ վեր-վար ընելու, եւ այն միջոցին, որ ինձ նամակ մը կ'ուղարկեն, Համագասպայ նաեւ յուղարկել ի՞նչ ըսել է. կ'երեւայ թէ Մամիկոնեանս տան մէջ տարաձայնութիւն ձգելու կամք ունեն:

— Տէր իշխան, ես այդպիսի իմ մտացոյ կարողութենէ վեր խնդիրներու մէջ չեմ կարող մտնել, ինձ ինչ հրամայեցին ըսել՝ ըսի, ինչ հրամայեցին ընել՝ ըրի: Հիմա դուք եւս ինչ պատասխան որ հրամայեք տանիլ՝ կը տանիմ:

— Տէ՛ր, դու ի՞նչ բանի կը խառնուիս, մա՛րդ, քեզ հետ խօսողն ո՛վ է, ես ինքնիրենս կը խորհրդածեմ:

— Շատ բարի շատ իրաւացի է ձեր յանդիմանութիւնը, ներեցեք իմ միամտութեանս:

— Այդ աղջիկը քանի տարու կայ հիմա, եւ ի՞նչ նոր հրաշքով մէջտեղ ելեր է.

Զաւէն լուռ կեցաւ եւ գետին կը նայէր:

— Քեզ կ'ըսեմ, մա՛րդ, ինձ պատասխան չե՛ս տար:

— Կը ներեք, իշխան, ես կարծեցի թէ դուք ինքնիրեննիդ կը խորհրդածեք, եւ ուշադրութիւն չըրի ձեր հարցմունքին:

— Լաւ՛ մարդ ընտրեր են Կամսարականք ինձ յուղարկելու:

Դարձեալ Զաւէն լուռ կեցաւ. իսկ Մուշեղ ոտք ելնելով եւ խիստ դեմքով ըսաւ.

— Դու գնա՛, հանգչէ դուրսը, եւ երբ յոգնութիւնդ առնուս, կարելի է աւելի շնորհքով խօսիս իշխանաց հետ:

Եւ այս գրուցելով՝ ինք սկսաւ վեր-վար շրջագայիլ սենեկին մէջ: Այս Կամսարականաց նամակը բոլոր իւր խորհուրդներն հիմն ի վեր կը տապալէր, վասնզի Բագրեւանդայ գաւառին մէկ մասը, որ Գրիգորի մահուամբ ապահով իրեն սեփականեալ կը կարծէր, հիմա կը տեսներ, որ փոքրիկ աղջկան մը մէջտեղ ելնելու՝ կ'ուզէին իրմէ յափշտակել: Եթէ Կամսարականք միայն լինէին ինդրոյն մէջ՝ պատրաստ էր իւր պատասխանը, բայց ժողով մը նախարարաց ի Դուին, ի գլուխ կաթողիկոսն եւ մանաւանդ Թեոդորոս Ռշտունի, որ խօսելէ աւելի գործել գիտէր, վտանգաւոր դրացի, որուն մէկ ձեռքը Բզնունեաց գաւառն ակը եւ միւսը Բաղէշ, այնպէս որ արեւելքի եւ հարաւոյ կողմէն իբրեւ թէ գրկած էր իւր Տարօնս երկիրը, իրեն սրտին միշտ երկիւղ եւ կասկած ազդած էին, իսկ հիմա կը տեսներ նոյն Թեոդորոս Արծափաց պատերազմի յաղթութեամբ պսակեալ՝ Կամսարական Ներսէհ գործիք առած իւր ձեռքը՝ փոքրիկ աղջկան մը կեղակարծ իրաւունքը կը պահանջէր իրմէ: «Եւ ինչ խօլական եւ անտեղի իրաւունք որ հիմն չունի, կ'ըսէր ինքնիրեն, ո՛վ օրէնք գրած է, որ աղջկունք կարենան նախարարական կալուած ժառանգել, ո՞ւր

կ'երթայ աչս պէս նախարարութեանը նահապետական իրաւունքը: Բայց Համագասպ տկարամիտ մէկն է, կելնէ յիմարաբար հաւանութեան թուղթ մը կը գրէ փոխանակ բողոքելու, եւ Թեոդորոս կը հասնի իւր դիւական նպատակին Մամիկոնեանք տկարացնելով եւ բաժնելով Պէտք է շուտով տեսնեմ այդ տղան, այո, այո մորուեղ տղան, որ չի մեծնար, եւ եթէ ձեռքէն չբռնեմ կ'երթայ, կը գլորի գահավէժէ ի գահավէժ, բարեբախտաբար որ չի նմանիր այդ յանձնապաստան երիտասարդ իշխանազանց, որ վատահ իւրեանց գիտութիւն, ուսմունքըսած բաներուն, կը խօսի, կը վիճեն, այս տրամաբանութիւն է, այդ փիլիսոփայութիւն է, այն աստուածաբանութիւն է ըսելով, վարդապետի յատուկ ձանձրալի երկարաբանութեամբ: Այլ խրատի կը լսէ եւ կը յարդէ իւր Նահապետին հրամանները»:

Այս մտածութեամբք Մուշեղ բոլորովին մոռցեր էր այդ շիրակացի երիտասարդը եւ արաբացի նժոյգները: Նոյն վայրկենին նամակաւ սուրհանդակ կը հանէր ի Խնուն առ Համագասպ, որ դա շտապաւ, առանց պատասխանելու Կամսարականին: Եւ ինք, երբ քիչ մը հանգստացաւ եւ սկսաւ ցուրտ արիւնով խորհրդածել՝ զոջաց, որ Զաւէնի հետ խօսելուն կիրք յայտնէր էր, վասնզի ի բնէ խորամանկ եւ քինախնդիր մարդ լինելով, շատ քիչ կը հանդիպէր իրեն բարկանալ եւ յայտնել իր սիրտը, ուստի Զաւէնն հարցուց, եւ երբ իմացուցին թէ դնացեր իջեր էր քաղաք, խնդրակ հանեց ետեւէն, որ գայ:

Իսկ Զաւէն, որ Մուշեղի զօշաքաղութեան եւ նախատանաց առջեւ գայրոյթը հազիւ կրցեր էր զսպել, եւ մեծ ուրախութեամբ իւր ներկայութենէն հեռացեր, դուրս ելնելուն՝ չորս-չորս ոտք իջաւ սանդուխները, ձիուն վրայ նետուեցտաւ եւ հասաւ քաղաք: Իջեւանին առաջ, ուր թողէր էր իւր երկու թիկնապահները, երբ ձիէն կ'իջնէր՝ տեսաւ որ նոքա գուարթ եւ ուրախ կը խօսին մարդու մը հետ, զօր կը հրաւիրէին երթալ իրենց հետ ընթրելու, եւ մէկն ուրախութեամբ արբած

— Մուրբ Խա՛չ վկայ, որ քեզ հոստից յունայ չեմ թող տար, կ'ըսէր, դու մարտիրոս, դու խոստովանող ես Գագրիկ, դու առաջինն ես, որ կը տեսնեմ այդ անիծեալ աւազակաց ձեռքէն աստծով ազատ եալ, երթանք ընթրենք, մեր Զաւէն եղբայր իշխանին հետ անշուշտ կընթրէ այս գիշեր, երթանք, Մշոյ գիտուով գուարթանանք:

— Տղա՛ք, զիս թողէք, իմ իշխանիկս ինձ կսպասէ, ես՝ փառք տուի աստուծոյ, զաւակացս, ընտանեացս ողջ-առողջ ըլլալուն լուրը ձեզմէ իմանալով: Բայց այն պատուական տղուն ինչպէ՞ս համարձակիմ, ի՞նչ բերնով ըսեմ թէ քու մայրդ, քոյրդ մեռեր են, մէկ փոքրիկ տղեկ մը միայն ազատէր է:

Ձիւնը, որ հեզիկ եւ խոշոր կու գար նոյն միջոցին՝ վարագոյր մը եղած ծածկած էր Զաւէն եւ իւր ձին այս մարդկանց աչքէն, օտարականին խօսքերը Զաւէնի բոլոր ուշը զարթուցին եւ, առանց երկար խորհրդածութեան՝ սիրտը տրոփելով՝ ձեռքը նորա ուսին վրայ դնելով եւ բռնելով իբրեւ թէ չի փախչի, իւր հայրական ձայնով ըսաւ.

— Ռրդեա՛կ, զրուցե՛, ո՞վ է քու իշխանիկն, պատուական տղան, որուն չես համարձակիր ըսելու թէ մայրը, քոյրը մեռեր են եւ փոքրիկ տղեկ մը միայն մնացեր է: Զրուցե՛, ո՞վ է:

Իսկ Գագրիկ շփոթած՝ դարձաւ եւ Կանչելով Զաւէն ձեռքը պագաւ. իսկ սա առանց միտ դնելու այն յարգանաց, որ ամէն հայ երիտասարդ սովոր է մատուցանել ծերութեան՝

— Զրուցե՛, որդեակ, զրուցե՛ այդ իշխանիդ անունը,— կրկնեց հրամայաբար:

- Գրիգոր Մամիկոնեան:
- Ո՞ւր է, ո՞ւր, այն գրուցէ՛:
- Վերը՝ հիւրանոցի սենեակը:
- Տէ՛, քալէ ցոյց տուր:

Ծերը կը վազեր սանդուխներէն վեր այնպէս որ երիտասարդներն հազիւ կը հասնէին իրեն, իսկ երբ դռան մօտեցաւ, եւ Գագրիկ «հոս» ըսաւ, ծերուն ուրախ երեսը մթագնեց, վայրկեան մը Գագրիկի թեւէն բռնեց, արգիլեց դուռը բանալու.— կը մտածէր, այո, այն կը մտածէր ինչ որ քիչ մը առաջ Գագրիկ գրուցէր էր. «մայր մը, քոյր մը մեռեր են»:

Բայց ինչ որ արգիլեց ուրիշին՝ չի կրցաւ արգիլել իւր սրտին, բացաւ դուռը եւ մտաւ: Քառակուսի սենեակ մէր լուսամուտը երդիկէն. դռան անմիջապէս դիմացը վառարան մը իւր գեղեցիկ բոցով խուցին աղքատիկ վիճակը կը լուսաւորէր եւ կը գուարթացնէր. վառարանին երկու կողմը տախտակամած, վրան քանի մը կապերտ, ձիոց թամբք եւ տապալակք, կաշեայ մախաղք եւ զէնք, ահա սենեակը, ուր նստած էր Գրիգոր եւ տխուր կը մտածէր: Երբ դուռը բացուեցաւ եւ ինք տեսաւ Զաւէնի կերպարանքը, որ չորս տարուան միջոցին քիչ մը աւելի ճերմկեր էր միայն՝ վայրկենին ճանչեց, «Զաւէն հայրիկ» ըսաւ եւ ցատկեց ուրախութեամբ վիզը փաթթուեցաւ, իսկ Զաւէն՝ «Ոհ, իմ իշխանիկս, Աստուածքեզ պահէ» կ'ըսէր եւ աչքերէն արտասուք կը հոսէր: Երբ առաջին վայրկենին յուզմունքն անցան,

— Զրուցէ՛, Զաւէն հայրիկ, ի՞նչ եղան իմ մայրս, քոյրերս...

Չէ՞ս խօսիր, ո՛հ ամենքն էլ, ամենքն էլ մեռան, ո՛վ Աստուածիմ,— ըսաւ Գրիգոր եւ նստաւ տախտակին վրայ ու ձեռքը ճակտին տարաւ:

— Ոչ ամենքն էլ, իշխանիկս, Աստուած Արփենին քեզ պահեց, ինչպէս զքեզ իրեն:

Հեկեկանաց խողովակ ձայն մը ու «մայր իմ, մայր իմ... ո՛վ սիրելի մայրս... ո՛վ հրեշտակս» բառերը միայն կը լսուէին երբեմն, եւ չորս հոգւոյ շնչառութիւնը կարծես դադրած էր եւ լուռ այս որդիական ողբոց առջեւ. կրակը կը ճարճատէր, ոչինչ ուրիշ շշուճ չէր լսուէր սենեկի մէջ: Հեկեկանքը կ'ընդմիջէին երբեմն տխուր լռութիւն կը տիրէր, որու դռն հեկեկանք եւ հեծութիւն կը յաջորդէին դարձեալ: Գրեթէ ժամ մը այս վիճակը տեսեց եւ Զաւէնի օրինակին հետեւելով ամենքը լռութեամբ յարգեցին նորա ողբը, մինչեւ ելաւ Գրիգոր ջուր ուզեց, խմեց, լուացուեցաւ: Դառնալով Զաւէնի՝

— Զաւէն հայրիկ,— ըսաւ,— չորս տարի է կ'երեւակայէի, կը գուշակէի թէ այս սրտիս ամենադառն գոյժը պիտի լսեմ, բայց այնչափ տկար է մարդկային սիրտը, որ շատ անգամ ինքզինքիս յոյս կու տայի եւ զիս կը խաբէի... ո՞ւր է հիմա Արփենին, լաւ՞ է, առո՞ղջ է...

— Փա՛ռք աստուծոյ առողջ է եւ կայտառ, եւ ինչպէ՛ս գեղեցիկ, եւ ինչպէ՛ս խելացի, եւ ինչպէ՛ս...

— Ո՞ւր է հիմա:

— Մաղասբերդ, մօրաքրոջ՝ Մամեր տիկնոջ քով է, եւ քեզ կսպասէ:

— Ին՞ձ կսպասէ... յոյս ունէի՞ք դուք իմ դարձիս, զիս ո՞ղջ գիտէիք:

— Ուրիշներն երբ գրեզ մեռած կը համարէին՝ ես կը հաւատայի միշտ թէ քու ողջ դարձդ պիտի տեսնեմ, բայց կը յուսայի քեզ հետ տեսնել Սուրէն իշխանը, միատեղ չէի՞ ք:

— Միատեղ էինք, բայց ճամփան գատուեցանք ակամա... երկայն պատմութիւն:

— Այո, պէտք է երկայն խօսինք, իշխանիկս. թշուառ եւ սգալից պատմութեանց յուսանք Աստուածվերջ տա, եւ ուրախ պատմութիւնք յաջորդեն, վասնզի այս քանի տարիներ են...

Այս միջոցին սենեակին դուռը բացուեցաւ, եւ վանապետը ներս նայելով դուրսը կեցողներուն՝ «Ահա հոս են փնտռուած մարդիկդ»,— ըսաւ եւ գնաց:

Երկու թիկնապահք Մամիկոնեան իշխանին ներս մտան, եւ ողջունելով զգաւէն, «իշխանը քեզ կ'ուզէ, Ջաւէն եղբայր»,— ըսին:

— Շատ բարի, ժամանակն արդէն ուշ է, վաղն առաւօտ կանուխ կու գամ:

— Մեզ այս իրիկուան համար պատուիրել:

— Իմ յարգանաց ողջոյններս խնդրեմ իրեն մատուցանել. այս երեկոյ ծերութեանս ներողութիւն շնորհէի վաղվնէ վերջ եթէ հաճի բոլորովին իրեն հիւր կը լինիմ:

Մարդիկը քիչ մը մտածեցին, ողջունեցին եւ գնացին դժգոհ:

— Հօրեղբօրդ հետ տեսնուեցա՞ր, իշխան,— հարցուց ծեր զինուորը:

— Այո, Ջաւէն հայրիկ, միայն առանց զիս յայտնելու:

— Այդ կ'իմանամ,— ըսաւ ծերը ժպտելով,— ի՞նչ մտածեցիր:

— Այն որոշեցի, որ ժամ առաջ հեռանամ Տարոնոյ:

— Ապրի՛ս իշխանիկս, ես միշտ կ'ըսէի թէ դու շատ խելօք ես: Ուրեմն հիմա կ'ընթերենք, կը հեծնենք ճամփայ կ'ելնենք:

— Այ՛ս գիշեր, — հարցուց Գրիգոր զարմանքով:

— Այո, իշխանիկս, պապենական առակը «Աղուէսի շուքին տակ չի պառկիլ» կը պատուիրէ:— Տղա՛ք, դուք ելէք, մեզ ընթրիք պատրաստեցէք, շուտով ձիերան գարին կախեցէք:

Տղաքը ելան, եւ երկուքը միայն մնացին:

— Բայց ինչո՞ւ այդչափ շտապենք, հայրիկ:

— Քու հօրեղբայրդ է՝ բայց շատ օձ է, իշխանիկս: Ես զինք լաւ կը ճանչեմ: Քիչ մը ձիւնի նեղութիւն կը քաշենք երկու ժամի չափ, բայց աւելի ապահով եւ հանգիստ կ'երթանք՝ Առաքելոց վանքը այս գիշեր կ'անցնենք, եւ վաղն առաւօտ ի՛նչ ճամփայ բռնելիս կը մտածենք:

— Շատ բարի:

Շուտ մը ելան. խորովածը պատրաստ էր, Տարօնս զինին գերագոյն եւ առատ: Կերան կշտացան. երբ ձիերը կը թամբէին, Գրիգոր հրամայեց:

— Գագրիկ, երրորդ արաբացի նծոյգը Չաւէն եղբօր համար թամբել տուր, եւ բեռ եթէ կայ նոր ձիուն վրայ դնել:

Հանդարտ ձիւնաբեր օդ մէր, Չաւէն, որ Հայաստան ամբողջ իւր տան պէս կը ճանչեր, առջեւէն կը ձգէր ձիւն, մինչ որ Առաքելոց վանք հասան: Վանահայրը, որ ծերուն հին բարեկամն էր, մեծ սիրով զիրենք ընդունեց եւ այն պիշեր Գրիգոր Չաւէնի հետ ձմեռուան երկայն պիշերն անցուց պատմելով իւր պատմութիւնը եւ լսելով իւր ընտանեաց դժբախտութիւնը. հազիւ թէ առաւօտեան դէմ անկողին մտան մեր այս բարեկամը:

ԳԼՈՒԽ Ի

Մուշեղի սիրտը թէւ նեղացած էր Չաւէնի իւր հրաւերը չընդունելուն վրայ, բայց ձայն չի հանեց, ինք կը սպասէր, որ գայ առաւօտուն, կը սպասէր նաեւ այդ շիրակացի երիտասարդին, որու նծոյգները յիշեց, բայց նա եւս չերեցաւ, ձիւնը երբեմն կու գար, երբեմն կը դադրէր: Համազասպ արդեօք կու գա՞ր, կը հարցնէր ինքնիրեն, եւ ահա իւր պատուհաններէն դաշտին հիւսիսային կողմի ճամփան ճերմակ ձիւնին վրայ տեսաւ սեւութիւն մը որ երբեմն փայլ կառնուր. զինեալ մարդիկ կու գային, ուրեմն Համազասպ էր: Իսկ Չաւէն՝ կէսօր էր եւ չէր երեւար, մարդ որկեց իջեւան, որ իմանան. վանահայրը պատասխանեց թէ՛ իւր հիւրերը առանց ձիւնին նայելու, որ բաւական առատութեամբ կու գար, զիշերով թողէր Մուրբ Կարապետ գնացեր են:

Կասկածոտ մարդ՝ ինչպէս ամէն խորամանկ՝ չէր սիրէր Չաւէն առջի տեսած օրէն, իւր եղբօր Դաւթի ժամանակէն, եւ խէթիւ կը նայէր միշտ իրեն. ուստի հիմա, զիշերով անհետանալն՝ այդ շիրակացույն հետ տեսակ-տեսակ կասկածներ տվին. խումբ մը թիկնապահաց հրամայեց, որ երթան Ս. Կարապետ եւ դարձնեն բերեն զամենքը քաղցրութեամբ կամ բռնութեամբ:

Նոյն միջոցին Համազասպ իշխանը երեցաւ. ծանրագլուխ երիտասարդ մէր սա, ազնիւ, հանդարտ եւ քաղցր կերպ ունէր, իւր ժամանակին ոչ միայն ուսումնասէր, այլեւ ուսումնականը կը սեպուէր: Հայրենի հնաւանդ սովորութեանց հնազանդ եւ պատկառ, թէպէտ ակամայ՝ շատ անգամ Մուշեղի տեղի եւ անիրաւ հրամանաց նաեւ կը հնազանդէր: Թէպէտ իւր այս հպատակութիւնը ոմանք շահասիրութեան կու տային, վասնզի Մուշեղ ժառանգ չունէր եւ յամառ մարդ էր եար կարծեաց վրայ:

Սիրով ընդունեց զինք Մամիկոնեանց նախարարը, եւ բնականաբար առաջին հարցմունքն այն եղաւ թէ ի՞նչ կը պարունակէր Կամսարականաց կողմէն եկած նամակը, երբ իմացաւ թէ գրեթէ նոյն իմաստն ունէր

— Ի՞նչ պատասխան տւք՛իւր,— հարցուց:

— Դեռ պատասխան չի տուի, վասնզի ուզեցի հարցնել՝ խնդիրն աւելի ձեզ պատկանելով, որ գլուխ էք Մամիկոնեանց տան:

Այս պատասխանը գուարթութեամբ լցուց գմուշեղ, իւր իրաւունքներն կը յարգէր Համազասպ:

— Բայց ի՞նչ կարծիք ունիս այս առաջարկութեան վրայ, ի՞նչ պատասխան կարծես որ պետք է տանք: Երկրի մը կառավարութիւն կանանց յանձնել կարելի՞ է,— հարցուց Մուշեղ:

— Խնդիրը եթէ այդպէս առն ունք, կանանց իրաւունք կու տանք, վասնզի մենէ առաջ եւ մեր օրով կը տեսնենք նախարարաց այրի կանայք, որ տարիներով բացարձակ իշխանութիւն կը վարեն մինչեւ իրենց գաւակաց մեծնայր: Միւնեաց երկիրը հարիւր տարուան միջոցի մէջ երեսուն տարի կանանց ձեռք կառավարուէր է Սահաթայ եւ Բիւրեղ տիկնանց օրով, եւ բնակիչք աւելի գոհ եղեր են շատ անգամ նոցա կառավարութեամբ: Բայց խնդիրը հոն է թէ կանայք իրաւունք ունի՞ն նախարարական իշխանութիւն ժառանգելու, հայրենի ժառանգութենէն արտ մը, ազարակ մը, տուն, պալատ կրնան ունենալ, բայց կալուածական իշխանութեան օրինակ չի կայ Հայաստանի մէջ:

— Ահա պատասխանը, որ ես կ'ուզեմ ընել այդ մարդկանց, որ առանց ամաչելու այդպիսի առաջարկութիւն կ'ընեն մեզ:

— Միայն պէտք է խորհրդածէք, Տէր, որ այդ առաջարկութիւն հր կաթողիկոս, մարզպան եւ նախարարաց ժողովս մը հաւանութեամբ կը լինի:

— Այդ է, որ զիս կը զայրացնէ: Վասնզի կը տեսնեմ, որ կաթողիկոս եւ նախարար մարդու մը քմահաճոյից կը ծառայեն ստրկաբար: Եւ այդ մարդը՝ այդ Թեոդորոս, դուք չէք ճանչեր եւ ես կը ճանչեմ ու կը գուշակ եմ: Տղայ էինք Տիգրան արքայից արքայի դուռը, երբ սա էլ եկաւ, անհանդարտ, կռուասէր, բռնաւոր, կամակոր, ամէնուն կուղէր իշխել, այն տարիքին ցոյց կու տար թէ ինչ էին իւր բոլոր դիտաւորութիւնքը, որ այսօր համարձակ կ'ուզէր ի ործ դնել, սկարներուն պաշտպան հանդիսանալ եւ նոցա օգնութեամբ հզօրներուն գլուխը ջախջախել: Իրեն հոգ չեն հայրենի օրէնք, հնաւանդ սովորութիւնք եւ կանոնք, ամէն բան կարհամարհէ, առաթուր կը կոխէ իւր նպատակին հասնելու համար: Ի՞նչ էր Ռշտունեաց գաւառը, երբ ժառանգեց իւր իշխանութիւնը. փոքրիկ վիճակ մը.— ի՞նչ դարձաւ այսօր. սահագին նահանգ մը: Վասպուրականի մէջ Արծրունեաց արծիւը սմբէր, թռիչքը սանձուէր է: Ռշտունեաց բազէն թելերը կը տարածէ եւ կը խոյանայ: Բզնունեանց երկրին տէր եղաւ: Բաղէշ իւր ամրութիւնն է. Աղթամարայ ծովուն բացարձակ տէր եղաւ. Խորխոռունիք իւր ամենախոնարհ ծառայքն են դարձեր: Մոկացիք եւ մենք միայն ազատ ենք մնացեր իւր ազդեցութենէն: Հեռաւորներու՝ Վրաց եւ Աղուանից, Միւնեաց դաշնակից, մերձաւորներու բռնաբարիչ, Հայաստան այնպիսի փառասէր, յանդուգն մարդ մը չի տեսաւ Վասակ Միւնիեն ի վեր: Թագաւորել միմիայն երազն է այդ մարդուն: Կիսն էլ իրեն յարմար, տուն նստել չգիտէ, քաղքէ քաղաք կը շրջագայի աղջկութենէն որսորդութեան սովոր կին, քաղաքներ, վիճակներ որսալու կ'աշխատի, չա՛ր օրինակ ամէն իշխանագն կանանց, որ վաղը պիտի ելնեն իշխանութիւնը բաժնելու իրենց երկանց հետ, եւ ամէն տուն ապստամբութեան եւ խռովութեան բոյն պիտի դառնայ: Այդ կնոջ բանսարկութեամբ, խառնակչութեամբ բզնունեաց գաւառին տէր դարձան Ռշտունիք. երկու-երեք իշխանք խաղաղութեամբ կը տիրէին հրկրին, այդ կինը առանց երեւալու, առանց տեսնուելու մին միւսի հետ ձգեց: Ճիշտ այն ժամանակին, երբ ես զբաղած էի Հաշտենից գաւառի գործերու հետ, իշխանը հիւսիսականաց դէմ էր գնացեր: Ենք կին՝ առանց ամաչելու եկաւ Դատուան նստաւ արքայօրէն ճոխութեամբ, աստեան կապեց, ամբաստանութիւնք հնարեց, իշխան մարդիկ գատել, դատապարտել տուաւ, ինք առերես ներկա չի գտնուելով՝ իբրեւ թէ բանի մը չի խառնուեցաւ, եւ միայն վճիռն ի գործ դրաւ. մէկը Բաղէշու բերդը փակեց իբրեւ մահապարտ դատապարտեալ, միւսը՝ որու յանցանքը մեզի բողոք ըրած լինիլն էր, անբնակ կղզի մը դնել տուաւ ընտանեօք եւ երկիրներն գրաւեց. միայն Գարեգին Բզնունի, որ ոչխարի պէս ապուշ մէկն էր, թողուց երկրին մէջ, եւ դարձեալ ապահով չի համարելով Ռշտունեաց իշխանութիւնը՝ իյրտուիլակ բերաւ:

հաստատեց ծովան եզերքը այդ դաժան ծերը, Ատոմ Շահունին: Իսկ ինք՝ միշտ զբաղած է. ահա երբորդ կաթողիկոսն է, որ կը դնէ, միշտ նախարարաց ժողով կը հնարէ Դուին, եւ ժողովին մէջ ինք կը խօսի, ինք կը գործէ. համարինք թէ զինուոր է, զինուորութեան վրայ վիճի եւ վճռէ, իշխան է կառավարութենէ կը հասկնայ իրաւունք ունենա հրամայելու, բայց ի՛նչ ընենք, որ վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս կը լռեցնէ, գլխնայ աստուածաբան կը դառնա: Գիտեմ, իր փափագը միշտ ան եղած է, որ հաստատ ժողով մը կազմէ նախարարաց ի Դուին, եւ այդ ժողովքին զօրութեամբ իշխէ բոլոր Հայաստանի, բայց Մուշեղ դեռ կենդանի է:

Համազասպ լուռ մտիկ կ'ընէր այս խօսակցութիւնը, թեպէտ լաւ դիտէր թշնամիք, որ իրար կ'ատեն երբեք արդար չեն կրնար լինիլ իրենց դատողութեանց մէջ: Ուստի նստաւ, Մուշեղի բերնէն երկայն պատասխան գրեց Կամսարական իշխանի նամակին, մերժելով կանանց ամէն ժառանգական իրաւունք գաւառաց վրայ, հազիւ թէ ընդունելով Դարթի իւր եղբորորդոյն իրաւունքը հայրենի բնակարանին վրայ, որ էր Վարդանաբերդ: Այս նամակը Համազասպայ ձեռօք գրեալ՝ Մուշեղի կնքով վաւերացեալ, երբ կը սպասէին Ջաւէնի Ս. Կարապետէ վերադարձին, որ յանձնէն եւ երթա, ահա թուղթ մը բերին Մուշեղի սպասաւորք, որ շինական մը աւեր եւ գնացեր էր: Իշխանը չի բացած՝ տուաւ Համազասպայ, որ կարդայ, եւ նա սկսաւ կարդալ.

«Մեծագոր իշխանիդ Մուշեղի, Մամիկոնէից Տեառն խնդալ. ուրախալիւր լուր կը հաղորդեմ. ձեր եղբորորդոյն Գրիգորի յաջողութեամբ դարձն ի գերութենէ. իմ պաշտօնս վերջ կառնու բնականաբար ինչպէս ձեր պատասխանն առ Կամսարական իշխան՝ նորա գալստեամբ: Ձեր բարձր տէրութեան խոնարհ ծառայ՝ Ջաւէն Կաղզուանեցի»:

— Ոչ թուական եւ ոչ տեղի, քաղաքի կամ շէնի, միայն կնիք «Յիսուս Քրիստոսի ծառայ Չաւեն», ըսաւ Համազասպ գլուխը վեր առնելով:

— Խաբէութիւն կայ այս բանիս մէջ,— զրուցեց Մուշեղ,— երբ տեսան թէ ես պիտի չընդունեմ աղջկան մը երեւակայալ իրաւունք՝ այս դաւը պատրաստեցին:

— Բայց... — կ'ըսէր Համազասպ զիրը լաւ մը գննելով,— ես կը յիշեմ Գրիգորի գիրն, այս նորա գրին բոլորովին կը նմանի:

Շուտով գնացէք,— կը հրամայէր Մուշեղ սպասաւորաց,— ո՛վ որ այդ շինականը դտնէ, ինձմէ պարզն կը ստանայ:

Ծառայք դուրս թափեցան եւ ժամ մը չանցած՝ ահա տրեխաւոր խեղճուկ գիւղացի մը կանգնեցուցին Մուշեղի առաջ:

— Դո՞ւ էիր, որ այս թուղթը բերիր,— հարցուց Մուշեղ խստութեամբ:

— Այո, տէր:

— Ո՞վ տուաւ քեզ այդ թուղթը:

— Ալեւոր հեծեալ զինուոր մը:

— Ո՞ւր տուաւ քեզ այդ թուղթը:

— Արքունի ճանապարհին վրայ: Ես նորաշէնէ ելած՝ Առաքելոց վանքին մօտ տեսայ զիրենք. հինգ ձիաւոր էին. ծերը ինձ տուաւ թուղթը, որ բերեմ ձեզ, երիտասարդ մը, որ շատ լաւ ձի ունէր՝ ինձ ոսկի մը տուաւ:

— Տեսնեմ ոսկին:

— Ահա,— ըսաւ գեղացին եւ շուտ մը շորերու փաթոյթէ հանեց տուաւ իշխանին:

— Սասանեաց ոսկի մը,— ըսաւ Մուշեղ նայելէն վերջ եւ նետելով դարձուց շինականին:— Ո՞ր կողմ գնացին:

— Դէպի Բաղէշ կ'երթային:

— Ինչպէ՞ս մարդ էր երիտասարդը:

— Քսան-քսաներկու տարու, քիչ մորուորք, քաղցր եւ գեղեցիկ աչքերով տղամարդ էր:

— Լաւ՛, իմացայ. եւ իշխանը ձեռօք ըրաւ, որ երթայ:

Երբ գիղացին դուրս ելաւ ոսկին գետեղելով գրպանին մէջ, Մուշեղ երկար մտածութեան թաղուեցաւ, միտքը կը բերէր արաբացի ձիերու տէր երիտասարդը, նորա քաղցր ու գեղեցիկ աչքերը, տարիքը, դեռաբոյս միբուքը, եւ Համազասպայ ըսելը, թէ նամակին գիրը Գրիգորի գրին կը նմանէր: Այն նաեւ կը խորհրդածէր թէ Մուրբ Կարապետ երթալու խօսք ըրած էին այդ մարդիկը, եւ փոխանակ հիւսիս երթալու հարաւ կ'երթային: Ինչպէ՛ս նոյն գիշերը իւր յուղարկած խումբը դառնալով լուր բերին, թէ այնպիսի մարդիկ չէին եկած վանք:

— Բայց ինչո՞ւ Բաղէշ կ'երթային:— Չաւէն այնպէս որոշեց, որպէսզի եթէ Մուշեղ կասկածի իրենց փախստեան վրայ եւ խնդրակ հանէ, իրենք հակառակ ճամփով Ռշտունեաց իշխանութեան երկիրն արդէն հասած լինին. ինչպէս եւ եղաւ: Նոյն գիշերը մտան Բաղէշ հանգիստ: Եւ զուարթ՝ ինչչափ որ դառն յիշատակներ կը ներէին Գրիգորի զուարթ լինիք Չաւէնի խորհուրդը այն էր, որ մինչեւ Ռշտունեաց Ոստանը հասնէին չի յայտնէ մարդու Գրիգորի էութիւնը. այս նաեւ Գրիգորի փափագն էր, որ մայրը կորսնցնելէն վերջը՝ իւր բոլոր սիրտը Թէնիի վրայ դարձուցեր էր եւ չի համարձակելով ումէք յայտնել իւր սէրը՝ անձամբ կ'ուզէր երթալ տեղեկանալ: Ուստի այն գիշեր Բաղէշ անցնելէն վերջ՝ երկրորդ առաւօտուն ելան ճամփայ ուղղուելով դէպ Ոստան: Քանի՛ կը մօտենար Գրիգոր իւր նպատակին՝ երկիւղը սրտին կը տիրէր, նախանձը, որ միգուցէ՛ Թէնի իրմէ յուսահատ ուրիշի մը իւր սիրտը տուած լինի՝ զինքը կ'ուտէր:

Հինգ օր ուղեղնացութենէ վերջ մտան Ոստան: Թեոդորոս հոն չէր. ձմեռային դահլիճը զիրենք տարին սպասաւորք եւ ահա մեր հին բարեկամը Յուսիկ եկաւ ողջունելու հիւրերը եւ տեղեկանալու իրենց որպիսութեան վրայ: Գրիգորի մթագոյն հագուստները, իւր դեռաբոյս միբուքը բաւական էին, որ Յուսիկ չիշէ երիտասարդը. ուստի երբ իմացաւ թէ Գրիգոր Մամիկոնեան գերութենէ ազատ եալ եկեր է, գնաց Ռշտունեաց Տիկնոջ իմացնելու:

Բոլոր պալատը շուտ մը տարածուեցաւ այդ գալստեան համբարը, Մէթա շատ ազնիւ եւ քաղցր ընդունելութիւն ըրաւ Գրիգորի, երբ մօրը խօսքը բացուեցաւ եւ Գրիգոր արտասուքը կը ջանար սանձելու, ինք նաեւ փղձկելով, «Որդեակ Գրիգոր,— ըսաւ,— արտասուքէ մ'ամաչէր, ամէն քարէ, ապառաժէ սիրտ ունեցող անզգաները մի՛ կարծէր թէ քաջասիրտ կը լինին, ահա՛ մեր Յուսիկը,

աշխարհք ջարդուկոտոր որ լինի կաթիլ մը արցունք չունի, բայց մերկ սուր մը տեսնելուն ձեռքն ու ոտքը կը դողա»:

Տիկինը խօսքը փոխելու եւ միանգամայն տեղեկանալու համար սկսաւ հարցնել նորա գերութեան կեանքին համար, երբ Թէնի ներս մտաւ՝ իւր տասնեօթ տարիներու գեղեցկութեամբ: Գրիգորի աչքերը շլացան. Թէնի աճել էր՝ եւ իւր գեղեցկութիւնը նոյնպէս հետն էր աճել, այլայլութիւնը, փափուկ, թեթեւ կարմրութիւն մը թերեր իր երեսին, եւ իր լուսալիր աչքերը ուրախութեան եւ միանգամայն սպասող ու յուսահատ տխրութեան կնիքը կը կրէին: Մտքի արագութեամբ բաղդատութիւն ըրաւ խեղճ երիտասարդը իւր արաբական արեւն, խորշակէն, սառնաշունչ քամիներէն այրած երեսին, իւր դժնդակ գերութենէ, ճանապարհորդութեանց, սրտադողներէ, վտանգներէ հալած մաշած մարմնոյն, եւ իւր անձը շատ ստորին գտնելով ամպ մը աչքերը պատեց: Բայց երբ Ռշտունեաց Օրիորդը եկաւ ձեռքէն բռնեց, եւ բաւական միջոց ժամանակի հետը խօսելով՝ զայն սղմեց, քաջալերուեցաւ եւ Տիկնոջ հարցմունքին պատասխանելով նկարագիրն ըրաւ չորս տարուան կենաց, որ կարելի էր գրուցել տանջանաց: Տեսաւ Թէնի, որ գաղտնի աչքերը կը սրբէր, եւ երբ գերութենէ ազատեալ արաբացի խումբերու հետ իրենք երեք՝ տասնի-քսանի դէմ նկարագիրն էլ ըրաւ՝ կը տեսնէր Թէնիի կերպարանքին այլայլութիւնը եւ երբ Եփրատէ անցնիլ ու կատարեալ ազատութիւն գտնելը պատմեց՝ տեսաւ նորա ուրախութիւնը, սիրտ առաւ, եւ յուսոյ համոզմունք մը եկաւ սրտին, թէ Օրիորդը զինք կը սիրէր դեռ:

Բայց միւս կողմէն Մէթա նաեւ սրատես աչքեր ունէր: Այդ առաջին անգամ նշմարեց՝ եթէ ոչ սէր իւր աղջկան եւ երիտասարդին մէջ. գոնէ համակրութիւն: Եւ այս համակրութեան ինք հակառակ չէր, վասնզի Գրիգորի արժէքը թեթեւ կերպով չէր դատեր, այլ կը նայէր վայելուչ եւ համեմատ հասակին հետ դիմաց գեղեցկութեան, որու վրայ օդոց խստութիւնը թոյլ հարուածով անցեր եւ առնացի կորով բերելով՝ կանացի մեղկութեան ստուեր չէր թողէր: Նոյնպէս դիտեց եւ կշռեց նորա մտաւոր կարողութիւնը, որովհետեւ բոլոր այդ պատմութեան մէջ Սուրենի արժանաւոր գովութիւնները տալով՝ երիտասարդը երբեք իւր անձին պարծանքի փայլ չի տուաւ:— Իսկ ուրացութեան մասը Գրիգորը լռութեամբ անցաւ, վասնզի այդ, որ իւր սրտին վրայ կը ծանրանար՝ հազիւ թէ առանձին քահանայի մը խոստովանելու քաջութիւնը կը զգար, իսկ բազմութեան մէջ աշխարհաքարոզ լինիլ կարողութենէն վեր էր:

Թէպէտ Գրիգոր Թէնիի սիրոյն վրայ սկսաւ յուսալ թէպէտ Մէթայի համակրութիւնը կը տեսնէր, որ իր վրայ մօր խնամք կը ցրցնէր, բայց դժբախտութեան բովուց մէջ փորձեալ՝ հազիւ թէ հասակին գարունքը ոտք դրած հայր, մայր, քոյր, ազատութիւն, ստացուածք, իշխանութիւն, վերջապէս ամէն բան իրարու վրայ կորուսած՝ եւ որ աւելին է իւր ամենամերձ համասերունդ ազգականները տեսնելով, որ իւր մահուանը կը փափագէին եւ իւր կենդանութեանը զիրենք թշնամի նկատելով պարտաւոր եալ էր փախստեամբ իրենցմէ հեռանալ, շրջահայեաց կը մտածէր թէ միգուցէ՛ խաբուի՝ աղջկան եւ մօր կարեկցութիւնն ու գուրջ սիրոյ փոխանակ առնելով. ուստի յուսոյ եւ երկիւղի մէջ տատանեալ սիրտը կը ծփար, եւ դիպող ժամուն կը սպասէր Թէնին առանձին տեսնելու: Բայց ամառուան եղանակին մէջ չէինք: Ոչ պարտեզ կար, ոչ ծաղկոց, ոչ ծովու հանդարտ գեղեցկութիւն, ոչ լուսնի քաղցր նշոյլ, բոլոր յոյսը գրքատան վրայ էր, ուր թերեւս կարելի լինէր առանձին տեսութիւն մը ունենալ:

Երեկոյին ընթրեցին. Ջաւէն այս եղերգին բոլոր պատմութիւնը, որուն ինք ակնանատես էր եւ որ իրեն կը վերաբերէր պատմեց պարագութեամբ եւ ամենքը արտասուքով լսեցին. Յուսիկ նաեւ հետաքրքրութեամբ ուշ կը դնէր ամէն պարագայից. եւ երբ կէս-գիշեր եղաւ եւ Գրիգոր իրենց ի

Տարոնոյ խոհեմութեամբ հեռանալը պատմեց ու լռութիւն յաջորդեց՝ Ռշտունեաց Տիկինը կանգնեցաւ, եւ ամէնքը ոտթ ելան. «Ժամանակն ուշ է, որդեակ Գրիգոր,— ըսաւ մօտենալով,— մենք մոռցանք քու ճամփորդութեան յոգնութիւնդ յանգիւր այս գիշեր, վաղը եւ ձմեռուան մնացորդն ունինք տեսնուելու համար: Իշխանը քանի մը օրէն կու գայ, կ'իմանայ քեզ դէմ եղած անիրաւութիւնքը, իւր արդար հոգին չի կրնար հանդուրժել զրկանաց. անտարակոյս իւր բոլոր կարողութեամբ իրաւունքդ պիտի պաշտպանէ, եւ քու բոլոր քաջած նեղութիւնքդ ժամանակը պիտի մոռցնէ: Ես շատ ուրախ եմ, որ հօրեղբօրդ անիրաւութիւնը Ռշտունեաց հովանոյն դիմելու քեզ բերաւ, դու իմ սիրելի եւ սուրբ բարեկամուհոյս զաւակն ես, մի՛ զարմանար, եթէ մօր մը սիրտ զգամ քեզ համար, եւ կը փափագիմ, որ այս վիշտերուդ երջանիկ օրեր փոխանակեն»:

Այս քաղցր խօսքերուն Գրիգոր իշխանուհոյն ձեռքը միայն պագնելով պատասխանեց: Երբ նա Օրիորդին հետ իւր սենեակները քաշուեցաւ, Յուսիկ տարաւ զգրիգոր եւ Զաւէն իրենց համար պատրաստեալ սենեակները, ուր չորս տարվնէ վերջ Գրիգոր կը գտնէր փետրալից անկողին, գիշերային զգեստներ եւ իշխանական կենաց ամէն դիւրութիւն, որ Վարդանայ բերդի վերջին երեկոյնն ի վեր բոլորովին մոռցեր էր: Բայց Գրիգոր չի մոռցաւ զգազրիկ՝ իւր գերութեան եւ ճամփու ընկերը, Յուսիկի հետ գնաց զինք տեսաւ, որ թիկնապահաց հետ հանգիստ կը խորդար, եւ նորա մասնաւոր խնամող յանձնեց պատուական մարդը, ու գնաց մտաւ իւր խուցը:

ԳԼՈՒԽ ԻԱ

Առաւօտուն երբ արթնցաւ Գրիգոր, ձմեռուան արեւու ճառագայթները սենեկին պատուհանները կը լուսաւորէին. Աղթամարայ ծովակը կը փալփիլէր, բնութիւնը կենդանութիւն էր առէր: Շուտ մը ելաւ, եւ երբ հագուելու եղաւ զարմանքով տեսաւ, որ իւր տխուր զգեստներն անհետացեր եւ տեղը իշխանագնի մը վայել զգեստներ դրուած էին:

Յայտնի էր, թէ Սէթա չէր կ'ամեցեր, որ իր հիւրը ստորին վիճակի մարդկանց զգեստներով երեւա, ուստի հագուեցաւ եւ բնական գաղտնի գոհութեամբ նաեւ, վասնզի սիրահար երիտասարդ ինչչա՛ փ փիլիսոփայ որ լինէր՝ Թէնիի վայելուչ երեւելի կը փափագէր:

Բայց երբ դահլիճը մտաւ՝ զարմանքով մնաց, իշխանուհոյն քով նստած էր Ատոմ Շահունի եւ նոցա քով Թէնի: Գրիգոր որ ամենխին տեղեկութիւն չունէր ծեր զօրավարին եւ Ռշտունեաց Օրիորդին մտերմութեան եւ չէր կրնար ըմբռնել այդպիսի ընտանութիւն վասնզի դաժան ծերուն երկայն, չոր եւ դեղնած մատներուն մէջ կորած կը տեսնէր աղջկան փափուկ ձեռքը, եւ ինչչա՛ փ պիտի զարմանար եթէ մէկն ականջեն գար ըսէր թէ՛ «Այդ ահարկու ծերը միայն գիտէր իրենց սիրոյն գաղտնիքը»: Բայց առանց յայտնի ընելու իւր զարմանքը՝ ողջունեց յարգանօք, զլուխը վեր առնելով՝

— Զօրավար,— ըսաւ,— կը ճանչե՞ս Մամիկոնեան Գրիգոր իշխանը, Դաւթի որդին:

Ատոմ՝ ըռպէ մը գննելէն վերջ՝ իւր քաղցր ձայնով՝

— Տղա՛յ,— ըսաւ,— դու Սարեակի պատերազմին չէի՞ր Կամսարական Սուրբնի հետ:

— Այո, զօրավար:

— Ես քեզ կը յիշեմ, դու լաւ կռուեցար կարիքիդ համեմատ: Այս գովութիւնն ընելէ վերջ՝ վայրկեան մը կեցաւ ծերը՝ եւ

Թէնիին դառնալով, աւելցուց.

— Լաւ՝ տղայ է:

Գրիգոր Հազիւ կրցաւ այս վճռին վրայ իւր ծիծաղը սանձել վասնզի այն իւր առաջին արշաւանաց օրերը ծերը տեսեր էւ ճանչեր էր, եւ այսչափ խօսք նորա բերնէն կ'իմանար թէ մեծ գովութիւն էր: Էսեր էր նաեւ թէ ծիծաղի եւ շատախօսութեան մեծ թշնամի էր նա: Ուստի լուռ կեցաւ. իսկ ծերը անշարժ կենալէն վերջ՝

— Սուրենէ լուր ունի՞ս,— հարցուց:

— Մէկտեղ էինք Դամասկոս, ճամփան մեր փախստեան ժամանակ արաբաց ումբ մը զմեզ բաժնեց, մենք Եփրատէ անցանք, նա Կոմակենի ճամփան բռնեց, անկից վերջը լուր չունիմ:

— Քաջ մարդ է նա,— ըսաւ ծերը դարձեալ Թէնի ի դառնալով:

Իսկ Սէթա, որ իւր նամակին ընթերցմունքը վերջացուց, դարձաւ երիտասարդին.

— Ահա իշխանէն նամակ բերաւ զօրավարը, կը գրէ թէ ամիսի մը չափ ժամանակ դեռ պիտի ուշանայ, վասնզի Պոլիս մեծ խռովութիւնք էլեր են այս քանի մը ամսուան մէջ, Կոստանդին կայսրը թունաւորուած Մարտինէ մորմեն մեռեր է, եւ տեղը իւր փոքր եղբայրն է թագաւորէր: Հիմա ժողովուրդը եւ զօրքը ապստամբեր են, օրինաւոր ժառանգը՝ դեռ պատանի մը՝ նստուցեր են աթոռը: Իշխանը կը յուսաւ եւ կը գրէ թէ բազրատունեաց Ասպետին ազատութիւնն այս անգամ ապահով է, վասնզի աքսորանաց դարձին հրովարտակըր էլեր է. եւ թէ իրեն բարեկամ հայազգի մը զօրավար կարգ ված է Կարնոյ յունաց բանակին. ուստի ինք Թէոդոսուպոլիս պիտի երթայ նախ իրեն հետ տեսնուելու եւ յետոյ պիտի դառնայ հոս:

— Եթէ իշխանն ուշանայ՝ ես ինչ պէտք է ընեմ, իշխանուհի,— հարցուց Գրիգոր:

— Այդ բանին համար ամենեւին հոգ մընէր. ես քեզի համար զբաղմունք կը գտնեմ: Ահա ուրիշ նմամակ մէլ կայ, որ Արծրունեառ Սահակ իշխանը կը գրէ եւ գունդ մը զօրք ինձմէ կը խնդրէ Մարդաս տանի իւր զօրաց օգնութեան պարսիկ ասպատակաց դէմ: Վարդ եթէ այստեղ լինէր՝ նա կ'ուղարկէի, որովհետեւ հօրը հետ է, դու էլ ըս իմ զաւակս ես քեզ կ'ուղարկեմ եթէ յանձն կառնուս:

— Ամենայն սիրով, հիմա եթէ կը հրամայէք:

— Այսօր անկարելի է, վաղն առաւօտ ամէն բան պատրաստ կը լինի, եւ ճամփայ կ'ելնէք:

Գրիգորի հաճոյքը մեծ էր, օգտակար լինելու ուրախութիւնը կ'երեւեր երեսին վրայ: Իսկ ծեր զօրավարը, որ անխօս կը նշմարէր այդ երեւոյթը, մեծ ախորժով իմացաւ, եւ կամաց մը գլուխը կը շարժէր, որ իւր սովորութեանց մէջ «բարի նշան է» ըսել էր: Թէնի իւր կարգին մէջ ոչինչ նշան հաւանութեան կամ ոչ հաւանութեան չէր յայտնէր:

— Հիմա այս նամակիս մէջ կան քանի մը մութ եւ անյայտ բաներ, որ Ատոմ զօրավարէն կ'իմնաս՝ կ'ըսէ գիրը. ուրեմն այդ նեղութիւնը յանձն առնելով ինձ պիտի բացատրես, իշխան:

Ատոմ Թէնիի ձեռքը թողուց. սա ոտք էլաւ եւ հարցուց ծերուն ժպտելով.

— Մենք երթա՞նք ուրեմն, հայրիկ:

— Հը՛,— ըսաւ ծերը աննշմարելի կնճիռով մը, որ ծիծաղ կը նշանակէր եւ միայն Թէնիի պահած էր:

Գրիգոր այն ատեն ինքն էլ դուրս ելաւ եւ Թէնի ըսաւ. — Գրիգոր իշխան, մի՞ տքո՞ղ է այն ժամանակը, ո մեր գրքատունը շտկեցիր, կարգի գրիր:

— Այո՛, Օրիորդ, եւ այն ժամանակէն վերջը ինչպէս ամէն սիրելի Բանէ գրկուեցայ, գրքի տեսութենէ նաեւ գրկուած մնացի:

— Ինձմէ զատ այդ խեղճ գրքերուն այցելութիւն ընող չի մնաց այն ատենէն ի վեր:

— Միատեղ այցելութիւն մընէ՞նք,— հարցուց Գրիգոր:

— Ես էլ այն կ'ուզէի, մանաւանդ որ դու վաղը պիտի թողուս զմեզ, եւ այնչափ ուրախութեամբ:

— Այդ ուրախութիւնը՝ մինչեւ այսօր անօգուտ կեանք մը Ռշտունեաց տան ծառայութեամբ օգտակար ընելու փափագն է:

Եւ երբ մտան գրոց սենեակը երկու երիտասարդ սրտերը կը Բաբախէին, եւ Գրիգոր նո՛րս սիրելի ձեռքը յափշտակելով երկայն համբոյր մը երբ դրոշմեց՝ Թէնի հարցուց ժպտելով եւ ինքզինքը սանձելով.

— Ուրեմն զիս չէ՞ս մոռցեր, Գրիգոր:

— Կարելի էր զքեզ մոռնալ: Ի՛նչ մնացել էր ինձ աշխարհքիս վրայ եթէ քու յիշատակդ չլինէր, այն մեր վերջի գիշերը երջանկութեան, որու վրայ այնպիսի սուսկալի խավարմունք մը պիտի տիրէր... Իմ գերութեան շրթայներուն միմիայն կասկածելի՝ մանաւանդ թէ յուսահատ յոյսը այն էր, որ Թէնի թերեւս զիս չէր մոռցեր եւ կը սիրէր, այդ միայն կենաց կապ մնացեր էր աշխարհքիս վրայ:

— Խե՛ղճ Գրիգոր, եւ կը կասկածելի՞ր իմ սիրոյս վրայ:

— Ներէ, Թէնի: Այնչափ հարուածք եւ այնչափ սաստիկ իրարու յաջորդեցին, որ կարծեցի թէ իմ թշուառութեանցս փուշէ պսակը այն միայն մնացեր էր, սրտատրոփ ահուդողով կը նայէի Ոստանի տշտարակներուն: Մինչեւ որ զքեզ չի տեսայ երէկ եւ լուսալիր աչքերդ յոյս չի տուին եւ ձեռքդ ինձ չի խօսեցաւ... ո՛հ զրուցէ անգամ մէլ թէ կը սիրեմ:

— Այո՛, կը սիրեմ եւ միայն զքեզ կը սիրեմ:

Այս խօսքերուն երկար գրկախառնութիւն մը յաջորդեց, մինչեւ որ Թէնի ցնցուելով ելաւ Գրիգորի Բազկաց մեջէն, եւ նստելով Բազմոցի մը վրայ՝ աթոռ մը ցցուց Գրիգորի, որ սիրով յափշտակեալ կ'ուզէր քովը մօտենալ, եւ այնպիսի հրամայական ձեռով ցուցամատով կրկնեց հրամանը եւ

— Մի՛... այդ աթոռին վրայ,— ըսաւ:

Որ Գրիգոր կաշկանդեալ ակամայ նստաւ, ուր հրամայեց սիրուհին եւ բեկեալ

— Անգո՛ւթ, միթէ՞ այս վայրկեանը նորէն կը դառնա՛,— ըսաւ

— Աստուած որ այս վայրկեանը բերաւ աւելի երջանիկներն էլ կը բերէ, ես քու մահուանդ վրայ ինչչա՛ փ արտասուք թափէր ես՝ եւ կ'ուզէի կուսանալ, բայց յոյսը զքեզ տեսնելու, ծնողացս դիմադրութիւնը եւ Ատոմ Հայրիկի յորդորները...

— Ո՛վ է Ատոմ հայրիկ, ծեր զօրավարը միթէ՞:

— Այո՛, նա ամէն բան գիտէ, նա միայն իմ մտերիմս է:

— Ի՞նչ կ'ըսես, միթէ՞ կարելի է այդ դաժան ծերը...

— Այդ դաժան ծերը ինձ համար ամենաքաղցր հայր մէ, նա զիս կը մխիթարէր քու կորսայեանդ վրայ, վասնզի նա միայն գիտէր, թէ ես կը սիրեմ զքեզ: Հիմա քաջ եղիր պատերազմի մէջ, բայց մի՛ մոռնար ինքզինքդ պահպանելու Թէնիիդ համար:

— Օ՛հ, ի՛նչ երջանկութիւն, դու զիս այսչա՛ փ կը սիրես, Թէնի:

— Ինչչա՛ փ կրնամ սիրել: Բայց դու այդ քու քեռուդ՝ սքանչելի մարդուն՝ Սուրենի մեր սիրոյն գաղտնիքը չէի՞ր յայտնած:

— Ինչպէ՞ս, ի՞նչ երեսով յայտնէի շղթայակապ եւ անյոյզ գրեթէ, եթէ իմ երագներս զրուցէի ապահով էի, որ զիս պիտի ծաղրէր:

Այս խօսակցութեան մէջ Գրիգորի աթոռն այնչափ մօտեցեր էր բազմոցին, որ իւր ծունկերը Թէնիի ծնկվներուն սկսէր էին դպիլ:

— Հիմա էլ, սա գրադարանին մէջէն,— ըսաւ Օրիորդը հատոր մը ցցնելով,— այդ գիրքն ինձի տուր:

Գրիգոր գնաց գիրքն առաւ, եւ երբ դարձաւ՝ տեսաւ, որ աթոռն իր առաջի տեղը դրուած էր, Թէնիի նայեցաւ, որ ժպտելով՝

— Ապահով եղիր, զրուցեց, որ Ատոմ հայրիկ ո՛ւր որ է, կու գայ հիմա զմեզ կը գտնէ. ուստի տեղդ հանդարտ նստէ: Իսկ այդ գիրքն ա՛ն, մի՛ բանար, մի՛ խախտեր մատենակապը, մի՛ կարդար, դիր քու պայուսակիդ մէջ, մինչեւ որ վաղը ճամփայ ելնես: Խօսք տո՛ւր:

— Մեր սիրոյն վրայ խօսք կու տամ. եւ եթէ կ'ուզես՝ հիմա կու տամ Ջաւէնի, որ պահէ եւ ան ատեն միայն ինձ տա...

Այս միջոցին դուռը ճոնչեց, եւ Ատոմ ներս մտաւ:

— Խօսքերնիդ վերջացա՞յ վ, հայրիկ,— հարցուց Թէնի:

— Այո. հիմա դու գո՞հ ես, Թէնի:

— Շատ գոհ եմ, հայրիկ, եւ քու. մխիթարութեանցդ համար էլ շատ շնորհակալ. դու զիս քաջալերեցիր եւ քեզմէ զատ մտերիմ ոք չունէի: Քեզնէ ի գատ էլ մարդ չի կայ, որ մեր սիրոյն գաղտնիքը գիտենա:

Ատոմ ժպտեցաւ ըստ իւր սովորութեան, եւ վերջը Գրիգորի մօտենալով, ձեռքը սուրին գրաւ եւ ըսաւ.

— Դաւթի որդի, այդ գիրքը թո՛ղ. պատերազմի կ'երթաս, քաջ եղիր, խելօք եղիր: Հիմա այնտեղ կը գտնես Արծրանեաց Սահակը, քու զօրավարդ է՝ հնագանդէ որպէս աստուծոյ. բայց նոյնպէս քեզնէ վար զինուորէ նոյն հնագանդութիւնը պահանջէ: Խիստ, բայց արդար եղի՛ր: Քաղցր, անուշ լեզու մարդոցմէ վախցիր, հեռու պահէ քեզնէ: Այդպիսեաց մեծ մասը՝ եթէ ոչ ամէնքը՝ կեղծ եւ անարգ շողոքորթներ են: Քաշերը վարձատրէ. վատերը պատժէ առանց գթութեան, զինուորը պէտք է թշնամի են աւելի իւր զօրավարէն վախէ, բարի օրինակ քաջութեան, վտանգն արհամարհէ, զինուորը երբ կը տեսնէ թէ զօրապետը չի վախեր մահվնէ, ինքն էլ կարհամարհէ մահը. յաղթութեան եւ յաջողութեան բոլոր գաղտնիքը հոն է: Միշտ միտքդ լինի եւ դիտցիր, որ ես այսօր քեզ համար երաշխաւոր եղեր եմ իշխանուհւոյն եւ ըստ այնմ շարժէ: Թող ուրեմն այդ գիրքը:

Գրիգոր Թէնիի նայեցաւ, եւ սա՛

— Հայրիկ, այդ դիրքը պատմական գիրք մէ, Մամիկոնեանց պատերազմն ու քաջութիւնը կը պատմէ. ես տուի Գրիգորին:

— Լաւ՛, եթէ դու տուիր, Թէնի:— Ուրեմն պահէ, քու նախնեացդ պէս եղիր. հիմա դու իջիր, իմացիր, թէ ինչչա՛ փ մարդ քեզի հետ պատերազմի պիտի երթայ, ո՛ր Արծրունեաց գունդին հետ պիտի միանաս, քանի օրուան պաշարի պէտք ունիս, զօրքը լաւ գէնք, վերարկու, ոտքի աման ունի՛ն. քանի որ այստեղ ես՝ ամէն բան լաւ կարգի դիր, վերջը կը զոջաս: Գիտցիր, որ այս Ռշտունեաց տան մէկ հատիկ՝ միմիայն անքաւելի մեղքը դու չես ճանչեր, Յուսիկ անուն ժլատ մէ. ի՛նչ բանի որ պէտք ունիս կամ կրնաս ունենայ, պէտք է ո՛չ ուզես՝ այլ բռնի առնուս եւ աչացդ առջեւ եւ այնպէս ճամփայ ելնես. եթէ չես ուղեր, դու էլ, զինուորդ էլ անօթի կը մեռնիք. գնա՛, մանրամասն ամէն բան իմացի՛ր. ձի, գրաստ, պաշար, պարէն, ինչ որ պէտք կայ ա՛ռ. այդ անպիտան աւագակին խոստմանց մի՛ հավտար:

— Շատ շնորհակալ եմ, զօրավար, տուած խրատներուդ, երթամ ուրեմն նախ իշխանուհին տեսնեմ:

Երբ Գրիգոր դուրս ելաւ, ծեր զօրավարին խրատներուն ճշտութեամբ հետեւեցաւ. չորս հարիւր հոգւոյ խումբ մը իրեն կը յանձնէր Ռշտունեաց Տիկինը, նոցա ամէն պէտքը զիր առած՝ գնաց Յուսիկի հետ խօսեցաւ քաղցրութեամբ՝ շոյելով անուշ, սպառնալիքներ ընելով եւ նորա հոգիէն ու սրտէն յաջողեցաւ իւր ամէն ուզածը փրցնել:

Երկրորդ առաւօտուն Թէնի Ոստանին պատշգամբէն կը տեսնէր երիտասարդ զօրավարը, որ նաւերու վրայ բարձած իւր փոքրիկ խումբը եւ նոցա պիտոյքը կը նաւարկէր Աղթամարայ ծովուն արեւելման, հիւսիսային կողմը, եւ երբ հեռացաւ առաւ Զաւէնի ձեռքէն Փարպեցիի հատորը, եւ գրքին վերջի պարապ էջերը գտաւ մանր, փոքրիկ, գեղեցիկ գրերով յիշատակարան մը այն ամէն Յուսահատական եւ տխուր զգացմանց, որ ունեցեր էր Թէնի այն չորս երկայն տարիներու բաժանման, ուր երբեմն իր սիրելոյն մահը կ'ողբար, երբեմն յուսոյ նշոյլ մը կը զգար, երբեմն միանձնուհի լինելու փափագներ կը յայտնէր, երբեմն զինք հարսնութեան ուզող երիտասարդաց վրայ դատողութիւններ կ'ընէր: Վերջապէս այդ գրութեան մէջ կը տեսնէր Գրիգոր աղջկան հաստատամտութիւնը իւր սիրոյն վրայ, եւ այդ չորս տարուան միջոցին իւր մտաւոր կատարելութեանց զարմանալի զարգացումը մարդիկ եւ երկիրը դատելու վրայ:

Ո՛վ կրնայ պատմել Զաւէնի ուրախութիւնը, որ կը տեսնէր Գրիգոր հրամանատար փոքր խմբի մը, որ յառաջաբան եւ սկիզբն կը համարէր իւր իշխանիկին. արդէն ինք առանց Գրիգորի եւ Թէնիի սիրոյն գաղտնեաց տեղեակ լինելու՝ իւր մտքին մէջէն հաւանութիւն աւեր էր նոցա ամուսնութեան, եւ իրեն համար այդ ժամանակի խնդիր էր. ուստի մինը կարդալով եւ միւսը երագելով եւ երկուքն էլ մէկ-մէկ քիչ քուն լինելով՝ հասան Բերկրոյ մօտ ցամաքը, եւ անկից ուղեւորեցան Մարդաստան՝ ուր գտան Արծրունեաց նախարարը, որ առաջ Գրիգորի երիտասարդութեան խորհրդածեց մտքէն, երբ նորատեղ մտրուք երիտասարդ մը տեսաւ. բայց երբ փոքրիկ խազմեր տեղի ունեցան եւ տեսաւ տղուն շրջահայեաց յանդգնութիւնը, գուշակութեան ոգին, որ թշնամեաց ամէն շարժումնք կը նախատեսէր եւ կը հարուածէր, ուղղութեան եւ արդարութեան ոգին, որ մեծին ու պզտիկին վստահութիւն կը բերէր, իւր գունդերն էլ իրեն յանձնեց ու գնաց Վանտոսպ: Եւ լի գովութեամբք շնորհակալութեան նամակ մը գրեց Ռշտունեաց Տիկնոջ իւր ընտրութիւնը շնորհաւորելով: Իսկ Գրիգոր՝ Արծրունեաց նախարարին հեռանալէն օգուտ քաղելով՝ յարձակեցաւ մինչեւ Կապուտան ծով, սարսափ ձգեց բոլոր մեծ ու պզտի բռնաւորաց վրայ, որ Պարսից տէրութեան իյնալէն անիշխանութեան հետեւանք եւ ծնունդք էին, եւ գարնան Հետ ետ դարձաւ Ռշտունիք յաղթանակաւ եւ մեծ ուրախութեամբ, բայց ուրախութիւնը տրտմութեան փոխուեցաւ:

ԳԼՈՒԽ ԻԲ

Թէոդորոս Ռշտունի իւր անուանակից Թէոդորոս Երիզացոյ յունաց արեւելեան բանակի սպարապետին գալստեան կը սպասէր, եւ մեծ յոյս ունէր, որ Վարազտիրոց Բագրատունի նաեւ, որուն հաքսորանաց դարձի հրովարտակն ելած էր՝ միատեղ դառնար Հայաստան ընտանեօք, եւ այն ժամանակ իւր ամէն խորհուրդներն ի գլուխ հանել կը դիւրանար առանց շփոթութեանց եւ արինահեղութեան: Այն ձմեռուան սկիզբն, իւր Վարդ որդին Սիւնեաց Օրիորդին հետ, նշանեց եւ խումբ մը զօրքով Սիւնեաց եւ Աղուանից օգնութեան դրկելով ի Դարանդ՝ մնացեալ զօրքը Ատոմ Շահունիի հետ արձկեց ի Ռշտունիս, Ազգին մէջ եկեղեցականաց եւ աշխարհականաց անկարգութիւնք յաճախեալ լինելով՝ ժողով կարգեցին Ներսէս կաթողիկոսի հետ ի Դուին, ուր բազմութիւն եպիսկոպոսաց եւ իշխանաց գումար եալ կանոններ սահմանեցին բարեկարգելու համար եկեղեցին, սանձահարելու անիղխանութենէ առջ եկած անկարգութիւնքը, ուր Թէոդորոս կը ջանար ժողովականիսց ոգին իմանալ եւ պատրաստել թէ ո՞ր աստիճանի կրնային իր դիտաւորութեանդ յարմարիլ:

Փոքրիկ գունդ մը հետն առած Այրարատ, Գուգարք, Տայք շրջան ըրաւ, անտից եկաւ Բարձր Հայոց նահանգը, մտաւ Կարին: Հոն հասաւ եւ իմացաւ, թէ Մարտինէ եւ Երակլեակ աթոռէն իյնելով, Կոստանդ իւր հօր տեղ թագաւորէր էր, եւ զթէոդորոս Երիզացի պահեզով Թումա անունով զօրավար մը նորա տեղ անուանէր էր, եւ թէ Բագրատունի Ասպետը շատ պատուով ընդունուէր էր կայսրէն ի մայրաքաղաքն: Եւ անմիջապէս սուրհանդակ մը դարձեալ կ'իմացնէր նամակաւ Թումայի կայսերական բանակի ընդհանուր սպարապետի կողմէն՝ թէ հասնելով Տրապզոն եւ արդէն հրամայած լինելով բոլոր Փոքր Ասիոյ զօրաց Եկեղեայ գաւառը ժողովիլ, շատ քաղցր խօսքերով եւ մեծ գովութեամբք Թէոդորոսի քաջութիւնքը բարձրացնելով փափագ կը յայտնէր իրեն հետ խորհրդակցիլ եւ պատերազմը ըստ այնմ կարգագել: Նոյնպէս նամակը յիշատակութեան արժանի կը համարէր Պրոկոպիոսի յիմար յանձնապատաստանութիւնը, որ քանի մը տարի առաջ արհամարհելով հայ զօրավարին իմաստուն խորհուրդները, այնպիսի

պարտութեան դիպելով հռովեական պատիւն ու դրօշակները, նախատէր էր եւ երկրին աւերակաց ու կործանման պատճառ էր եղէի կիմարներ նաեւ թէ նոր կայսրը զթեոդորոս Երիզացի չուզելով հեռացնել անձեն՝ նորա խորհրդով զԹումա ընտրէր էր այս պաշտօնին եւ յոյս ունէր թէ սիրով եւ միաբանութեամբ գործելով միասին մեծ փառաց պիտի հասնին թէ՛ ինք եւ թէ՛ հայոց զօրավարը:

Այս նամակն առնելով Ռշտունին, շուտ մը ելաւ Կարինէն եւ առանց ժամանակ կորսնցնելու հասաւ Երիզայ, ուր յունաց քանի մը հազար զօրք ժողուած գտաւ, եւ յունաց զօրավարաց քաղաքավար յարգանօք ընդունելութիւնը զինք բողոքովին ապահովեցին: Մինչեւ որ Թումա մէկ-երկու օրէն հասաւ պոնտացի զօրքերով եւ ամենայն բիւզանդական կեդաւորութեամբ շնորհակալութիւնք յայտնեց սորա գալստեան, եւ թէ ինք ինչպէս որոշած էր առանց նորա խորհրդեան շարժունք մը անգամ չընելու:

Հայոց զօրավարը, եթէ ի ձեռին չունենար այդ վերոյիշեալ նամակները, մանաւանդ Երիզացիէն, ամենեւին չէր վստահէր յունաց, բայց նա հաւատարմութեան արժանի մարդ էր. ուստի հանհոգս եւ զբաղեալ էր արաբաց արշաւանքին վրայ խորհրդակցելով յոյն զօրավարաց հետ՝ երբ յանկարծ քանի մը հարիւր սպառազէն շրջապատելով իւր վրանը՝ հայ իշխանը զինաթափ ըրին, եւ առանց ամաչելու՝ ոտքերը, ձեռքերը շղթայեցին, եւ այն ատեն միայն երեւցաւ Թումայ՝ երգիծանք եւ ծանականք երեսաց եւ շրթան վրայ նկարեալ:

Թեոդորոսի սրտին մէջ երկիւղ ըսուած բանը մուտք գտած չէր, վասնզի մահն արհամարհել իւր սովորութիւնն էր ի տղայ տիոց, բայց երբ միտքը կու գային ընտանիք, որ իրեն կը սպասէին, ազգն անտէրունչ, որու վրայ մտածողք շա՛տ քիչ էին, յունական դաւաճանութիւնը իւր բոլոր անարգութեամբ, արաբաց մոլեռանդն անզգթութիւնը իւր բոլոր կատաղութեամբ, հայ նախարարաց յիմար շահասիրութիւնը, որ հասարակաց օգտին իրենց շահը ընկերացնելու մէջ չէին հասկնար իրենց անձանց եւ իշխանութեանց ապահովութիւնն եւ փրկութիւնը, իրեն այնպիսի դառն խորհրդածութիւնք կը պատճառէին, որ եւ ոչ Թումայի անարդ կերպարանաց ակնարկութիւն ձգել եւ իր կերպը նշմարել միտքն ինկաւ, այլ նոյնպէս անտարբեր նայեցաւ, ինչպէս զբաղեալ մտօք ոք կը նայի՝ անտաշ քարի եւ հասարակ կոճղի վրայ:

Թումա այս նայուածքը արհամարհանաց վերջին աստիճան համարեց, եւ ուզեց աւելի սաստիկ պատասխանել.

— Քու մի՞ տքո՞ւ է, հա՛յ,— ըսաւ,— այն օրը, որ Պրոկոպիոսի՝ յոյն սպարապետի մը դէմ համարձակեցար բերան բանալ եւ իր արդար բարկութիւնն այն ատեն զրգոցեցիր, որ մինչեւ իւր գաւազանը դասալիք փախստականիդ ետեւէն նետել պարտաւորուեցաւ: Ես այնտեղ ներկա էի:

Թեոդորոս ոտից գլուխ ակնարկ մը նետեց միայն անարգ մարդուն վրայ, ճիշտ նոյն ակնարկը, որ կը նետէ դաւեալ սէզ առիւծը երկաթեայ վանդակին մէջէն, երբ շուրջը կը պատեն ապուշ ամբոխ մը ամէն աստիճանի մարդկանց, որ իւր Ափրիկէի ոչ անապատները կը ճանչեն եւ ոչ սաղարթախիտ անտառները գիտեն, ուր իւր որ եա տալից ձայնը մարդ եւ գազան սարսռալից ծակասոյգ կ'ընէ:

Այդ նայուածքը միայն Թեոդորոսի պատասխանն եղաւ:

Նոյն ժամ ոյն հրամայեց Թումա ճամփայ հանել հայ զօրավարն ի Կոստանդնուպոլիս, ոչ թոյլ ընել եւ ոչ դադար գիշեր ու ցերեկ, մինչեւ որ հասնի մայրաքաղաք: Նոյն էր եւ Թեոդորոսի փափագը,

որպեսզի ժամ առաջ վերջը գա այդ անտանելի վիճակին: Սակայն ծանր էր իրեն հասարակուհի երկու խօսք չի կարենալ ձգել իր տունը, միայն այն կը մտածեր նոյն միջոցին: Իսկ Թումայի շտապը այն էր, որ լսեր էր, թե սոյն այս Թեոդորոսի ցեղեն Դաւիթ Սահառունի՝ այսպէս դառնացեալ Մծեծ Գնունիէ՝ իւր կապերը կոտրէր, ազատէր, եւ սուկալի հարուած բերելով յունական զօրքը խորտակէր եւ զմծեծ իւր վրիժառու ձեռք սպաններ էր: Ուստի այս վտանգը հեռացնելու համար գլխեն՝ կը շտապեցներ իւր կալանաւորին երթը, շրջապատելով բազմաթիւ հեծելոք, եւ խիստ սպառնալիք նոցա գլխաւորին վրայ դնելով. եւ պատուէր նաեւ աւելացնելով, որ փախստեան ամենափոքր առթի սպաննեն հայ իշխանը: Այսպիսի հրամաններով՝ խումբը երբ հասաւ Առիւծ գաւառի Արօրակ աւանը, հանգչելու պէտք անհրաժեշտ լինելով՝ սենեկի մը մէջ բանտեցին դթեոդորոս, որ քիչ մը բան ուտելով հազիւ քուն եղաւ, դուռը բացուեցաւ եւ երիտասարդ մը մտաւ, որ ճրագ, թուղթ, գրիչ ի ձեռին՝ յարգանօք մօտեցաւ, եւ քովը դնելով սեղանին վրայ, մաքուր հայերէնով ըսաւ.

— Իշխան քաջ, եթէ կ'ուզես վստահանալ հայ տղու մը, որ քու անունդ եւ քաջութեանցդ համբաւը միայն լսելով զքեզ կը յարդէ եւ կը սիրէ, եւ Ռշտունիք հրաման մը կամ տեղկութիւն մը տալ կը փափագիս, եւ կենացս վտանգաւ յանձն կառնում երթալ եւ տանիր Եթէ երդումը արժէք ունենար ժամանակիս մէջ...

— Մի՛,— ըսաւ Թեոդորոս՝ քննիչ աչք մը ձգելով երիտասարդին վրայ,— բաւական է այսչափը,— եւ գրիչն առնելով քանի մը տող միայն գրեց, եւ տուաւ տղուն: Նամակին մէջ այս միայն գրած էր «Ռշտունեաց Տիկին Սէթա. եւ յոյն զօրավարէն դաւաճան եալ կ'երթամ Կոստանդնուպոլիս, բացի Աստուծոհունիէ մարդու հաւատարմութիւն մընէր. կառավարէ երկիրը ինչպէս զիտես, վարժն զվարդ կառավարութեան, ամբացու երկիրը եւ եթէ յարկ դատես քաջուէ Աղթամար, տեսնենք Աստուած ի՛նչ կ'ընէ: Թեոդորոս»:

— Պատուէր մը ունի՞ս, իշխան,— հարցուց երիտասարդը թուղթը գրպանը դնելով:

— Պատմէ՛ վիճակս ինչպէս որ կը տեսնես:

— Յուսամ հաստուած, որ Կոստանդնուպոլիս հասնելէդ քիչ վերջ այս թուղթին պատասխանը կը բերեմ:

— Կարելի է,— ըսաւ Թեոդորոս սառն ձեւով:

Երիտասարդը այլեւս չի խօսեցաւ. ժողուեց իր բերածը, յարգանօք ողջունեց զթեոդորոս, դուռը նոյնպէս զոցուեցաւ եւ գնաց, եւ քանի մը ժամ վերջը, երբ Թեոդորոս կալանաւոր կ'ելներ ճամփայ իջնելու Կեռասուն, նա էլ հակառակ ճամուաւ Հայաստան Ռշտունեաց երկիրը կ'ուղղէր իւր ընթացքը: Պէտք չէ զարմանայ ոք այս երիտասարդին վրայ, վասնզի ինչպէս եղած են եւ միշտ պիտի լինին անձնամոլութեան, ստութեան, անզգամութեան հակամետ ոգիներ, նոյնպէս են եւ միշտ պիտի լինին ճշմարտին, բարւոյն, գեղեցկին սիրահար ոգիներ, որ կրօնքի, հայրենեաց եւ ազնուական գաղափարաց մարտիրոսներն կը տեսնենք ամէն զարու մէջ: Թեոդորոս՝ փորձառու մարդկային սրտին, ցուրտ դիմօք ընդունեց երիտասարդը, վասնզի կրնար դաւաճան մը լինիլ, թումայի պէս սեւ յօդի մը ունենար, եւ նորա գործիք լինէր. բայց կրնար, եւ որ աւելի հաւանական կ'երեւէր իրեն նորա կերպարանքի պարզութենէն— ազնիւ ոգոյ մը տէր լինիլ, ուստի այդ տողերը գրեց եւ իրեն յանձնց՝ որոց յայտնութենէն ոչ մէկ վտանգ չէր կրնար յառաջ գալ եւ որ զիտէր թէ Սէթա ի գործ պիտի դներ առանց այդ նամակին:

Ցոկանաւ մը Կեռասուն իրեն կը սպասէր, եւ որ գարնան առաւօտ մը կանուխ հասաւ կայսերական քաղաքը, մտաւ ոսկեղջիւրն ներս եւ խարիսխ ձգեց. նաւամատոյցի առաջ քանի մը զինուորք միայն մնացին, իրենց գլխաւորը եւ մեծ մասը թողին գնացին քաղաք: Թեոդորոս այն ատեն յարմար ժամանակ գտնելով, երիտասարդ մը, որուն շահասիրութիւնը եւ ազահութիւնը առակի եւ կատակի նիւթ եղած էր իւր զինուորակցաց՝ քովը կանչեց եւ իրեն ըսաւ.

— Դու եթէ ուզես՝ հիմա այս վայրկենիս կրնաս հարիւր ոսկի ստանալ առանց մեծ աշխատութեան:

— Միթէ՞,— հարցուց երիտասարդը զարմացած:

— Այո՛, եւ շատ դիւրաւ:

— Խնդրեմ, իշխան, ինչպէ՞ս:

— Այս նաւակներէն մէկը կը կանչես՝ կը մտնես եւ կ'երթաս սա դիմացի ծովեզրը փոքրիկ եկեղեցոյն քովի պալատը, կ'ըսես, որ Թեոդորոս Ռշտունոյն կողմէն կու գամ՝ Ստրատելատին հետ պէտք է տեսնվիմ, վայրկենին քեզ իրեն առաջը կը տանին, կը ցցնես այս նաւը, կ'ըսես թէ Ռշտունին հոն է շղթայակապ եւ կը խնդրէ, որ ինձ հարիւր ոսկի տաս:

— Եւ այդպէս հարիւր ոսկին ինձ կուտածն,— հարցուց երիտասարդը աչքերը մեծ-մեծ բանալով:

— Եթէ դեռ ուշանաս՝ Ստրատելատ կելնէ կ'երթայ, եւ ետքը իմ գալս երբ ուրիշէն իմանայ դու հարիւր ոսկին կը կորցնես: Իսկ եթէ հիմա երթաս, հարիւր ոսկին եթէ ինք չի տայ՝ ես քեզ երկու հարիւր ոսկի կու տամ:

Վայրկեան մը մտածեց տղան, բայց շատ չուշացաւ՝ ցատկեց նաւակ մը, եւ երբ ելաւ ծովեզրեայ պալատը, իրօք Ռշտունոյն անունը տալուն շատ չանցաւ՝ հանեցին զինք ծեր զօրավարին առջեւ, որ նոյն ինք Թեոդորոս Երիզացին էր: Կը պատրաստուէր նոյն վայրկենին արքունիք երթալու, երբ «Շղթայակապ այդ նաւուն մէջն է» ըսաւ տղան, ծեր Ստրատելատը ցատկեց տեղէն՝ եկաւ պատուհանին քով եւ չկարենալով հաւտալ, դարձեալ կը հարցնէր թէ իրօք այդ նաւուն մէջն է շղթայակապ: Իսկ երբ երիտասարդ զինուորը կրկնեց նոյն պատասխանը, ձայն տուաւ ծառաներուն եւ հրամայեց շուտով իւր նաւակը պատրաստել ու ինք սկսաւ իջնել սանդուխներէն:

— Բայց զքեզ չուզեց այդ հայ իշխանը, Ստրատելատ,— ըսաւ տղան,— այլ միայն ինձ հարիւր ոսկի տալ խնդրեց:

— Դու այստեղ նստէ, ետքը կառնուս քու ոսկիներդ,— դու ուստի՞ց ընկերացար Թեոդորոսի:

— Ես Երիզայ բանակին մէջն էի, երբ Թումա զօրավարը հայը կապել տուաւ, եւ մեր գունդին հրամայեց, որ մինչեւ հոս բերենք զինքը եւ յանձնենք Վաղենտինոսի:

— Այ՛ս կերպով կ'իմանայ Թումա իր պաշտօնը. անմի՛տ...

— Իսկ հայը ինձ ըսաւ, թէ գնա հարիւր ոսկի ուզէ իմ անունովս:

— Դու այստեղ նստէ, եւ հիմա կու գամ եւ հաշիւդ կը տեսնեմ:

Այս ըսելով վեց թիակով նաւակը մտաւ եւ քանի մը վայրկեանէն ելաւ ցոկանայ վին վրայ, ուր Ռշտունին նստած այս նոր Բաբելոնին այս երկրորդ անգամ կը նայէր, երբ ահա իւր բարեկամ եւ

անուանակիցը վազելով գիրկը դիմեց, եւ հրամայեց, որ նաուն դարբինը գա շղթայները հանէ, որ նախատինք էին ոչ հայոց իշխանին, այլ նորա բարեկամաց:

Երբ պալատը դարձան մեր երկու Թեոդորոսք, Ռշտունուն այն առաջի գործը եղաւ երկու հարիւր բիզանդական ոսկին վճարել տալ արծաթասէր զինուորին, եւ յետոյ այս խօսակցութիւնը տեղի ունեցաւ երկու բարեկամաց մէջ. Երիզագին կ'ըսէր Ռշտունունյն.

— Շատ կը ցաւիմ, որ իմ պատճառաւ դու վստահացեր ես այդ անզգամ Թումայի, բայց լաւ ժամանակի կը հասնիս քաղաքս, վասնզի քեզ պէս քաջի մը պէտք ունինք այս վայրկենիս:

— Ի՞նչ կը նշանակէ այս խօսքը:

— Այն կը նշանակէ, որ կայսրը տասնվեց տարու պատանի մէ, առաջին օրերը, երբ գահը նստաւ, Փիլակրիոսի ազդեցութիւնն էր, որ կը կառավարէր, բայց քիչ-քիչ Վաղենտինոս, որ զինուորականաց զլուին էր՝ զօրաց թիւը շատցուց, այնպիսի բռնաւորական ձեւ մը առաւ, որ կայսեր դէմադէմ հրամայական կերպեր սկսաւ գործածել եւ այս օրերը շատ կասկած կայ, որ յայտնի ապստամբութեան դրօշ բարձրացնելով՝ ինքզինք կայսր հրատարակել նաեւ յանդգնի:

— Ինչչա՞ փ զօրք ունի այդ մարդը այդպիսի մեծ գործի ձեռնարկելու համար:

— Երբ Մարտինէ եւ իր որդին գահագուրկ եղան եւ գործելու զլուխը այս Վաղենտինոսն էր՝ 3000 սպառազինաց խումբ մը կար ի ձեռին:

— Երեք հազար հոգուով դուք կայսր մը կը դնէք եւ կ'իջեցնէք: Գեղեցի՜ կ'ելեւէջ:

— Բայց այդ երեք հազար հոգույ քամակին կան ծերակոյտը...

— Անարգ պալատականաց խումբ, որ միշտ յաջողութեան երկրպագու է:

— Այո՛, բայց կայ նաեւ ժողովուրդը, որ...

— Զգուելի՛ խաժամուժ, բի՛րտ մարդկութեան:

— Այո՛, բայց որ շատ անգամ, արդար պատուհաս մէ նոցա դիխուն, որ կառավարել չգիտեն: Բայց մենք ժամանակ չունինք երկար խորհրդածութեանց, զօրավար, վասնզի ո՛ր զիտէ թէ այսօր ի՛նչ կրնայ պատահիր ժողովուրդը ժողուած է Ս. Սովիա եկեղեցին, եւ գիշեր-ցերեկ ահագին բազմութիւն մը կրկէսը եւ հրապարակները կը լեցնեն եւ սաստիկ գրգռուած են Վաղենտինոսի դէմ, վասնզի զիտեն թէ նորա ազդեցութիւն է, որ կը կառավարէ, տխմար եւ հասարակ շինական՝ ի շնորհս իւր անձնական գեղեցկութեան, այդ քու Թումայի քրոջը հաճոյանալով, որ տղայ կայսեր վրայ ազդեցութիւն ունէր ինչպէս նորա հօրը վրայ, հիմա կ'ուզէ գահակից լինիլ կայսրույեան: Եգիպտոսի եւ բոլոր Ափոնիկէի կորուստը սովալլուկ ըրաւ մայրաքաղաքը, եւ այս յիմար մարդը յարկ հարկի վրայ կաւելցնէ եւ իւր զօրաց թիւը կը շատցնէ: Ես, որ Մարտինէի եւ իր որդույն դէմ էիք հիմա այս կոշտ զինուորին դէմ պարտաւորեցայ գտնուելու:

— Բազրատունին ո՞ր է: Գրեր էիր թէ հաքսորանաց դարձի հրովարտակն առի եւ կը սպասեմ:

— Դարձաւ եկաւ, բայց դարձեալ Վաղենտինոսի ազդեցութեամբ՝ հոս մօտ Իշխանաց կղզիներն երթալ ընտանեօք քանի մը օրուան համար հրաման եղաւ: Եւ այս ինձ հարուած մէ, վասնզի Վաղենտին հայոցմէ կը կասկածի. քու Արծափայ յաղթութեանդ լուրը եւ արաբացի նժոյզներու ընծան երբ հասան Պոլիս, ոմանց յոյս, բայց զինուորականաց շատին տհաճութիւն պատճառեց,

վասնզի քանի որ այս կատաղի ժողովուրդը փրցաւ ելաւ իւր աւագներուն մէջէն եւ աշխարհքիս երեւցաւ, դեռ պարտութիւն կրած չէր է ուստի այդ երկու արաբացի զօրավարաց Օթմանի եւ Օւզայի գլուխները, որ յուղարկած էիր, եւ որ ես դնել տուի կրկեսին մէջ ի տես ժողովրդեան՝ զծեր Պրոկոպիոս կատղեցուցին, եւ զինուորականք իրենց ազդեցութիւնը գործածեցին, եւ Վաղենտին հիմա ի հայոց կասկածելով, ամէն բանի մէջ նոցա ազդեցութիւնը կ'ուզէ ջնջել՝ ինձմէ սկսելով, որ այստեղի հայոց գլխաւորը կը համարվիմ: Այս բանիս համար պատանի կայսեր թէ լա դրեցին իմ տեղս Թումա անուանել արեւելից զօրավար. առերես այնպէս ցոյց տալով, թէ կայսրը զիս անձեն չէր ուզէր բաժնել:

— Հիմա իմացայ վիճակը: Դու ի՞նչ պիտի ընես, ինչպէ՞ս պիտի գործես:

— Իմ առաջս երկու ճանապարհ կայ, եղբայր. առաջին՝ Վաղենտինի հետ ինչպէս մինչեւ հիմա վարուեցայ՝ բարեկամ ձեւանալով, կայսեր աչքը բանալ եւ վտանգը ցցնել, երկրորդը՝ համարձակ իրեն եւ իւր կուսակցութեան դէմ թշնամութեան դրօշակ պարզել, ձերակոյտին եւ ժողովրդեան գլուխ անցնիլ կանգնիլ:

— Բայց այդ վերջինին համար զինուորական գոնէ փոքրիկ զօրութիւն մը ունենալու է:

— Ես էլ այդ փոքրիկ զօրութիւնը պատրաստելու վրայ եմ: Հիմա՝ այս իմ պալատիս մէջ՝ բոլոր սպասաւորք հայ փորձ զինուորներ են, երեք հարիւր մը կ'ելնեն: Այստեղ մօտ կը բնակի եւ ինձ հետ լաւ ապուած է բարեկամութեամբ Գեորգ Մագիստրոս, որու պալատը կան երկու հարիւրի չափ նոյնպէս հայ սպասաւորք. նոյնչափ մէկ կան Մանուէլ Արշակունւոյ՝ այդ առաքինի ձերուն ծառայութեան մէջ՝ քաջ տղամարդիկ, որ մահուանէ երկիւղ չեն ճանչեր:

— Այդ ամէնը բաւական ապահովութիւն կրնային համարուի՝ եթէ անմիջապէս քու այս պալատիդ դիմաց չի տեսնէի զինուորական նաւարանը:

— Այդ կողմէն վտանգ չի կայ, յոյն ծովապետը Վաղենտինի յիսերիմ թշնամին է, եւ ես եմ նորա պաշտպանը կայսեր մօտ:

— Ուրեմն ինչի՞ կը սպասես, եղբայր: Գործէ՛: Քու նկարագրութենէդ ինձ այնպէս կը թուի, որ շարժուելու ժամանակն հասած է:

Այս խօսքիս վրայ սկսաւ մտածել Երիզագին, որ շատ խոհեմ մարդ էր եւ աւելի քաղաքագէտ, քան թէ զինուորական:

— Բայց ես վայրկեանէ վայրկեան կը սպասեմ, որ այս մեր յոյն եղբարք շարժմունքի սկիզբն տան, որպէսզի շարժմունքը հայկական կերպարանք չառնու, եւ իրենք թելերնին կախած մեզ միայն չի թողուն: Եւ ապահով եմ, որ սովը մէկ կողմէն, յարկաց ծանրութիւնը միւսէն խոռովութեան փոթորիկ մը պիտի հանեն: Եւ ժամեժամ այդ բանին կը սպասեմ:

Հազիւ թէ այս խօսքերը գրուցեց, եւ ահա երիտասարդ մը ներս մտաւ շնչասպառ...

— Խոռվութիւնն սկսաւ Ս. Սոփիա, ժողովուրդը կատաղած զԱնտօնիոս այրեց,— ըսաւ:

— Դու քիչ մը շունչ առ, որ պատմես,— պատասխանեց Երիզագին առանց իւր հանդարտութիւնը կորսնցնելու, եւ դառնալով Ռշտունւոյն՝ կը տեսնէ՞ս եղբայր թէ գործելու համար ի՞նչ վայրկենի կը սպասէի:

Երիտասարդը, որուն երեսը կարմրած՝ քրտինքը ճակտեն եւ մազերէն կը կաթէին եւ մեծ-մեծ շունչեր կ'առնէր եւ կուրծքը կ'ելնէր կ'իջնէր հեւալով, երբ քիչ մը հանդարտեցաւ սկսաւ պատմել.

— Երկու օր է, որ ես ձեր հրամանաւ ծպտեալ ժողովրդեան հետ էի, որ մայր եկեղեցին լցուած պատրիարքը կը խնդրէր աղաղակաւ. իսկ նա, որ երեսը կը ծածկէր՝ վերջապէս այս առաւօտ իջաւ եւ նստաւ հայրապետական աթոռը, ժողովրդեան խելօքներն սկսան գանգոյիլ Վաղենտինի դէմ, նորա զինուորաց անկարգութեանց դէմ, յարկաց ծանրութեան, հացի թանկութեան դէմ եւ կը պահանջէին, որ երթայ ինք անձամբ խօսի Վաղենտինի հետ: Նա երկու մետրապոլիտ եւ ժողովրդեան առաջնորդներէն ոմանք պատգամաւոր ուղարկեց զօրավարին: Ժողովուրդը պատասխանի կը սպասէր եւ ահա Անտոնիոս տեղակալը հազար սպառազէն մարզիկներով խուժեց եկեղեցին եւ ժողովրդեան գլխաւորներն հրամայեց գանակոծել: Հայրապետը այն ատեն կանգնած խստութեամբ յանիմանեց Անտոնիոս եւ ըսաւ. «Աստուծոյ տաճարին մէջ՝ աստուծոյ ժողովրդեան հետ բարբարոսք եւ անօրէնք միայն այդպէս կը վարուին, զօրավար. եւ դու կը համարձակիս եւ աստուծմէ չե՞ս վախէր»: Իսկ Անտոնիոս յարձակեցաւ ելաւ բեմին վրայ եւ պատկառելի ձերուն՝ «Չա՛ր ձեր, դո՛ւ ես, որ կը յանդգնիս այս անարգ խաժամուժը գրգռել իւր տեարց դէմ եւ զիս յանդիմանել»,— ըսաւ, եւ ապտակ մը զարկաւ աստուծոյ մարդուն. աղաղակաց որոտմանց ձայն մը բարձրացաւ ամբոխէն, եւ անզէն ժողովուրդը կատաղի գագան դարձաւ, դաշոյններ յայտնեցան եւ փայլեցան, աթոռ, աշտանակ, ջահ, քշոց, հայրապետական գաւազանք զէնք եղան, տաճարը խառնակութեան եւ պատերազմի դաշտ դարձաւ, արիւնը սկսաւ վազել, ժողովրդեան ինկածներուն տեղ նոր մարդիկ յաջորդեցին, մինչեւ Անտոնիոսի հազարքն անհետացան, եւ ինք ողջ-ողջ հանեցին դուրս տաճարէն եւ կապած փայտակոյտի մը վրայ բարձրացնելով այրեցին. կատաղի տղայք եւ կանայք պար կը բռնէին խարոյկին շուրջը, երբ ես թողի, եկայ լուր տալու:

ԳԼՈՒԽ ԻԳ

Երբ այս պատմութիւնը լսեցին եւ երիտասարդը դուրս եղաւ, Ռշտունին պատուհան են դուրս կը նայէր քամահաբար, եւ կարծես թէ խոր խորհրդածութեան մէջ էր: Իսկ Երիզացին քովը մօտենալով, եւ իբր թէ քունէ արթնցնելու համար առաջ ուսը կամաց մը ձեծելով եւ ժպտելով՝

— Եղբայր, այդ քու մտածութիւնքդ իմ քովս շատ հին են,— ըսաւ,— բայց միտքդ դիր թէ Կոստանդնուպոլսոյ մէջ կապրինք, այս կայսրութիւնն այսպէս նկեր, այսպէս պիտի երթայ. յիմար, վատ զօրական մը ոչ միայն զօրապետ կը դառնա կնոջ մը շնորհիւ, այլ կայսերական թագը գլուխը եւս դնելու կը ձգտի: Ես արքունիք կ'երթամ հիմա, դու ճաշդ ըրէ, եւ պատրաստ եղիր, ահա սա սենեկին մէջ ի՛նչ զէնք եւ սպառազինութիւն կուզեստս կրնաս գտնիլ. ես քեզի իմաց կու տամ՝ եւ ըստ այնմ կը շարժիս: Ուրեմն մնա,ս բարով:

Ժամ մը հազիւ անցած Թէոդորոս Ռշտունի նամակ մը կառնուր իւր բարեկամեն, որ զինք կը յորդորէր անցնիլ պատրաստական գնդին գլուխը, եւ իւր անձնապահապետին առաջնորդութեամբ գալ կրկէսը առանց վայրկեան մը կորսնցնելու: Երբ Թէոդորոս սպառազինեալ իջաւ պալատին ընդարձակ գաւիթը, որ ցամաքային դռան առաջն էր, տեսաւ փառաւոր ձի մը եւ երեք հարիւր սպառազէն հեծելոց խումբ մը, որ իրեն կը սպասէին. հազիւ թէ փողոցին մէջ քիչ մը յառաջացաւ երկու խումբ պատրաստական զօրաց միացան իւր խմբին հետ եւ այդ հազարաց գունդին առջեւ ամբոխը կը բացուէր, կը խօսէր, մինչեւ անարգէր կրկէսին

մօտեցան, բայց ահա հոն ահաւոր տեսարան մը ներկայացաւ Թեոդորոսի առաջ, Վաղենտինոսի սպառազէն հինգ-վեց հազար յօդոյ խումբը հրապարակը գրեթէ բովորովին գրաւէր, ժողովուրդը Ս. Սոփիա եկեղեցին վտարէր եւ գաւթին մէջ կատաղի կոտորած մը կը շարունակէր: Երիզացոյն անձնապահապետին դարձաւ նա՝

— Տղա՛յ, ո՞վ է մեր թշնամին,— հարցուց:

— Այդ սպառազէն Վաղենտինի զօրքերը,— պատասխանեց երիտասարդը:

— Քալեցէ՛ք ետեւես, տղաք,— գոչեց Թեոդորոսի ահագին ձայնը:

Եւ մերկ սուրբ ձեռին յարձակեցաւ իւր զնդով այդ սպառազինաց կողքին վրայ կրկեսին մէջտեղ, եւ աջ ու ձախ կոտորով երկու բաժնեց թշնամի խումբը, որու մէկ մասը ազատ ճամփայ ունելով սկսաւ փախչել, իսկ միւսը փակուած Թեոդորոսի եւ եկեղեցոյ մէջ ջախջախեցաւ բոլորովին եւ գրեթէ անհետացաւ: Այս դիւրին յաղթութեան վրայ Թեոդորոս ինք զարմացած կը մտածէր, երբ արքունի դռան կողմէն երեւցաւ փոքրիկ խումբ մը կայսերական թիկնապահաց, որոց զլուխը կանգնած հասաւ Երիզացին եւ հրաւիրեց Ռշտունին եւ իւր զօրքը կայսերական պալատը՝ ներկայանալու երիտասարդ կայսեր:

Դեռ պատանի մէր կայսրը, շփոթութիւն եւ երկիւղ երեսին վրայ նկարուած էին, հագիւ գահը բարձրացած՝ կը տեսնէր թէ այն մարդը Վաղենտին, որ իւր թագաւորութեան առաջին զօրծիքն եղած էր, առաջին գաւաճանն էր, ուստի բնական կասկածոտ աչօք կը նայէր շուրջանակի, բայց բիւզանդական քաղաքավարութեամբ եւ կեղծաւորութեամբ գիտէր ինքզինք քողարկել: Երբ Երիզացին իմացուց իրեն թէ՝ «Ամէն վտանգ հեռացաւ, եւ Վաղենտինի փախստական էր ի շնորհես Թեոդորոսի քաջութեան»՝ որ նոյն Վաղենտինի հրամանաւ կապեալ եկէք էր Հայաստանէ», կայսրը՝ «Վաղենտինոսի զլուխը թող բերուի, հիմա՛, հիմա՛», — կ'ըսէր: Բայց նոյն միջոցին, երբ լրտեսներ եկան իմացուցին, թէ ժողովուրդն արդէն սպաննէր է Վաղենտին եւ եկեղեցոյ հրապարակին վրայ կ'այրէր նորա մարմինը, ուրախացաւ: Յարմար ժամանակ համարեց այն ատեն Երիզացին՝ Բագրատունի Ասպետին համար խնդրել, եւ հրաման եղաւ նորա աքսորանաց վերջ տալ: Նաւակներ կը թռչէին Իշխանաց կղզիքը բերելու համար Վարազտիբոց:

Միեւնոյն օրուան մէջ Ռշտունին ազատեցաւ շղթայներէ, Վաղենտինոսի զօրութիւնը խորտակեց, եւ Բիւզանդիոյ արքունեաց մէջ տեսաւ իւր տղակութեան ընկերն ու բարեկամը եւ «արտասուք կը թափէին Ասպետ ու Ռշտունեաց տէրն իրարու պարանոցի վրայ, վասնզի սննդակից էին Խոսրովու Պարսից արքային Դուռի»: Իսկ կայսրը Վաղենտինի տեղ զօրավար կ'անուանէր զԹեոդորոս Երիզացին, Թեոդորոս Ռշտունոյն հրաման կու տար հայրենիք դառնալու եւ սուրհանդակ կը հանէր Թումայի Կոստանդնուպոլիս գալու: Իսկ Վարազտիբոցի ազատութիւն կու տար Կոստանդնուպոլիս բնակելու ընտանեօք, որ դարձեալ աքսոր կը նշանակէր, վասնզի տարիներէ ի վեր հայրենի երկրին էր ծարաւի:

Այն գիշերը Երիզացոյն պալատը ուրախութեան տօն կը կատարէին այս երեք հին բարեկամք, որ տարիներով իրարմէ հեռու բնակելով, մեծութեան եւ աքսորանաց, յաղթութեան եւ պարտութեան, արքայական շնորհից եւ նախատանաց եւ վերջապէս բախտին զանազան արկածից մատն եալ, միշտ ակնածելի եղած էին նաեւ թշնամեաց եւ արքայից: Ուստի երբ առանձին մնացին, Հայաստանի վիճակին վերա եկաւ խօսքը, եւ Բագրատունին տխուր ու դառնացեալ՝ ըսաւ.

— Ի՞նչ կրնայ ընել մարդ, երբ իմ վիճակիս մէջ գտնուի. այս մայրաքաղաքը իւր բոլոր պերճութեամբ, իւր բոլոր գեղեցկութեամբ իմ Տայոց մէկ զիւղեն աւելի արժէք չունի աչացս. դու, Ստրատելատ, հոստից կրնաս օգտակար լինիլ հայրենեաց եւ մեզի, ինչպէս եւ եղար մինչեւ այսօրս. իսկ ես՝ հոն հայրենի հողին վրայ միայն կրնամ ծառայութիւն մընել ազգիս:

— Եւ մեծ ծառայութիւն,— ըսաւ Ռշտունին,— ինչպէս ձեզի հասկընցի, վասնզի քու ներկայութեամբդ կրնանք միաբանել այդ նախարարները, որոց աչքին եւ վտանգի եւ կասկածի նիւթ եղած եմ:

— Ես այսօր միջոց մը գրեթէ համոզեր էի,— ըսաւ Երիզագին,— երիտասարդ կայսրը քեզ հրաման տալ դառնալու հայրենիք, բայց դժբախտաբար այդ Փիլակրիոս վրայ հասաւ եւ ամէն խորհուրդ վեր-վայր շրջեց: Եր՞բ պիտի համոզուին յոյնք, թէ հայոց հետ ար-

դարութեամբ վարուիլն է միմիայն ճանապարհ կցորդելու զիրենք:

— Ի՞նչ կրնայ սպասուիլ այդ մարդիկներէն, որ իրենց օգուտը նաեւ չեն ճանչեր, եւ որ կարծեն թէ զհայերը նեղելով կրօնքի մասին, նոցա դաւանութիւնը բռնաբարելով, անպաշտպան թողլով երկիրն եւ աւար աւազակաց, յարկաց ծանրութիւն բեռնաւորելով եւ ժողովուրդն աղքատցնելով՝ Հայաստանի կատարեալ տէր կը դառնան,— զրուցեց Ռշտունին:

— Բայց այդ երիտասարդ կայսրը,— պատասխանեց Երիզագին,— ես կը յուսամ, թէ օրաւոր ճշմարտութեան կը համոզեմ, եւ քանի որ ապականութիւնը սրտին խորը չէ թափանցեր՝ կարելի է զինքն ազնութեան եւ արդարութեան հէւեցնել:

— Ողջ լեր, իմ պատուական բարեկամս, Աստուածհաւատքդ աւելցնէ, դու կը յուսաս թէ այս կրօնամոլութեան եւ յիմարութեան քաղաքի մէջ ու գահոյից վրայ կարելի է ազնութեան եւ արդարութեան սերմ հասցնել: Թո՛ղ այդ տղայական երազներդ եւ ջանանք միատեղ մեր հայրենի երկրին փրկութեան:

— Զրուցե՛ համարձակ, քեզ խօսք կու տամ ինչ կրնամ ընելու:

— Իմ միմիայն փափագս ինձ հետ Ասպետը Հայաստան տանիլն է, մնացածը Աստուածկը յաջողէ եթէ ուզէ:

— Այդ... քանի մը օրուան մէջ կարելի չէ. պէտք է որ կայսրը քոռնայ Փիլակրիոսի յորդորները: Դու եթէ կ'ուզես՝ սպասէ, մինչեւ Յարմար առիթը հասնի...

— Ո՞վ կրնայ երաշխաւորել թէ յարմար առիթ չհասած անյարմար առիթներ չեն հասնիր այս անիծեալ քաղքիս մէջ, նոյնպիսի առիթներ, որ Վարազտիրոցի հետ զիս նաեւ առնուն օւկիանոսի կղզի մը չի նետեն, քաղաք մը, ուր մատնութիւն, զրպարտութիւն, շոգմոգութիւն սովորական բաներ են: Ի բաց թողունք, որ քու այդ երիտասարդ կայսրը այնպիսի նայուածք մը ունի եւ այնպիսի կերպարանք, որ ինձ ամենեւին վստահութիւն չի տար: Երբ այդ կայսրդ «Վաղենտինի գլուխը, հիմա, հիմա» կ'ըսէր՝ ես վատութեան չափ անգթութիւն կը նշմարէի: Դու եթէ կ'ուզես հայրենեաց եւ բարեկամաց ծառայել՝ հնարք գտիր Վարազտիրոց ազատելու:

— Կ'ուզես ըսել փախցնելու, բայց այդ նաեւ դիւրին չէ, վասնզի այս վայրկենիս՝ հիմա շատ խստութիւն կայ մայրաքաղաքիս մտնող ելնողներուն համար, եւ Վարազտիրոցի պէս ահագին եւ նշանաւոր մարդ փախցնելն դիւրին բան չէ, բայց վերջապէս հնարքը կը գտնուի: Իսկ դու

իրաւունք ունիս չի վստահանալու քաղքիս եւ եթէ կ'ուզես ինձ լսել մի՛ կենար եւ ժամ առաջ դարձիր հայրենիք, քանի որ հրաման ունիս:

— Ուրեմն որոշենք.— Ռշտունեաց Տէրը թո՛ղ երթայ, եւ դու կը խոստանաս հնարքով զիս հեռացնել:

— Այդ իմ պարտքս է,— պատասխանեց Երիզագին:

Եւ ութ-տասն օր վերջը Թէոդորոս Ռշտունի կը մտնէր նաւ երթալու Տրապզոն: Անյաջող քամիներ, որ զինք կարգելուին՝ կ'օգնէին իւր թշնամույն Թումայի, որ թէպէտ յաջողութեամբ կը հասնէր կայսերական քաղաքը, բայց անյաջող ընդունելութիւն կը գտնէր Վաղենտիոսի կողմնակից համարուելով, եւ իւր քոյրը Անկելինայ նաեւ կորուսէր էր իւր ազդեցութիւնը, վասնզի դեռահասակ կայսրը կասկածոտ՝ հազիւ թէ Փիլակրիոսի խորհրդոց ուշ կը դնէր: Փիլակրիոս եւս իւր կողմէն Երիզագույն ազդեցութիւնէն ազատելու համար Թումայի տեղ զնայ Հայաստանի յունական զօրաց սպարապետն անուանել տուաւ: Այնպէս որ Վարագտիրոց մնաց մայրաքաղաքն իւր գլխաւոր պաշտպանը կորսնցնելով:

Ան ատեն Վարագտիրոց փոխեց կեանքին ձեւը, մեծ եւ փառաւոր պալատ մը վարձեց ու զարդարեց, տուաւ զինք ուրախութեան եւ զիներբուաց, Բագրատունեաց սեփական ինայտողութիւնն անհետ եղաւ, հանդէսք եւ խնջոյք իրարու կը յաջորդէին, բոլոր բիւզանդացի պալատականք խուռն կը դիմէին նորա հրաւիրանաց, Փիլակրիոս ինք նաեւ սկսաւ ընտանենալ Ասպետին հետ: Երկու-երեք ամսուան միջոցին՝ Վարագտիրոց՝ շուայտութեանց մէջ՝ կայսերական քաղքին զուարճալի կեանքը վեր կը քարոզէր իւր լեռներուն փապարներէն: Եւ այս կեանքը շարունակելով՝ աղերսադիր տուաւ կայսեր, որ չորս հոգի իւր հաւատարիմներէն ուղարկէ Տայոց գաւառը իւր ստացուածքը եւ գանձերը բերել տալու համար: Եւ այս չորս անձանց համար հրովարտակ առնելով, ինքն ծպտեալ թիկնապահաց հետ նաւ մտաւ եւ յաջողակ հողմով եկաւ Ճորոխի ափանց վրայ, եւ թռչունի արագութեամբ հասաւ Տայոց գաւառը: Տայեցիք մեծ ուրախութեամբ ընդունեցին զինք. աւելորդ է պատմել Բագրատունեաց պառաւ իշխանուհոյն երջանկութիւնը իւր սիրելի զակիին տեսութեան: Բայց ուրախութեան ժամանակ չէր. մէկ կողմէն բերդերը կ'ամրանային, ժողովուրդք զիւղերը կը թողէին՝ անառիկ տեղեր կը բարձրանային, զինուորներ դրօշակներու տակ կը ժողուէին, եւ բոլոր Տայոց գաւառը քանի մը օրուան մէջ այնպէս պատրաստութիւն տեսաւ, որ իբր թէ յունաց բոլոր բանակները հոն պիտի թափէին: Եւ միւս կողմէն Ասպետը՝ գաղտնի սուրհանդակ կը հասնէր Դվին՝ իմացնելու համար Ռշտունույն, որ դեռ նոր հասեր էր հոն, իւր գալուստը, եւ սա որ պատրաստութիւն կը տեսնէր Ռշտունիք դառնալու, շտապաւ նամակ կ'ուղարկէր Սէթայի՝ յայտնելով իւր գալուստը եւ զօրաց պէտք ունենալը:

Նոյն միջոցին կայսերական հրաման կը հասնէր առ Թէոդորոս Երիզացի սպարապետ յոյն զօրաց, որ ճամփաները բռնէ եւ ամրութիւնքը փնտռէ գտնելու համար Ասպետ եւ դարձնելու Կ. Պոլիս: Եթէ Թէոդորոս կամք նաեւ ունենար՝ անկարելի էր այդ հրամանը կատարել, վասնզի Վարագտիրոց իւր բոլոր զգուշութիւններն ըրած էր: Ուստի բանագնացութեան մտաւ, կայսեր դրեց, Ներսէս կաթողիկոսը դեսպան դրկեց առ Ասպետն, որ ապստամբութեան չդիմէ եւ հնազանդի կայսեր, եւ խոստացաւ բերել տալ կինն ու զակները մայրաքաղաքէն, միայն թէ հնազանդութեան թուղթ գրէ կայսեր: Բագրատունին շուտ մը նամակաւ յայտնեց կայսեր թէ «Այնչափ տարի անիրաւ աքսորանաց տանելով ապստամբութեան միտք չէր ունեցեր, այլ միայն

երկիւղը դարձեալ նոյն աքսորանաց մատնուելու եւ հայրենի երկրին սերը զինք բռնադատեր էին փախչելու»։ Այս թուղթին փոխարէն կիրաւապաղատութեան պատիւ, պսակ, արծաթեղէն գահոյք եւ կինն ու զակները կայսրէն ընդունեցաւ։

Թէոդորոս Ռշտունի գոհ այս եղածներէն, իւր այնչափ ժամանակի խորհուրդները կը տեսնէր վերջապէս զլուխ ելնելու մօտ. ուստի միբանութեամբ Ասպետին ու կաթողիկոսին հրաւիրանաց նամակներ գրուեցան առ ամենայն նախարարս հայոց, որ զան ժողովուին Դուին խորհիլ ազգին կանոն մը դնելու։ Այսպիսի յարմար ժամանակ քիչ կը հանդիպէր, հայոց նախարարաց մեծ մասը արդէն համոզուած էին, թէ բան մը պէտք էր ընել, ուստի յօժար էին միաբանելու. իսկ Ներսէս կաթողիկոս ոչ միայն քաղաքագէտ մարդ էր, այլեւ ուսմունք սովորած, Յունաց կայսրութեան մեծ մասը պտրտածդ ամէն բանի տեղեակ, արդէն դաշնագրին գլխաւոր կէտերը Թէոդորոսի հետ գրի առած էին, եւ Ասպետը, որ Թէոդորոսի ուղղութեան վրայ կատարեալ վստահութիւն ունէր՝ առանց երկմտութեան ընդունեց իրենց պայմանները։ Հակասութիւն երկու նախարարութեանց կողմանէ միայն կարելի էր. Մամիկոնեանց եւ Մոկաց։

Դաշնագրին պայմանները պարզ էին, նպատակը անիշխանութեան տարտամ վիճակէն հանել էր Հայաստան եւ կեդրոնական կառավարութիւն մը հաստատել, որ թէ օտարէն յարձակմանց եւ թէ ներքին հարստահարութեանց կարենար ընդդիմանալ եւ ժողովուրդը անտանելի յարկաց ծանրութենէ եւ երկիրն աւերմունքէ կարենար պաշտպանել։

Արդէն կայսեր կողմանէ կիրաւապաղատ եւ զօրավար անուանեալ անձինք որոշուած էին, ուրեմն դատաստանական բարձր ատեան մը եթէ հաստատուէր, մեծ նախարարաց նվիրակներէ կազմեալ, որուն վճիռներուն ամէն ոք պարտաւորուէր հնազանդիլ, եթէ ժողովք մը նաեւ կազմուէր որոշելու համար յարկաց արդար բաշխումը, եւ կանոնաւորեալ զինուորութիւն մը ըստ մարդաթւոյ, Հայաստան ապահովեալ կը համարուէր։

— Եւ մինչեւ այս մեծ գործը կատարելու վրայ էր, ահա յանկարծ Վարազտիրոց քանի մը օրուան մէջ կարճ հիւանդութեամբ մեռաւ Դուին, եւ միաբանութիւնն վտանգեցաւ։ Վասնզի թէպէտ կայսրը, նորա որդին Սմբատ հօր տեղ կիրաւապաղատ անուանեց, բայց հօր ազդեցութիւնն ունենալէ շատ հեռու էր։

ԳԼՈՒԽ ԻԴ

Ամէն կրօնքներու առաջինն է իւր կրօնքը պահել, եւ երջանկութեանց ամէնէն մեծն է զայն լաւագոյնը կարծէր

ՊԻԻՖՈՆ

Բայց այդ հարուածն նաեւ չի յուսահատեցուց զթէոդորոս. գնաց Կարին իւր բարեկամ եւ անուանակցին հետ տեսնուելու, եւ դեռ քաղաք չի մտած յունաց սպայակոյտին վրայ գոռոզ փոփոխութիւն մը նշմարեց։ Առանց կարեւորութիւն տալու, Մտրատելատին բնակարանը ուղղուեցաւ եւ տեսաւ սպասաւորաց եւ թիկնապահաց երեսները զունատ եալ եւ պատրաստութիւն ճանապարհի։ Եւ երբ բարեկամին սենեակը մտաւ, տեսաւ, որ նա զբաղած էր շատ մը թղթեր այրելու։

— Ժամանակին հասար, բրեկամ,— ըսաւ Երիզագին,— վասնզի ես առանց զքեզ տեսնելու նաեւ պարտաւորուած էի երթալ: Դու լաւ կշռէր էիր այդ երիտասարդ կայսրը. գագան մը գահին վրայ հանեցինք:

— Պաշտօնեդ կը գրկէ՞ քեզ այդ տղան:

— Եթէ վտանգն այնչափ է, գոհ պէտք է լինիմ: Երեւակայէ, որ երեք օր է չորս սուրհանդակ ստացեր եմ մայրաքաղաքէն, եւ ահա հինգերորդը, որ այս առաւօտ կը հասնի, ինձ սաստիկ հրաման կը բերէ վայրկենին զօրավարութեան պաշտօնս յանձնել Մարիիանոսի եւ դառնալ Պոլիս: Եթէ կին եւ զաւակներ, եւ ամէն բան այդ գագանին ձեռքին մէջ չլինէին, գիտէի ի՛նչ ընելիքս:

— Բայց ի՞նչ է իւր արարքը, այն պատմէ՛, եղբայր:

— Աստուածաբանութեան կատաղութիւնն ունի այս երիտասարդը, կ'երեւայ թէ այս կայսերական աթոռին վրայ ժառանգական է այդ հիւանդութիւնը: Իւր պապը Հերակլիոս վերջին ժամանակները երբ պատերազմին դաշտը թողած դարձաւ Պոյչիս, ես ի պաշտօնէ բռնադատ եալ, իւր քով մտայ իմացնելու համար, թէ Եգիպտոս եւ Աղեքսանդրիա նաեւ մահմեդականաց ձեռքն են ինկեր: Օեր կայսրը իւր վարդապետներէ շրջապատեալ նստած էր. իմ տխուր կերպարանքս տեսնելով հարցուց, թէ ի՛նչ նոր լուր ունէի. ես երբ զգուշութեան ձեռքով եւ երկիւղով իմացուցի աշխարհին կորուստը, նա վայրկեան մը մտածութեան ինկաւ. եւ վերջը ինձ հարցուց.

«Թէտղորո՛ւ, դու ինչպէ՛ս կը հաւտաս, Քրիստոս, որ երկու բնութիւն ունի, մի՞ կամք ունի, թէ՞ երկու»: Ես շփոթած այս անակնունելի հարցմունքին վրայ, պատասխանեցի թէ «Այսպիսի ինդիքներ կ'արողութենես վեր են, ինչ որ եկեղեցին որոշէ՝ այն կընդունիմ»: Բայց մտքես ցաւեցայ, որ այդ մարդը, որ մենք դիւցազն մը տեսեր էինք պատերազմի դաշտին վրայ, այդ զառամութեան էր հասեր: Երեւակայէ՛, եղբայր, որ թողը հիմա այդ աստուածաբանական խնդրոյն վրայ հաւատոյ դաւանութիւն մը կը հրատարակէ, եւ Մաքսիմոս պատրիարքը, վասնզի դէմ գրեր եւ քարոզէր է այդ դաւանութեան ու հերետիկոսական անուանէր է, աստուծոյ քահանային լեզուն եւ աջը կտրել տուեր էր:

— Այսչա՞ փ միայն:

— Ո՛չ, դեռ կայ, մէկ հատիկ եղբայրը՝ Թէոդոս, սարկաւազ ձեռնադրել տուեր է, նորա ձեռքէն հաղորդուէր է եւ դարձեալ գոհ չլինելով՝ սպաննել տուեր է:

— Ուրի՞շ:

— Բանտերը լցնել տուեր է այն մարդիկներով, որոց վրայ հաւատոյ կամ իւր անձին դէմ կասկած ունեցեր է:

— Դեռ ուրի՞շ:

— Եղբա՛յր, քեզի էլ բռնաւոր հանեցնել յիրաւի շատ դժուար է: Այսչափը բաւական չէ՞:

— Ո՛չ այդպէս, շատ կը սխալի, ես բռնաւորի կը հաւնիմ, բայց ոչ այդպիսի յիմար բռնաւորներու, որ ոչ նպատակ ունին եւ ոչ գիտեն, որ ի՞նչ կ'ուզեն եւ ո՞ւր կ'երթան: Ես իմ ուզած բռնաւորս եթէ գտնէի...

— Բռնաւորին լաւը չի կայ, Ռշտունի, ես կը զարմանամ թէ ինչ դիպուածով իմ գլուխս ուսերուս վրայ մնացեր է եօթանասունհինգ տարի. ութ հատ կայսր տեսեր եմ, որոց առաջին երկուքը՝ ամէնէն լաւերը՝ չեմ կրնար դատել, իսկ Մորիկէ սկսած մինչեւ այս Կոստանդ ամէնն էլ արինկզակ բռնաւոր: Ի՞նչ օգուտ ունեցեր են աշխարհքի եւ իրենց անձանց ու ընտանեաց: Իսկ թէ հայ ազգը ի՞նչ է քաշեր սոցա օրով եւ թէ ի՞նչ քաջ նախարարք եւ իշխանք գոհ գնացեր են այսչափ միջոցի մէջ, եթէ մէկիկ-մէկիկ համրեմ...

— Մի՛ համրէր, անօգուտ է, ես լաւ գիտեմ: Թէ որ կարենայի գբեզ մեր Ոստանը տանիլ, կրնայի ցցնել այս վերջի հարիւր տարուան միջոցին հայոց բիրաւորաց կոտորածներու ցուցակը ի յունաց եւ ի պարսից, հօրս եւ պապուս ժամանակէն դրուած ճշտութեամբ: Բայց ո՞ւմ է յանցանքը, մեռնողի՞ն թէ՞ մեռցնողին:

— Երկուքին հաւասար: Ես հոս Կարին՝ այս պաշտօնիս մէջ աւելի բան իմացայ մեր երկրին վերաբերութեամբ, քան թէ ինչ որ իմացեր էի այնչափ տարի Բեօլզանդիոյ արքունեաց մէջ: Այս Կարնոյ դիւանատան մէջ գտայ թղթակցութեանց շարք մը պարսից եւ յունաց մէջ, Մօրիկ կայսեր եւ Խոսրովու ժամանակի. տե՛ս թէ ինչպէ՛ս իրարու հետ կը խօսին:

Եւ այս ըսելով Երիզագիին հանեց թուղթի մը օրինակ եւ տուաւ Ռշտունւոյն, որ լռութեամբ կարդալէն վերջ այդ ուղթը, ուր յոյնը կը գրէր պարսկին՝ հայոց համար. «Խոտոր եւ անհնազանդ ազդ մի են, մեր մէջ կացած պղտորութիւն կը ձգեն: Բայց եկ, ես ինձ հնազանդեալքը կը ժողուեմ եւ Թրակիոյ կողմն կանցնիմ հոնաց եւ նմանեաց հետ պատերազմելու համար. դու քուկիներուդ հրամայէ ժողուել եւ Արեւելք տանիր Վասնզի եթէ մեռնին՝ թշնամիք կը մեռէին, եւ եթէ սպաննեն զթշնայյմիս կը սպաննեն, եւ մենք խաղաղութեամբ կապրինք: Զի եթէ դոքա իրենց երկրին մէջ մնան՝ մենք հանգստութիւն չպիտի գտնենք»: Բարձր ձայնով կարդաց երկրորդ անգամ եւ հեզնական ծիծաղով ըսաւ.

— Ողորմելի՛ քաղաքագիտութիւն, որ իւր ներքին վիճակը չի տեսներ, եւ ուրիշին թշուառութենէն օգուտ քաղել կը կարծէի աշխարհք մը կոչնչացնէ, եւ իւր անձին զօրութիւն չի գտնէր եւ աւելի կը տկարացնէ: Խոսրով այդ նամակի իմաստը յայտնած էր Սմբատայ: Բայդ դժբախտաբար Հայաստանի համար՝ եւ Խոսրովու իւր անձին համար, Սմբատ շուտ մեռաւ, եթէ ոչ ի՞նչ գեղեցիկ ու մեծ խորհուրդներ ունէր այդ մեծ՝ մարդը, որ քուշանաց զօրութիւնը ջախախելէն վերջ, Հայաստանի վերականգնութեան խոստմունքն առած էր արքայից արքայեն: Եւ այն՝ ինչ որ ես տկար ձեռք կը փափագիմ գործել, նա հզօր ձեռք ապահով ի գլուխ կը հանէր. բայց մահը ամէն խորհուրդ առաւ տարաւ...

— Հիմա էլ իւր որդւոյն՝ Ասպետին մահը ամէն յոյսեր փչացուց:

— Ի՞նչ ընենք, քանի որ շունչ ունինք պէտք է աշխատինք: Բայց դու որոշած էիր երթալ:

— Ուրիշ ի՞նչ Կարելի է ընել...

Մտախոհ լռութիւն յաջորդեց այս խօսակցութեան, երբ մասնաւոր սուրհանդակ մը Երիզագուոյն բերաւ նամակ մը, որ կ'իմացնէր նոր-նոր դաւանութիւնք, նոր բանտարկութիւնք եւ նոր արեանց հեղմունք, այնպէս որ ժամանակին պատմաբանք կը պարտաւորին կոտորածներն յիշելով ըսել թէ՛ «Ոչ մնաց ի թագաւորութեանն այր խորհրդական, զի միահամուռ սպառեցան բնակիչք աշխարհին եւ իշխանին»: Նամակը կ'իմացնէր նաեւ հայ իշխանաց մէջ Գրիգոր Մագիստրոսի եւ Մանուէլի եւ Մարդունիի մահը, որ անէր էր Բագրատունի Ասպետին եղբօր, եւ կը յորդորէր

գթեղորոս ժամ առաջ հասնիլ, որպէսզի կասկածոտ կայսեր միտքը չի կատղեցնէ իւր ընտանեաց վրայ:— Ծեր Ստրատելատր իւր ընթերցմունքը լմնցնելէն վերջ՝ ամէն բան իմացուց Ռշտունայն եւ իւր վերջին հրաժարականը տուաւ իմացնելով, որ այլեւս յոյս չունէր ուրիշ տեսութեան. Հայոց զօրավարը Դուինի ճամփան բռնեց, երբ Երիզագին կ'երթար դէպի Պոնտոս մտնելու նա՝ դառնալու Պոչիս, ուր հիւանդ հազիւ հասնելով, բնական մահն եկաւ ու Կոստանդինի ձեռքէն զինքն ազատեց:

Թեղորոս Ռշտունի այս անակնունելի դիպուածոց վրայ դառնացեալ, այլ ոչ երբեք սրտաբէկ, երբ հասաւ Դուին, միտքը դրած էր երկրին կարելոր գործերն կարգի դնել, եւ դառնալ Ռշտունիք, վասնզի Տիկինը սուրհանդակ սուրհանդակի վրայ կ'ուղարկէր եւ անհամբեր էր դարձին, «զի ընտանեկան պարագայներ կային, որ իւր «գալուստը կը պահանջէին եւ որ նամակաւ դժուար էր իմացնել»:

Բայց հազիւ երկրին մատակարարութեան գործերը կարգի դրաւ Ներսէս կաթողիկոսի, Սմբատ Կիրապաղատի եւ քանի մը ուրիշ իշխանաց հետ, ահա հրովարտակ կը բերէր Յունաց կայսրէն Դաւիթ անուն մարդ մը աստուածաբանական ուսմանց տեղեակ՝ բաղարանցի, որ կը հրամայէր վերցնել ամէն խտիր եւ միաբանիլ յունաց հետ ի դաւանութիւնս: Ուստի կաթողիկոս եւ նախարարք պարտաւորեցան հրաւեր յուղարկել ամէն կողմ, եւ իշխանք եւ եպիսկոպոսք զանազան գաւառաց ժողովեցան ի մայրաքաղաքն Դուին, եւ ամիսներով կը վիճէին, կը խօսէին հրովարտակին պատասխանը պատրաստելու համար:

Կային հայ նախարարաց մէջ յնպիսի անձինք նաեւ, ինչպէս էր Համազասպ Մամիկոնեան, տեղեակ աստուածաբանական խընդրոց, որ եպիսկոպոսաց հետ կը խառնուէին վիճաբանութեանց եւ գործը կ'երկարէր: Իսկ Թեղորոս, որ ամենեւին չէր խօսէր՝ այլ տխուր, ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, երբ իր կարծիքը հարցուցին օր մը, այսպէս խօսեցաւ.

«Աստից գրեթէ տասնհինգ կամ տասնվեց տարի առաջ, Կարնոյ քաղաք, Հերակլ կայսեր հրամանաւ ժողովք մը եղաւ. Եզր կաթողիկոսի հետ եւ դարձեալ այս նիւթերու վրայ տեսայ, որ խորհրդածութիւնք, վիճաբանութիւնք տեղի ունեցան. վիճեցին, խօսեցան, ճառեցին. եւ հետեւանքը այն եղաւ, որ կաթողիկոս, եպիսկոպոս եւ վարդապետ կայսեր հետ հաղորդուեցան, նորա դաւանութիւնը դաւանեցան, ընծանէր, պարեւներ առին, եւ երբ ժողովքէն դուրս ելան՝ հայ ազգը՝ ժողովքը տարբեր, ժողովուրդը տարբեր լինիլն յայտնի ըրաւ, եւ այդ որոշմունքներուն մէկը չընդունեց, եւ Եզր իւր զակներուն խորթ հայր մը եղաւ եւ այնպէս ասելի մեռաւ:— Ես՝ ա՛յն Շաւարշ Ռշտունայն թոռն եմ, որ երբ բոլոր հայ ազգը մկրտուիցաւ Եփրատայ մէջ ի Ս. Լուսաւորչէ, Աստրեստան էր իր գնդով, եւ ձմեռը դառնալով եկաւ Վաղարշապատ, Տրդատայ հրամանաւ յանձն առաւ քրիստոնէութիւնը. Լուսաւորիչ եւ թագաւորը Տարօն էին, ուստի ասորի եպիսկոպոս մը՝ կը պատմեն յիշատակարանք՝ զինք պիտի մկրտէր: Երբ, մէկ ոտքը դնելով աւազանին մէջ հարցուց. «Իմ հարցս՝ Ռշտունեաց նախարարաց հոգիք ո՞ր են հիմա. նոյն արքայութիւնն է՞ն, ուր դու ինձ քարոզեցիր թէ՞ ուրիշ տեղ մը»: Եպիսկոպոսն անհանճար՝ շուտ մը պատասխանեց թէ՛ «Դժոխքին մէջտեղն են»: Շաւարշ ետ քաշուելով՝ «Եթէ այդպէս է՝ ես իմ նախահարցս քով կ'ուզեմ երթալ, քու արքայութիւնդ քեզ լինի, ասորի», — ըսաւ եւ քաշուեցաւ: Վերջը Լուսաւորիչ ջանաց համոզել այդ Ռշտունեաց տէրը՝ թէ աստուծոյ դատաստանի գաղտնիք են, իէք ողորմած է հեթանոսաց, որ Քրիստոսի Աւետարանին տեղեկութիւն չունին, մարդս չի կրնար դատապարտութեան վճիռներ տալ, եւ թէ եպիսկոպոսը մեծ յանդգնութիւն ըրած էր այդպիսի վճռողական պատասխան տալով: Յիշատակարանք չեն գրուցէր, բայց եւ

կ'երեւակայեմ թէ առանց Տրդատայ օգնութեան Լուսաւորիչ ինքն լինելով՝ համոզած չէ կատարելապէս այդ Ռշտունեաց Տէրը աւագանին մօտենալու երկրորդ անգամ: Ես՝ Թէոդորոս Ռշտունի, այդ Շավարշայ թոռն եմ, եւ ճիշտ այդ յետին շինականին պէս կը մտածեմ, որ առանց աստուածաբանական ուսմունք ունենալու կը գրուցէր. այդ Եզր կաթողիկոսը Թաղէոսէ, Բարդուղիմէոսէ, Լուսաւորչէ լա՞ցիտէ հայութիւնը, քրիստոնէութիւնը. մեղա՛յ աստուծոյ, մենք Լուսաւորչայ դաւանութիւնը թողո՞ւնք, որոհետեւ այդ Եզր Կողբաց աղեհանք կը սեփականացնէ, Աստուածհետի՛ ընէ, ինքն աղն ուտէ եւ մեզ աղու տա: Բացի հայն, մտաբերեցէք, որ այդ պահանջմանց վերջը չի կայ, այդ յունաց ազգն ամէն օր նոր բան կստեղծէ ի հաւատս, այդ Կոստանդին կայսրը իր եկեղեցւոյն Հետ միաբան չէ, պատրիարքներ, եպիսկոպոսներ կը չարչարէ, կաքսորէ հաւատոյ խնդիրներու համար: Կայսրը մեզնէ հաւատարմութիւն ուզէք պատրաստ ենք իրեն ծառայելու, բայց մեր հաւատքին, մեր խղճմտանքին չի հպի լաւ կ'ընէ»:

Հրովարտակին երկար պատասխան մը գրուեցաւ, ուր հայոց կաթողիկոս, նախարարք եւ եպիսկոպոսունք կը յայտնէին, թէ Նիկիոյ դաւանութենէն աւելի բան մը ընդունիլ իրենց անկարելի էր: Այն ատեն յոյնքն եւ իրենց սակաւաթիւ համախոհք սկսան աւելցնել հակառակութիւնը եւ Հայաստանու արեւմտեան զավառաց մէջ յայտնի հալածանք եւ բռնութիւն ի գործ դնել ընդդէմ հայոց: Սմբատ Կիւրապաղատ թոյլ մարդ էր, Ներսէս կաթողիկոս յունական դաստիարակութեամբ աւելի հակամետ սկսաւ երեւիլ, յունաց նախարարք անհոգ միաբանութեան կապն էլ խզեցին, եւ Թէոդորոս այնչափ հոգերէ ու տառապանքէ վերջ՝ կը տեսներ թէ իւր բոլոր աշխատութիւնք ոչինչ դարձած՝ ամէն բան իր խորհրդոց դէմ իբրեւ թէ դաւադիր կը լինէր:

ԳԼՈՒԽ ԻԵ

Թէոդորոս տաղտկացեալ՝ կ'ուզէր դառնալ Ռշտունիք, երբ իրեն իմացուցին թէ կաթողիկոսը թողէր աթոռը վեախեր էր Տայոց գաւառը Սմբատ Կիւրապաղատին հետ: Այս երկու նախաթոռ անձինք Հայաստանի ծանր վիճակին մէջ ոչ միայն կը թողուին իրենց աթոռը, այլեւ համբաւ մը կը ձգէին, որ Թէոդորոսի երկիւղէն էր իրենց փախուստը, իբր թէ դաւաճանութիւն մը կար իրենց անձանց դէմ: Վասնզի կաթողիկոսը նոյն զիշեր, որ կը հեռանար, կնքեալ թուղթ մը կու տար իւր հաւատարիմ վարդապետի մը, ուր դառն գանգատներ կ'ընէր ընդդէմ զօրավարին: Միւս կողմէն կ'իմանար Թէոդորոս թէ յունաց բանակն, որ ի Կարին էր՝ կը տարածուէր Բագրեւանդ եւ քիլիքիէ առաջ անցնելով, կը մօտենար մայրաքաղաքին: Ուստի չկարենալով հեռանալ հայրաքաղաքէ, տեղապահ մը սահմանեց կաթողիկոսին եւ գրեց Մէթայի օգնական զօրաց գունդ իրեն հասցնել:

Իսկ Ռշտունեաց Տիկինը շուտ մը երկու հազար հետեւակ եւ երեք հարիւր հեծեալ ու Վարդ որդին յուղարկեց Հայոց զօրավարին: Թէպէտ Վարդ շատ դժկամակ էր Ռշտունեաց Ոստանէն հեռանալու եւ ակամայ հնազանդեցաւ մօրը: Ի՞նչ էր պատճառն այս դժկամակութեան, ետ դառնանք երկու տարուան միշոց՝ երթանք Ռշտունիք եւ բացատրենք համառօտիւ:

Երբ Գրիգոր յաղթութեամբ ետ դարձաւ Հերաց կողմերէն, զՄէթա եւ բոչոր երկիրը շփոթած ու տխուր վիճակի մէջ գտաւ: Վասնզի մինչ ամենքը կը սպասէին իշխանին դարձին, Թումայի դաւաճանութեան եւ Թէոդորոսի շղթայակապ ի Բիւզանդիոն յուղարկուելուն լուրը կը հասներ Վասպուրական, եւ անմիջապէս այն թղթի կտորը իշխանէն, որ կը պատուիրէր Մէթայի՝ «Հսկել երկրին եւ Ատոմ Շահունիէ գատ ոչ ումէք հաւատարմութիւն ընել»: Բայց դժբախտութիւն մ'էլ այն

էր Մէթայի վիճակին համար, որ Ատոմ կաթուածահար պառկած՝ իւր ամրոցն ի Բզունիս, Վարդ դէռ Միւնէաց երկիրն էր: Ուստի երբ Գրիգոր հասաւ իւր յաղթական գնդաւ, Տիկինն իրեն լաւ ընդունելութիւն ըրաւ, վիճակը յայտնեց եւ բոլոր պատերազմական գործերն իրեն յանձնեց թէ՛ զօրաց կրթութեան, թէ նոցա թիւն աւելցնելու եւ թէ բերդերն ամրացնելու մասին:

Վասպուրականի բոլոր նաւերը գնեց եւ փոքրիկ ծովուն տէր դարձաւ, եւ Աղթամարայ կղզին, որ այն ժամանակ շատ աւելի ընդարձակ էր՝ վասնզի ծովը հիմկու բարձրութիւնն չունէր՝ շտեմարաններն ընդարձակեց ու մեծ քանակութեամբ պաշար եւ զէնք համբարեց: Դիտելով Գրիգորի անխոնջ աշխատութեան հետ սաստիկ տխրութիւնը, զգաւէն յուղարկեց առ Ներսէհ Կամսարական եւ Արփենին ուզեց հոստան, ի մխիթարութիւն եղբօրը: Կասկածելով իրաւամբ թէ՛ Մամիկոնեանց Մուշեղէն եւ թէ՛ դաւաճան Մոկաց Արդուկէն, որ կը խլրտէին՝ զօրաց մեծ մասը Գրիգորի յանձնելով Բաղէշ նստուց եւ բացարձակ հրաման տուաւ, որ ամենափոքր նշան թշնամութեան կամ յարձակումն տեսած ժամանակ նոցա կողմէն սանձահարէ ամէն արարք: Նոյնպէս Ուստանի շուրջը մեծ խումբ զօրաց կը բանակէր Վարդի յանձնած: Եւ ինք անձամբ շատ անգամ կ'երթար շրջակայքը տեսնելու թէ իրօք պէտք եղած ամրութիւնք եւ գիւղերու պատասպարանք ըստ արժանւոյն շինուած էին. ամէն գիւղ եւ աւան գանգատներ կը քննէր. իւր ճանապարհորդութեանց ընկեր առած երկու համեստ դատաւոր եւ Ռշտունեաց եպիսկոպոսը՝ նոցա որոշումնքը շուտովի գործ կը դնէր. անիրաւները, հարկահան, աւանապետ կամ գիւղապետ, աւագակները, ազատ կամ անազատ Աղթամարայ բերդին մէջ շղթայակապ կ'ուղարկէր աշխատելու: Ռշտունեաց գաւառն այն օրերը տեսնողը կը զարմանար. երկրագործ, հովիւ, արհեստաւոր, երիտասարդ եւ պատանի, ամէնքը զինեալ, բայց ոչ ուրեք անկարգութիւն մը չէր նշմարուէր, վասնզի զէնք քաշել կռուի կամ վէճի մէջ սաստիկ խստութեամբ կը պատժուէր:

Ուստի Թէոդորոսի հեռաւորութեան միջոցին ոչ մէկ թշնամի չտեսնուեցաւ, որ համարձակէր մտնել այն երկիրը, իսկ երբ իւր Հայաստան դարձը լսուեցաւ՝ Մէթայի սիրտը հանգստացաւ բոլորովին, եւ օրաւոր կը սպասէր նորա դարձին, բայց տարին կ'անցնէր, կը լրանար, եւ մեծ իշխանն այսօր, վաղը կ'ուշանար: Գրիգորի հրաման եղած էր արդէն գալ բնակիլ հոստան, վասնզի բանակը, որ Բաղէշ կը սպասէր՝ ցրուելու միտք ունէր Տիկինը. շրջակայք բոլոր Թէոդորոսի գալստեամբ բարեկամ կը տեսնէր ինք եւ զօրքերն հետզհետէ տուններնին կը ճամփէր: Գրիգոր կ'ուզէր դառնալ երթալ Բագրեւանդ, իւր հայրենի տան աւերակներուն, իւր մօր աճիւններուն այց ընել, ուստի թեպէտ իւր սրտին մեծ մխիթարութիւն էր Թէնի, եւ նոյնպէս ուրախ աչօք կը տեսնէր նորա իւր մէկ հատիկ քրոջ վրայ ցցուցած սէրն ու բարեկամութիւնը, բայց երբ Թէոդորոս նստած էր Դուին, հոն էին իւր քեռիքն եւ հօրեղբօրօրդին Համագասպ, հոն գրեթէ հայոց բոլոր մեծ նախարարք, ինք զարմանքով կը մնար թէ ինչո՞ւ զինք չէին հրաւիրէր գալ եւ հայրենի ժառանգութեան տիրանալ: Ուստի Մէթայի հետ այս խօսակցութիւնն ունեցաւ...

— Որովհետեւ իշխանը, փառք աստուծոյ, ողջ-առողջ հասաւ, եւ վտանգի սպառնալիք չմնաց մեզ համար, Տիկին, կարծեմ թէ ինձ հրաման կրնաք տալ, որ երթամ եւ Դուին ու Բագրեւանդ շրջան մը ընեմ:

— Գրիգոր որդեակ,— պատասխանեց Մէթա,— կարելի է մտքեդ անցաւ թէ երբ դու այս երկու տարուան մօտ ժամանակ, որ աջ բազուկ եղար մեզ վտանգի օրեր, եւ ես երբեք չեմ կրնար մոռնալ, չեմ յիշէր քու օգուտդ, վասնզի քանի որ եկեր ես օր մը այս նիւթին վրայ չի խօսեցայ. բայց պէտք է գիտնաս, որ իշխանին գրեցի քանի անգամ, իսկ նա ինձ իմացուց թէ՛ «Չէր մոռցեր երբեք քու իրաւունքդ, բայց Մամիկոնեանք ազգային միաբանութեան թշնամի չընելու համար՝ առժամս

այս խնդիրը մեջտեղ հանել չէր կրնար» եւ զիս համբերութեան կը յորդորէր: Իսկ հիմա կարելի է որ զքեզ ինք ուզէք վասնզի ինձ նոր հրաման կ'ընէ զօրքերը չի ցրուել եւ պատրաստի պահել չգիտեմ ի՛նչ նպատակաւ, վասնզի չի յայտնէր: Պէտք է զհտնաս նաեւ, որ ամէն անգամ նամակաց մէջ մեծ գոհութիւն եւ սէր կը յայտնէ քու ազնիւ ծառայութեանցդ համար, եւ որ ես չեմ ուզեր կրկնել, վասնզի զքեզ իբրեւ զաւակ համարել եմ հաւասար իմ Վարդիս:

— Այս խօսքերուն բացի շնորհակալութենէն եւ ոչինչ չունեմ պատասխանելու, ձեր ազնիւ մայրական սիրոյն միշտ երախտագէտ եմ, եւ ինչչա՛ փ ծանր էլ լինի իմ սրտիս Ռշտունեաց տունէն կարճ բաժանմունք մը նաեւ, Վարդանայ բերդի աւերակներուն եւ մօր մը գերեզմանին այց մը դեռ հեռուն ձգել ինձ յանցանք կը թուի:

— Շատ իրաւացի կը գտնեմ այդ զգացմունքդ, որդեակ, դու ինչպէս որ գիտես, այնպէս ըրէ:

— Դեռ քանի մը օր ժամանակ ունինք, իշխանուհի, այս նիւթիս վրայ մտածելու: Միայն խնդիրք մը նաեւ ունիմ. եթէ կարելի էր, Յուսիկի հրաման ընէիք, որ Հերա կողմէն եկած ցորենի վաճառականներու, որ երկու տարվնէ ի վեր իրենց առնելիքներն չեն ստացած՝ վճարէ. ես քանի անգամ խնդրեցի, բայց ինք այսօր վաղը ըսելով միշտ կը յետաձգէ եւ մարդիկը ամէն օր կը դեզերին ու կը գանգոտին:

— Անիրաւը երկու տարի է այդ մարդկանց դեռ չի վճարէր, լաւ՛, ես հիմա իրեն կը հասկցնեմ,— ըսաւ բարկութեամբ եւ ոտք էլաւ:

— Խնդրեմ, իշխանուհի, ես ամբաստանութեան մտօք չեմ ըսէր:

— Կ'իմանամ, որդեակ,— ըսաւ Սէթա, իւր բարկութեան ծիծաղ մը խառնելով,— տարին քանի մը անգամ պէտք է որ ես Յուսիկի հետ կռոււմ. ուստի այս՝ դարձեալ առիթն է, վասնզի այդ մարդիկը քանի անգամ ինձ խնդիրք մատուցին, եւ ես հրամայեցի, որ վճարէ. պէտք է անձամբ ես ի գործ դնեմ: Դու նստէ, ես հիմա կու գամ:

Հազիւ իշխանուհին դուրս ելաւ՝ Թէնի ներս մտաւ: Թէնի տխուր էր, սովորական կերպարանքը չունէր, եւ Գրիգոր տեսնելով նորա տխրութիւնը՝ թէպէտ կրկին եւ կրկին կը հարցնէր տեղեկանալու համար, բայց որոշ պատասխան չառնելով, իւր տխրութիւնն էլ աւելցաւ, եւ քիչ մը լռութենէ վերջ ըսաւ դառն ժպիտով.

— Կ'երեւայ, որ Թէնի բաւական վստահութիւն չունի վրաս, եթէ Ատոմ հայրիկ լինէր, կրնար թերեւս այդ սեւ ամպը իւր ճակտեն հալածել:

— Ինչո՞ւ, Գրիգոր, այդպիսի գրպարտութիւն մը կ'ընես իմ սիրոյս, իմ սրտիս. կարելի չէ՞, որ ես առանց պատճառի նաեւ կոտորածութիւն մը ունենամ, տկարութիւն մը, որ տխրութիւն երեւա:

— Ո՛չ,— ըսաւ Գրիգոր,— այսօրուան կերպարանքդ այն չի ցցնէր, ուրիշ պատճառ մը ունիս եւ ինձմէ կը ծածկես:

— Միթէ՞ կարելի չէ, որ իրաւունք ունենամ ծածկելու:

— Չեմ կարծէր, եթէ իմ սրտես դատեմ քու սիրտդ:

— Հիմա քեզ պատճառը զրուցեմ. կարելի է քեզ շատ անձնապաշտ թվիմ, բայց որ այդչափ հետաքրքիր ես՝ զրուցեմ. խնդիրը երկուքնուս հաւասար կը վերաբերի: Առաջին...

— Ո՛հ,— ըսաւ Գրիգոր,— երկուք կամ շատ են պատճառները, որովհետեւ առաջինն կը սկսի:

— Կը տեսնես հիմա: Իմ պառկելու սենեակս բարակ տախտակամած մը միայն կը բաժնէ իմ պառաւ դահեկիս խուցէն. հոն ինչ որ խօսուի, ես աս դիտն կը լսեմ. երէկ միջոց մը ես քնած էի, երբ յանկարծ արթնցայ եւ լսեցի երկու պառաւ իրարու հետ կը խօսէին, եւ խօսակցութեան նիւթն մենք էինք: Ե՛հ,— կ'ըսէր մէկը միւսին,— այդ անկարելի բան է, Գրիգորի հօրեղբորորդին Համազասպը արդէն իշխանին (հօրս) եղբոր աղջկան հետ ամուսնացալ է, Համազասպն էլ Գրիգորի հօրեղբոր որդի է, ուրեմն կարելի չէ, որ օրիորդը Գրիգորի հետ ամուսնանա...

— Իմացայ. թէ այդ է քու մտածութիւնդ. Թէնի, ամենեւին պէտք չէ հոգ ընես Համազասպ Մամիկոնեան ցեղէն է, եւ մեր բոլոր ազգականութիւնն այսչափ է. իւր հօր անունն էլ Դաւիթ է, ուստի օտարներէն ոմանք զմեզ եղբայր կարծած են նաեւ, բայց մենք ոչ եօթ աստիճան, այլ տասնեօթ աստիճան իրարմէ հեռու ենք: Գանք ուրեմն երկրորդ խնդրոյն, եթէ այդ էլ այսչափ ծանր է...

— Ոչ, կարծեմ քիչ մը աւելի ծանր է, Գրիգոր: Քու քոյրդ Արփենին գիտես թէ ես ինչչափ կը սիրեմ, բայց մէկ-երկու օր կայ, որ կասկած մը սիրտս մտաւ, ոչ Արփենիին համար, որ դեռ տղայ է, այլ եղբօրս՝ Վարդին համար, որ օրաուր Արփենիէ չկրնար զատուիլ. շարունակ Արփենիի հետ կատակներ կ'ընէ, եւ այն երիտասարդը, որ որսէ զատ ուրիշ բանէ զուարճութիւն չէր զգար, հիմա որսի երթալը նաեւ դադարեցուց, եւ նորա ընկերութիւնը միայն կը փնտրէ:

— Այդ խնդիրն աւելի ծանր է: Եթէ մենք սիրով եւ յոյսով կապուած չլինէինք հոգ չէր, բայց այդ նոր համակրութիւնը կամ զիրենք թշուառ կրնայ ընել կամ զմեզ. այդ բանին ճար պէտք է տեսնել:

— Ինչպէ՞ս, իրաւունք ունէի ուրեմն մտածելու եւ տխրելու:

— Ես մորմեղ խնդրեցի Բագրեւանդ երթալ, բայց նա արգելիչ պատճառներ ցցուց եւ հօրդ դրել խոստացաւ, եթէ իւր հրամանը զինք Շիրակ դրկէ, խնդիրը այսպէս կը վերջանայ:

— Եթէ Ատոմ հայրիկ հոս լինէր եւ առողջ, ինչչափ մեզի կրնար օգնեմ:

— Ի՞նչ կ'ընէր:

— Նա մօրս կ'իմացներ ամէն բան:

— Ի՞նչ կ'իմացներ:

— Կ'իմացներ թէ մենք զիրար կը սիրենք, Վարդ կը յուսահատէր եւ ամէն բան կը վերջանար:

— Մայրդ ինչ կ'ըսէր: Միթէ չէր ըսէր թէ անտուն անժառանգ երիտասարդի մը Ռշտունեաց Օրիորդ չէ կարելի տալ:

— Քու երկու տարուան բրած բարձր ծառայութիւնքդ. Ռշտունեաց տան համար իմ ծնողքս չեն կրնար մոռնալ, եւ փոքրիկ վարձատրութիւն մը կ'ընեն՝ իմ ձեռքս քեզի կուտան...

— Որ ինձ հա քար շնորհաց ամենամեծն է: Ո՛հ, սիրելի Թէնի, այն օրն ե՛րբ պիտի գա...

— Լռէ՛, մարդ կու գայ,— ըսաւ աղջիկը: Եւ Ռշտունեաց Տիկինը ներս մտաւ. երեսնէն՝ աչաց փայլէն յայտնի էր թէ մեծ գործողութիւն մը կատարելէ կը դառնար:

— Քու վաճառականներդ ասկից վերջ քեզ չեն նեղեր, Գրիգոր,— ըսաւ,— ես երէկ պահանջներն ամբողջապէս վճարեցի:

— Բայց Յուսիկ:

— Յուսիկ, լացուցի նաեւ այդ անպիտանը:

Ի՞նչ էր ուրեմն եղածը, որ այդ ահագին ժայռի պէս աչքերէն ջուր բխէր էր:

Երբ մեթայ իջաւ գանձատունը եւ յանկարծ մտաւ ներս. Յուսիկ, որ նորա այցելութիւններէն գոհ չէր լինէր սովորաբար՝ կասկածոտ աչքերն անգամ մը վրան շրջելէն վերջ, իւր սիրուն ծիծաղը երեսին ոտք ելաւ:

— Այս ի՞նչ մեծ պատիւ է, որ կ'ընէք, իշխանուհի,— ըսաւ,— ի՞նչ հրաման ունիք:

Իսկ Սէթա փայտեայ տախտակամածին վրայ նստաւ եւ ձեռօք մերժելով ոչխարի մորթը, որով զինք կը պատուէր Յուսիկ՝

— Ի՞նչ ամօթ բան է,— գրուցեց,— որ շէնք շնորհք բազմոց մը շինել տուած չէս, որ եկող հիւրը կարենայ նստիլ:

— Բայց հոս գործքի տեղ է, իշխանուհի, եկողները, երբ իրենց գործը կը վերջացնեն՝ գոհ սրտով կ'երթան՝ ամենեւին մտքերնեն չեն անցնէր թէ հասարակ փայտի վրայ նստած էին թէ կակուղ բազմոցի:

— Այս քու խօսքդ կը նշանակէ թէ հոս եկողները տանջարան կը մտնեն, եւ այս նաեւ սուտ չէ, վասնզի ամէն օր գանգատ գանգատի վրայ կը տեղա, ամէն օր քեզի դէմ խնդրագիրներ կան: Ոմանք ճամփու ծախք կը պահանջեն, ոմանք ռոճիկ, անկար սպասաւորներ թոշակնին կ'ուզեն, որ դու դադրեցուցեր էս. իշխանը երբ իմանայ գանձատունը գլխուդ կը փլցնէ: Ես քանի-քանի՞ անգամ է, որ մեր ելից եւ մտից հաշիւն ուզեցի՝ միշտ փախուստ տուիր՝ ցոյց չի տուիր: Քանի որ տարիներ կ'աւելնան, կ'երեւայ թէ ազահութիւնդ կը շատցնես:

Իսկ Յուսիկ այս խօսքերուն իւր քաղցր ժպիտով պատասխանեց.

— Այնպէս կը գրուցեն, իշխանուհի, դուք իրենց ուշ մի՛ դնէք, անխիղճ շռայլ մարդիկ շատ բան կը գրուցնեն: Ես ձեր գանձին հաշիւները ճիշտ կը բռնեմ, դուք ձեր սիրտը հանգիստ պահեցէք: Նոքա որ ճամփու ծախք կը պահանջեն, անպիտաննե՛ր, ես գիտեմ թէ կամարները լեցուն եկան: Այն անկար սպասաւորները, որ թոշակդ կ'ուզեն, ողջ-առողջ պղնձի պէս մարդիկ են, կու գան՝ կուտեն, կը խմեն, փոքրիկ ծառայութիւն մը չեն ըներ: Այո, ամէնքն ինձմէ կը գանգտին: Ատում Շահունի կը գանգտեր, ինչո՞ւ Գրիգոր իշխանը չի գանգտիր. նա ինձմէ գոհ է. ես էլ իրմէ գոհ եմ: Վասնզի իրաւ երիտասարդ՝ բայց կատարեալ եւ ազնուական մարդ է:

— Խնդրեմ բացատրէ՛, ո՞ւր է կատարելութիւնը:

— Դուք ինձմէ լաւ կը ճանչէք զինքը, Տիկին, ի՞նչ պէտք կայ բացատրութեանց:

— Ո՛չ, կ'ուզեմ քու կարծիքդ իմանալ:

— Շա՛տ բարի: Նախ որ աչքը կուշտ երիտասարդ է, դրամի սէր չունի: Զիս կը բամբասեն իբրեւ ազահ, ես ընդհակառակն՝ ազահները կ'ատեմ, իշխանուհի, հաւատացէք, որ չեմ ուզէր ազահ,

ժլատ մարդու երես տեսնել. այն մարդկանց, որ ոսկին, արծաթը կը սիրեն ազահաբար: Եւ ըսածիս ապացոյց՝ ես Գրիգոր իշխանը կը սիրեմ, որովհետեւ ամենեւին ազահ չէ: Կը յիշէք, իշխանուհի, որ դուք իրեն առատ ռոճիկ նշանակեցիք, երբ Հերա կողմ յուղարկեցիք գնդաւ, եւ դիտողութիւն ըրի թէ այդ ռոճիկը չափազանց է. եւ դուք ինձ բարկացաք ու նախատեցիք. ես, որ ձեր համբերող եւ հնազանդ ծառան եմ, ձեր հրամայած ռոճիկն արծաթը առաջը դրի, եւ զարմանքով տեսայ, որ բուն՝ ճշմարիտ ազնուական՝ ձեռքն անգամ չերկնցուց, աչքը վրան չի դարձուց, այլ ըսաւ քաղցրութեամբ, թէ «Երբ պէտք ունենամ ստակի, Յուսիկ հայրիկ, ես քեզնէ կ'ուզեմ»: Այսօր այնօր, գրեթէ երկու տարի կը լցուի, փողի մը պէտք չունեցաւ: Եւ ի՞նչ զարմանք... Ինդրեմ, իշխանուհի, մի՛ բարկանաք, ամէն բան հաշուով է... փառք աստուծոյ, ձեր սեղանը փառաւոր կուտէ, կը վայելէ, ծառան, ձին նոյնպէս, յարդն ու գարին առատ...

— Ապրի՛ս, Յուսիկ,— ըսաւ իշխանուհին լի բարկութեամբ եւ ոտքի վրայ ցատկելով,— այս ի՞նչ բան է ըրածդ. գերութենէ դարձած տղու մը երկու տարի փող մը չէ՛ս տուեր... Եւ պարծանօք առանց ամաչելու կը պատմե՛ս... Տէ՛ր իմ աստուած... Ե՛ս ինչպէս այդ ազնուական երիտասարդին երեսը պիտի նայիմ...

Իսկ Յուսիկ անխռով՝ ամենայն հանդարտութեամբ կ'ըսէր.

— Խնդրեմ, իշխանուհի, այսպէս մի՛ շփոթիք, ես ամէն օր կը նայիմ, ամօթի բան չի կայ, ինք շատ գոհ է, շատ էլ բարեկամ ենք իրարու, եւ շատ սիրով...

— Լռե՛, յիմար, ինք քեզնէ շատ գո՛հ է, կը սխալիս, ինչպէ՛ս կարելի է քեզնէ գոհ լինիլ, երբ երկու տարի առաջ իւր զօրաց ալիւրի եւ գարիի ստակը չես վճարած, եւ վաճառականք, որ ինձ ինդրագիր տուին, նոյնպէս Գրիգորի գանգոտեր են, այս ամօթ չէ՞, որ մարդիկը զօրավարին կնիքը իւր երեսին նետեն:

— Այո՛, իշխանուհի, շատ ամօթ բան է, այդ անպիտանները ես լաւ կը ճանչեմ, յանցանքը զօրավարին չէ, այլ այդ գողերուն, այդ աւազակներուն, որ զինք խաբէր են, մէկին տեղ երկուք կ'ուզեն արնով... դուք հոգ մընէք, իշխանուհի, նոքա կը կակղնան, եւ գործը կարգի կը դնեն, եւ այնպէս որ ոչ ոք ձեր ազնութիւնը չի նեղէ: Դուք, իշխանուհի, լաւ-լաւ կատարել գիտէք, ամէն սիրտ շահիլ գիտէք, մեծին, պզտիկին, իշխանին եւ գիւղացիին տեղին խստութիւն, տեղին քաղցրութիւն գործածել գիտէք. բայց եթէ կը ներէք ըսել, ձեր հաշիւը, ձեր ծախքը չափաւորել չէք գիտէր:

— Այս ի՞նչ կնշանակէ,— կ'ըսէր Սէթա բարկութեան ծիծաղով,— կ'երեւայ թեւ դու հիմա զիս կ'ամբաստանես. ես իմ հաշիւ չեմ գիտէր, հաշիւ տուած ունի՞ս, որ գիտնամ:

— Կը ներէք, իշխանուհի,— ըսաւ Յուսիկ իւր քաղցր ժպիտով,— այդ նաեւ հաշիւ է:

— Ինչպէ՞ս,— ըսաւ Սէթա այս անդամ կատարեալ բարկութեամբ:

— Խնդրեմ, կիրք մէլնէք, իշխանուհի: Ձեր հաշիւը ինչչափ չդիանաք եւ չիմանաք, այնչափ օգտակար է ձեզ համար:

— Այս խօսքերով կ'իմացնես թէ գանձիդ վիճակը շատ լաւ է, միայն կը վախես թէ ես, որ իմանամ, աւելորդ ծախքեր կ'ընեն, ուստի ինձմէ նաեւ պէտք կը տեսնես ծածկելու:

— Դուք շատ խելօք տիկին էք: Մաքա թագուհիի պէս, որ Սողոմոնի հարստութիւնը լսելով...

— Լաւ՛, լաւ, իմացայ, բաւական է: Աւելորդ եւ երկայն խօսքերու ժամանակ չունիմ, ես պէտք է որ Սաբա թագուհւոյ պէս դորձ տեսնեմ, անցիր դու արկղիդ գլուխը նստէ:

— Ես ձեր ամենախոնարհ ծառան չեմ համարձակիր...

— Ես երբ կը հրամայեմ չե՞ս հնազանդիր,— ըսաւ Սէթա այնպիսի բարկացայտ աչքերով, որ այլեւս դիմադրութիւն չէր վերցնէր եւ Յուսիկ իւր ժպիտը, իւր քնծիծաղը, իւր քաղցր ճարտարախօսութիւնը ի բաց թողլով՝ անցաւ նստաւ իւր տեղը, իւր ոչխարի հինաւորց մորթին վրայ, բարակ շրթունքը բերնին մէջ ամփոփելով ի նշան մեծ համբերութեան՝ նման կատարեալ այն փոքրիկ տղունք որ սրտահառաչ ակամայ դպրոց կ'երթայ եւ գիտէ թէ թայթն ու չոր հացն իրեն կը սպասեն:

Հերա վաճառականք եւ ուրիշ ամիսներով, տարիով ապաստող պարտատերք վայրկենին վճարուեցան առանց քննութեան: Խեղճ Յուսիկ, որ իւրաքանչիւր պահանջի դիտողութիւն ընելու հազիւ թէ բերանը կը բանար, «բայց Տիկին...» ըսելու նաեւ ժամանակ չի տալով՝ իշխանուհին՝ «Դիտողութեանց ժամանակ չի կայ, վճարէ»,— կ'ըսէր խիստ եւ կամաց ձայնիւ: Երբ պահանջ եւ պահանջող չի մնաց, էլաւ Սէթա անյայտ ակնարկ մը հազիւ ձգելով Յուսիկի վրայ, որուն անմխիթար կերպարանքը, նուաղեալ աչքերը, տժգոյն երեսը կը յայտնէին սրտին վիճակը:

Խեղճ գանձապետը տխուր նայեցաւ մէկ մը իւր դատարկացեալ արկղին վրայ, մէկ մը այդ դռան վրայ, ուստից գնացեր անհետացեր էր Տիկինը, եւ ըսաւ հառաչանոք.

— Ապրի՛ս, շա՛տ ապրիս, Ռշտունեաց Տիկին, ի՛նչ մեծ քաջութիւն էր, որ գործեցիր: Փուճ տեղ չեն ըսէր պապերը՝ «Մազն երկան՝ խելքն կարճ»: Եւ սա ամենէ՛ն խելօքն է: Ափսո՛ս, ափսո՛ս:

ԳԼՈՒԽ ԻԶ

Գրիգոր տխուր էր՝ վասնզի մարդուս կեանքին մէջ վիճակի անորոշութիւնը հիւանդութիւն մէ, մանաւանդ երիտասարդութեան մէջ երկայն են օրերը որ կանցնին, եւ ժամանակը երբ կը թռչի՝ կը սլանայ մէկ կողմէն, միւսէն կ'ըսէ երիտասարդին՝ «Մպասէ, յուսա, քեզի էլ կու գայ յաջողութեան կարգը, քու բոյնդ էլ կը շինուի, կու գայ ատեն, որ երազներդ իրագործուին»: Եւ նա կը յուսա, կերպէ, երջանկութեան դրախտներու մէջ կանցնէ ծանր երեւակայութեամբ, առասպելներ կը շինէ, եւ նոյն միջոցին նիւթական աշխարհքիս մէջ կը կռուի տաժանելի պատերազմը, կը ջանայ կործանել արգելքները, որ պարագայներն իրեն դէմ կը ստեղծեն, յաջողութիւնք եւ ձախողութիւնք իրարու կը յաջորդեն, կեանքն էլ կ'անցնի, մինչդեռ երիտասարդութեան գարունն էլ կ'անցնի շատերուն համար, գարուն, որոյ շատ անգամ ծաղկունք ջարդուած կարկտի հարուածէ, խամրեալ կիզիչ արեւէ, ամայի պարտէզի տխուր կերպարանին կը ցցնեն: Բարեբախտութիւն մէ նաեւ երբ երիտասարդութիւնը ունի անուն մը, ունի ժառանգութիւն մը, ունի պաշտպան մը, ունի հայրենիք մը, ունի կին մը, որ զինք կը սիրէ. կենաց դժուարութիւնք այն ատեն կը դիւրանան անոնց համար, որ իրեն բախտեն աւելի մեծ սիրտ մը կը զգան հինքեանս, որ ուժով կը բաբախէ Գրիգոր մեծ անուն մունէր, բայց իւր հօրեղբայրը զայն իրեն կը զլանար, ժառանգութիւն ունէր, որ իւր ազգականք գրեթէ յափշտակէր էին, պաշտպան մունէր, որ գրեթէ երկու տարի կը կորուսէր էր եւ կենաց նշան չէր տար,— կին մը՝ դեռահաս աղջիկ մը կար, որ զինք կը սիրէր, ահա հոն էր իւր միմիայն մխիթարութիւնը: Բայց այդ սերը նաեւ ունէր արգելքներ, եւ ինք քաջ թշնամեաց առջեւ չէր զգար քաջութիւն համարձակիլ

գրուցելու կնոջ մը՝ նորա մօրը, թէ «այդ աղջիկը կը սիրեմ, գա իմս է»: Եթէ իւր պաշտպանը՝ Սուրեն հոն լինէր... Բայց ուր էր Սուրեն որ կովի մը, գինուց շկահմանց մէջ կորսուէր ձայն չէր տար: Եթէ ողջ է՝ ինչպէ՞ս մոռացեր էր իւր սիրելի քեռորդին: Մեռա՞ծ կամ դարձեալ գերութեան էր մատնուած: Բայց այդ մարդը յաջողակ, յանդուգն, որ դժուարութիւն մը չէր արգիլէր, այդ մարդը չէր կրնար մեռնիլ.— Գրիգորի համոզմունքն այդ էր:

Մենք Սուրեն թողինք իւր փրփրերախ երիվարին վրայ, որ կը դիմէր սրընթաց Ամանոսի լեռը, արաբացի հալածիչ գունդը ետեւին, որու ձեռքէն ազատիլն յայտնի էր իրեն՝ երբ անգամ մը փոքրիկ միջոց թողուց իւր եւ նոցա մէջ: Բայց միշտ այն կը խորհէր թէ այս իրարու յաջորդող խումբերը միթէ՞ մեծ գունդի մը յառաջապահք չէին: Այս մտածութեամբ ահա ձիուն գօրութիւնը կը խնայէր եւ կը փափագէր, թէ ինչ որ պիտի գայ թող գայ, որպէսզի այս տարտամ վիճակէն ազատի քանի որ ինք եւ ձին դեռ կտրէին տոկալ, վասնզի իւր եւ կենդանուոյն պաշար չէր մնացեր: Արեւն սկսաւ խոնարհիչ, եւ երկիրն սկսաւ փոխուիլ. բարձունք երեւեան եւ ինք վերջապէս աւազը թողուց եւ ամուր հողի վրայ սկսաւ երթալ, վտանգը թեթեւցած էր, վասնզի կ'երեւակայէր, որ արաբն այդ երկրները կոխելով՝ քրիստոնէան բարձունքը քաշուած էր. տեղ-տեղ հիւղեր կը նշմարուէին, եւ տեսաւ երկու-երեք հետեւակ մարդիկ, որ դէպի կիրճ մը կ'ուղղուէին, շտապեց ձին եւ հարցուց, թէ մօտ բնակութիւն կա՞ր. նոցա կասկածոտ նա յուածքը, զգեստներուն աւելի մաքրութիւնը, զէնքերուն ձեւը յայտնի ըրին թէ քրիստոնէայ ասորիք էին, ուստի առանց սպասելու նոցա պատասխանին՝ «Ես քրիստոնէայ եմ, - ըսաւ, - ինձմէ մի՛ կասկածիք, եթէ դուք քրիստոնէայ էք գրուցեցէք համարձակ»: Մարդկանց վստահ ձեւը եւ ուրախութիւնը նաեւ յայտնեց թէ քրիստոնէայ էին, ինչպէս խոստովանեցան, բայց իմացուցին թէ այն օրերը շատ վտանգաւոր յարձակումներ կրած էին յարաբաց, եւ թէ մօտերը նոցա աւագակաց խումբեր կը թափառէին եւ թէ իրենք Մարտայիթ ըսուած քրիստոնէայք էին, որ Լիբանանու եւ Ամանոսի մէջ ամբացուած կը կռուէին՝ այն կողմերը միակ պատուար մնացած քրիստոնէութեան:

Սուրեն ապահովեալ էր յարաբաց, գնաց հիւր եղաւ այն գիշեր նոցա լեռնային խրճիթներուն մէջ, իմացաւ թէ Կիլիջայի մօտերն էր, ուստի հանգստացաւ, եւ առաւօտուն ելաւ ուղղուեցաւ յԱնտիոք Կոմակենի, վասնզի կ'ուզէր ժամ առաջ հասնիլ քաղաք մը, որ կարենար իւր ազգայիններէն մարդ գտնել, եւ կը յուսար, բայց երբ հասաւ քաղաքը գրեթէ անապատ էր, ինչպէս բոլոր ասորուց քաղաքները, ամէն ոք ինչքն առած՝ լեռներն ելեր եւ հիւղաբնակ էր եղեր. հազիւ քանի մը կրպակ կային, ուր կենաց ամենակարեւոր պիտոյք կը գտնուէին, ուստի ինք նաեւ Գերմանիկ երթալու համար Ամանոսի ճամփան բռնեց, բայց հազիւ ժամուան չափ հեռացեր էր լքեալ քաղքէն՝ բլուրի մը վրայ բարձրանալով տեսաւ որ երկու խումբ կատաղաբար կը կռուէին իրարու հետ: Իւր վարժ եւ սուր աչքը որոշեց մահմեդական արաբացին եւ քրիստոնէայ ասորին, առանց վայրկեան մը տատամսելու յարձակեցաւ՝ մտաւ այդ խառնուրդին մէջ, իւր զգեստներուն պերճութիւնը կամ արաբ նժոյգը չէր, որ քրիստոնէայ եւ մահմեդական զարմանօք եւ սոսկմամբ շփոթեց, այլ իւր ահագին սուրին փայլը եւ արագութիւնը, որ արեան գետեր կը հոսեցնէր, երկու կողմը գերմարդկային էակ մը զինք կարծեցին, եւ երբ մահմեդական գնդին պարագլուխը նաեւ կայծակնահար ինկաւ զլորեցաւ իւր Սուրեն երկու ճգքուած, հեթանոսաց գօրքը ցանուցիւր սկսան փախչիլ, յաղթութիւնը քրիստոնէից եղաւ, ամէնքն օւսանաններով Սուրենի ձիուն առջեւ կը տարածէին իրենց վերարկուները եւ գովասանութիւն երգերով կ'առաջնորդէին Ամանոսի լեռը, որ այն ժամանակներէն եւ մահմեդականաց «Կեաւուռ տաղը» անունն ստացաւ:

Այդ օտարականը, որ քրիստոնեայ էր եւ արաբական ոչինչ չունէր բացի իւր զենքերէն, ձիւն եւ զգեստներէն, որ այն նեղ վայրկենին իրենց օգնութեան հասեր էր, եւ որ այնչափ քաջութիւն եւ յաջողութիւն ունէր, իբրեւ սուրբ կամ իբրեւ երկնային էակ սկսան նկատել այդ լեռնականք եւ կը խնդրէին, որ չթողու, չերթայ. այլ մնա իրենց քով, լինի իշխան եւ զօրավար: Հազիւ հասան իրենց լեռնային գիւղը, որ Ամանոսի ըարձանց վրայ գետեղեալ խրճիթներու հաւաքմունք մէր, ի՛նչ պատիւ եւ ի՛նչ յարգանք որ կրնային մատուցին, կանայք, աղջկունք, երբ կ'անցնէր, մատնանիշ զինք կը ցցնէին, եւ ծերերու պատկառելի խումբը բոկոտն կը մօտենար իրեն, մինչեւ եկաւ հրապարակի նման տեղ մը, ուր ընդարձակ խրճիթ խաչի նշան վրան՝ կը յայտնէր թէ եկեցեղին եկած էին: Հոն ասորի եպիսկոպոս մը իւր եկեղեցական դասուն հետ խաչիւ եւ Աւետարանաւ զինքն ընդունեց: Սուրէն այս կրօնական նշաններուն առջեւ իջաւ ձիւն եւ արժանի երկրպագութիւնը մատուց, բայց խնդրեց, որ իրեն հանգստեան տեղ ցցնեն, վասնզի յոգնած էր կ'ըսէր, եւ մանաւանդ թէ յոգնած էր այն ցոյցերէն եւ չէր ուզէր յայտնել:

Գիւղին ամենալաւ խրճիթը տուին Մարտայիթք Սուրէնի, որ շէնքովն թէպէտ հասարակ եւ անտաշ փայտերու կերտուած մէր երկու դռներով առանց պատուհանի, որոց մէկը պայծառ վտակի մը վրայ կը բացուէր դարաւոր կաղնիներով հովանաւորեալ: Ճաշի՝ խորովածն ու գինին առատապէս առաջը դրին, եւ ոչ ոք սեղանին չմասնակցեցաւ ի նշան յարգութեան եւ ոչ եպիսկոպոսն, որ խոնարհաբար նստած էր հեռու ժողովրդեան ծերակոյտին հետ: Սուրէն հարցուց իրենց վիճակը եւ իմացաւ թէ այդ ժողովրդեան մեծ մասը մահմեդական կատաղութենէն փախած այդ լեռներուն ապաստանեալ՝ գրեթէ շարունակ պատերազմի մէջ էին եւ թէ օրաւոր յուսահատութիւնը կը տիրէր իրենց վրայ, վասնզի Հերակլ կայսեր Ասորիք թողլով երթաւէն եւ մեծին Անտիոքայ իջնելէն վերջ՝ նոր կորուստ մը նաեւ ունէին, իրենց իշխանը, որ շատ քաջ մարդ էր՝ մեռեր էր դարանամուտ մահմեդականաց ձեռք, եւ նոր դժբախտութիւն մը նաեւ հիմա կը հասնէր իրենց այն, որ Կոստանդին կայսրը՝ Հերակլի թոռը, իրենց դրկէր էր հաւատոյ դաւանութիւն մը, եւ որ իրենց բոլոր աստուածաբանք հերետիկոսական գտնուելով չէին ընդունէր, բայց դարձեալ թուղթ մը հասեր էր կայսրէն նոյն այն միջոցին, որ կը հրամայէր խստիւ ընդունիլ իւր առաջարկած դաւանութիւնը՝ սպառնալով ջնջել զիրենք աշխարհիքիս վրայէն: Այսպէս մէկ կը սղմեն մահմեդականութիւնն կը սպառնար իրենց, միւսէն՝ բիւզանդական նոր հետետիկոսութիւնը: Ինչ ընելնին շփոթած էին:

Սուրէն պարտաւոր էալ համառօտ պատմեց իր արկածքը, եւ երբ ամենքը քաջուեցան, գնացին, իջաւ վտակը, լուացուեցաւ, եւ քանի մը ժամ քունէ վերջ՝ կաղողուրեալ արթնցաւ: Երբ կը պատրաստուէր ելնել շրջան մընելու գիւղին մէջ, ահա եպիսկոպոսը եւ ծերերու խումբը եկան դարձեալ, եւ այս անգամ կողովներով արմաւ, փութակ, չամիչ եւ ուրիշ այսպիսի չոր պտուղներու ընծաներով իրեն ներկայացան, խնդրելով, որ զիրենք չթողու, այլ մնա իրենց քով եւ հանգուցեալ իշխանին տեղ տիրէ այդ լեռներուն, խոստանալով հաւատարմութեամբ ծառայել իրեն:

Այսպիսի առաջարկութիւն մը Սուրէնի ծիծաղ եւ բարկութիւն բերաւ միանգամայն, բայց ինքզինք սանձել խոհեմութիւն համակելով պատասխանեց թէ՝ «Այդպիսի խնդիր մը մերժել իւր կողմանէ այնչափ տմարդութիւն էր՝ ինչչափ այդ խնդիրն ընդունէրուն սրտի ազնութեան յայտնութիւն էր, որ իր փոքրիկ մէկ օգնութիւնը այդպիսի մեծ պատուով կ'ուզէին վարձատրել: Բայց խորհրդաձեւով թէ ինք ընտանեաց տէր էր, եւ իւրայինք տարիներով կը սպասէին աչքերնին ճամվուան, ո՞ր հայրը իրենցմէ կրնար ներել իւր անտարբերութեան, եթէ մոռնար ընտանիքը»:

Այս խօսքերը թէև քաղցր կերպով զրուցուած՝ դարձեալ մերժումն էին, եւ ծերերը տխրեցան. իսկ եպիսկոպոսը, որ հայր չէր, սկսաւ սուրբ գրոց յարմար կամ անյարմար վկայութեամբք քարոզ մը տալ իրեն, ուր Յուդա Մակարէ՝ Փրկիչ զինք կ'ուզէր ընել, եւ իւր վերջին փաստը անջրելն եւ անհակառակելին մէջ բերաւ՝ երբ ըսաւ,

— Հիմա դու, ո՛վ քաջդ եւ ազնուական, երբ կամա-ակամայ այս մեր լեռները կենաս, մեր իշխանուհին տեսնես որ քաջ է այր մարդու պէս, որ շուշան իւր սպիտակ մորթով եւ վարդ իւր շրթանց կարմրութեամբ, որու մեծ եւ գեղեցիկ աչքերը եղնիկի են, որու վիզը ջայլեման եւ հասակն արմաւենեաց, դու կը մոռնաս քու մեռած կամ թողած կամ զբեզ մոռացած կինդ ու զաւկներդ: Աստուած ձեզի նոր-նոր ընծիւղներ կու տայ, որ իւր տան վայելչութիւնը շքեղանայ, այս բարձունք կը զարդարուէին փառաւոր, քան զսիւնի լեռը, կը ծաղկին, քան զձիթենեաց պարտեզը:

Մարտայիթ եպիսկոպոսին ճառը, որ Սուրենի ճաշակին համար ախորժելի եւ անախորժ կողմերն ունէր եւ մանաւանդ հետաքրքրական էր, իր սովորական լուրջ երեսին ժպիտ մը չի կրցաւ արգիլել, եւ լեռնցի ծերակոյտը այդ ժպտին ծիծաղներով, ուրախութեան ձայներով եւ շշունջներով պատասխանեց: Սուրեն տեսնելով թէ այդ մարդիկը այնչափով գոհ եղան, էլ պատասխան չի տուաւ այդ ճառին: Երեկոն սկսած էր՝ ընթրիքն ծառայեցին իւր դռան առաջ դորսը, ուր մեծ կրակ մը կը լուսաւորէր եւ միանգամայն կը տաքցնէր, եւ լեռնային երաժշտութիւն մը եւ կաքաւ գիշերուան մէկ մասը գրաւեց: Ինք քաշուեցաւ կէս-գիշերուան մօտ իւր խրճիթը, մտածելով Սեւ լեռան իշխանութեան եւ այրի իշխանուհոյն վրայ, որ այնչափ գեղեցկութիւն հինքն կը պարունակէր, մինչեւ որ քունը աչքերուն իջաւ: Երկու-երեք ժամ քունէ վերջ արթնցաւ, դռան քով կամաց ձայնով խօսելու շշուկ կար, ուշ դնել սկսաւ, եւ լաւ լսելու համար մօտեցաւ դռան, նայեցաւ՝ ծակէ մը տեսաւ դուրսի կրակին մօտ երկու զինեալ երիտասարդ պառկած քուն կը լինէին, երկուք էլ ծնկուրնին ծալած նստած կը խօսէին, մին կ'ըսէր. — Ո՞ւր պիտի երթայ, ձին որ Միքայէլ հրեշտակապետի ձիուն կը նմանի, միայն թելեր կը պակսին, եպիսկոպոսին տունը կապուած է, իշխանուհին կու գայ վաղն առաւօտ, կը տեսնէ, կրհանի այդ մարդուն անտարակոյս մէկ մաղ ձերմակ չունի ոչ գլխուն եւ ոչ ծնօտին վրայ, թէպէտ քիչ մը խորշովեալ է ճակատը եւ դաժան նայուածքը: Բայց մեր վախճանեալ Ամիրն աւելի գեղեցիկ չէր, եւ ասկից աւելի քաջ չէր: Այս մարդուն գեղեցկութիւնը բազկին վրայ է:

— Լաւ՛, բայց կին ըսածդ իւր քմահաճոյքն ունի, մանաւանդ մեր իշխանուհին, որոմն ներքին կեանքը զարմանալի կը պատմեն, ո՛ւր մնաց որ այդ մարդն էլ իւր երկիրը կին, զաւակ ունի եղեր:

— Բայց երբ իրեն կին, իշխանութիւն կու տան հոս, երբ իրեն ծառայելու համար այլչափ ժողովուրդ պատրաստ կը մնան, եւ ինք գոհ չլինիր, այն ատեն, երբ աղաչանք, պաղատանք բաւական չլինին զինք համոզելու բոնութիւն ի գործ կը դնեն: «Քանի մը օր բանտ կը մնա՝ կը համոզուի»: Այսպէս կ'ըսէին ծերերը, եւ լսեցի:

— Աստուած ինչք ու միտք տայ այդ մարդկանց, զիս ուզէր իշխանուհին՝ ես ամենեւին չէի նազեր, սիրով յանձն կ'առնուի իր հետ ամուսնանալ,— ըսաւ մէկը ծիծաղելով:

— Նա էլ քեզպէս ոչինչ երիտասարդն ի՞նչ պիտի ընէ. սա սովորական մարդ չէ, վտանգի, պատերազմի ժամանակ մեզ կարող է կառավարել: Մանաւանդ որ կայսրը մեր վրայ կը բռնանայ, մեզ հաւատքէ կ'ուզէ հանել:— Բայց ժամանակ է, որ մեր ընկերներն արթնցնենք, բաւական քնացան:

Սուրեն այդ խօսակցությունը լսելով, կամաց մը դարձաւ իւր ընձենիններուն վրայ ընկողմանեցաւ, սկսաւ մտածել այս նոր վիճակին, որ իրեն շատ ախորժելի չէր: Չորս տարի գերութեան շղթայներէ ազատելէն վերջ՝ դարձեալ նոր տեսակ շղթայներու վտանգի ենթարկուել ծանր ինդիր էր՝ մանաւանդ, երբ հայրենեաց դռան էր հասել:

ԳԼՈՒԽ ԻԷ

Առաւօտն հա սէր էր, եւ Սուրեն չէր կրցեր աչքերը գոցել, ուստի ելաւ շրջան մըրաւ գիւղին մէջ, որ ոչ գիւղ էր եւ ոչ քաղաք, բոլոր լեռը շարունակութիւն մէր խրճիթներու, հիւղերու եւ բաւական լաւ տուներոս անտառ եւ պարտէզ իրարու էին խառնուած, տեղ-տեղ պատուարներ եւ պատնէշներ ամրացուցեր էին բնիկ անառիկ դիրքեր, կանայք եւ աղջկունք, երիտասարդք եւ տղայք մրջիւններու պէս կը վխտային, այր մարդիկ գրեթէ բոլորն էլ անբաժան ունէին իրենց զէնքերը: Յայտնի կը տեսնուէր, թէ ասորոց զանազան քաղաքաց եւ գաւառաց թնակիչք լեցուէր նոր ժողովուրդ մը կազմեր էին. հոչակաւոր եւ մեծ Անտիոքի բնակիչքը իրենց քաղաքականացեալ նրբութեան հետ բերէր էին իրենց բարուց զեղծմունքը, ինչպէս երուսաղէմացին իւր կրօնասէր նախապաշարմունքը: Ասորի լեզուին հետ գրեթէ հաւայ սար կը քալէր աղաւաղեալ յունարէն մը: Խեղճուկ եկեղեցեաց մէջ ոսկեղէն եւ արծաթեղէն ճոխ հանդերձանք եւ կարասիք կը փայլէին: Մահմեդական երկրագործը ահագին տեղափոխութիւն բերած էր նիւթական եւ բարոյական Ամանոսի եւ Լիբանանու լեռանց վրայ, եւ երկայն դիտողութեանց պէտք չի կար Սուրենի սուր աչաց համար:

Կը տեսնէր նաեւ թէ ինչպէս ձիուն շուրջը իբրեւ թիկնապահք տասներկու լաւ զինեալ մարդիկ կը պտըտէին, գիշերուան խօսակցութենէն եպիսկոպոսին կամա-ակամայ բառերն այդ փոքրիկ խումբին կրկնակի պաշտօնը իրեն յայտնի կ'ընէին: Ուստի ինք իւր միամիտ կերպը առանց թողելու կը շարունակէր ընթացքը, երբ սրընթաց հասան քանի մը պատանիք իմացնելու, թէ իշխանուհին հասած կը սպասէր:

Քահինայ էր այս կնոջ անունը, լեռնական խոշոր գեղեցկութեան մէջ բիւզանդական նրբամտութիւն ի նմա նշմարեց Սուրեն, առջի նայուածքով: Մեծ յարգանօք ընդունելութիւն ըրաւ Տիկիին իրեն, նոյն տախտին վրայ քովն առաւ նստեցուց, շնորհակալութիւնք ըրաւ իւր դիւցազնական օգնութեան համար, երկնառաք հրեշտակ զինք անուանեց: Սուրեն՝ արաբական լեզուին մէջ իւր տկար գիտութիւնը յայտնելով՝ համառօտեց պատասխանը, եւ ինչպէս կինը զինք կը դիտէր՝ ինք նաեւ կը դիտէր իւր շարժմունքը, որ ազատ էր քան թէ ինչ որ կնոջ մը կը վայլէր:— Իւր զգեստները, ուր ծիրանին եւ բեհեզը եւ հնդքիկ շալը կը փողփողէին հարուստ ապարանջաններու եւ մանեակներու հետ, մէջքը ոսկի գօտին, ուր ականակուտ դաշոյն մը աչք կը շլացնէր, իւր բարձր հասակը, մեծ եւ փայլուն աչքերը, թանձրկեկ շրթունքը՝ նշան սիրահորդ բնութեան, իւր գրեթէ առնացի ձայնը, վերջապէս ամէն բան Սուրենի ճաշակին յարմար չէին, մանաւանդ որ ինք անհամեմատ գեղեցկութեամբ կին մը կ'որսնցնէլէն ի վեր ամէն կնոջ երեսին անտարբեր էր, եւ միեւնոյն եպիսկոպոսին յափշտակութիւնը չունեցաւ եւ իրեն այնպէս թուեցաւ, որ Քահինայ նաեւ իրեն համար նոյն զգացմունք ունեցաւ առաջին նայուածքին:

Թեթեւ ճաշ մընէլէն վերջ, որու մասնակցեցաւ եպիսկոպոսը միայն, Քահինայ հրաւիրեց Կամսարական իշխանը իւր պալատը, որ մէկ-երկու ժամաւ հեռի էր, գեղեցիկ ոսկեկազմ ջորիի վրայ հեծած ինք տառաջէն կը ձիավարէր, երեսունի չափ երիտասարդ թիկնապահք զինք կը

շրջապատէին: Հազիւ քառորդ մը ճամփայ ըրին՝ երեւցաւ պալատը իբր թէ օդին մէջ կախուած, ժայռի մը գլուխ կանգնած, ամէն կողմէ տեսանելի բերդ, որ շատ մօտ կը կարծուէր, բայց հոն հասնելու համար այնչափ կ'իրճերէ, այնչափ նեղ եւ պտոյտ ճամփաներէ, այնքա՛ն ելեւէջ պէտք էր ընել, որ իրօք բարձրանալը երկու եւ անելի ժամ տեւեց: Բաւական ընդարձակ եւ վայելուչ էր ամրոցը, ահաւոր տեսարան մը ժայռերու, գահավէժներու եւ անտառներու կը բացուէր նայողին, եւ հեռուն կ'երեւար արծաթի պէս ծով եւ Կիլիկիոյ ընդարձակ դաշտը:

Քահինայ արքայավայել մեծարեց իւր հիւրը. ինչ-որ պակասութուն ունէր՝ ամէնքը հոգաց. ծառաներ եկան զինք բաղանիս հրաւիրեցին, եւ անտի ելնելէն վերջ բազմախորտիկ ընթրեաց տարին զինքը, ուր հռոմէական ձեռով բաստեռանց վրայ տարածեալ իշխանուհին իրեն կը սպասէր, եւ զինք եւ իւր դիմացը նոյնպիսի բազմոցի մը վրայ հրամցուց: Ուրիշ կոչնական չի կար, այլ, որ ամէն բանէ անելի զարմացուց հայ իշխանը՝ այն էր, որ կնոջ հետք անգամ չէր երեւեր, այլ ծաղկապսակ, նորահաս եւ զեղեցիկ պատանիք կը ծառայէին սեղանին. Արաբիս քաղցրահոտ խունկեր կը բուրէին, զանազան զինիք խաղողի եւարմաւի սեղանը կը զարդարէին, աներեւոյթ եւ մեղկ երածշտութիւն մը կը նուազէր. վերջապէս ինչ-որ շուայտութիւնը եւ պազշտութիւնը կրնային ստեղծել՝ ամէն բան Հոն կատարեալ կար: Սուրէն առանց զարմանք յայտնելու կը տեսնէր այդ ամէնը իբր անտարբեր աչօք, մինչեւ իսկ այդ կնոջ մատռուակը՝ պատանեաց ամէնէն գեղեցիկը, որ շարունակ Տիկնոջ գաւաթը կը լցնէր, եւ որ նա անդադար կը խմէր՝ յորդորելով Սուրէն իւր օրինակին հետեւիլ: Վերջապէս ակնարկի ըրաւ, եւ սպասաւորք հեռացան, այն ատեն ըսաւ Քահինայ Սուրէնի.

— Իշխան, զիս կը տեսնես այնպէս, ինչպէս եմ միշտ, կրնայի քեզ խաբել քանի մը օր, ծածկել իմ մոլութիւնքս, եւ երբ երէկ ինձ իմացուցին քու գալը, առաջ այնպէս շարժիլ որոշեցի, որ ծածկեմ քէնէ իմ այս շուայտ կեանքս, բայց վերջը մտածեցի, թէ ո՞րն անելի լաւ էր. կեղծաւորութիւն, որ մարդկանց մեծ մասին ախտն է՝ եթէ ազատ համարձակ երեւիլ ինչպէս որ եմ. եւ այս վերջինն ընտրեցի: Բնութիւնը զիս այսպէս է ստեղծէր, դաստիարակութիւնն էլ առնէր է, վասնզի փոքր հասակէս անսանձ, համարձակ աճէր եմ ըստ քմաց՝ մեր անտառներու կաղնիներուն պէս: Քու կերպարանքդ, քու նայուածքդ տեսնելով՝ մէկէն իմացայ, որ ես քեզ համար ստեղծուած չեմ, ինչպէս դու ինձ համար. վասնզի դու էլ կը նմանիս իմ հանգուցեալ երկանս՝ միայն այն մեն տարբերութեամբ, որ քու գլուխդ այնչափ ուղեղ կայ, ինչչափ նորա գլխուն մէջ ոչինչ չի կար. մարմնական ուժ մը միայն ունէր եւ յաջող զինաշարժութիւն. բարեբախտաբար հարուած մը երկուքս էլ ազատեց. զնայ՝ կեանքեն, զիս՝ գերութենէն: Հիմա՝ այս յիմար ժողովուրդը՝ եւ իւր անելի յիմար առաջնորդներն եկեղեցական եւ աշխարհական՝ ծեր եւ երիտասարդ ամօթ կը համարին կնոջ մը իշխանութեան հնազանդիլ, ինձ, որ սովորական կին չեմ, այր մարդու պէս ձի կը հեծնեմ, զէնք կը շարժեմ, երկիւղ ըսուած բանը չեմ գիտէր եւ կը զգամ թէ կրնամ նաեւ իրենց առաջնորդել պատերազմի մէջ: Քանի մը անգամ ուզեցի իրենց հասկցնել, բայց իրենք խոնարհաբար իմացուցին (այնպիսի խոնարհութեամբ, որ սպառնալիքէ տարբերութիւն չունէր) թէ պէտք էր ինձ երիկ մը ընտրէի, եւ երբ ես այս ընտրութեան վրայ հնարք կը մտածէի մեր եպիսկոպոսն ինձ իմացուց սուրհանդակաւ քու գալը, քու քաջութիւնդ, քու պատմութիւնդ եւ կերպարանքդ, վերջապէս մինչեւ կէս-գիշեր տասը պատգամաւոր եկաւ քու իւրաքանչիւր խօսքդ, իւրաքանչիւր շարժմունքդ ինձ իմացնելու. այս կը նշանակէր երկան մը ընտրութիւնը ինձ թողելէն վերջ, այդ յիմարները՝ կը ներես, այդ խելօքները՝ երկան ընտրութիւնն էլ իրենք կը կատարէին, իբրեւ թէ իրենք ամուսնանային: Ուստի այս դատարկ գլուխներուն հետ խօսիլ անելորդ համարեցի, եւ խօսելէն անելի իմ ներքին կեանքս ցոյց տալ քեզ պէս սրամիտ մարդու

կարելորդ դատեցի: Հիմա իբրեւ հին բարեկամի մը քեզ խորհուրդ հարցնեմ. ի՞նչ ընենք: Դու, անտարակոյս, կ'ուզես այս կ'եանքէն ազատիլ, եւ էլ նոյնպէս քեզմէ աւելի, եւ, որ այս լեռներուն մէջ ծնած եւ կենացս մեծ մասը անցուցած եմ, կը փափագիմ ժամ առաջ թողուլ ելնել աստից, բայց իմ պատրաստութիւնքս դեռ չեմ ամբողջացուցել. մինչեւ այն ատեն քեզ հետ ինչպէ՞ս անցնենք, ահա խողիրը: Միայն համարձակ եղիր ինձ հետ ինչպէս եւ եղայ քեզ հետ:

— Բայց, իշխանուհի,— ըսաւ Սուրեն ծիծաղելով,— ինչե՞ն յայտնի է թէ զիս փորձելու համար այս երկայն խօսակցութիւնը չըրիք, եւ այդ համարձակախօսութեան տակ ուրիշ գաղտնիք մը չի ծածկուիր: Ինչե՞ն գիտեմ թէ քու իմ վրաս վստահութիւնդ անկեղծ է:

— Ես շատ եւ չափես աւելի գինի խմեցի այս իրիկուն, որ դու վստահանաս յարմար առակէն, որ կ'ըսէ թէ դինի գաղտնապահ չէ:

— Լաւ՛, բայց ուրիշ փորձ մէլ կարելի է:

— Ի՞նչ, գրուցէ:

— Դու ըսիր թէ վարժ եւ զինավարժութեան մէջ:

— Փորձը դիւրին է, ե՛կ ինձ հետ, այս սենեակը մտնենք: Տղաք, լուսաւորեցէք մարգարանը:

Քանի մը վայրկեան ետքը մտան ընդարձակ սենեակ մը, ուր պատերէն կախուած էին շատ մը զենքեր. երկու գուլ եւ ծայրերը բութ սուրեր առաւ Քահինայ եւ տուաւ մէկը Սուրենի. թաշկինակով ջ ստինքը վեր բարձրացուց կապեց եւ աջ բազկէն բեհեզեայ շապկին թելը ամփոփեց եւ սկսինք, ըսաւ:

Սկսան հարուածները եւ սուր սուրի հետ վեզ գալ. Սուրեն առաջ կարծեց թէ տղու մը հետ գործ ունէր. եւ թոյլ կը կենար, բայց քանի կ'երթար կը համոզուէր թէ սովորական ախոյեան չէր դիմացինը, եւ այնպիսի միջոցներ եղաւ, որ սկսաւ կուսկածիլ թէ չպիտի կարենայ գլուխ գալ կնոջ մը հետ, որ երբեմն նենգութեամբ տեղի կու տար կը քաշուէր եւ բռուն յարձակմունք իրարու վրայ կը պնդէր՝ եւ միշտ լաւ գգուշանալով: Սակայն Սուրեն սովորական զինաշարժ չէր, իւր ջղերը եւ մկանունքը յոգնիլ չէին դիտէր: Երբ կէս ժամու չափ տեսց այս մենամարտը, եւ տեսաւ դիմացինը շնչասպառ ու քրտինքը, որ ջուրի պէս կը վազէր եւ տեղի չէր տար, հասկցաւ, որ արհեստին չէր պակասութիւնը:

— Ճանչցանք զիրար, իշխանուհի,— ըսաւ,— ապրիս, այս չափս բաւական է,— եւ սուրը նետեց:

— Զիս կը խնայե՞ս,— ըսաւ Քահինայ նոյնպէս սուրբ գետին նետելով:

— Ոչ,— պատասխանեց Սուրեն,— պէտք է խոստովանեմ թէ իմ ցեղիս մէջ ուր ժառանգական է զինավարժութիւնը, շատ քիչ կը գտնուի մէկը, որ զիս այսչափ յօդնեցնէ: Ապրիլս, լաւ պատերազմող եւ դու: Միայն թե...

— Շարունակե՛, ինչո՞ւ կեցար, մենք բարեկամ ենք ըսինք, տո՛ւր ձեռքդ, համարձակ եղիր ինձ հետ:

— Կ'ուզէի ըսել պէտք է միշտ վարժութիւն ընես յոգնելու համար:

— Ես ամէն օր վարժութիւն կ'ընեմ: Այս պա տան իքը եւ երիտասարդքը միայն զուարճութեանս համար չեմ պահէր, այլ իրենց մարգարանն է այս սենեակը. վա՛յ անոր, որ իր մարզից մէջ թոյլ

զտնուի, նայէ՛, տե՛ս սա խարազանները զէնքերու քով կախուած, առանց արեամբ ներկուելու տեղերնին չեն դառնար: Այս գիշեր ես համարձակութիւն առնլու համար գինւոյն չափն անցուցի, բարեկամ, իմ հեւալս ու քրտինքս նորա հետեւանքն է... Դառնանք սեղանատուն:

Զարմանքով կը նկատեր Սուրէն այս կինը, որ Մեսսալին չէր այլեւս իրեն համար, այլ Ջենոբիա մէր, ո՛ր գիտէ թէ նորա սերունդներէն չէր, վասնզի վերջը պատմութիւնը զինք պիտի յիշէր դիւցազնուհի անուամբ՝ երբ դա՛ այդ կինը մահմեղականութիւնը Ափրիկէի մէջ՝ Կարքեղոնի ամփանց վրայ վայրկեան մը պիտի սարսեցնէր եւ ընկրկէր:

— Հիմա,— կ'ըսէր Քահիինայ,— յայտնեմ քեզ իմ միտքս: — Այս յունաց կայսրերը այնպիսի վատ եղան, որ իրենց հնազանդիլ նախատինք է մարդու. ուստի ես որոշած եմ խուսի մը ընտիր զօրք կազմել, շատ չէ, հազար հոգւոյ, ելնել Ափրիկէի այն կողմերը, ուր լսած եմ թէ նոցա կարողութիւնը տկարացեալ է եւ ժողովուրդը դժգոհ, հոն խառն գոթացի, յոյն, հին փիւնիկեցի ազգութիւն մը կայ, իմ լեռնականոքս ես դիրութեամբ կը տիրեմ երկրի մը, ուր ժամանակով իմ ազդեալ կին մը գնացեր է մեծ, զօրաւոր տէրութիւն մը հաստատէր է, եւ այդ բանին համար սկսած եմ աշխատիլ. արդէն ունիմ հինգ-վեց հարիւր երիտասարդ, որ զիս կը սիրեն եւ կը պաշտեն, չորս-հինգ հարիւր մէլ կը հասցնեմ, բաւական է: Մ'նաք բարով կ'ըսեմ այս ամփանց եւ կ'երթամ: Բայց աս յիմար ժողովուրդն բոլոր խորհուրդներս կապականէ, եւ անունով իշխանուհի եմ, իրենց բուն իշխանքն այդ եպիսկոպոսները, այդ ծերերն են: Երեւակայէ՛, որ անցեալ օր կայսրը հրովարտակ մը դրկէր էր. չեմ հասկնար, հասկնալու էլ միտք չունիմ, հաւատոյ խնդիր մը վերջապէս զօր Թիփոյ կ'անուանեն եւ այս ընդունեցէք կ'ըսեն. ես կը հաւատամ թէ յիմար մէ դրկողը, բայց տասն անգամ աւելի յիմա՛ր չեն այս մեր կրօնականք, որ «Կը մեռէինք, այդ հերետիկոսութիւն է, չենք ընդունիր», պատասխանեցին: Ինձ հասկցնել ուզեցին այնպիսի վերացեալ բաներ, որ խելքս պղտորեցաւ: Իրենց ըսի թէ մենք հազիւ կրնանք մահմեղականաց դէմ այս լեռները պաշտպանել, յոյնք էլ ետեւնուս մեր վրայ եթէ ընկնին մեր վիճակն ի՛նչ կը դառնա: Դարձեալ՝ «Կը մեռնինք չենք կրնար ընդունիլ»,— ըսին: «Մեռէք, քարը զլուխնիդ»,— ըսի եւ էլ մտքէս, երեսնուն «շատ լաւ կ'ընէք» պատասխանեցի: Ուզածնին գրեցին, դրկեցին Պոլիս, միտքս դրի թէ մինչեւ կայսրը իւր սպառնալիքը կատարէ տարի մը կանցնէ, եւ իմ գունդս կը պատրաստեմ եւ կ'երթամ, իրենք էլ կ'ուզեն՝ մեռնին, կ'ուզեն՝ սատկին: Բայց հիմա դու մեջտեղ ելար, թէ որ կ'ուզես հոս մնալ ասոնց իշխան լինիլ, ես քեզ չեմ արգիլեր. բայց ինձ տարի մը ժամանակ պէտք է, եւ իմ ազատութիւնս չեմ ուզեր ծախել երկրորդ ամուսնութեամբ: Կարելի չէ՞ որ խաղաղութեամբ տասը-տասներկու ամիս իրարու խօսք հասկնանք, վերջը դու քու ճամփադ երթաս՝ եւ իմա:

— Ես նաեւ ուխտ ըրած եմ չամուսնանալու, ուրեմն զիս թո՛ղ, եւ կ'երթամ, եւ դու կազատիս:

— Ես քեզ կը թողում, բայց այդ անպիտան եպիսկոպոսը եւ իւր բոլոր խորհրդակիցքը երկիրը լրտեսներով լցուցեր են, այնպէս որ քայլ մը առնուլ անկարելի է առանց իւրեանց գիտութեամբ, կիրճերուն պահապանք իրենց մարդիկն են, միայն իմ հրամանաւ անցնիլ կարելի չէ. իսկ քեզի համար անշուշտ զգուշութիւնք կան եւ մասնաւոր հրամանք տրուած են: Ես նաեւ բանտեալ մեմ, բաւական չէ, որ ես ուր երթամ կ'իմանան, կ'ուզեն նաեւ, որ աղախիններով լեցնեմ այս իմ պալատս, բայց ես ծառայող կանանց հետ այնպէս վարուեցայ, որ մէկը չդիմացաւ՝ գնաց: Մէկ քանի հատ որ կան, նոքա էլ իմ անձեւ հեռու եւ անարգ պաշտօններու կը գործածեմ, վասնզի այս լեռանց կանայք ամէնն ալ գերի են եկեղեցականաց:

— Քեզ չեն կրնա՞ր թունաւորել:

— Եթէ ես քոյր մը, ժառանգ մը, մերձաւոր ազգական մը՝ ունենայի՝ դիւրին էր, բայց ոչ ոք չի կայ. իրենք զիս կ'ուզեն ամուսնացնել, որպէսզի զիս մէջտեղէն վերցնեն երբ ժառանգ մը ունենամ, ես այս էրկանս մահուանէն վերջը իմացայ:

— Բայց դու ի՞նչ ըրած ես իրենց այս ատելութեան արժանանալու համար:

— Իրենք կ'ուզեն, որ ես ուրիշ կանանց պէս իրենց ամէն ըրածին հաւնիմ, իրենց ամենախոնարհ աղախինն լինիմ, իրենց սուտ հրաշքներուն հաւտամ, իրենց համար մեծածախ եկեղեցիք, վանքեր, առաջնորդական պալատներ շինեմ, իմ հայրենական գանձս վատնեմ բոլորովին:

Վերջապէս ինձ ձանձրալի ըրին այս լեռները, սոցա մեծ եւ իշխող մասը օտար են. մենք առաջ խաղաղութեամբ կ'ապրէինք, հիւրասիրութեան պարտքն է, որ կը քաշենք, վասնզի

քահանայ եւ ժողովուրդ մահմեդականաց փախստականք են, որ մեր լեռներն ընդունած ենք:

— Ունի՞ս եկեղեցական հաւատարիմ բարեկամ մը:

— Իմ հօրս բարեկամ աւագերէց մը կայ այստեղ պատուական ծեր մը. նա միայն ես կը յարգեմ եւ նա զիս կը սիրէ, վաղն առավոտ ինք կու գայ, իրեն խորհուրդ պէտք է հարցնեմ:

— Եթէ այդպիսի բարեկամ ունիս, նա կրնայ մեր վրայ հանգուցելոց աւետարան մը կարդալ եւ ժողովրդեան կարծեցնել թէ պսակի արարողութիւնն է, որ կատարուեցաւ:

— Ես նաեւ այդ կ'արծիքեն եմ, այդ ծերը խելօք մարդ է, բան մը կը յարմարեցնէ մեզ համար: Ես շատ գոհ եղայ, իշխան, որ քեզ պէս անձ մը Աստուածինձ ուղարկեց առաջին ակնարկէս իմացայ, որ մարդու հետ գործ ոմնիմ, եւ ահա կը տեսնեմ թէ չի խաբուեցայ: Իրարու կ'օգնենք, կը պատրաստուենք, եւ երբ ժամանակը գա՝ կ'երթանք մեր նպատակին: Ես բոլոր իմ գաղտնիքս քեզ յայտնեցի իբրեւ հին բարեկամի. իմ կենացս անառակ եւ լուրջ կողմը ցոյց տուի. եթէ ունիս դու յայտնելու բան մը՝ վստահացիր եւ ապահով եղիր. եթէ պէտք ունիս դու ստակի, զէնքի, սպասաւորի, մի քաշ վիր. ի՞նչ որ կրնամ կը ջանամ ընել:

— Շատ շնորհակալ եմ, բանի մը պէտք չունիմ: Միայն քու մէկ օրինակիդ հետեւելու փափաղ կը զգամ, փոքրիկ գունդ մը կազմելու, բայց դժուարութիւնը հոն է, որ իմ ազգես մարդ չունիմ:

— Ի՞նչ ազգէ ես դու:

— Հայ եմ:

— Հայ՜... լսած եմ թէ հոս Գերմանիկ հայեր կան... Բայց քեզ խորհուրդ չեմ տալ օտարներ բերել այս լեռներուն մէջ, եւ կասկածելի երեւալ մեր մարդկանց. աւելի լաւ՝ իմ օրինակիս հետեւէ, այս տղաքը, որ կը տեսնես՝ կէսն արծաթագին ստրուկներ են, արաբաց որդիք, եւ մնացածն որբ տղայք, որ հայր, մայր, ազգական եւ բան մը չունենալով աշխարհքիս վրայ, կամայ՝ ակամայ, հոգով մարմինով ինձ անձնուէր էակներ են. գիտեն, որ ուրիշէ յոյս չի կայ, ես եմ, որ կը պատժեմ, ես, որ կը վարձատրեմ: Երբ փոքրիկ տկարութիւն մը, հիւանդութիւն մը կ'ունենամ, տեսնելու բան է իրենց հուսակտուր տխրութիւնը, եւ նոքա նաեւ որ օրերով երեսի վրայ պառկած՝ չեն կրնար շարժիլ խարազանի հարուածներու սաստկութենէն եւ վերքերէն, կը հարցնեն անձկութեամբ թէ՝ «Տիրուհին ինչպէ՞ս է»:

— Այդ խորհուրդը լաւ է,— պատասխանեց Սուրէն մտածելով:

— Եթէ մեր ամուսնութեան կատակերգութիւնը կատարենք, դու, իշխան, կրնաս քեզի համար առանձին ամրոց մը ունենալ Գերմանիկի մօտ, պատրաստել մարզել քու գունդդ ինչպէս կ'ուզես, եւ երբ ամէն բան կարգին գտնուի, ոչ իբր փախստական այլ իբր իշխան եւ իշխանուհի իւրաքանչիւր ոք մեր ճամփան բռնենք: Ես իմ նաւերս կ'երթամ, դու էլ քու հայրենիքդ: Ի՞նչ յարկ կայ արտորալու եւ վտանգի դնելու քու անձդ:

Կէսգիշերն անց էր, երբ Սուրէն բարի գիշեր մաղթեց Քահինայի եւ գնաց իւր սենեակը, խորհրդածելով այդ նորանշան կնոջ եւ իւր հետեւելու ճամփուն վրայ:

Գրեթէ տարի մը անցուց Սուրէն այդ լեռները,— մահմէդականաց դէմ կատաղի պատերազմներ վարելով մեծին եւ փոքրին սիրելի եղաւ, երեք հարիւրի չափ ձիաւորաց ընտիր խումբ մը կազմեց սեփական իւր անձին: Քահինայ որ շատ անգամ իրեն կ'ընկերանար պատերազմաց մէջ, ամէն վտանգ արհամարհելով, իւր երիտասարդ գնդին հետ վերջապէս լեռնականաց համակրութիւնը եւ համարմունքն ստացաւ, այլ ոչ երբեք զոհ եղաւ իրենցմէ, եւ այն օրը, որ Սուրէն դէպի Փոքր Հայոց կողմն ճամփայ ելաւ իր փոքր գնդով, Քահինայ եւս իջաւ Սկանդարուն իւր հազարաց ընտիր գնդով եւ գանձերով, ու մտաւ վարձուած տասը նաւեր, երկրորդ Դիդէ՝ երթալով Կարքեղոնի ափունքը, ուր իւր բարեկամութիւնը եւ դաշնակցութիւնը պիտի խնդրէին Բիւզանդական կայսրութեան վերջին զօրութիւնք:

ԳԼՈՒԽ ԻԸ

Սուրէն Գերմանիկ հասաւ առանց դիմադրութեան մտաւ Փոքր Ասիա, եւ երկրին վիճակին վրայ Հայելով կատարեալ անիշխանութիւն մը տեսաւ, որ կը տիրէր: Իբրեւ թէ Յունաց կայսրութեան մէկ գաւառն էր, բայց իրօք ոչ յունաց, ոչ արաբաց կը վերաբերէր, ուստի նստաւ Արապիսուս եւ սկսաւ իր գունդը մեծցնել, կանոնաւոր զօրաժողով շինելով ի հայոց: Խիստ ընտրութեամբ՝ շատերուն միայն երեսը եւ աչքին մէջ նայելով անդարձ կը մերժէր. կորովի, առողջ երիտասարդք էին ընդունեալ, շարունակ օրը հինգ-վեց ժամ կրթութիւն սովորական բան էր իրենց համար. ամենափոքր զանցառութիւն հրամայալ օրինաց կամ անիրաւութիւն խստիւ կը պատժուէր, մաքուր եւ սննդարար էր իրենց ուտելիքը, իրենց զգեստներն ու զէնքերն ընտիր: Իրենց ռոճիկն աւելի էր յունաց եւ արաբաց տրուած ռոճիկէն, աւարին կէսն իրենց պիտի բաժնուէր արդարութեամբ, կէսը զօրավարին: Պատերազմէ փախչողի պատիժը մահ էր:

Արապիսուսի յոյն իշխանը վախեն լաւ ընդունելութիւն ըրաւ Սուրէնի եւ գաղտնի իմացուց Կեսարիս կուսակալին այսպիսի կասկածելի հիւրի մը ներկայութիւնը, որ առանց վնաս տալու արդէն զօրաւոր գունդ մը՝ աւելի եւս կը զօրացնէր, թէւ ամենեւին բռնութիւն մը չէր տեսնուած ոչ իր, ոչ իր զօրաց կողմանէ: Կ'իմացնէր նաեւ, որ իւր հիւրը միտք ունէր քանի մը օրէն Մալաթիոյ ճամփեն երթալ Հայաստան:

Կեսարիս կուսակալ Վասակ անուն հայ իշխան մէր, եւ այնպիսի վտանգաւոր դիրքի մը մէջ կը գտնուէր նոյն միջոցին, որ այս լուրը լսելուն՝ շուտ մը բարելաման հրաւեր գրեց Սուրէնի, որ իւր գունդն առնու եւ գա Կեսարիա, երդմամբ ապահովցնելով զինք ամէն կերպով գոհ ընելու: Սուրէն ընդունեցաւ հրաւերը եւ երբ հասաւ Կեսարիա, զարմացաւ, որ Վասակ անձամբ հեծելոց փոքր գնդով կու գար զինք դիմաւորելու. եւ երբ մօտեցաւ, իջաւ ձիէն եւ պագտուելով իբր հին բարեկամ.

— Եղբայր,— կ'ըսեր,— ինչչափ ժամանակ է, որ քեզի կը սպասեմ. Թեոդորոս Ռշտունի քանի՛ նամակաւ է, որ գրեզ կը յիշէ, Կամսարական եղբարքդ գրեզ կը հարցնեն, քեռորդի մը ունիս եղեր Մամիկոնեան, նա ողջ-առողջ հասեր է հայրենիք, գրեզ մեռած՝ կը համարին, եւ. ես ուրախ եմ, որ ոչ միայն ողջ-առողջ գրեզ կը տեսնեմ, այլեւ լաւ գնդի մը զօրագլուխ: Շատ լաւ ըրիր, որ իմ հրաւերս ընդունեցար եւ Հայաստան չգնացիր: Երթանք, ցցնեմ քեզ նամակներ:

— Բայց ես հայրենեաց վրայ լուր մը չունիմ, առաջին անգամ է, որ հինգ տարի ժամանակէ վերջ, ինձի ծանօթ եւ սիրելի նուններ տուող հայ իշխան մը կը տեսնեմ,— պատասխանեց Սուրեն,— պատմէ՛ ուրեմն Հայաստանի վրայ, ի՞նչ վիճակի մէջ է:

— Երթանք տուն, իշխան, հոն կը պատմեմ քեզ եւ կ'իմացնեմ վիճակը, ուր կը գտնուին բուն Հայաստան եւ մեր Փոքր Ասիոյ գաւառը:

Հոն Վասակ, Կոստանդին կայսեր աթոռ նստելէն ի վեր ամէն անգթութիւնքը, յիմարութիւնքը սկսաւ պատմել Սուրենի, որ արդէն մեզ ծանօթ են, բայց երբ հասաւ իւր հօրեղբօր՝ Գեորգ Մագիստրոսի մահուան վրայ՝ աչուրները կատաղի փայլ մը առին եւ իմացուց նաեւ թէ ինք արդէն տաճկաց ամիրայետին հետ բանակցութեան մտած էր յունաց լուծը թօթափելու համար: Սկսաւ համրել այդ յիմար աստուածաբանական կատաղութեանց արդիւնքը, որ ամէն օր կրօնքի նորանոր փոփոխութիւն հնարելով՝ նոր հաւատոյ հանգանակ ստեղծելով, դժգոհ վիճակի կը բերեր թէ Կոստանդնուպոլսոյ ժողովուրդը, թէ Իտալիոյ կողմերը, թէ հայերը եւ թէ մարտայիթները: Եւ թէ ինչպէ՛ս հայք կայսա առաջարկութիւնքը համարձակ մերժելուն համար, նա էլ Կոստանդնուպոլիս սկսեր էր պատերազմի պատրաստութեան, եւ որ ինք Վասակ իմացուցեր էր Թեոդորոս Ռշտունուոյ, եւ թէ իւր որդին դրկած էր առ նա դաշնադրութիւն մը կապելու համար միաբան գործելու, բայց հիմա կը տեղեկանար թէ կայսրը իմանալով խլրտմունքը՝ պատրաստի գտնուած զօրքով ուղղուէր էր Տրապզոն, եւ իրեն նաեւ հրաման դրկէր էր նոյնպէս զօրքով Բարձր Հայք դիմել:

— Ուրեմն,— ըսաւ Սուրեն,— ի՞նչ կեցեր ենք, պէտք է ժամ առաջ երթանք քանի որ կայսրը Կարին չէ հասեր:

— Այո՛,— պատասխանեց Վասակ,— բայց Մամիկոնեան Մուշեղ միաբանութիւն կազմեր է ընդդէմ Թեոդորոսի, կաթողիկոսը եւ նախարարաց մեծ մասն էլ իրեն հետ համաձայն են, ինչպէս ինձ կ'իմացնէ Մանանաղեաց գաւառէն եկած նամակ մը. արդէն Եկեղեաց եւ Դարանաղեաց եւ Ապերոյ իշխանք սկսեր են ժողովուիլ իրենց զօրքերով:

— Է՛հ յիմարներ,— ըսաւ Սուրեն,— միշտ միեւնոյն մարզիկն են, միշտ նախանձ, աստելութիւն: Դժբախտութիւն հոն է, որ ոչ մեկը չի գտնուեցաւ, որ ամենմուն գլուխը միանգամայն կոտորէ:

— Ի՞նչ կ'ըսես, եղբայր, երբ նոքա էլ վերնան ի՞նչ կը մնա:

Համբերենք, այսօր-վաղը կու գայ որդիս Տիգրան, նա արդէն Թեոդորոսի հետ տեսնուած՝ մեզ ճիշտ տեղեկութիւն կը բերէ: Իրօք երկու օրէն եկաւ Տիգրան՝ Վասակս, որդին եւ պատմեց ամէն բան: Նախ թէ Դուին ասած ժամանակ գտեր էր ամիրայետին պատգամաւորները, որ Թեոդորոս եւ բոլոր հայ նախարարաց հետ դաշնադրութիւն կը կնքէին, ուստի ինք այդ տեսնելով երբ Թեոդորոսի հետ առանձին խօսակցութիւն ունեցաւ, նկատեց, որ նա գոհ չէր, թէպէտ ամենեւին բան մը չէր յայտնէր. միայն նշանաւոր խօսք մը զրուցեր էր. «Մենք կը խոստանանք, դաշինք կը կնքենք, բայց ոչ մեր խոստմունքը լուրջ է եւ ոչ դաշինքնիս ուղղութիւն ունի. տեսնենք թէ այս

դաշանց ստորագրողներն ինչչա՛ փ պիտի յարդէն իրենց խոստմունքը»: Պատգամաւորք դեռ Դուին էին, երբ լուր հասաւ թէ կայսրը Տրապզոն ելեր էր. Թէոդորոս ժողուեց զամենքը՝ յորդորեց միաբանել զօրքը եւ ժամանակ չի թողել յարձակիլ հունաց վրայ, եւ դիմադրել մինչեւ ամիրապետին զօրքն օգնութեան հասնին: Մուշեղ Մամիկոնեան եւ բոլոր արեւմտեան նախարարք առաջինն եղան այս խորհրդին դիմադրելու, կայսեր զօրութիւնն սկսան մեծցնել եւ ըսել թէ՝ «Եթէ մենք ամիրապետին հնազանդիլ խոստացանք, զմեզ պիտի պաշտպաներ ի կայսրէ. կայսրը ահա հասաւ, իսկ ամիրապետը դեռ Դամասկոս կը քնէ. պատգամաւոր դրկելէ դիրին բան չի կայ, մեզ զօրք պետք է»: Չարմանալի կը պատմէր այդ խիստ Թէոդորոսի համբերութիւնը, որ երբեմն քաղցրութեամբ, երբեմն խստութեամբ կ'ուզէր համոզել այդ մարդիկը թէ «Ստորագրյալ կնքեալ դաշնադրութեանց դէմ կարելի չէ մեղանչել, անքաւելի ոճիր է, եւ բարբարոս աւագակաց միայն կը վայելէ»: Բայց ամէնքն անօգուտ ցրուեցան ըսելով. «Ամէն մարդ իր գլուխը միայն պարտաւոր է փրկել այսպիսի պարագայի մէջ»: Դարձեալ Թէոդորոս վերջին ճիգ մը թափեց, համոզեց արաբացի պատգամաւորքը, որ ամիրապետին կողմէն երթան գտնեն կայսրը եւ զինք ջանան արգիլել մտնելու Հայաստան: Ուստի եւ էլ իբրեւ անձանօթ այդ մարդկանց հետ ուղեւորեցայ Դերջան. հոն գտանք կայսրը եւ տեսանք, որ զօրաց թիւը կ'աւելցնէր: Խրոխտ պատասխան տուաւ պատգամաւորաց. «Իմ աշխարհն է Հայաստան, կ'երթամ, ոչ ոք չի կրնար արգելուլ»: Եւ կը սպառնար հրով սրով մաշել երկիրը: Ահա վիճակը այսպէս կը պատմէր Վասակայ որդին:

— Հիմա, եղբայր,— ըսաւ Վասակ Սուրենի,— Լսեցիր պատմութիւնը. կարծեմ թէ ամէն իւելօք մարդ սպասելէ զատ բան մը չի կրնար ընել: Տեսնենք Թէոդորոս ի՞նչ պիտի ընէ:

— Ի՞նչ կրնայ ընել,— պատասխանեց Սուրեն,— երբ դաւաճաններ չորս կողմը շրջապատեր են:

— Բայց դարձեալ,— ըսաւ Տիգրան,— երբ եւ Դուին էի եւ կայսեր գալստեան լուրն հասաւ եւ նախարարք ամենքը թողին ժողովն ու գնացին, Սիւնեաց, Աղուանից եւ Վրաց նախարարաց հետ, որ միաբան մնացել էին իրեն՝ դիմադրութիւն որոշեց: Անխռով եւ խրոխտ՝ իրենց յայտնեց թէ ինք միտք ունէր ամրանալու, ո՛ր որ կրնար եւ դիմադրելու մինչեւ վերջին կէտը, թողով դաշտավայրը թշնամոյն. նոյն խորհուրդը տուաւ նաեւ իւր դաշնակցաց յայտնելով թէ «Այ՛ դ Յունաց կայսրը երկար չէր կարող կենալ եւ պետք էր երթար: Ուստի իւր օրինակին հետեւեցան այդ երեք մեծ աշխարհաց նախարարքը: Վահեւունեաց Տէրը իւր հրամանաւ ամրացաւ Արփայից բերդը. Վարազ Ներսէհ Դաշտկարի իշխանին հրամայեց առնուլ բոլոր աշխարհին, եկեղեցոյն, իշխանաց եւ վաճառականաց գանձերը եւ անմատոյց լեռանց մէջ ամրանալ: Իսկ ինք իւր զօրքով անցաւ Արածանի գետին ձախ կողմը եւ նստաւ Աղիովիտ: Իւր այս քաջասիրտ շարժմունքով Համագասպ Մամիկոնեան եւս եկաւ իրեն միացաւ. եւ ամէն օր զօրաց կրթութիւն ընել կու տար իւր ներկայութեամբ, եւ այնպէս զուարթ էր, որ ամենքը կը զարմանային:

— Ուրեմն,— ըսաւ Վասակ Սուրենի,— մենք հոս այս աշունն ու ձմեռն կը պատրաստուինք, արաբաց օգնութեամբ նաեւ կը զօրանանք, եւ դարնան կը յարձակինք այդ Բիւզանդիոյ կայսեր վրայ, վասնզի արդէն իմ չերթալովս իւր հրաւերին, յայտնի է թէ որոշված վճռուած բան մէ՛ իր կողմէն, եթէ իմ հօրեղբայրս սպաննած օրէն այդ որոշմունքը չէր եղած: Դու զօրաժողով ելիր, ըրէ՛ ինչ որ կրնաս այս երկրին մէջ, ամէն դիրութիւն եւ քեզ կու տամ, եւ ապահով եղիր թէ ամառը չի հասած՝ մեր բանակը կը միանայ Թէոդորոսի բանակին հետ, եւ քու Հայաստան մտնելը փառաց եւ հաղթանակի մուտք կը լինի:

— Եղբայր,— պատասխանեց Սուրեն,— ես ոչ փառք եմ ոչ հաղթանակ կը փնտռեմ, իմ փափագս թշուառ հայրենեաց օգտակար լինիլն է միայն, եւ ցաւով կը տեսնեմ, որ այդ անօրէն արաբաց օգնութիւնն ուզելու կը պարտաւորինք ընդդէմ քրիստոնէայ տէրութեան: — Ի՞նչ կարելի է ընել, երբ այդ քրիստոնէայ տէրութիւնն նոյնպէս անգութ, նոյնպէս բռնաւոր է մեզ համար. Թէոդորոս Ռշտունի դաւաճանութեամբ շղթայներու մատնեալ, դարձեալ հավատարիմ կ'ուզէր մնալ այդ քրիստոնէայ տէրութեան, յանկարծ ի՛նչ եղաւ, որ ինձ կը գրէ թէ՛ «Վերջին եօթանասուն տարուան մէջ՝ Բիւզանդական կայսրութեան դիւական խորհուրդները մեր ազգը ոչնչացնելու համար ինձ յայտնի եղան, երբ Թէոդորոս Երիզագին ինձ հաղորդեց Կարնոյ դիւանատան ամէն գաղտնի թղթակցութիւնք եւ հրամանագիրք. մեր նախարարաց անմիաբանութիւնք եւ վատութիւնք քիչ մը թեթեւցան իմ աչքիս, վասնզի տեսայ յայտնի թէ հունական ոսկին ի՛նչ մեծ դեր խաղացեր էր այդ անխելք ու կարճատես մարդիկը մոլորցնելու»:

Պատրաստութիւնքը շարունակեցան՝ եւ նոյն միջոցին ինչ որ կ'անցնէր Հայաստանի Վասակ մանրամասն կ'իմանար: Կայսրը Կարին հասած վայրկենին՝ յունաց զօրավարք եւ հայոց իշխանք միաբան՝ Թէոդորոս Ռշտունի պատճառ ամէն չարեաց ամբաստանեցին. նա էր, որ Մարդոցէից պատերազմին մէջ պատճառ եղած էր յունաց պարտութեան, նա էր որ զամենքը գրգռած էր հապստամբութիւն, նա էր որ զամենքը վախցնելով պարտաւորել էր արաբաց հետ դաշինք դնելու:

Հոն եկաւ նաեւ Ներսէս կաթողիկոս, Բագրատունի իշխանաց հետ՝ Տայոց գաւառէն, ամրապնդելու համար այս ամբաստանութիւնը յունաց զօրք վատութեան նախատինքէ, հայոց իշխանք եւ կաթողիկոս ապստամբութեան յանցանքէ արդարացան, եւ ամէն ինչ Ռշտունի զօրավարին վերա բեռցնելով, նզովեցին եւ դատապարտեցին եւ ձգեցին զինք ամէն պատուոյ եւ իշխանութենէ, եւ իւր փոխանակ իշխան մը դրկեցին քառասուն հոգուով եւ կայսերական հրովարտակաւ: Իսկ Թէոդորոս բռնեց կապեց այդ մարդիկը եւ դրկեց ոմանք կղզիները, ոմանք Բաղէշու բերդը: Եւ Կոստանդին իմանալով այս եղածները, կը սպառնար ջնջել, ոչնչացնել բոլոր երկիրը: Եւ Մուշեղ Մամիկոնեան, Ներսէս կաթողիկոս եւ միւս իշխանք գետնամած կ'աղաչէին՝ իւր բարկութիւնն իջեցնել կ'աշխատէին, մինչեւ տարին զինք Դուին եւ հոն կաթողիկոսական եկեղեցւոյն մէջ, իւր եկեղեցիէն իբր հերետիկոս դատապարտեալ մարդուն ու քահանայից յետոյ հաղորդուեցան: Իսկ զօրքը ցրուեցան Վրաց, Սիւնեաց եւ Ադուանից երկիրները, աւերեցին ո՛ր որ կրցան, բայց Սիւնիք եւ Ադուանք չխոնարհեցան այդ կայսեր առջեւ:

Երբ լուր հասաւ կայսրէն դէռ գարուն չեկած թէ Վասակ պատրիկ՝ կուսակալ Փոքր Հայոց ապստամբեցաւ, եւ թէ Կոստանդնուպոլիս նաեւ ապստամբութեան ցոյցեր կան, առաւ զօրաց մեծ մասը, դիմեց Կապադովկիա Վասակի վրան: Բայց յաղթուեցաւ չարաչար, եւ դարձաւ գնաց Կոստանդնուպոլիս կորակոր, շփոթած եւ հուսահատ. եւ հոն նոր անգթութեամբդ աւելի ստելի եղաւ ամենուն:

Իսկ կաթողիկոսը Թէոդորոսի երկիւղէն Տայոց գաւառը փախաւ յունաց զօրաց հետ, բայց նոքա եւս չկրցան դիմանալ, վասնզի հայոց զօրավարը հասաւ ետեւնուն՝ հալածեց զիրենք անտից: Եւ խմբուեցան բոլոր յունաց զօրքերը Կարին. Մարիանոս իրենց սպարապետը մեծ պատրաստութեամբ կը սպասէր եւ կուշացներ պատերազմի գործը՝ որպէսզի իւր ցրուեալ զօրքը ժողովի, ինչպէս Թէոդորոս կը սպասէր հայոց նախարարաց, որ մէկ կողմէ կը հասնէին, ոմանք համոզուած, թէ իրենք իրենց վրայ պէտք էին հուսալ եւ ոմանք ակամայ եւ ի յունաց յոյսերնին

կտրելով, ոմանք նաեւ տեսնելով թէ ամիրապետը Թէոդորոսի եօթ հազար հոգւոյ գունդ մը օգնութեան դրկել էր:

ԳԼՈՒԽ ԻԹ

Կարնոյ դաշտը պատերազմի ասպարէզն էր, ուր երկու բանակ իրար դէմ կանգնած՝ զիրար կը դիտէին օրերով: Թէոդորոս իմանալով թէ իրեն օգնութեան կու գար տարոնացի մեծ խմբով Համազասպ Մամիկոնեան՝ գիշերով անցաւ Եփրատ եւ բանակեցաւ Կարնոյ քաղաքի հարաւային բլրոց վրայ, յոյս ունէր նաեւ այդ դիրքով արգիլել թշնամւոյն հասնելու ունէ՛ օգնութիւն, որ կրնար գալ արեւմուտքէ: Մաւրիանոս այս շարժումնքին կարեւորութիւնն ուշ իմացաւ. ուստի պատերազմը ուզեց գրգռել, վասնզի օրաւոր կը տեսնէր, որ հայոց բանակը կը զօրանար, եւ իրեն նոր օգնութիւն չէր հասնէր: Բայց Թէոդորոս բացէ ի բաց մերժեց պատերազմը, եւ բաւականացաւ իւր բանակն ամրացնելով: Գիտնալով, որ յունաց մեծ ուժը իրենց հետեւակագօրին վրայ է, կը ցրուէր իւր հեծելոց խումբը դաշտին վրայ, արգիլելով իրենց հասնիլ պաշար՝ պարեն եւ ճարակ անասնոց: Մեծ յոյսով կը սպասէր նաեւ Փոքր հայոց Վասակայ եւ Սուրենի օգնութեան. ուստի պատերազմն ամենեւին վտանգի դնելու յոյս չունէր, թէպէտ ոմանք նախարարք հայոց սկսան գանգոյիլ այս դանդաղութեան վրայ: Իսկ երբ հասաւ Համազասպ, այն ատեն որոշեց պատերազմը, եւ առաւօտուն, երբ փողերը պիտի հնչեցնէին, ահա երկու հազար Ռշտունեաց նոր զնդով կը հասնէր Գրիգորամամիկոնեան, եւ այդպիսի վայրկենի եկած փոքր օգնութիւնը նաեւ յաջողութեան նշան համարուեցաւ բանակին մէջ:

Մաւրիանոս այն ժամանակի յոյն զօրավարաց առաջինը կը համարուէր իւր փորձառու հմտութեամբ եւ յանդգնութեամբ, ուստի պատերազմը յամառ եւ արիւնոռուշտ եղաւ, եւ մինչդէռ հա՛յ նախարարաց յանդգնութիւնը, որ թշնամւոյն աջ թելը հալածելու համար՝ իրենց կէտրոնէն հեռանալով վտանգի մէջ դրին յաղթութիւնը՝ եւ այս դէպքը Թէոդորոսի մեծ տագնապ կը բերէր, եւ Գրիգորի նորահաս ու յոգնած ոշտունականք հազիւ թէ կը տոկային յունաց յարձակմանց դիմադրելու՝ եւ կարկամեալ մնացեր էին չի կրնալով վանել,— ահա Եփրատայ ափունքն ի վեր փոշի մէ՛ երեւցաւ. հազարի չափ ձիաւորաց խումբ մը կը հասնէր սուրալով, գոռալով, իրենց նշաններէն եւ դրօշակներէն իմացաւ Թէոդորոս թէ Սուրենի խումբն էր, ուստի ըսաւ Գրիգորի խումբին. «Ձեր յաղթութիւնը յափշտակելու համար գունդ կը հասնի, տղա՛ ք, եւ դուք կը դանդաղի՛ ք»: Այս համառօտ խօսքերն ահագին ձայնիւ զրուցուած եւ լսուած ամենէն՝ կատաղութեամբ լցուց զօրքը, յոյնք սկսան ընկրկիր Իսկ երբ Սուրենի մոլեկան գունդն հասաւ՝ բոլորովին խորտակեցան, խառնիխուռն փախան քաղաք. հազիւ յունաց քառորդ մասը կրցաւ ազատիլ, մեծ մասը սրոյ ճարակ եղաւ, եւ շատ քիչեր գերի ինկան:

Յաղթութիւնը մեծ էր, թշնամեաց բանակը ոչնչացեր էր եւ իւր մնացորդքը Կարնո՛յ հզօր պարիսպներու շնորհիւք կը մնար, ամենքը յաղթութեամբ արբեր էին, ուրախութեան երգեր՝ սրինգ եւ տաւիղ երկինք կը բարձրանային, մեծ եւ փոքր, զօրապետ եւ զինուոր, Հայաստանի հիւսիսն եւ հարաւը, արեւելք եւ արեւմուտք եւ մինչեւ Փոքր Հայոց բնակիչք ներկայ էին, եւ զիրար կը տեսնէին օտարին դէմ, հարստահարողին դէմ, կրօնից եւ խղճմտանքի բռնաբարողին դէմ միաբան: Հոն՝ տարիներով բաժանեալ ծանօթք, բարեկամք եւ մերձաւորք իրարու հանդիպած՝ իրարու հետ գրկախառն եալ հին ատելութիւններ կը մոռնային, սէրը կը նորոգէին, եղբայրութիւն կը հաստատէին. ամէն մարդ գոհ էր եւ զուարթ: Միայն մարդ մը անթափանց ամէն

ուրախութեան, թշնամի արեամբ ներկուած, քրտինքը ճակատը, փոշիով ծածկուած, դեռ ձիւն չէր իջած. ամէն կողմ կը դիմէր, մեռելները թաղման կը պատրաստէր, վիրաւորները գիւղերը բաժնել կու տար, եւ բանակին՝ պահապանաց խումբեր կը որոշէր: Այդ մարդը Թեոդորոսս Ռշտունին էր:

Կէս-գիշերուան մօտ էր, երբ հասաւ Վասակ պատրիկ փոքր, բայց ընտիր բանակաւ, ճիշտ այն ժամուն, որ հայոց իշխանք եւ զօրավարք՝ յունաց սպարապետին վրանին մէջ պիտի ընթերէին: Մեծ ուրախութիւն էր տեսնել հոն, հայոց պատմական ճոխ եւ փառաւոր անուններ կրողները սեղանի մը շուրջ միացած եղբայրաբար. հոն էին Բագրատունիք եւ Արծրունիք, Սիւնիք եւ Մամիկոնեանք, Կամսարականք եւ Ռշտունիք, Աղուանք, Խորխոռունիք, Ամատունիք, Վահեունիք, Առաւելեանք, վերջապէս ամէն անունք, որ քանի մը ամիս առաջ Թեոդորոսի ամբաստանող եւ զրպարտիչ նաեւ լինիլ չէին դանդաղէր, եւ անոնք, որ իրեն հետ միաբան բիւզանդացի կայսեր դէմ խիզախէր էին: Նա ամէնուն քաջութիւնը գովեց, ամէնուն սիրալիր կերպարանք ցցուց, ամէնուն եղբօր կամ որդւոյ քաղցր անուն տուաւ. բայց դարձեալ ուրախ չէր, այնչափ տարուան ջանք, բանագնացութիւնք, դաշնադրութիւնք ընդունայն գնացած զինք լաւ համոզած էին թէ այդ մարդիկը զօրութեան, լուծի եւ անձնական ողորմելի շահու առջեւ միայն կը խոնարհէին, հայրենասիրութեան, կրօնասիրութեան սկզբունք արմատ չունէին իրենց սրտին մէջ:

Սուրէն եւ Գրիգոր նոյն օրը պատերազմի դաշտին մէջ զբաղեալ՝ իրար տեսնելու համար ժամանակ չէին ունեցեր, հիմա իրարու քով նստած անցեալ աւուրց թշուառ արկածներու վրայ կը խօսէին, եւ եւ Սուրէն տեսնելով Գրիգորի ուրախութիւնը կը գուարթանար, վասնզի այդ երիտասարդը, որուն բնական սրամտութիւնը, կորովը զինք գերազանց կ'ընէին իւր ընկերակցաց մէջ, ազնիւ հոգի նաեւ ունէր եւ կը յիշէր իւր քեռւոյն անմոռանալի երախտիքը: Հոն՝ Կամսարական ցեղին մեծ ուրախութիւն էր տեսնել ոչ միայն իրենց եղբայրը, քեռորդին ողջ-առողջ գտնել, այլեւ զարմանքով կը տեսնէին, որ երկուքն էլ տարիներով մեռած համարուելէ վերջ՝ հիմա փառագարդ ճակատ մը կը ցցնէին, վասնզի Վասակ պատրիկ Սուրէնի քաջութիւնը կը գովէր եւ Թեոդորոս զԳրիգոր բարի օրինակ հայ երիտասարդութեան ցոյց կու տար իւր քաջութեան հաւասար իմաստութեան եւ գիտութեան համար:

Իսկ երբ ընթրիքը վերջացաւ, Թեոդորոս ժողուեց նախարարաց գլխաւորքը, հարցուց իրենց կարծիքը, եւ վերջապէս միաբան միախորհուրդ որոշուեցաւ թողուլ Կարնոյ մօտ քանի մը հազար զօրաց խումբ մը եւ յարձակիլ Պոնտոսի կողմն յունաբնակ գաւառաց վրայ: Եւ ահա այդ յաղթող բանակը կը շարժէր, կ'իջնէր Բարձր Հայոց գավառներէն, կը զարնէր, կավարէր, բոլոր ծովեզրը կ'առնուր ինչպէս եւ Տրապիզոն քաղաքը, եւ կը դառնար մեծ աւարաւ եւ գերութեամբ:

Թեոդորոս արաբացի խումբը ընծայիւք լի կը դարձնէր առ ամիրապետն եւ ինք հրաւիրուած կ'երթար Դամասկոս: Մաւիաս մեծարեց զինքն «Ոսկեթել եւ Ոսկեղէն ընծայիւք եւ դրօշակօք», տուաւ իշխանութիւն Հայոց, Վրաց եւ Աղուանից եւ մինչեւ Ճորայ պահակին վրայ:

Գարնան գեղեցիկ օրերով Ռշտունեաց Ոստանը մեծ հանդէս էր կրկին հարսանեաց Գրիգոր Մամիկոնեանի Ռշտունեաց Օրիորդին հետ՝ եւ Վարդի՝ Սիւնեաց Օրիորդին հետ: Վասպուրական եւ բոլոր Հայաստան երջանիկ օրուան արշալոյս մը հասած կը կարծէին, վասնզի միաբանութիւն կը տիրէր հայ նախարարաց մէջ, եւ այնպէս կը համարուէր թէ թշնամի չի կար, որ համարձակէր ոտնակոխ ընել հայուն հայրենիքը:

Բայց երբ հաստատ օրինաց եւ սահմանափակ իշխանութեանց վրայ չէ ամրապնդեալ երկրի մը վիճակը, ոչ երբեք երջանկութեան պէտք է սպասելի դիպուած մը, պարագայ մը, արկած մը, որ ոմանք բախտ անուանած են, ամէն բան վեր ի վար կրնայ ընել եւ ամէն յոյս եւ ջանք ի դերու հանել:

Այսպէս եղաւ նաեւ Թէոդորոսի ծանր եւ երկար հիւանդութեամբ:

Ինք ժողուեց հայ նախարարքը, դրաւ իրենց առաջ երկրին վիճակը եւ երկու մեծ տէրութեանց՝ յունաց եւ արաբաց տկար ու զօրաւոր կողմերը, յայտնեց թէ ոչինչ կը համարէր ամիրապետին իրեն տուած իշխանութիւնը եւ ամենեւին գոհ չէր է թէ ինք աւելի սիրով յանձն կ'առնուր հնազանդիլ ազգային իշխանութեան մը, գոր նախարարք իրենց ազատ կամօք ընտրէին, միայն թէ այդ իշխանութեան սահման մը եւ չափ կը փափագէր, որպէսզի զեղծմանց չհանդիպէր, եւ որպէսզի իմանան թէ ինք իշխանութեան աչք չունէր՝ երդում ըրաւ թէ իրեն տրուած ռիցէ ձայն ինք պիտի չընդունէր: Այս խօսքերն ըսելով թողուց ժողովքը եւ Խլաթայ նաւահանգստէն նաւ մտաւ եւ ելաւ Աղթամարայ կղզւոյն պալատը, վասնզի սաստիկ հիւանդ կը գտնէր ինքզինքը:

Ի՞նչ ըրին հայ նախարարք, մենք չենք ուզեր դատել, այլ ահա մէջտեղ կը դնենք ժամանակակից պատմագրի մը խօսքերը, եւ ընթերցողք թող դատեն:

«Իսկ իշխանին Հայոց, որ ի Յունաց եւ ի Տաճկաց կողմանէ, Համագասպ եւ Մուշեղ, եւ այլն ամենայն եկեալ ի մի վայր միաբանեցան, եւ արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր եւ արինհեղութիւն, եւ անցուցին խաղաղութեամբ զաւուրս ձմերայնոյն, զի եւ զշինականս ապրեցուցանեն: Քանզի Ռշտունեաց Տէրն անկաւ յախտս հիւանդութեան եւ չոքաւ անկալ յԱղթամար կղզին: Ել ոչ գոյր նմա լինիլ կարողութիւն ելանել արտաքս կամ խորհիլ ինչ, եւ բաժանեցին զերկիրն ըստ թւոյ իւրաքանչիւր հեծելոց եւ կարգեցին հարկապահանջս ոսկւոյ եւ արծաթոյ:

Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զօրէն հիւանդաց յորժամ տագնապեցին ցաւն եւ հատանիցէ ի խօսից, այնպէս ինչ եղեն, զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի եւ թագստեան եւ ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ եւ ոչ կարիցէ գտանել:

Ել իբրեւ ետես զայս Ռշտունեաց Տէրն խնդրեաց իւր զօրս յիսմայելացոց զի հարցէ զՀայս եւ հալածական արասցէ եւ զՎիրս սատակեցէ ի սուր սուսերի»:

Ուեւ Հայու ծանր է կարդալ այս տողերը, ծանր էր նաեւ այն մարդուն, որ բոլոր կենաց մէջ աշխատէր էր Հայաստան հայով փրկելու եւ միաբանութիւն այդ բանին համար հաստատելու, տեսնել այդ միաբանութիւնն ի վնաս ժողովրդեան դառնալ, անտանելի հարստահարութեանց գործիք լինիլ եւ երկրին կործանմունքը հայ ձեռքերէ տեսնել: Ուստի յուսահատ՝ այն դէպքին կը դիմէր, որ թոյն էր եւ ոչ դեղթափ, այն երկաթին կը դիմէր, որ վիրաբոյժի դանակին առողջութիւնը չէր կրնար բերել՝ այլ մահ:

Եկաւ արաբացին, երբ միաբանութիւնը քակտեցաւ, տիրեց երկրին եւ առաւ պատանդ տարաւ նախ զԹէոդորոս բոլոր իւր ընտանեօք, եւ ամբողջ հայ նախարարութեան ծաղիկը ժողուեց իջեցուց ի Դամասկոս:

Չանցաւ շատ ժամանակ՝ Ռշտունեաց երկիրը կը տանէին հայրենական շիրմաց մէջ դնելու այն մարդուն մարմինը, որ եօթանասուն երկայն տարիներու մէջ առաջին մարդն եղած էր աշխարհին

սիրած էր իր հայրենիքը, մորմոք էր իւր ազգին ցաւոց եւ տառապանաց վրայ, իւր կեանքը չէր խնայեր ոչ պատերազմի եւ ոչ խաղաղութեան մէջ, ամէն ջանք ինչ որ մարդկօրէն կարելի էր՝ աշխատեր էր ի գործ ունել եւ վերջապէս տխուր, դառնացեալ, բայց ոչ երբեք յուսահատ եղել էր: Իւր վերջին խօսքերը փեսին Գրիգորի ասոնք եղան.— «Իմ երկար կենացս մէջ, որդեակ իմ, վասնզի թշուառութեան եւ ձախորդութեան տարիներն երկայն են միշտ, միմիայն գեղջ եւ ապաշաւ այն եղաւ, որ իմ հայրենակցաց անիրաւութիւնը պատուհասելու համար՝ օտարին զենքը հրաւիրեցի, չի կրցի նախատեսել թէ օտարին շահասէր բարերարութիւնը ընտանեաց անիրաւութենէն վատ է, եւ դորա պատիժը ահա կը կրեմ օտարութեան մէջ վերջացնելով կեանքս: Այո, արդար են Աստուծոյ դատաստանները: Դու՝ այնպէս կը հաւտամ, որ Հայաստանի կեանքին մէջ պիտի խառնուիս եւ պիտի գործես: Յորդորէ՛, խրատէ ամէնքն, որ եթէ չեն կարող պատժել համբերութեամբ տանին իրարու պակասութեանց, յանցանաց եւ եղեռանց անդամ, այլ անքաւելի ոճիր համարին օտարը հրաւիրել, օտարին՝ հայրենի երկիրն ոտնակոխ ընել տալ»:

ԳԼՈՒԽ ՎԵՐջԻՆ

Այդպէս է անտառաց մէջ տերեւներու սերունդը, եւ այդպէս նաեւ մահկանացուացը: Տերեւներէն ոմանք՝ քամին գետին կը թափէ, եւ ոմանք կանաչ անտառը կը բողբոջէ՝ երբ գարնան եղանակը հասնի,— այդպէս մարդկանց սերունդք երբեմն կը ծաղկին, երբեմն կը վերջանան:

ՀՈՄԵՐՈՍ

Թեոդորոսի հետ իջած պատանդներն ի Դամասկոս հազար եօթ հարիւր եօթանասունհինգ հոգի, բոլորն էլ ազնուական, բոլորն նախարարական, երբ Մուշեղ եւ Համագասպ ապստամբեցան չի կրնալով դիմանալ մահմեդական բռնութեան, մէկ օրուան մէջ ջարդուեցան յասորիս: Եւ ինքն Մուշեղ Թեոդորոսի պէս վերջացուց իր կեանքը օտարութեան մէջ, գերութեան դառն հացն ուտելով, հարաւի խորշակէն հալած, աչքերը հիւսիս դարձուցած՝ փրկութեան սպասելով, որ չէր հասներ:

Նախախնամութեան խրատներն էին սոքա, բայց դժբախտաբար անօգուտ անցան: Մարդ եթէ չի խրատուիր իւր հարց, իւր նախնեաց օրինակէն, չուսնիր նոցա պատմութիւնը, կ'ինկնի նոյն սխալանաց մէջ, կը մատնուի նոյն տառապանաց, նոյն տանջանաց: Մարդուս յատկութիւնը եւ յանասնոց տարբերութիւնը՝ ասուն լինիլը չէ, այլ անցեալէն խրատուելով օրաուր կատարելագործուիլն է, որուն յառաջադիմութիւն ըսեր են:

Հայոց իշխեցողք նախարար, կաթողիկոս եւ իշխան շատ անգամ կը տեսնենք պատմութեան մէջ, ման աւանդ այն ժամանակին պատմութեան եւ նորա շարունակութեան մէջ, ամուր եւ անառիկ դիրքերու վրայ վանքեր, դղեակներ, բերդեր եւ ոստաններ կը շինէին իրենց առանձին եւ անձնական պահպանութեան համար, ընդհանուրին մտածող շատ քիչ կը գտնուէր, եթէ գտնուէր՝ այդ ընդհանուրը ծառայեցնելու նպատակ միայն ունէր:

Ընդհանուրի համար եթէ մտածէին, իրենց շէնքերը թերեւս զիրենք պահպանէին, բայց իրենք հասկնալ չուզելով այդ, փառաւոր շէնքերը՝ վանք, եկեղեցի եւ պալատ աւերակ, յափշտակութիւնդ ախոռ սրբապիղծներու եւ անօրինաց կը տեսնենք:

Մամիկոնեան Գրիգորի շինությունքը Զաքարէի եւ Իւանէի ձեռք նորոգեալ, դարձեալ կիսաքանդ տեսանք, որ ժողովուրդն ընկերութեամբ կը շինէր եւ աւերակներուն մէջէն կը կենդանացներ եւ ինչ որ Գրիգոր չէր ըրած՝ այն կը յաւելուր: Ուսումնարան ի Հառիճ:

Ժողովրդեան միաբանական ոգի եւ ուսումնարան, այս երկու բան կարող են հայ ազգին կենդանութեան շունչ բերէր

Համերաշխութիւն (solidarité) բառին գաղափարը չի կար, նոր բառ է, հայ երիտասարդութիւնը մտուց այս բառը լեզուին մէջ, ուստի գաղափարն էլ մտած է. վասնզի կ'օգնէ իւր ազգի երկրին հաւատարիմ եղբարց, իւր քիչ գիտութիւնը կու տայ ձրիաբար նոցա, որ ծարաւի են ուսման, իւր լուման կու տայ նոցա, որ նօթի են հացի: